

4756

910.4(47.925)

U - 92

Aug 496

33.

✓ 109
Ond. ✓

Ա 455.

ԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽԸ

ԺԱՆՍՊԱՐՅՈՐԴԱԿԱՆ

ՏՎԱՐՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Դ. Լ. ՄՈՐԴՈՎՅԵՎԻ

ՓՈԽԱԴՐԵՑ

ԱՊՈՎԻ ԲԱՐԱԽԱՆԵԱՅ

ՇՈՒՇԻ

ՄԻՐԶԱՋԱՆ ՄԱՀՄԵՍԻ - ՑԱԿՈՔԵԱՅԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ :

1883

910.4(47.925)

Ա-92

3

ԱՐՄԵՆԻԱՆ ԳՈՅՀ
ԱՆԱՊԱՐԳՈՐՎԱԿԱՆ
ԱՊԱՐԱԿԱՆ ԽԱՐԱԴՐԻ

ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Գ. Լ. ՄՈՒԴՈՎՑԵՎԻ

1007
Հ 32206

Հ 3 0 0

ՓՈԽԱԴՐԵՑ

Ա Պ Ա Ք Ե Լ Բ Ա Բ Ա Խ Ա Վ Ա Յ

ՃՈՒՇ

ՄԵՐԶՈՉՈՒ ՄՈՀՏԵՐ-ՅՈՒԹԵՈՒՅԹ ՏԳՈՐԾԱՅԻՄ

1883

Дозволено цензурою 30 Июня 1883 г. Тифлисъ
Старший цензоръ Меликъ-Меграбовъ.

2004

Типографія книгоправца М. Мугдусі-Акопова. въ Шумѣ.

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Մեծ ու սրանցը են լուսվեան հրաշքները։ Մեր լայնածաւալ և բերապնտի ամեն մի անկիւնում նա չի մոռացել թողնել մի ոյսկիսի հրաշք, որին ամեն անգամ հիացմունքով է նայում մարդք, այդ հրաշքի սակագնածքները, այդ ընութեան անմահ յիշատակարանները, որոնց մօտ անզօր է, ոչինչէ ամեն մի արկեստական, շնչնու ըան, միշտ շլայխում են մարդու միտքը և առելի զօրեղի բազով վկայում են անեղեցքի Տիրոջ անհասանելի, անիմանալի կարողութեան մասին։ Քանի քանի անդամներ մարդը հիացած, ապշած է մնացած բնութեան հրաշքների առաջին, քանի քանի մաքեր մնացել են նրանց առաջին գործողութիւնից, իմացականութիւնից զուրկ և միայն հոգին է եղել որ կարողացել է զգալ թէ ոքան վսեմ; որքան անհասանելի զորեղ է բնութիւնը Բայց տեսնել բնութեան այդպիսի հրաշքներ, ինանալ նրանցով հեշտ չե ամեն մարդու համար մատչելի չէ։ Բնութիւնն ինքն է դրեւ ամեն մի լաւ ուշադրութեան արժանի բան մեծամեծ գժուարութիւնների, ծանր աշխատանկների մէջ։ այսաեղ էլ զարմանալի է բնութեան ձգտումն սովորացնել մարդուն աշխատել գուծել և և անդով յաղթել շատ դժուքերում ոչնչացնել իր առաջանած արգելաներին ու գժուարութիւնները։ Մեր կեանքը, զոյութեան համար ունեցած մըցումը լիքն են այսպիսի գժուարութիւնները և յաղթութիւններով ու ըմբն ոքան գովելի է մի մարդ, որ ձիգն է թափու ոչնչացնել ամեն մի արգելք մի լաւ աբհեստ ոնդորելու համար, այնքան էլ (եթէ ոչ առելի) ոռվելի է ամեն մի մարդ, որ մոռանալով ամեն գժուարութիւններ,

տոնակով անելով ամեն վասանգներ, աշխատում է ուստիմասկը և լքնութիւնը, ուղարկել եթէ կարելի է այսպէս ասէլ նրա արջեստը: Եւ որքան վօնմ է, որքան գուլուն է այս վերջին ձգառումը, որքան մեծ են նրա օգուտները, որոնք բարդկացնում են ամբողջ մարդկութեան աւելիականութիւններ: Նրա շնորհիւ մի անցյատ կօլումբոս անմահացնում է իր անունը, գտնենլով ահազին նոր աշխարհը՝ նրա շնորհիւ Ավելին-դաստին երկար տարցներ պատում էր Աֆրիկայի խորքերում, որտեղ մասն մարդկութիւնը այնքան հասկացողութիւն ուներ, որքան և չոգեկան, աներեկոյթ աշխարհի մասմէն, ուլիմ' չի չին յայտնի զիտութեան այդ նահատակի կը ած գասն տանձանքները ու Վերջապէս այդպամի մարդկանց անունները մի մի յշելի անեկարեւէլ: Է և ակագին տեղիք կուզիլ: Այլզպամի մարդկանց անեխոնք աշխատանկներով լեն սակագն վեզ այնպիսի լազմաբակ զիտութիւններ, ինչպէս են աշխարհագիտութիւնն ու բնագիտութիւնը, բաժաննալած բաղմաթիւ ճյուղերի: Թէ ինչպէսի մեծ փափոխութիւններ են արելայդ զիտութիւնները ազգերի վիճակի և նրանց գրականութեան ու մատոր զարգացման մէջ՝ դրա մասն վիայել պատմութեան գործն է Այդ գիտութիւնների շնորհիւ են ստեղծվել մը այժմեան կուղատուրական դարու կեանքը, մեր նոր մանկա լարժական սնամեան, որոնք պահպանը մը են մօտիկ և քաջ ծանօթութիւնն մել շընապ ստող բնութեան հետ: Վերջապէս թուել այս ամենն անեկարելի է մի կարճ զրուաց քում:

Վեկեռում յիշած ընութեան հրաշքներով հարուստ է և մեզ ի ըլեզրաց Այսուել
էլ տեսնելու, ուսումնասիրելու շատ բան կայ. մեր անդարձերութիւննցն է, թէ
ծուռ հայացքից, բայց մեր երկնը շատ ծանօթ չէ մեզ իսկ օտարների համար
նա համ որեա անյայտ է, և առշասպակ մեր աշխարհութեան սկան գրականու-
թիւնը համեմատաբար չափազանց աղքատ է: Մենք սոյլուել ենք սոյլ լեզուի լեզու-
ջապատող ընութեան անտարբեր կերպով և նրա մէջ ոչ մի հետաքրքրական, ոչ
մի ուշադրութեան արժանի բան չինք գտնում: Բայց պարզ է, որ գրանով մեծ
ախալ ենք գործում և դրանով աջքից գցում ենք լեռութեան հալարաւոր հարս-
տութիւններ, որոնք կարող էին մեծ նշանակութիւն ունենալ մեր կեանքի մէջ:
Օքիսակի համար վեցըններ Արարտը, որ այս գլքի նկատման է կազմում: Մանկաւ-
թիւնից մենք իմանում ենք, որ Արարտալ մի բարձր մեծ սար է և համարեա այլ ես
ոչինչ: Մարդկային նախագահամունքները պատել էին այդ սարը անյայտութեան
թանձը մաւալխուղավել նա ներկայանում էր մեր առջև մի աւաստիւսկան կա-
խարդուած հսկայի հեման, իսկ Ներա իսկական դրութեան մասին ոչ ոք չէր իմա-
նում ոչինչ. սակայն այդ սարը ամեն մի հայի համար ունի մեծ նշանակութիւն,
որովհետեւ մեր ազգի պատմութեան մէջ նա նշանաւոր գեր է խաղացել և առ-
կասարակ մեզ համար պահան նշանակութիւն չունի Նթէ սրա վրան էւ աւելաց-
նենք այդ սարը, որպէս մարդկային ցեղի օրորոցի սրբալան նշանակութիւնը, այն
ժամանակ զարմանալի կթուայ մեզ այն հանգամանքը, որ հայը չի հետաքրքրվէ
իմանաւայդ սարը բուն, իսկական դրութիւնը: Հետուից ի ընացող նրա տեպքը
բաւական է եղել կայ բանաստեղծի, վեպանանի համար մի քանի ովեռված առվեր-
նութերու այդ հսկայ սարին, որ միայն մի լուսաւորեալ մարդու հետաքրքրութեան

Մէ բուռն ցանկութիւն տալ ժողովրդին ընթե եցանաւութեան համար մի չարագրութիւն, որ վելսաբերվում է մեր երկրն, մեր կեանքին՝ Կարկառոց եց մեզ ձևան տալ մի այնպիսի գործի, որ միւս ժամանակնեւում մենք գուցէ մեր կարողութիւնց վեր կը համարէինք. և թարգմանելով կամ առ ևս ասած, փիտաքը ըսլ սուս յայտնի հեղինակի այս աշխատասիրութիւնը, մեր նպատակն էր միայն մեր ազգայա աշխատը հագիսական գրականութեան մէջ մի գիշը աւելացնել կամ ինչպէս ընդունուած է ասել մի լումա զցել Փառքի ու պատվի եակի կողմէը չէ

մեր յանկութիւնը, բայց մենք ուրախ կլինենք, երբ ունենք որ ժողովուրդը կարգումէ, հետաքրքրվումէ նշանաւոր հեղինակի նշանաւոր գրաւածքով, հասկանումէ նրան և մի գաղափար է կազմում նրա մասին։ Այդ էւմով բաւական է։ Անկեղծօրէն պիտի խոսականութիւնք, որ մեր այս առաջնորդը կունենայ գուցէ շատ պահասութիւններ, բայց զբանք մեզ ներելի չն մի քանի պատճառներով, որոնց մասին աւելորդ է խօսել Մենք միայն աշխատեցնեք հասկանակի շինել այս գրուածքը որքան կարելի էք, և այս պատճառով դուքս նկնդք կարդ ու կանոնից, տեղանոր կը մատենալով և տեղ տեղ անենշան աւելորդութիւններով։ Ներուամիտ ընթեցողք թուղ մեղ չը յանդիմաննեն այս մասին։ Մենք մեր կարողացածի չափ ենք ծառայում ժողովրդին և դոհ ենք զբանալ։

Ա. Ա. Բ. Ա. Խ. Ա. Շ. Ե. Ա. Յ. Յ.

Յաշի:

Յային, 1883

ՅԱՆՊՎԱՐՀՈՒԹՅՈՒՆ ՅԱՎԱՐԴԻՐԱՓԻԽՆԵՐԻ ՆԱՌԱՐԴԻՔԻՐ:

Եւ յեշեաց Աստուած դնոյ և զամենայն գազանս, և զամենայն անհասունո, ոք էին ընդ նմա ի տապանի անդ. և էած Աստուած հոգմ ի վերայ իրկրի և գտարեաց ջուրն և խցան աղբեւըք անողնոց և ասկանք իրկնից և արգելու անձու յիշկնից։ Եւ զիջանէր տակաւ երթայր ջուրն և թողանար յիրկրի, և նուազէր ջուրն յիտ հարիւր և յիսուն աւուր։ Եւ նստաւ տապանն յիօթները ուղարկում ամսնանն իքսան և հաջն ամսոյն ի լեբինս Արարատայ։ Գիր Մանուք Գ. Լ. 1-7։

I

ՅԱՌԱԶԱՐԱՆԻ ՑԵՂ:

Մեղանից ումի՞ն ոսկեղին մանկութեան երջանիկ ժամանակներում չի շարժել մինչեւ սրտի խորքը այն փառահեղ պատկերը, որ նկարում է այնպիսի հանճարեղ պարզութեամբ Աստուածաշնչի պատմութիւնը համաշխարհական ջըրհեղեղի մասին։ Ումի՞ երեակայութիւնը չի ման եկել նոյի հետ անսահման ովկիանոսի ալիքներով, որ պատել էր ամբողջ երկրագունալը, երբ Աստուածաշնչի ահաւոր և պատժով Տէր-Սարսփոթի հրամանով բացիւցան երկնքի խորշերն և երկրի աղ-

բիւրները և բոլորովին ծածկեցին երկիրը, իսկ անընդհատ անձրէլ քառասուն օրուայ և քառասուն գիշերուայ միջոցում անխնայաբար թափվում էր մեր ողորմելի մոլորակի վրա, որին զյել էր տարածութեան մէջ Ագոֆնայի ստեղծող և պատժող աջը:

Բայց յետոյ—շարունակում է Ծննդոց գիրքը—ստեղծողը խղճաց իր ստեղծածների վրա. և յիշեց Աստուած Նոյին, և բոլոր գագաններին և բոլոր անսառներին և թռչուններին և սողուններին, որոնք գանգվում էին Նոյի հետ տասպանում և փրչեց Աստուած երկրի վրա քամին և կանգնեցին ջրերը. յետ գարձին ջրերը, որոնք գուրս էին թափել երկրի անդունիներից և երկնքի ծակերից և այսպէս ջրերը յետ քաշուեցան հարիւր յիսուն օրում: Եօթներբորդ ամսում տասպանը կանգնեց Արարատ սարի վրա:

Ո՞վ չէ յիշում Աստուածաշնչի պատմութեան դրան: Հետեղ սբառուէ և բանաստեղծական մանրամասութիւնները:

Զբհեղեղեց յետոյ ջրերը քչացին մինչեւ տասներրորդ տմիսը: Իսկ տասներրորդ ամսում, այդ ամսի առաջին օրը, երեացին ջրի տակից սարերի գագաթները. դա նշանակում է միւս սարերի գագաթները, որոնք Արարատից ցածր էին, որովհետեւ Արարատը՝ Աստուածաշնչի պատմադրի, որ Մովսէսն է համար վում, հասկացողութեան համեմատ համարվում էր ամենաբարձր սարը ամբողջ երկրագնաի վրա, որովհետեւ այդ ժամանակները, երեի, յայտնի չէ եղել Ելբօրուս, Դավալագիրի, Չումուլար, և հսկայ Եվերեսոտ սարերի բարձրութիւնը և այդ սարերի գոյութեան մասին, պէտք է ենթադրել, բոլորովին չէր իմանում Խրայելացոց ազգի սգերեալ առաջնորդը:

Երբ ջրի տակից երեացին սարերի գագաթները այն ժամանակ, քառասուն օր անցնելուց յետոյ, բացաւ Նոյը տասպանի պատմահանը և ուղարկեց մի ագուաւ իմանալու՝ հեռացել է

տրգեօք ջուրը երկրի երեսից: Բայց ազուաւը չե վերադառն տապանը: Ժողովրդական աւանդութիւնն ասում է, թէ զուրս թռչելով արձակ օդի մէջ, նու գտաւ մարդկանց և անտառների բազմաթիւ դիակներ և սկսեց կերակրվել նրանցով: Այն ժամանակ Նոյ ուղարկեց մի աղաւնի տեսնելու, թէ հեռացել է արգեօք ջուրը երկրի երեսից: Բայց աղաւնին «Ճը գտեալ հանգիստ ոտից իւրոյ», չը գտնելով մի չոր տեղ, ուր կարող լիներ նստել, գարձաւ տապանը: Այն ժամանակ Նոյ մեկնեց իր ձեռքը տապանի պատուհանից գուրս: Աղաւնին նստեց ձեռքի վրա և կրկին մտաւ տապանը: Յետոյ սպասելով եօթն օր էլ, Նոյ կրկին ուղարկեց աղաւնին տապանից գուրս: Կրիկնապահին նա յետ գարձաւ, ունենալով կտուցի մէջ ձիթենու Ճիւղը կանանչ տերեներով. և իմացաւ Նոյը, որ ջուրը երկրի երեսից քաշուել է:

Այսպիսի կերպով է պատմում Ծննդոց գիրքը, թէ ինչ պէս աղասուեցաւ վերջնական կորստից ցջրհեղեղական մարդը և նրա հետ այն կենդանինը, որոնք այժմ բնակվում են երկրի վրա: Աստուածաշնչը ցոյց է տալիս և մարդկութեան համաշխարհական ջրհեղեղից աղասութեան տեղը. դա Արարատն է:

Ահա այժմեան մարդկութեան այդ իսկ օրօրոցը ես ու վեցի տեսնել նրանից յետոյ, երբ ես գեռ 1881 թւին բախտ ունեցոյ տեսնել սկզբնական, ջրհեղեղից առաջ եղած մարդու օրորոցը և, կարելի է ասել, մէր ժամանակակից գիտութիւնների, մեր կուլտուրայի, մեր լուսաւորութեան օրորոցը. 1881 թւին ես այցելեցի Պալէստինան և տեսի նոյն իսկ այն հողը, որից, նոյն Ծննդոց գրքի հաստատութեան համեմատ, Աստուած ստեղծել է մարդուն, այն հողը, որ այդ նախահայրը կոլի էր սուել իր ուներով և թրջել էր իր քրտինքով, գտնելով նրա միջեց իրա համար հաց՝ մեղք գործելուց յետոյ և որի մէջ յետոյ նա գրել էր իր սկերքը. ես այն ժամանակն էլ այցելեցի և բանաստեղծական Սղիպտոսը, մեր գիտութեան օրօրոցը, այն Եղիպտոսը, որի գիտութիւններով էր կրթվել և Ծննդոց գրքի

ողիսորմած շեղինակը:

Պոլեստինացից և Եղիպատոսից յետոյ բնական էր ցանկալ տեսնել Արարատը. Քեօպսի բուրգը բարձրանալուց յետոյ և Երս սազեմին հանդերձ իր Գողգոթայուվ, Կենդրոնեան հեղիղատով և Եղիքնեան սարով նոյելուց յետոյ, Երիքով, Մեռեալ ծովը, Յորդանանը և միւս մեզ համար սրբազնն տեղերը տեսնելոց յետոյ, ես մի բուռն ցանկութիւն էի զգում տեսնել Աստուածաշնչի սրբավայրը և բարձրանալ նրա անհասանելի գագաթը, գեպի այն խորհրդաւոր վայրը, ուր Աստուածաշնչի մարդու երեակայութիւնը տեղաւորել էր հսմաշխարհական, ջրհեղեղեց ազատված Նոյին, նրա տապանի, ագռաւի և ազաւիի հետ և ուր ժամանակակից մարդու երեակայութիւնը մինչեւ այժմ մասնում է գտնել եթէ ոչ ամբողջ տապանը, ինչպէս մի հրաշալի ամբութեան յիշաւով, հենց գոնէ այն տեղը, ուր նա մի ժամանակ կանգնել էր:

Եւ ես վճռեցի այս տմառը—1882 թւի ամառ—ուղեւ-
տորվել Փաքր Ասիս, որ տեսնեմ Արարատը և փորձեմ բարձ-
րանալ նրա զլուխը: Բայցի նրանից, որ տեսնել Արարատը
նշանակում է տեսնել այն տեղերը, որոնց հետ մարդկային ե-
րեւակայութիւնը կատել է իր երկրորդ հայրենիքը՝ առաջին
մարդու իր հրաշալի և խորհրդաւոր հայրենիքը — երկրային
գրախարը կորցնելուց յետոյ, գանշանակում է տեսնել նոյն տեղը,
ուր նոյր ջրհեղեղից յետոյ դուրս գալով տապանից բերեց
Աստուծուն շնորհակալութեան զոհ իր փրկութեան համար և
ուր նա այդ մեծ անցքի յիշատակ տնկեց առաջին իսակողին
որթը. բացի այս ամենից լինել Արարատի գլխին—դա նշանա-
կում է կանգնել այնախիք մի բարձրութեան վրա, որտեղից
կարելի է աչքով տեսնել անսահման տարածութիւններ մարդ-
կային աչքին երեացող հօրիզոնի սահմաններից բաւականին
դէնը և դա գեռ քիչ է—տեսնել միանդամից ինչպէս մի զիւ-
թական պանօրամայի մէջ ամբողջ կովկասը և Անդրկովկասը,

սամբողջ հիւսիսային Պարսկացոանը և Փոքր Ասիայի թիւրքիան և այս ամենը լրացնելու համար երկու ծովեր—Կասպիան և Սև:

ծշմարիտ է, ես առաջուց էի իմանում, որ Արտատաբարձրանալը կապված է անչափ գժուարութիւնների, կեանքի վտանգի հետ, ոյս պատճառով Աստուածաշնչի սարը այցելել են շատ քիչ գիտնականներ և այնպիսի քաջասախններ, որոնց ցից մէկն էր Սպասակի - Ավտօնօմօվ (1834 թուականում), որ մի քանիսները այդ բարձրանալու ժամանակ կորցրել են իրանց առողջութիւնը և, որ առելի վատն է, կեանքը, որ վերջապէս աեղական հաւաքին նոյած, այնտեղի քրիերի, պարսիկների, թուրքերի, հայերի և մինչև անդամ հայերի հոգեորականութեան յամառ երեւակայութեան համաձայն, այդ սրբազն սարը բարձրանալու փորձը համարվում է յանկուգն և Աստուծոյ ընդդէմ մի գործ, որի համար խստութեամբ պատժում են անհաղանդներին ինչպէս քրիստոնէի Աստուածը, նոյնպէս և Ալլահը քամու սովորական ոյժով, որ իր խիստ փշելովն զցում է յանկուգն մարդուն կէս ճանապարհից մի որ և է անդունդի մէջ, — ծշմարիտ, կրիկնումեմ, ես այս ամենն իմանում էի, իմանում էի թէ ինչ վտանգաւոր մեծագործութեան էի ենթարկում զինքս, ես օրինակ իմանում էի, որ Խօսկի, որ մի ամբողջ էկսպեդիցիայի հետ կատարել է 1850 թւականին Արարատ բարձրանալը, ընկել էր այդ տեղ իր ընկերների հետ «մի շանթալից ամպի մէջ, որ ներկայացնում էր մի հսկայական ելքարական մարտկոց» (ճատարեյ), ուր «կայծակը — ինչպէս ասում էր ինքը հանգուցեալ Խօսկիօն — մի սամէն լայնութիւն ունեցող պայտաւերով (կայծակը մի սամէն լայնութեամբ — քա սարսափելի է!) ամպրոպի ահւելի հարուածների հետ» անգագար Ճեղքում էր օդը և քանգում էր ամբողջ ժայռեր, — ես իմանում էի այս ամենը և ըլ նայելով ոչ մի բանի, հաստատ վճռեցի այս վտանգաւոր գործը կատարել չը նայելով բարեկամներիս զգուշացնե-

լուն, ովոնց վախեցնում էր իմ ապագայ՝ վեճակը:

Ուղեորդիկըց առաջ ես բառ շափու կարողութեան կարգացի այն ամենը, ինչ գրված էր Արարատի մասին և մանաւանդ այն, ինչ զրել էին սրբազն սարը բարձրանալու մասին այն մարդիկ, որոնց վիճակված էր կատարել այդ մեծագործութիւնը, որոնք են. Պարրօս, Ավտոնոմով-Սպասսկի, Քերենս, Արիխ, Խոգգօս: Առհասարակ այս առարկայի գրականութիւնը բաւականին ընդգրածակ է, մանաւանդ եթէ ուշադրութեան դարձնենք այն, որ միայն անցեալ զարու վերջերիցն են մերձենալի դարձել եւրոպացիների համար այն ստհմանները, ուր գտնվում է Աստուածաշնչի հսկոյն:

Վերջապէս կամենալով ձեռք բերել աւելի մօտիկ տեղե-
կութիւններ ինձ հետաքրքրով առարկայի մասին, աեղեկու-
թիւններ ոչ թէ գրքերից, որոնց ևս կարդացել եմ, այլ կեն-
դանի մարդկանցից և ցոնկացուներ հաւաքելու մաքով, որոնք
կուզենային ինձ հետ բարձրանալ այդ հին ուխտի սրբալոյրը,
ևս այդ տեղեկութիւնների մասին գիմեցի Թիֆլիս Ի. Փ.
Տիգրեավսկուն, վաղաժամանակ կորած «Ֆալանգոյի» շնոր-
հալի իմբագրին. նա ինձ պարտաւորացրեց, յայտնելով այդ
տեղեկութիւնները և ի միջե այլոց հաղորդեց, թէ նա ի՞նքն
էլ պատրաստ էլինել ինձ ուղեկից Արարտանեան Էկսպերիցիայում
և թէ կարելի է կը գանվին Թիֆլիսում և որիշ ցանկացող-
ներ բաժանել ինձ հետ այդ էկսպերիցիայի վասնգներն ու
հիացմունքները: Կրա հետ նա գրում էր ինձ, որ հոչակա-
ւոր սարը բարձրանալու ամենայարմար ժամանակն է օգոստոսի
1-ից մինչև 15-ը, և առհասարակ ոչ շուտ քան յուլիսի 15-ը,
որովհետեւ այդ թւերից առաջ բարձրանալը բոլորովին անկա-
րելի է սարի գագաթները պատսող ձիւնի ահագին մասսաների,
նմանապէս և լեռնային փոթորիկների պատճառով, որ նոյն
իսկ բարձրանալը պիտի կատարուի պալակական սահմանից, որ
սարից ամենամօտի Նոր-Ակուսի գիւղից պէտք է վերցնել
մինչև տասը մարդ առաջնորդ, օրեկան 2—3 րուրի, վարձով.

որ սարը բարձրանալը և այնաեղից ցած իջնելը չորս օր կը քաշէ և որ պէտք է Պետքը բռուգում գնել մթն ակնոցներ տեսողութիւնը լեռնային ձիւնի լոյսի մահաբեր գործողութիւնից պահպանելու համար, մի կաշեայ չը թրջվող հագուստ — մի կուրտկա, պանտազն և վերաբերու, նոյնպէս և մի լաւ գիտակ:

Շուտով հասաւ և այն ժամանակը, երբ ես պէտք է ընկնէի հեռու, և ինչպէս վերջիլում իմացվեցաւ, վասնգաւոր ձանապարհ:

Ես վերեռում ասացի այն բարոյական հարկադրանքների մասին, որոնք ինձ ձգեցին դէպի աշխարհիս մէջ եղած ամենամեծ անցքի անխօս վկան. դրանք մանկութեան պայծառ յիշութիւններն էին, որոնք տարիներով չեն մահանում:

Բայց կային և ուրիշ, աւելի խիստ հարկադրանքներ:

Մտածող մարդկանցից ո՞րը չէ փորձել իր վրա վերջին տարիների հասարակական կեանքի ծանր, թմբեցուցիչ լցջծը. մեզանից ո՞րը չէ շնչառպառ եղել խեղդող մթնոլորդի մէջ — եթէ կարելէ է այսպէս ասել առանց որ և է վերաւորական ակնարկի գէպի մէկը — նոր ժամանակի խեղդող օդի մէջ, եւ ո՞վ չէ ցանկացել զուրս փախչել թարմ օդի մէջ այդ տաք, հոտած մառանից երբ ըստ երևոյթին ոչ մի կարողութիւն չկար մի կերպ առողջացնել ոյդ հոտած օդը։ Շատերը ճշմարիտ փախչում էին ոյդ մառանից հենց գոնէ ժամանակաւորապէս, որ չը խեղդվին։

Ես էլ փախայ այդ ժամեր տարիներում հեռու իմ տիրագին հայրենիքից, փախայ այնպիսի զգացմունքով, կարծես թէ ուզում էի փախչել ինքս ինձանց:

Եւ իրաւ, խորէն անբաւականութիւնը շոջակայ կեանքից և մի և նոյն ժամանակ լնձանց, անբաւականութւնը այն առենց, ինչով լըգում էր մեր զայութիւնը օրեցօր մինչե նոր, աւելի լաւ արշալոյս, անբաւականութիւնը, այսպէս ասած և երկնքից և երկեցից, կենդանիներից և մեսեալներից, ներկայից և անցեալից, որ ըստ կարողացաւ շնոր մեզ այնպէս, ինչ-

պէս ուրիշ մարդիկների. վերջապէս անբաւականութիւնը իմ սեփական համեստ աշխատանքներից, իմ ազատ գրչի պառազ-ներից - այս ամենը հրում էր իմ միտքն ու կամքն որոնել մի նոր, մի ուրիշ բան, իսկ թէ որ հին, շատ հին լինի, ինչպէս բուրդերը, գոնէ այնպիսի մի բան, որին ես կեանքումն չեմ տեսած, որին ես չեմ փորձել և չեմ զգացել: Եւ ես գնում էի որոնելու այդ հոգեկան բուռն ցանկութիւնների բաւականու-թիւն հեռու արևելքը, Եղիպտոս, Պալեստինա, Արարատ: Եւ ինձ թւում էր թէ հէնց այնաեղ, օտար երկրի տակ, բուրդերի արևետարձի տակ և Եհովայի բարկութիւնից այր-մած Երուսաղեմի թումբերի տակ և հովիսների մէջ ես մո-ռացի իմ վեշտը, այն հոգեկան որբութիւնն ու անբաւականու-թիւնը, որոնք կրծում էին իմ հոգին մայրենի հողում:

Այսպիսի զգացմունքով, հէնց այս խոժոր հարկադրու-թիւններով ես վեր առի ճանապարհորդութիւն զէպի Արա-րատը: Ո՞վ էր կարող իմանալ, թէ նա կվերջանայ ինձ համար այդպիսի կրծտարեր կերպով:

Յայտնվեցաւ, որ Արարատը ոչ Զադիրդաղն է, ոչ էլ Քեոպսի բուրդը:

II.

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԻՆՉԵՒ ԿԱՐԱԵՎԾԻ ԱՆՍՊԱՏԸ:

Ես գուրս եկաց Պետերբուրդից յուլիսի 24-ին: Ես հոշ-վում էի, թէ Արարատը բարձրանալը կոկամ օգոստոսի 2-3-ին: Օդոսառոսի վեցըն, Այլակերպութեան տօնին, ես մտածում էի լինել Աստուածաշնչի սարի գլխին:

Իմ ճանապարհն ընկած էր իհարկէ Կովկասի՝ միջով: Այս մեր մոլորակի փառահեղ և չքնաղ անկիւնը ես առա-ջին անգամը չէի տեսնում: Խստադէմ սարերի շղթաների գըլ-խով, վրաց փառաւոր ճանապարհով գնալը կրկնեց իմ հոգու մէջ այն խորին հիացմունքի զգացմունքը, որ ակամայ զգում

ես այն իրանց սքանչելութիւնով զարմացնող բնութեան պատ-կերների մօտ, որոնց առջև երկիրածութեամբ հանդարտովում է մի անսակ խաղաղ անդգայութեան մէջ վախեցածի պէս միաբը:

Բայց այս պատկերները չէին հրապուրում գէպի իրանց իմ հոգւն:

Օդոսառոսի Յ-ն ես արդէն գուրս էի գնում Թիֆլիսից Երևանեան ճանապարհով: Թիֆլիսը ես թողում էի մէնակու-թեան և անյայսութեան ծանր զգացմունքով: Գնալով Պե-տերբուրդից հեռու ճանապարհ մի յանդուզն մոքով հասնել նրան, ինչ անելու չէր համարձակվում ամեն մէկը և հասնել որին շատ քիչերին էր վեճակվել, ես տանում էի ինձ հետ համոզմունք, թէ իմ այն փորձի մէջ, որ ես անում էի «տա-պանը գտնելու և Պետերբուրգ տանելու համար նրա հէնց մի տաշեղը», ինչպէս ինդրել էին իմ Պետերբուրդի բարեկամները, որոնք աշով էին ճանապարհ զցում ինձ, այս-պէս ասած, հին ուխտի էկակուրսիայի—ես ունեի համոզմունք, թէ ես մէնակ չեմ գնայ տապանը որոնելու: Ես յոյս գրած էի ող. Տիօրժեվսկու վրա և գլխաւորապէս ող. Լօխտինի՝ երի-տասարդ և տաղանդաւոր ինժեների վրան, որ արդէն կատա-րել էր մի քանի էկակուրսիաներ. ող. Լօխտին շատ ցանկա-նում էր գնալ ինձ հետ Աստուածաշնչի սարը և թէպէտ ա-ռաջ պիտի գնար Բեսսարաբիա Դնեստրը գետի վրա նաւա-գնացութեան բանալու համար, բայց շատ ինդրեց ինձ յայտ-նել իրան իմ գուրս գալու օրը, որպէս զի նա կարողանար իր ժամանակին դուրս գալ Բեսսարաբիայից և պատահեր ինձ հետ Թիֆլիսում: Բայց դրանից ես յուսով էի ունենալ ինձ ուզեկից լեռնային ինժեներ Ֆօն-Կոշկուլին, որ ծառայութեան մէջ էր գտնվում Թիֆլիսում: Նրա փորձառութեան և սարե-րի քամհաճութիւնների և սարավների հետ ծանօթ լինելուն ես կարող էի բոլորպին հաւատալ, որովհետեւ նա, ինչպէս մասնագէտ, մի քանի անգամ բարձրացել էր սարերի գլուխները

ինչպէս Եւրոպայում, Ասիայում, Նոյնպէս և Ամերիկայում:
Բայց յոյսերս չը կատարվեցան: Ոչ ող. Տիորժեվսկի, ոչ էլ
ող. Ֆօն-Կոշկուլ չը կարողացին ինձ հետ գնալ թէպէտ և
շատ ցանկանում էին, որովհետեւ ամեն մէկին Թիֆլիսում պա-
հում էին շատ հարկաւոր գործեր. իսկ Լօխտին, ման դալով
Բեսարաբիայում մի տեղից միւս տեղ, չէր կարողացել սառ
նալ իմ նամակը իր ժամանակին և այս պատճառով չէր կարո-
ղացել պատահել ինձ ոչ Թիֆլիսում, ոչ էլ Երևանում:

Ահա ինչու ես դուրս էի գաղիս Թիֆլիսից մի տեսակ
մռացվածի գառն զգացմոննքով, որ չէր կարող չը վախեցնել
ինձ: Այսպիսի մէնակութիւն ես չէի զգացել ո՛չ Եղիպատում
և ոչ Պալեստինյում: Այսուեղ իմ մէնակութիւնն այնքան
Ճնշող չէր, ինչպէս այսուեղ թէ և այնտեղ ինձ համար բոլո-
րովին օտար աշխարհ էր: Թիֆլիսից ես դուրս զնացի միայն
մի թուրք սայլապանի հետ, որ շատ վատ էր հասկանում ուսու-
րէն. պէտք էր գնալ 250 վերստ փոստային առյլի մէջ մի տե-
ղով, որ բոլորովին անվտանգ չէր: Այդ ձանսապարհի վասնդ-
ների մասին ես իմացել էի գեռ Թիֆլիսում, որուեղ ինձ խոր-
հուրդ էին տուել լինել զգոյշ օրինակ, փոստային իջևանում,
որտեղ ես ցոյց էի տալիս ձանսապարհաթուղթս ինձ ձիաներ
տապա համար, ես ստացի նախալգուշացումն այն մաքով, թէ
շատ խելացի կլինէր, եթէ ես ձանսապարհ չը գնայի մէնակ,
չը գտնելով գոնէ մի ուղեկից, եսկ բարի ող. Ֆօն-Կոշկուլ ու-
ղեղ խորհուրդ էր տալիս ինձ ոչ թէ միայն գիշերով ձանսա-
պարհ չը գնալ այլ և երեկոները չը փորձել հեռանալ ի-
ջևանից:

— Եթէ ձեզ համար թանկ է ժամանակը, աւելացրեց
նա, ուրեմն լւար նա է, որ դուրս գաք իջևանից գիշերուայ
վերջում, իսկ երեկոները չը գնաք, թէպէտ և գեռ լոյս լինի:

— Ախր ինչ պատճառով, զարմացքով առում էի ես:

— Այն պատճառով, որ երեկոյեան աւագակները մի շա-
րութիւն գործելով, գիշերը կարողանում են կորչել սառանան-

գիտէ ուր. յսկ առաջ օտից մօտ չարութիւն անելը նրանց հա-
մար անյարմար է:

— Լաւ. չարութիւններ են:

— Այս... բայց այդ տեղերում կեանքը թանկ գին չունի:

— Մէջ հօխա չամփչից էլ թանդ չէ:

— Կարելի է:

Բայց և այնպէս, շնորհեւ Կովկասի իշխանութիւնների
լրաւոր օգնութեան իմ ձննապարհորդութիւնն այդ կողմե-
րում պատաժ էր բաւական մեծ ապահովութիւններով և ես
խորին երակատագւ առութեամբ պիտի յիշեմ անունները. պ.
առաջնորդւն զլիաւոր կառավարութեան Կովկասի կառավարչա-
պետն՝ զինեբալ-Եյտենանտ Ստարօսելսկու, պ. Հոգաբարձուին
Կովկասեան ուսումնարանական շըջանի կ. Պ. Եանօվսկու և
պ. առաջնորդւն փոստային շըջանի՝ զինեբալնի շտաբի պօլկով-
ներ օօմիչիք: Պ. Ստարօսելսկի տուեց լին բոց հրամանագիր,
ուր ի միջի այլոց առում էր ում հարկաւոր էր լմանալ.
«ինդրեմ տեղական իշխանութիւններից որս ցոյց առողին (այս
անուն), որ եկել է Կովկաս լուսաւոր նպատակով, ցոյց առա-
լրամն կարելի է օգնութիւն և հոգենասորութիւն խաղաղու-
թեամբ և անվասնու կերպով անցնելու համար ինչպէս փոստային
ձանսապարհներով, նոյնպէս և նրանցից դուրս, աալով-
յին ձանսապարհներից, նոյնպէս և նրանցից դուրս, աալով-
յին որաեղ կարելի է և հարկաւոր է բաւականացուցիչ կան-
ուրան ժուանի կարելի է և հարկաւոր է բաւականացուցիչ կան-
ուրան պահպանութիւնը»: Իր կողմից պ. օօմիչ
վոյ ժողովրդական պահպաններից: Իր կողմից պ.
առուեց լին մի ապահովացնող հրամանագւր, որի մէջ՝ միջի
այլոց ասվում էր. «ինդրեմ փոստային իջևանների պակ. կա-
ռավարիչներից Թիֆլիսից Երևան տանող և Երևաննեան նա-
հանգում գտնվող փոստային ձանսապարհների վրա ցոյց տալ
օգնութիւն այս ինչ մարդուն (ձեր ամենախոնարհ ծառային)
շուտ կերպով անցնելու համար, որ ձանսապարհորդում է ու-
սումնարական նպատակով (ինչ ուսումնասիրական, ուղեղն
ասած ինչպէս մի բերանաբաց ուղեոր): Կառավարիչները պար-
աւորվում են առանձին ուշադրութիւն գարձնել գիշերիու-

յարմագութեան և ապահովութեան վրա»:

Բայց և այսպէս ես թողնում էի Թիֆլիսը մի վրդովեցիչ զգացմունքով. և երբ քաղաքագում մօտ շարժական դուռը բարձրանալուց յետոյ առաւօտեան օդի մէջ տարածվեցաւ փոստային զանգակի սուր ձայնը, իմ հոգու մէջ անհանգստութեամբ շարժվեց այս հարցը. ինչ տեսակ զգացմունքով ես կ'մօտենամ այս շարժական դուռնը յետ գառնալիս ժամանակ և արդեօք վիճակված է ինձ առհասարակ յետ գառնալ անյայտ հեռու երկրից:

Իմ մօտովս անցաւ մի ուրիշ սոսյլ որ արագութեամբ զլնղզնգում էր և էլ աւելի արագ կերպով փոշի էր բարձրացնում խճողիի վրա: Այդ սայլակը տանում էր մի օֆիցերի սպիտակ շորերով և սպիտակ զլնարկով, հովանոցի տակ: Առանց հովանոցի այն հնոցում, որի մէջ էք ընկնում դուք կովկասում, գնալ բոլորովն անկարելի է, որովհետեւ դուք գնումէք փոստային սայլակի մէջ առանց որ և է ծածկոցի: Դուք միայն զարմանում էք, թէ ինչպէս է տանում այս սարսափելի շըքը թուրք սայլապանը, որ առջևում նստած ծոյլութեամբ շարժում է ձիաներին: Բայց այդ զլուխը սովոր է, աւելի այն պատճառով, որ նա համարեա միշտ փաթաթված է գտակի վրայից տղլուխով, իսկ աւելի շատ ժամանակ ծածկվածէ լինում հրեշտարի մորթեայ փափախով, որ անսպատճառ կարած է լինում ոչխարի կինամօնագոյն մորթուց այնպիսի ձեռով և այնպիսի մեծութեամբ, որ կարծէս ամեն մի անդրկովկասեան թուրքի զլիսի վրա տեղաւորված է կալմիկների վըաններից մէկը կամ Մոսկվայի Երանեալ Վասիլիի գմբէթներից մէկը, միայն վերելից կարած: Իսկ մնայած մահկանացուները, մինչև անգամ առաջարկանները այնաել կրում են սպիտակ գըլ-խարկներ (ֆյորաշք) և այս պատճառով իւրաքանչիւր հայ, խարկներ (ֆյորաշք) և այս պատճառով իւրաքանչիւր հայ, որ այնտեղ նստած է լինում գինետնում (կովկասեան և Անդրկովկասեան գինետնում պարունակում է իր մէջ և պանտոկ, և կովկասեան գինետնում պարունակում է իր մէջ և պանտոկ, և գինետուն, և հիւրանոց և իջեան), — իւրաքանչիւր հայ իր սպի-

տակ զլնարկով շատ նմանում է ծառայութիւնից դուրս եկած կապիտանի: Մինչեւ անդամ ես, սպիտակամիրուք ճանապարհորդու, որ փոխել էի Պետերբուրգի շենապան թիֆլիսի սպիտակ զլնարկի հետ, մի քիչ նմանվում էր ծառայութիւնից դուրս եկած պօլկօվնիկի:

«Այստեղ հետաքրքրելի է ուտել և խմել», յիշում եմ ես Թիֆլիսի մի դուքանի նշանատախտակը և այս գատարկ յիշովութիւնը առ ժամանակ փախցնում է իմ գլուխ մռայլ մաքերը: Ես ակամոյ մտքով փոխադրվում եմ Կ. Պոլիս, ուր նոյն նեղ և մարդկանցով լցուած փողոցներն են, որոնցով ես հինգ այս ժամին անցնել եմ, գժուարութեամբ մօտենալով Թիֆլիսի քաղաքագումը. խոր Արևելքը հինգ այնպէս աչքերին է զարնիվում: Բայց այն, ինչ որ ես չեմ նկատել ոչ Թիւրքիայում, ոչ Եգիպտոսում և ոչ Պալեստինյում, դու էր մնացորդը այն հեռացած չըն ժամանակների, երբ մարդոն կարելի է եղել այնպէս ծեծել, ինչպէս այժմ չեն ծեծում ոչ միայն մարդկանց, այլ և ձաներին ու շներին: Խոկ Թիվլիսում ես նկատեցի Արևելքի այդ ամենախոր հնութիւնը: Մնաք անցնում էինք բազարով ուր նեղ փողոցներում կէս ժամի միջացում երեմն չէրն կարողանում անց կենալ կարծրանցիւր դոմենների այլ վերը նրանց անխիզճ կիրազով ծեծող արեւելեան սայլորդների հետ, կարելով մեր ճանապարհը: Այն ժամանակ կարծես գետնի տակից դուրս էր գալիս պօլիցիականը սպիտակ նշանազգեստում և անզպատճառ մհակը ձեռին (ես նկատեցի, որ Թիվլիսում պօլիցիականները շատ ըստ են պահպում, բաւական լաւ են Մոսկվայի պօլիցիականներից, որոնք եռանդով կրծելով իրանց նշանակած տեղերում կորիզներ, միշտ ուղարկում են ձեզ իմանալու համար մի խանութ, երբ դուք հարցնում էք — ո՞րտեղ է գանգում այս ինչ տունը. մի բանով լաւ չեն Թիվլիսի պօլիցիականները, նրանք մոլեռանդութեամբ հաւատում են կիւրոսների կամ կամբիւմների ժամանակակից մահակի շժին, որին նրանք դառնում են միշտ բարի արեւելեան մար-

դիների հետ խօսելիս ժամանակը): Մահակն իսկոյն գործ էր դրվում և ծեծում էր ոչ թէ գամշխն, այլ անպատճառ արեւելան սայլորդին և ծեծում էր անխնայ, ծեծի օրինաւոր լինելուն բոլորվէն հաւատացած լինելով: Եւ որ զարմանալին է ծեծվող էակը ոչ միայն չէր բոլոքում մահակի դէմ, ոչ միայն չէր քաշվում նրանից, այլ ընդունում էր նրա հարուածները բոլորվին խօսարհ կերպով, կարծես թէ այլ ծեծելուց էր զրված Ալլահի զբքում այդ իսկ ծեծ կերած Մուստափի կամ Ահմեդի հաշվին:

Բայց ահա Թէ՛ֆլիսն էլ քիչ սկսում է թագնվել այդիների կանանչների մէջ, կամ անցնում է սարերի և ժայռերի քամակը, սրոնք պատռմ են պլոտոր, կատաղի կուրը:

Դեռ էլ հեռու արեւմուտքում և հիւսիսում, կովկասեան լեռնային շղթայի ասամները աւելի և աւելի ծածկվում են հեռաւորութեան ծխի մէջ, այնպէս որ շուտով նրանց գժուար կլինի ջոկել այն ամսերից, որոնք անշարժ կերպով կանգնած են հօրիդոնի վրա:

Ճանապարհը գնում է Կուրի ափերով Նոր պղոտոր ջրերը փրփրում են ափերի մօտ, հարկադրելով շուռ գալ ինչ որ է ահաղին անհւեր:

— Դա ի՞նչ է — հարյնում եմ ես իմ սոյլսպան թուրքից, ցոյց տալով այդ անիւներ:

— Ի՞նչ ջրաղաց:

— Հրեն ջրի վրա շուռ են գալիս անիւներ և ջուր են գուրա հանում կուրից:

— Հա... դա Ալլահը ոռոգում է խնձորենիքը և քիշ միշը:

— Ի՞նչպէս է Աստուած ոռոգում քիշմիշը:

— Ինքը կուրը շարժում է անիւները և ոռոգում է: Եւ իլաւ ինքն Ալլահին է ոռոգում այդ քիշմիշը այդիները. ահաղին անիւները շարժվում են կուրի ընթացքի ոյները. ահաղին անիւները շարժվում են կուրի ընթացքի ոյները, թափում են խողովակների մէջ, ժոյն և հաւաքելով ջուր, թափում են խողովակների մէջ,

որոնք գետից ուղեղ տարված են այդիների մէջու: Կուրի ափերի վրա սյստել և այնակեղ երեւում են արեւելան մարդկանց միակ պատկերները, որոնք բռնած ունդն ձեռքերում երկայն չոր ճրպուներ, որոնց վերջերից կախված են մի տեսակ ահաղին զլօրուսներ՝ շինված տակառների շրջանակներից:

— Իսկ նրանք ի՞նչ են անում, հարցնում եմ ես:

— Այժմ մեծ փայտերոնի:

— Այսու ջուկ են որսում:

— Զուկ: Ուշ, կուրի մէջ շատ ձուկ կայ:

Յայսնվում է, որ տակառի շրջանակներից շինած զլօրուսն ներքին ծայրից կողցրած է ցանց, որի մէջ և ընկնում է մամիտ ձուկը:

«Այստեղ հետաքրքրելի է խմել և ուտել», կրկին յիշում եմ Թէ՛ֆլիսի խանութի տախտակի խմաստոն խօսքերը, երբ տեսնում եմ իջեանի տնակը, որին մօտենում է իմ այլը: Դա չէր նշանակում թէ ես հետաքրքրվում էի մի բան ուտել բջեւանի բակում, ուր երեխ ուտելու ոչ մի բան չէ կարելի դանել բայց ես յիշեցի պատուարժան Մ. Ա. Դանիլովին, Սև և կասպից ծովերը միմեանց հետ խառնելու նախառձի նշանաւոր հեղինակներ, որ իմանալով իմ յանդուգն գիտաւորութանն այցելել Ալարատը, առեւց ինձ մի քանի գործնական խորհուրդներ կովկասում ճննասպարհորդելու մասին և բոլորովն նախազգուշացրից, թէ նրա համար, որ չհիւանդանաս կամ կարելի է չմեռնես կովկասում, որտեղ մահարեր հրւանդութիւնն առանալի այնքան հեշտ է, ինչպէս մեզ մօտ խարբութ սամանալը, երբեք չի հարկաւոր առաւօտեան գուրս երթաւ, առանց բաւականին խմելու և ուտելու: Բայց որովհեաւ ես գուրս եկայ Թէ՛ֆլիսից արեգակը ծագելուն պէս և այսպիսի վաղ ժամանակ ոչ մի կերակուր չէր կարող անցնել իմ կովորդով, ուտափ ես հրամայեցի հիւրանդութ երեկոյեան տապակել ինձ համար ճառեր, որ առաւօտեան

Ճանապարհին նրանցով յիշատակեմ պատռելի ող. Գամիլովին:
Ահա թէ ինչու համար իջևանի տնակը տեսնելուն պէս ես
յիշեցի խմատալից խօսքերը, թէ «Հետաքրքրելի կը լներ ու-
տել և խմել»:

Իջևանում ես հասի այն օֆիցերի ետելց, որ քաղաքադրան
մատ լնձանից առաջ եր լնկել: Երս համար լծում էր ճնա-
ները: Ես հրամայեցի լնձ համար ել ձի լծել և յանձնելով
Ճանապարհաթուղթու իջևանի վերակացուին գրքում գրելու
համար, զըազիցայ ճաներովը:

Յէտ գարձնելով մեր Ճանապարհաթղթերը, վերակացուն
կարծեմ խառնել եր նրանց և իմ տուել եր օֆիցերին, իսկ
նրանը գրեց իմ առաջիօ:

Տնանում եմ—օֆիցերը մի կերպ կասկածանքով է նոյում
դէպի լնձ: Իսկ նրա աճպը—կատարեալ կովկասեան, վերական
եր, մարդկութեան գեղեցկութեան մի պատկեր եր. շքեղ մա-
զեր, հիանալի քնքոյշ փոքրիկ միրուք, աղնիւ անսովոր գեղե-
ցեկ գծեր բարի երեսի, բարի քնքոյշ աչքերով: Ես մօտենում
է լնձ և տալիս է լնձ իմ Ճանապարհաթուղթը:

— Ներեցէք, դո ձե՞ր Ճանապարհաթուղթն է. Նրան
տուել են լնձ սիսալմամբ:

Նոյում եմ—իմ է. «Թ՛ Փլիս քաղաքից մինչև Երեան
քաղաքը և ոյնտեղից դէպի յետ ստատուկի սօվեանիկ Մօր-
գօվելին տալ երկու ձի առաջնորդի հետ կարգուորեալ վար-
ձով տուանց ուշացնելու»:

— Երեւէ ձե՞րն է:
— Այո իմն է... իսկ սա իհարկէ ձե՞րն է:

Բաց եմ անում օֆիցերի Ճանապարհաթուղթը, նոյում
եմ ազգանունն, նրան իմի հետ խառնել գժուտը չէ, նրա
ազգանունը նոյնպէս է սկսվում, ինչպէս և իմն—Մօր—ով,
Մօրուլաձէ:

— Ներեցէք . . . դո դո՞ւք եք, հարցնում է զեղեցիկ
վրացին:

— Ես ինքս եմ
— Ներեցէք . . . Ես չէի ուզում հարցնել . . . Գա
ձե՞ր տոհմանունն է:

— Իմն է—կեղծած չէ, ժպտում եմ ես:
Ժպտում է և իմ գեղեցիկ վրացին. ի՞նչ ատամներ . . .
— Ո՛չ, ես ատատում եմ, ես այդ չէի ասում . . . Այդ
տոհմանունը . . .


— Ի՞մ սեփականն է, Ճանապարհաթուղթս կեչուած չէ,
կարող եմ ցոյց տալ ձեզ իմ անցագիրը. այնպիսի ալեռոր միրուք-
ներ, ինպէս իմն է, չեն պատկանում կասկածաւոր մարդկանց . . .

Բնորովին ծրագրեց թուլացրի գեղեցիկ վրացուն. մար-
դարտեայ ստամները այնպէս պապզում են . . .

— Ո՛չ, ձեր տոհմանունը մամուլի մէջ . . . Գուք . . .
— Հա, հակացայ ես:
— Այդ ամենը ձե՞ր հեղինակաթիւնն է:
— Ամենն իմն է գմբաղարար:
— Ի՞նչ էք ասում, և „Վելիկի քառօրյան“—ն *) է . . .
— Բոլորը, բոլորը, մինչև անգամ տեղի շատ քանի բոլորը:
— Ի՞նչպէս ուրախ եմ ես, ինձ այնպէս ախորժելի է իմանալ,
որ . . . և այն այսպիսի ֆրազաներ:

Ցայտնվեցաւ, որ զեղեցիկ վրացին շատ եր կարգացել
շատ բան է իմանում և առհասարակ համաեւրոպական լրսա-
ւորութիւնը զորս չէ զանվաւմ: Նրա ծանօթութիւնը՝ այն
էլ ոչ հարեանցորդն, միայն ուսւաց գրականութեան հետ չէր:
Եւ սա որոշեղ էր. Անգլիակասում, այն լիսների մէջ, ուր
թափառում են իրանց շատրների և հօտերի հետ մօնդովները,
կարծեմ ուղեղ սերունդները նրանց, որոնք մեր ուռւ պապերն
ծեծել են Կովկասի մօտ, իսկ յետոյ Բասիի հետ կրի են
տաւել ձեւաների ոսքերով Կեվի հրապարակները, ուր մեր նա-
խահայրերը ազօթքներ էին կարգում Պերունին և դամ—աս-
տու ծուն:

*) Հեղինակի առաջնահանդիս լինելու մէջն է: Ծ.



—Հիւսուածք հարկաւոր է, աղոյ ասում է նոր թուրք սայլապանը:

—Ինչպէս չէ հարկաւոր, անպատճառ, լաւ շինէր:

—Հիւսուածքը լաւ կլինի:

Հիւսուածքը հիւսվում է թոկերից փոստայն սոյլի մէջ նստելու համար:

Շուտով ձիաները լծեցին սպիտակ ատամնաւոր վրացու համար էլ, ինձ համար էլ Որովհեսկ սպիտակ ատամներն առաջի սոյլակով պիտի գնային, ինձնից առաջ և որովհեան թիֆլիս-Երևանեան խճուղին, որ արագութեամբ չորացել էր Ասկայի ջերմարեգակի տակ և ամբողջ ամիսներով չէր թրչվել անձրեալ, սարսափելի կերպով փոշի էր բարձրացնում, այս մասին ազնուաբարոյ մարդարտեայ ատամները, լինելով յօւսու հատութեան մէջ, որ նրանց՝ այսինքն երեք ձիու և սոյլակի բարձրացրած փոշին կարող է բոլորովին խեղիւլ ինձ, որին պէտք էր գնալ սպիտակ ատամների քամակից, —եռամնդով ինդրեցին ինձ նստել իրանց սոյլակում և նրանց հետ միասին երթաւը իսկ իմ սոյլակում նատացնել նրանց զինուոր ծառայուն: Բոյց ես ոչ մի կերպ չը կարողացայ համաձայնվիլ իմ նոր ծանօթի սէրելի առաջարկութեան, բոյց չէի էլ ուղղում նրանցից հեռանաւը իմ առաջին սպասում էր անցայտ և երկար ճանապարհ և այս մասին մէնակ մնալը հազիւթէ մէկի համար հրանդուրէ լինի, իսկ ես, խոստովանվում եմ, չեմ կարողանալ իրուատալ ոչ պրապօրշչեկ Շէգոլէվի քաջութեամբ, ոչ էլ լէյտենանտ դուբասօվի *) տղամարդութեամբ:

Այս պատճառով վճռեցինք միասին դնոյլ, մէկը միւսի եաւեց, բոյց այնպէս որ առաջի սոյլակը միշտ լինի բաւականաչափ հեռու միւսից, որպէս զի չը կարողանար խեղդել

*) Պատճեռութէ Շէգոլէվի 1855 թւի այսեւելուն պատճեռութէ ժամանակ մէ քանի լեռնասներով պաշտպանել է Օքեանոս, իսկ Հյայնա աստիք Դաւթանած վերջին պատճեռով մերուն է, որ ճայլեցիւլ է լինեցաց թիւ դրահանդին:

Թողով թշուառ արարատեան ճանապարհորդին:

Մինք սլացնք: Զախ ձեռքի կողմին թողնելով կուրի տիլը, մէնք շուռ առունքնք զէպի տջ, մի քիչ զէպի սաւը:

Մեր առջեւ բացվել էր Կարահանլի սարսափելի անապատը, կամ մի հովիտ, որին աւելի ուղիղ կլինէր անուանել «Տահուան հովիտ»: Գոտէ այսպէս անուանեց ակ, Մօրտուամէ, ցոյց տակով արեգակից կիզված տեղ տեղ թմբացած կաշտավայցը, որ գցված էր հակայական ըրջանակի մէջ կովկասեան և Անդրկովկասեան երկու լիոնայն շղթաներով, — որոնց միջով հաղիւ նկատելի շերտի նման պայտ է գալիս օձի պէս պղտորածուր կուր Կուրը իր եղերքների կանոններով:

—Ի՞նչու է նա «մայուան հովիտ», զարմանում էի ես:

—Այս ինքներդ կը տեսնէք, երա մէջ բնակվում են այժմ միայն կովկասեաները (մի տեսակի մէջ սարգես), Փալտնաշները և խեցղեաւնները, իսկ մնացեալ ամեն ինը փախչում է սարերում ծածկիւու:

—Իսկ թռչունները, ես նրանցից շատ եմ տեսնում:

—Բոյց նկատեցիք թէ ինչպէս ներն են, զրանք այնպիսի թռչուններ են, որոնք կերպերվում են միայն մօրեխներով և սողուններով:

Գաշտավայրը, որ ընկած էր իմ առաջին շատ վերստ հեռաւորութեամբ, Ճմարիս որ չարագուշակ էր երկում:

III

“ՄԱՅՈՒԱՆ ՀՈՎԻՑՈՎ”

Որքան ինձ յայտնի է, մէր Անդրկովկասի նկարագրական գրականութիւնը անսովոր աղքատ է: Կովկասը, զիսաւորապէս բազմաթիւ լիոնային ցեղերի ամբողջ երկիրը, այն ամենը, ինչ ընկած է և ապրում է թիֆլիսի և Կուբանի մէջ, շքեղ բանաստեղծական ճանապարհը կովկասեան սարերի միջով — այսպէս անուանված պատերազմական — վեաց ճանապարհը, այս բոլոր

Եւոները և փոքրիկ սարերը—Մաշուկա, Բեշտառ, Ելքօրուս,
Կազբէկ, այս բոլոր գետերը, գետակները և առուակները—
Տ' իրեկ, Արագվա, Կուր, Կումա, Պողկումօկ—այս ամենը
Նկարագրվել է և երգվել է հարիւրաւոր, կարելի է հազարա-
ւոր անգամներ. գիտնականները խօսել են այս Կովկասի մասն
բաղմաթիւ հատորներում. բանաստեղծները, սկսած Պուշկինից
և Լերմոնտովից և վերջացած Շեվչենկով ողեւորվեցան Կով-
կասով և նրա կախարդիչ և ահաւոր գեղեցկութիւններով և
երգեցին այդ գեղեցկութիւնները հիմնալի, անմահ ոտնաւոր-
ուհրով, ինչպէս են Ելքօրուս և Կազբէկ:

Խակ Կովկասի մէջ եղած պատերազմների հարիւրաւոր
Նկարագրութիւններում մի՞թէ քիչ պատկերներ և նկարագրու-
թիւններ կան այդ իսկ կախարդիչ երկրի մասին:

Առհասարակ այս Կովկասը աւելի յայտնի է մեղ ամենիս,
քան Պետերբուրդի կամ Մօսկվի նահանգները իրանց անգոյն
աեսարաններով:

Բայց այն Կովկասին, որ սկսվում է լեռնային շղթայից,
Խակապէս Թիֆլիսից դէպի դէնը, մենք համարեա բոլորովին
չնիք ձանաչում:

Բայց այնու ամենային դա մի ամբողջ առանձնատեսակ
աշխարհ է, որին ոչ մէկը չէ ուսումնասիրել և չէ նկարագրել:
Եւ նա մի ընդհանուր բան չունի նրա հետ, որին մենք սովո-
րել ենք հասկանալ Կովկաս անուան տակ: Դա Կովկասը չէ—
բոլորովին նա չէ: Ինձ առջեցրաց կետնքը այդ առանձնութւնը,
որին ես այնտեղ պատահեցի և որի մասին մինչեւ անգամ չէին
մտածել:

Ահա ինչու համար ես կը ցանկոյի տալ ընթերցողին
գոնէ մի թոյլ հասկացողութիւն այն մասին, ինչ որ ես աեսել
եմ, գնալով Թիֆլիսից մինչեւ Արարատը, թէպէտ և վախու-
մուր մի գուցէ այս լնդիրը իմ ոյժի շափ չի լինի:

Ինչպէս որ լինի, բայց եթէ ընթերցողը չի ձանձրանայ
իմ պատմութիւնով, ես կինդրեմ գնալ իմ ետևից—սռաջ

Կարաեազի անապատով, այդ հմահուան հովեսով, յետոյ
Գելեջանի երկար կիրճով նոյն անունով հյանալի գետ՝ ափե-
րով, որ այնպէս ներդաշնակ կերպով հնչում է իր քարեայ յա-
տակով և կարող էր մի կողմով յիշեցնել Տերեկը կամ Արագ-
վան, եթէ նրանց գեղեցկէլ, վայելանկար չի լինէր, յետոյ լեռ-
նային բարձրութիւնով, որ բարձրացած է ծովի մակերեւոյթից
եօթ հազար ոտնաշաբանց էլ տել և իր հետ տարել է այդ
բարձրութեան վրա մի ամբողջ ծով—գոկչան, մի բարձրու-
թեան վրա, ուր ամբողջ ամսաւր, որ շարունակում է հազիւ-
թէ երկու ամիս, լինում են մշտական ցրտեր և ուր ռուսաց ակա-
մայ գաղթականները—Տոլականները սնրով մառանում են իրանց մայ-
րինի աշխարհը՝ սորթ, անգաղցրաբարոյ Ռուսաստանը, որ անխիզմ
կերպով գուրս է գցէլ նրանց իր միջից միայն այն պատճառով,
որ նրանք մասնաւմ են իրանց կերպով վերջապէս—Արաքսի
ամենաշքեղ հովիտով, որ գանխում է Արարառն ստորոտում,
ուր աւանդութեան համաձայն համաշխարհական ջրհեղեղից
յետոյ մարդը գտել է իրան ապաստանարան և որտեղից յե-
տոյ սկսել է ցրվէլ երկրագնակ ամեն կողմեր ջրհեղեղից յետոյ
բաղմացած մարդկայն ալջը:

Եւ այսպէս մեր աչքի տռաջին է Կարաեազի անապատը:
Այդ աեղ աեղ բարձրացած հովիտը, կարծես, պէտք է
լինէր ամբողջ Անդրկովկասի շտեմարանը և կերակրէր ուրիշ
հայի նեղութիւն քաշով աեղեր: Նրա մեծ մասը բաղկացած
է պարարտ սեւահովի սալերից, որ իգուր է սպասում արօրի.
անապատը, երևի, մի անգամ էլ հերկված չէ նոյն իսկ այն
ժամանակից, երբ բոլորովին կանոնաւորովիլ է մեր մոլորակը և
նրա մակերեւոյթը գարձել է ընդունակ ծնել հաց և բուսու-
ցանել ծաղկեներ և ձևառներ: Այս անապատը բոլորովին ան-
ջուր է: Եւ որովհեամ անձրեները այդ աեղ գոյացնում են
շատ սակաւագիւտ երեսոյթ այն ամիսներում, երբ հողն աւնըի
կարօտում է նրանց, այդ պատճառով Կարաեազի անապատը,
չը նայելով պաղարեր լինելու կարելիստիւթեան, մնում է այնպէս
անպտուղ ինչպէս է Սահարան: Աչքն որքան արձակ տարա-

ծոթաններ է տեսնում, ամեն տեղ երեռում է միայն արեղակնաց այրված բաւականին խոս, որին նոյնպէս երբէք չետապիկ ոչ գերանդէն, ոչ մանգազը: Միայն տեղ տեղ երեռում են բաց - կանանց ըլքակներ, որոնք անապատի ամբողջ մեռելութեան մէջ աչքի են ընկնում և երեռում են այնպէս տարապայման որպէս թէ անտեղի կերպով, որ կարծում ես թէ գոքա մեռեալի երեսին մի կարմրութիւն է:

—Սայլապան, այ սայլապան:

—Ինչ է աղօյ:

—Դու կարծեմ ննջում ես:

—Ո՛չ, աղօյ, միայն տաք է, ո՛ւշ որքան տաք է:

—Իսկ սա ինչ կանաչ ըլքակներ են:

—Կանաչ ըլքակներ . . . ինչ կանաչ . . .

—Այ սա —այ կանաչ թփիր . . . Դո ի՞նչ է:

—Զը գիտեմ, աղօյ, թէ դա ինչ կանաչ է:

Անր սա ի՞չ բոյս է, սա ի՞նչ կեանք է, որ այսպէս կատարեալ է մեռեալի մամի պէս գեղին երեսի վռան:

Բայց ահա կորչում են մեռեալ անապատի ոյդ կանաչ կէտերը: Միայն ձանապարհի կողքերն սպասակի են տալիս արծաթեայ ասեղնագործի պէս սարդի սասանները, որոնցով պատոսծ է գետնը և կովածուծների որջերի մօտ եղած չոր խոռները: Երեմն անապատի վըս թմրում էր գէշառնչ բաղէի ծանօթ սուր ձայնը, որ կարծես գանգատավում էր ոյդ մեռելոյն դրութեան վըս:

Արեգակն էլ աւելի անտանելի կերպով խաշում է: Ամենասասուկ ծարաւը յաղթում է: Մի շեշ կուրի ջուրը ոյնպէս տաքացել է, որ կարծես նրա միջի ջուրը եռ եկած ինքնաեռից էր: Կարմիր գնչն, որ ես ձանապարհի համար վեր էի առել, փոստային երերանքից ամբողջապէս արնոտ փրփուր էր զարձել, բայց ես կուշ եմ տակս ոյդ փրփուրը, որով ինաւ բերանս և կոկորդս այնպէս եւն չորացել, ինչպէս այս մեռեալ անապատը:

—Ահա կանաչ . . . յանկարծ ուրախացաւ սայլապանը, կրկն

տեսնելով ձանապարհից ոչ հեռու ինձ անծանօթ բոյսը:
—Հա սպասիր, —մի բոպէ կանգնացրու ձիաներին:

Սայլապանը կանգնացնում է: Ես իջնում եմ սայլից և մօտենում եմ ինձ հետաքրքրով փափուկ—կանաչած թմբերից մէկն: Ճշմարիտ, մի օտարոտի բոյս է, մանաւանդ այսպիսի՝ նրա հետ չը ներդաշնակող շրջանում: Չորս կողմում ամեն ինչ մեռած է, չոր է, տաք է, իսկ այդ բոյսը, որի երկար, շքեղ կանաչ ծիլերը տարածված են գետնի վրայով ձմերուկի կամ վարունդի նման, անսովոր հիւթալից, անսովոր կանաչ և շքեղ է. նրա երկար տերեւները հաստ և պարարտ են, ջահէլ Փորթոգալի կամ լիմնի տերեւների նման. նրա ձիւզերը և ծիլերը նոյնպէս շատ պարարտ են: Ակամայ զարմանում ես, ո՞րտեղից է նա, այդ շրջապատող չորութեան, միշտ չորացած գետնի մէջ, տաք, կատաղի կերպով այրողամեն ինչ չորացնող արեգակի տակ, ո՞րտեղից է նա վեր առնում իրա հիւթերը: Իսկ ո՞րտեղից է հաւաքում իր հիւթերը հնդկաթզենն, հսկայ հընդկաթզենն, Յունաստանի անպատող ժայռերի վրան, Եգիպտոսի առք արեւի տակ, Պալեստինայի տաքութիւնից այրված քարերի վրա: Ո՞րտեղից են նոյն աեղերում վեր առնում հիւթեր ահագին արմաւենին, հսկայաձեւ հալուէ ծառը:

Ես զօրով կտրեցի ինձ անյայտ բոյսի մի բաւականին երկար ձիւզ, այնպէս է նա ծակոտում իր երկար փշերով: Ես սոկեցի այնպիսի ձիւզ, որի վրայ գեռ կային կարծր, հիւթալից կոկոններ. կային նոյնպէս և ծաղկիներ և վերջապէս պտուղներ, որոնք նման էին մանր վարունգների կամ կանաչ, փոքրիկ սեխերի:

—Այդ ինչ էք պոկում: —Գոչում է ինձ պ. Մօրտուլաձէ, հրամայելով կանգնացնել իր ձիաներին:

—Զը գիտեմ թէ սա ինչ է. կցանկայի ձեղանից հարցնել սայլապանը չի իմանում:

—Դէ ցոյց տուէք:

—Ահա այտեղ ծաղկիներ էլ կան և վարունգի ողէս պտուղներ:

— ՕՇ, դա միթրալիօգաւէ, ժպտում է գեղեցնկ վըացին:

— Ի՞նչ միթրալիօգա:

— Երբ այս փոքր՝ կ վարունգները հասնում են, Հենց որ ախա-
չում ես նրանց — իսկոյն հրացանի պէս արձակում են իրանց կո-
րիզները, բոլորովին վախեցնում են . . . Ի՞նչ էք տղում ա-
նել այդ ճշողի հետ:

— Ուղում եմ մի կերպ պահպանեմ և ասմեմ ՊՇտերբուրգ.
ոյնտեղ դիտցողները կարելի է կը բացադրեն թէ սա ինչ բան
է: Երեկ ԲՇկետովը կը մանայ:

— Մեզ մօտ, Թիֆլիսում էլ կը գտնվին դիտցողներ, օրինակ
Բաղդին:

— ՕՇ, դա էլ Ճշմարիտ է:

Բայց ահա մօտ է և իջևանը: Ես հանդիսաւոր կերպով
տանում եմ անյայտ Ճշուղը, բարձրացնելով նրան վերև, որ իր
փշերով չե կոչէր շորերի: Իջևանում թուրք սայլապանները նա-
յում են ինձ վրա զարմաց քով, կարծես ես տանում էի հետա մի
որ և իցէ անպիտան վայրեն՝ բոյս, ընդունելով նրան ինչպէս
ուշադրութեան արժանի մի բան:

Իջևանի տնից մեր առաջն է գալիս վերակացուն: Նա էլ
հետաքրքրութեամբ նայում է Ճշուղին, որ ես բռնուծ եմ ձեռ-
քում, վախենալով, որ չի ծակուի:

— Չը գիտեմ, ինչպէս պահպանեմ սրան, ասում եմ ես:

— Իսկ նա ձեր լնչի՞ն է, հետաքրքրվում է վերակացուն:

— Ալիր ոչ ոք չէ իմանում, թէ սա ինչ է:

— Դա կապտու է:

— Ի՞նչ:

— Կապտու, օրին ուսում են սօսւի հետ:

— Հա, Ճշմարիտ որ կապտու է, բացադրում է պ. Մօրտուլաձէ:

— Ինչպէս, կապտու, դա նոյն է, որ պատիկ շիշերում են
պահում:

— Այս, Հենց նա է,

Ես զնում եմ Ճիշը և Ճշմարիտ, դանում եմ, որ այդ

րոյսի գեռ չը բացուած ծաղիկների կոկոնները մեր կապառն է,
առանց որի շատ սօսւմներ անկարելի է պատրաստել:

— Եւ այս թանգագին բանը իզուր փչանում է մեռեալ ա-
նապատի մէջ, զարմանում եմ ես:

— Այս, համարեա փչանում է:

— Ալիր գրանով իզուր փչանում է ժողովրդի հարստութիւնը:

— Ի՞նչ արած: Ով պիտի հաւաքէ: Տեսնում էք, չորս կող-
մում մեռած անապատ է:

— Մի քանի տեղերում զրան հաւաքում են, բացադրում է
վերակացուն — ալբողջ կարտաներով և պատրաստում են ձմռու-
ոյ համար:

Այս երկորդ իջևանից յետոյ անապատն ընդունում է էլ
տեկի գաժան բնաւորութիւն, թէ պէտ նա, ըստ երեսյթին, մի
քիչ կորցնում է այն գրաի ձեր, որ անբաժանելի է մեր եւրո-
պական, այսինքն ուսւական անապատներ մասին հասկացողութեան
հետ: Այս անապատը կարող էր լինել և գեղանկար և ոչ միա-
նման, ինչպէս օրինակ մեր Գօնի, Նօվօրօսսիայի, Սարատովի, Սա-
մարի կամ Վոլգայի անապատները. այսուեղ կան աջ կողմից և
սարեր, որոնք շատ տեղերում ունին ախորժատես զառիվայրեր.
կան և աւագեայ լլրակներ, երեսում է մթնագոյն կանաչ ձափ,
կողմում, կարի հովիտի մօտ: Բայց կայ սրա մէջ մի աեսակ
տանձնայտակութիւն, որ նրան շնուր է անտանելի, մինչեւ ան-
գամ երեակայութիւնը վախեցնող:

Չը աեսնելով ոչ մի աեղ մարդկային բնակարանի հետքեր,
գուք յանկարծ աեսնում էք ձանապարհի մի կողմում — ի՞նչ. —
միայն գերեզմանատներ: Բայց գրանք մեր, քրիստոնէից, գերեզ-
մանատները չեն, ոչ ուսւաց ոչ եւրոպական: Ոչ, գոքա են ա-
րեելքի գերեզմանատները, բայց ոչ այն բանաստեղծական ա-
րեելեան գերեզմանատները, ուր գերեզմանաքարերը գեղեցիկ
կերպով սպիտակի են տալիս հիանալի կիպարիսների շուաքում

կամ մրտանիների խիս կանաչների ասակ, ինչպէս դա դուք տեսնում էք Կ. Պօլսի գերեզմանատներում կամ Ղըմում: Դրանք եղիպտացի Փելախների գերեզմանատներն էլ չեն, որոնք գրանքում են Փելախների գիւղերի մօտ: Ընդհակառակն այս գերեզմանատները խօսում են միայն մահուսն, գերեզմանական լուսթեան մասին: Նրանց մօտ չկայ ոչ մի կանաչ թփիկ, ոչ կեանգի մի նշան: Դուք միայն տեսնում էք կանգնացրած ըստ մեծի մասին կարմրախայտ քարի սալեր, որոնք հեռուից յիշեցնում են անշարժ կանգնած մարդկանց: Դուք լաւ նայում էք և հասկանում էք, որ սրանք գերեզմանական քարեր են, այս քարերի մի բազմութիւն, որ միայն իր տեսքով սրանեղութիւն է պատճառում, մանաւանդ երբ դուք չորս կողմում չէք տեսնում ոչ մի բնակարան, ոչ մի հողի—ոչինչ, բացի Անդրկովկասի լուս դաշտավայրից և փոքրիկ սարերից:

—Արանք ինչ՞ո՞ր են, մի՞թէ գերեզմանատներ են, պարմանում էք դուք ակամայ:

—Այ՛ո, դրանք գերեզմանատներ են:

—Որոնցների՞նն են նոքա:

—Դոքա այստեղի թրքերինն են:

—Իսկ ո՞ւր են նրանց բնակարաները: Այդտեղ ոչինչ չկայ, բացի գերեզմանաքարերից:

—Իսկ նրանց բնակարաները հրե՛ն այնտեղ են. աեստում էք փոքրիկ հողակոյտերը, փոքրիկ թումբերը:

—Ո՞ւր են: Ես ոչինչ չեմ տեսնում:

—Այ այն կողմին, նայեցէք, գեանափոր խրձիթներ կան. այ և նրանց ծակերը—դրանք էլ դուներ են:

Ես նայում եմ և ձշմարիտ որոշում եմ հողից կուտած բըլրակների պէս մի բան, մի բան որ նման է մեր գիւղերի ամառնային գեանափոր մասւաններին: Նրանց զօրտվ ես կարող ջոկել նրանց շրջապառող հողից, աւագից. հէնց մի տեղ մի հաս-

տաշեղ, մի քիչ աղբ, յարդի կտորներ լիներ. ոչինչ չկայ: Եւ դա բնակարան է! . . .

—Իսկ ո՞ւր են մարդիկը: Ինչո՞ւ չէ մի շուն հաջում, մի կով բառաչում, մի աքաղաղ կանչում:

—Այստեղ մի հատ մարդ էլ չկայ, ամենքը գնացել են սարը, թափառում են մի սեղից միւս տեղ:

Եւ իրաւ, կեանքի ոչ մի նշան չկայ:

Ես տեսել եմ մարդկանց զանազան բնակարաններ, ամենայն տեսակ բնակչութեան տեղեր, բայց սրա նմանը ոչինչ մի տեղ չեմ տեսել: Ես տեսել եմ Ղըմի թուրքերի գեղեցկատէս խըրճիթները, որոնք ընկղմնած են խաղողի որթերի կանաչութեան մէջ, ընկուղենիների, կաղամախինիների և այգու կանաչների շուաքում: Ես տեսել եմ չերպէզների մոայլ գիւղերը և նրանց քարեայ խրձիթները, որոնք նման են այն ժայռերի, սարերի և քարերի բեկոններին, որոնց վրա նրանք կպած են, ինչպէս լեռնային ժժոշունների բոյներ: Ես տեսել եմ տաճիկների, յոյների, եղիպտացի Փելախների, Պալեստինայի հաստատաբնակ արաբների բնակարանները: Այն աեղ դուք տեսնում էք, որ դրանք մարդկային բնակարաններ են: Իսկ այստեղ դրանք կովածութների որջերի նման են, որջերի, որոնք վաղուց են թողուած:

Այդ որջերը իսկապէս թողուած են մարդկանցից: Նրանք թողնում են նրանց ամեն ամառ, որովհետեւ ամեն ամառ ամբողջ Անդրկովկասի հովիաններում թագաւորում է մահը: Այնաեղ ամսութ ամեն ինը գնում է սարեր, տեղափոխվում է, որովհետեւ հովիաններում, գիւղերի և քաղաքների մէջ ապրել անկարելի է. մի կողմից սպանում է ջերմութիւնը, որ հասնում է 50 աստիճանի, անխնայ և մահացնող կերպով կծոտում են կովածութները, ֆալանգանները, խեցգետինները, միւս կողմից մարդիկ մեռնում են ջրից, որ Անդրկովկասի հովիաններում իսկապէս մահառիթ է: Ինձ ամենքն էլ նախազգուշացնում էին

այդ ջրի մասին:

—Այդտեղի ջուրը չի խմէք, նա թոյն է, միայն կտրելի է խմել կուրի ջուրը, շատ անգամ կրկնում էին թիֆլատում և դեմքանի ձանապորհում:

—Ի՞նչ պատճառով է այդ ջուրը թոյն, հարցնում էք դուք:

—Այդպէս է նրա յատկութիւնը: Նա գոյացնում է ջերմուտենդ, ասիական, սաստիկ մահաբեր ջերմուտենդ:

Ինչպէս որ լինի, բայց ամառն ամբողջ Անդրկովկասը գտնելում է սարերում: Ինձ ապշեցրեց այդ հանգամանքը, երբ ես հարկաւորութիւն ունեցայ տեսնվել երեւանեան նահանգապետի շետ:

—Դուք նրան Երեւանում չեք գտնի, նախազգուշացնում էին Ինձ թիֆլատում:

—Իսկ ո՞ւր է նա:

—Քոչատեղում—Դարաչչազգում:

—Ինչպէս քոչատեղում:

—Ճշմարդու ամառը ամեն ի՞նչ գնում է քոչատեղիք, որովհետեւ քաղաքներում ապրել անկարելի է, և հէնց գիւղերում էլ նոյնպէս է, թուրքերը նոյնպէս քոչում են:

Եւ իրաւ երբ յետոյ ես այցելեցի Երեւանեան նահանգապետ գեներալ Մ. Նա. Շալիկօվին քոչատեղում, Դարաչչազգի սարերում, Երեւանից 45 վերստ հեռու, այն ժամանակ տեսայ որ այնտեղ գտնվում է և նահանգական վարչատունը, և նահանգական գատարանը և ակցիզային կառավարութիւնը:

—Ոձերն էլ անգամ քոչում են այստեղ ամառը, լոջօրէն ասում էր Երեւանեան նահանգապետը, երբ ես ձաշում էի նրա մօտ Դարաչչազգում:

Բայց այս մասն իրան տեղում կատեմ:

IV.

ՄԻՆՉԵՒ ՈՒՁՐԻՒ-ԹԱԼԱ:

Ուրան առաջ ես գնում, այնքան էլ ճանապարհը աւելի և աւելի հեռանում է կուր գետի հովիտից, ուղղվելով մի քիչ դեպի աջ:

Աջ կող կից աւելի և աւելի մօտ են գալիս սարերը, բայց այն տեղը, որով ես գնում եմ, գեռ ուներ անապատի կամրդաշտովյրի տեսք, թէպէտ և նկատելի էր, որ սարերին կողմինակի շարքերը մի քանի տեղերում կտրում էին դէպի Դ'լիջանի կիրճը տանող ճանապարհը:

Շուտով այս լեռնայն շարքերի ետելից երեւաց ծմակի կանաչը. այդ ծմակը ընկած էր մի գետակի կողմով, որ գուրս էր գալիս սարերից և իր աղմկալից, որոտով ջրերը տանում էր դէպի կուրը:

Դա Խրամ գետակն էր: Ի՞նչ չքնար գետակ է դա: Նա արտգավազ է և աղմկալից, ինչպէս և Կովկասի միւս լեռնայն գետակները. բայց նա քիչ աղմկաւոր է, քան Տերեկը կամ Արագվան, թէպէտ և նրա ջրերը, որ հաղիւ վերջինիս ջրերից շատ առատ չեն, վագում են մի քարից միւսի վրան և գնում են անսովոր արագութեամբ:

Առաջ քան այդ գետի կամուրջով անցնելը, մենք պարտաւոր էինք կանգնել ինձուղու սահմանագուան մօտ, որ տեղաւորված էր կամուրջից մի քիչ հեռու: Ապասելով ստանալ անց կենալու ապահովագրեր, պ. Մօրտուլաձէ գնաց այնտեղ գտնվող գինետունը, որ ուտելու մի բան գանէ և բերէ այնտեղից եփած ձուկ: Այդ ձուկը բոլորովին նման չէր այն ձկներին, որոնց մենք սովորել ենք Ռուսասահնում: դա անդրկովկասեան գետերի ձուկն էր, որի անունը պ. Մօրտուլաձէ չը գիտէր:

Շուտով երեւաց սահմանագուան ծառան և յայանելով, թէ

Փիրոկացուն միքամի բոսկէ ժամանակով գնացել է փոստային իջևանը, որ կամուրջից գէնն էր գտնվում, հրառիրեց մեզ ծածկվել այդ ժամանակը արեւից մի համեստ տնակի մէջ, կամ լու ասած վերակացուի քարեայ խրճիթում:

Գանդատվելով խճուղու իշխանութեան բացակայութեան վրա, մէնք էլի գնացինք վերակացուի բնակարանը, բայց ոչ թէ նրա վերադառնալուն սպասելու համար, այլ միայն նրա համար, որ ինքներս գրենք գրքում մեր ապահովագրերը:

Մտանք խրճիթը: «Եղ է ինչպէս արքայութիւնը տանող ձանապարհը: Թողոտ սեղանի վրա, խճուղուց հաւաքած փողերը գրելու համար արքունի գրքերի հետ, ընկած են ինչ—որ ծանօթ գրքոյներ, կարծես ծանօթ երեսներ երեւացին օտար մարդկանց ամբոխում:

— Տեսնում էք, ցոյց է տալիս ինձ իմ ուղեկիցը բաց արած գրքի երեսը:

— Ինչպէս չեմ տեսնում, տեսնում եմ, հին ծանօթներս են:

Դրանք էին «Отечественные Записки» ամսագրի 1881 թւի յուլիսի գիրքը և Վիկտօր Հիւգոյի «Отверженные—» ոռոսաց թարգմանութեամբ:

— Իսկ ինչի՞ս վրա է բացված «Отечественные» —ն:

— «Եղբարք» յօդուածի վրան:

«Այում եմ—գրքոյնը բաւական քրքրված է: Մի կողմից դուրս է ցցուած յաւելուածը: Բաց եմ անում—յաւելուածն է «նամակներ հօրաքրոջս»:

— Մտածում ես խեղճ գիրքը ո՞րտեղ է ընկել:

— Այ՛ն, այնտեղ, ուր ագուաւը ոսկորներ չէ տանում:

— Եւ ուր Մակարը հորթելի չէ քշում:

— Ո՛չ, քշում է, գեռ էլ հեռու է քշել ձեր ոռոսաց եղներին:

— Ի՞նչ եղների:

— Ահա էգուց դուք կը տեսնէք նրանց դոկչի մօտ:

— Ովքե՞ր են նրանք: Կարելի է ինչ որ աքսորվածներ են:

— Ձեր մօլոկաններն են:

— Ախ, այ՛ն. . . . Նրանք ինձ շատ են Հետաքրքրում:

Դուների մէջ երեւում է մի անծանօթ մարդ, որ հագած ունի արքունի զգեստ: Տիպը նոյնագէս վիրական է: Իմ ուզեկիցը զարմացքով լայն տարածում է իւր ձեռքերը, որոնցից մէկով բռնած էր գլուխանում նոր գնած անծանօթ ձուկը, իսկ միւսով հացը:

— Ինչպէս, այդ գո՞ւ ես այսաեղ, բացականշում է նա, յետույթ գնալով:

— Մի ժամանակ ես էլի, բայց այժմ ո՛չ, պատասխանում է ներս մանող վրացին:

— Ուրեմն զու խճուղու վերակացնուն ես, ինչ է:

— Այ՛ն:

— «Отечественные Записки» և խճուղու սահմանագուռ!

— Ի՞նչ անենք, մէկը միւսն չի խանգարում:

— Ճշմարիս է. . . . թոյլ սուը ներկայացնել քեզ դանիէլին... ներեցէք...

— Ունչ: Պանիէլին, միայն ո՛չ առիւծների գուբում նըստածին, ուղղացնում եմ ես իմ ուղեկիցի սխալը:

— Ներեցէք, այս ինչ մարդ և այն:

— Շատ, շատ ախորժելի է... Ձեզ զարմացնում է Շեքրինի և Հիւգօի ներկայութիւնը այս առիւծի գուբում:

— Երբէք...

— Դուք այստեղ կը գտնէք և Սպենսերին և Դարվինին:

— Կատարելապէս հաւատում եմ... ի զուր չէ, կարծեօք, գօդոլի մօա մէկը հեգնական կերպով ասում, թէ ժամանակ կը դայ, երբ ոռու մուժիկը գնալով արօրի ետելից, կը կարպայ Վիրպիլիոսի «Георгий» գիրքը, թէպէտ և ես առաւել կարծում եմ, թէ նա սիրով կկարգայ մի աւելի լաւ բան:

Նոր ծանօթը շատ սիրելի պարոն էր: Տեսնելով այ. Մօրտուլաձէի ձեռքում ձուկ, նա զարհուրեց:

— Դու այստեղ ձուկ ես ուտում, անբախտ մարդ, դու կը հիւանդանաւ:

— Աչին՝ ես չեմ վախում:
 — Իսկ դու ի՞նչ կը խմես: Ախր այստեղի ջուրը մահ է. . .
 — Ինչպէ՞ս . . . այսպիսի մաքուր, պարզ եռնային ջուրը...
 զարմանում եմ ես:
 — Այս, այդ իսկ ջուրը, այստեղ օդն էլ սպանող է, իսկ
 ջուրը մահաբեր է, ամեն ինչն այստեղ սոսկալ է:
 — Իսկ ո՞րտեղ են վերջանում այդ սարսափիները, հեռո՞ւ այս-
 տեղից:
 — Մինչև Երևանը, մինչև Արտատը, իսկ այնտեղ արդէն
 Պարսկաստան է:
 Նոր ծանօթը հիւրասիրեց մեզ լաւ գինով և չոր ուտելի-
 քով և մենք բարեկամաբար հրաժարվեցանք: Ես տանում էի
 ինձ հետ այդ ամայի անկիւնից, որ շըջապատուած էր մահու-
 ան սարսափով, շատ տաք յիշովութիւն:
 — Ինչպիսի՞ սիրով ես կը գայի ձեզ հետ Արարատ, եթէ կա-
 րելի լինէր, ասում էր ինձ Մօրտուածէ, երբ մենք անցած էինք
 Հքնաղ Խրամի մեռեալ ջըերով և նստել էինք իջեանում հո-
 վանոցի տակ, սպասելով մեզ համոր ձիաներ լծելուն:
 — Ինչու չի կարելի:
 — Իմ արձակուրդս վերջանում է— ես շտապում եմ զօրագնոտի
 բանակը համնել:
 — Ափսոս . . . ես ձեզ հետ աւելի համարձակ կլինէի:
 — Միթէ ձեզ վախեցնում է սարը բարձրանալը:
 — Իհարկէ: Արարատ բարձրանալը Խրամով անց կենալի նը-
 ման չէ:
 — Այդ մի ասէք . . . Ես իմ կեանքում միանգամ վախե-
 ցայ, միայն մի անգամ, այն էլ այս գետով անցնելիս ժամանակը:
 — Խրամով անցնելիս ժամանակը:
 — Այս, Խրամով:
 — Դա ինչպէ՞ս էր պատահել:
 — Ես սարերում էի և դիշերը վրահասաւ: Դառնալով տուն,
 ես պիտի անց կենայի Խրամով: Մօտենում եմ: Գիշերը լուս-

նանային է, բայց ամերամած և լուսինը երբեմն նայում է ամ-
 պերի միջեց, երբեմն էլի թագնվում: Իմ տակի ձին լաւ էր,
 սովորած էր—շէր վախում ոչ սարերից, ոչ էլ լեռնային գե-
 տակներից: Տեսնում եմնա չի գնում գէպի ջրերի մէջը: Ես նրա
 կողքերին խթում եմ, նա վախեցած խոխուացնում է, յետու-
 յետ է գառնում և բոլորվէն գողում է:— Աա ի՞նչ սատանայ
 է—մասածում եմ ես: Իսկ թամբէց իջնել և տեսնել թէ ինչ
 կայ ես չուզեցի ծոյլութեան պատճառով: Կրկին խթեցի կող-
 քերին և գործ դրեցի մարակը: Նա էլ աւելի խոխուացնում է
 և գէպի յետ է մղվում: Ես իջնում եմ և մօտենում եմ գետի
 ափին: Ճէնց այդ միջոցին լուսինը նայեց ամպի ետելից . . .
 Ես վախով յետ դարձայ. ջրի միջից նայում էր լինձ վրա մի թաւա-
 մաղ երես . . . Ես տնայ մերկ ուսը և ձեռքը: Դա մի աս-
 տանայ էր և ոչ մարդ, մարդկային զարհուրելի երեսով: Ճրեցը
 արագութեամբ շարժվեց ջրի միջով գէպի լինձ—կարծես շտա-
 պում էր հասնել եղերքին . . . Իմ մազերը դլխարկիս տակ
 իսկապէս կենդանացան, շարժվեցան, բիզ բէ զ կանգնեցին և բարձ-
 րացնում էին գլխարկս: Ես, կարծեօք, կը քարանայի տեղնու-
 տեղը եթէ սարսափը չը հրէր լինձ գէպի յետ և ես անզգա-
 յարար մղվեցյ գէպի ձին: Դուք հասկանում էք—դա մի
 կատարեալ վախ էր, որն ես կեանքում չէի զգացել մի կոյր,
 յիմար վախ, առանց որ և է զգացմունքի: Այսպիսի վայրկեան-
 ներում մարդ անխելք է դառնում, կարծես թէ ուշագնացու-
 թեան մէջ լինի: Համաձայնվեցէք, որ այսպիսի վախ Արարատի
 վրա լինել չէ կարող:

— Դուք ի՞նչ գիտէք—կարող է լինել գրանից էլ վատ:
 — Չեմ կարծում . . . Այստեղ կարելի է լինենել մի խորիս-
 րամի մէջ, պոկ գալ մի ժայռից, դուրսպուծնել մի սառուցից
 և վշանալ:
 — Բայց եթէ վըա համնէ կայծակնախառն փոթորկ տասնու-
 հինգ հաղար սանաշափ բարձրութեան վրա!:
 — Այդ ամենը նրա նման չէ:

— իսկ եթէ տեսնէք, որ ձեզ վրա գոռդրուալով դալիս են ձիւնակոյտը և քարակոյտը, որոնք շատ ժամանակ ուրիշ տեղորից էլ են երեալիս:

— Դա էլ նրա նման չէ հաւատացէք. դուք տեսնում էք այդ վտանգը, դուք իմանում էք, թէ առ ինչ բան է, իսկ ես աեսայ սատանային, որին չեմ հաւատառմ. ես չէի իմանում թէ նա ինչ է, իսկ անզգայ վախը զարհուրելի է ամենից, զարհուրելի է Արարատի սարսափներից, հաւատացնում էր գեղեցիկ վլացին:

— Լաւ, ենթադրենք թէ այդպէս է, յետոյ ի՞նչ եղաւ:

— Յետոյ ամեն ինչը բացատրվեցաւ պարզ կերպով... Մի քիչ ուշքի գալով, ես մտածեցի, թէ եթէ դա մի կենդանի, շօշափելի արարած է, և ոչ թէ ոդի, ուրեմն ես կարող եմ նրա հետ կովել. տեսրած է, և ոչ թէ ոդի, ուրեմն ես կարող եմ նրէշն մի գնակ կողցրի—նա չը գոչեց և չի մնաչաց: Ես արձակեցի ուրիշը—նոյնպէս լրած է: Երբորդն էլ հասցրի—նոյն կերպ: Այն ժամանակ ես մօտենում եմ գետի տփին, կուանում եմ ջրի վրան. Հրէշը միայն շարժվում է ջրի մէջ, իսկ ձեռք չէ բարձրացնում: Ես էլ մօտացի, հրէշը լրում է, չի յարձակվում ինձ վրա: Ես վերջնականապէս խելքի եմ գալիս, կուանում եմ ջրի վրան: Եւ երեակայեցէք—դա մի հասարակ մեռած մարդ էր, որին, Եւ երեակայեցէք—դա մի հասարակ մեռած մարդ էր, որին, մէկը գցել էլ ջուրը և որը մի բանից էր կպել: Ես առ ուրեմն, մէկը գցել էլ ջուրը և որը մի բանից էր կպել: Ես առ ուրեմն, մէկը գցել էլ ջուրը և որը մի բանից էր կպել: Ես ձին առջուայ պէս էլ չէր վախում, բայց էլք քիչ սարսում էր: Ես ձին առջուայ մի կողմէ Խրամից անցայ ուրիշ տեղով:

— Ո՞վ է եղել նո:

— Մը սպանուած անցորդ: Երբ միւս օրը վկաների հետ ես եկայ գուրա հանել դիակը, որ շատ վքվել էր, վկաները զարմացին, աեսնելով մեռածի երեսի վրան գնտակների հետքեր... Ես խոսուովանվեցայ, որ դա իմ դործն է . . . Կը յուսամ, որ Արարատի վրան այսպիսի բանի չէք պատահի:

Արդէն երեկոյեան մօտ աեղի բնաւորութիւնը սկսեց խիստ կերպով վիտսվել: Մինք շուռ եկանք գէպի աջ, գէպի ասրերը, գէպի դիլիջանի գեղանկար կիրճը:

Մեռած անապատից յետոյ ինչ զարմանալի բուսականութիւն է, որ շացնում է աչքերը ամեն մի քոյլում: Բուսական թագտորութիւն այդպիսի վիթխարիներ միմիանց հետ հիւսուած, կարծես կանաչ ցանցերով, անթափանցիկ լիաններով, ես ոչ մի աեղ չեմ տեսել, ոչ Եւրոպայում, ոչ Աֆրիկայում: Մենք ամենքս կարգացել ենք հարաւային Ամերիկայի կուսական ծմակների լիանների մասին, այն ծմակների, որոնք թնդում են թութակների ձայնից, կապրկների ծչիւնից, որոնք այդ սողուն բոյսերով մի ծառից անցնում են միւս ծառը: Բայց լիաններ մեղմոտ! — գրանց մասն իշարկէ, ոչ ոք չէ կարգացել: Իսկ նրանք կան մեղմ մօտ, թէպէտե, իշարկէ, նոյնը չեն, ինչ որ Ամերիկայում:

Մը խօսքով ես հրացել էի, ապշել էի այդ յանդուգն բուսականութիւնը: Դիլիջանի չքնաղ կիրճը մանելու ժամանակ: Մանաւանդ ապշեցնում էրն ինձ վիթխարի ընկուզենքը և ուրիշ ծառեր, որոնց անունները ինձ չը կարողացէն յայտնել: Այդտեղ էլ, լեռնամէջը մանելու ժամանակ, սիմինդրի, կորիկի և ցորենի արտերի միջում, դուք ամեն մի քայլում տեսնում էք ձմերուկը և սեխի բախւաներ, կամ ինչպէս այնակը տեսնում են բօստաններ: Այստեղը բօստաններում դուք նկատում էք, որ ամեն տեղ, մին և նոյն իսկ Արարատը մարդիկ, որոնք զիշերը սնց են կացնում օդի մէջ, քնում են մի տեսակ բարձրութիւնների վրա: Գետնի մէջ անկում են ջորտ հաստ ձողեր, մի սաժէն կամ աւել բարձրութեամբ, այդ ձողերի վրա գնում են գերաններ, որոնց ծածկում են չոր ձիպոսներով կամ խոտախաւն եղեցնով և այս օդային բարձրութիւնների վրա շինում են իրանց գիշերուոյ օթեանները: Գրանք շինուում են նրա համար, որ այնակը չէ գնան ոչ վայրենի գաղանները, ոչ ֆալանգանները խեցեալների հետ:

— Նայեցէք գէպի աջ, — գոչում է ինձ պ, Մօրտուլաձէ, կամպնելով մի բօստանի առջեւ, որ առնէ իրա համար ձմերուկ կամ աեխ: — Երբ և իցէ աեսն էք այդպիսի սար:

— Ո՞ն է:

—Հրէ՛ն, այն անսովոր կօնուալը:
—Տեսնում եմ նա վաղուց է ապշեցրել ինձ իր զարմանալի ձեռք:
Եւ ճշմարիտ, դա սովորականից գուրս մի սար է: Կամ մի
քիչ գուրս է եկած ասրերի ընդհանուր շղթայից, որ կազմում
է կովկասեան լեռնային գուահի մի բաղադրեալ մասը և նկար-
վում է պարզ կերպով հարաւային անամակ երկնքի կտղուտտակու-
թեան մէջ: Առաջ, հեռուից, ես չը կարսդացր հասկանալ թէ
դա սար է, թէ խոտի անսովոր մեծութեան մի դէզ է. այն-
քան զարմանալի ուղիղ է բնութեան այդ հրաշքի կօնուական
ձեր. բայց որքան մօտենում էք դուք, այնքան հայցմունքով
համոզվում էք, որ դա սար է, որ ստորերկեայ զօրութեաննե-
րին աջողվել է դուրս բերել մի ժամանակ այդ վեժսարի կօ-
նուալ երկրի խորքերից նրա համար, որ նախապաշտրված մար-
դիկ կարծէն, թէ դա ինչ որ տիտաններ են տաշել քարից,
մարմարինից և պօրտիլուրից այսպիսի հիանալի հարուստ ար-
ձան, որի առջև ամբողջ աշխարհի արձանները մինչև անգում
նգիպասի փարաւանների անմահ արձանները—մշտնջենաւոր
բուրդերը ոչինչ են երկում:

Երեկոն իջնում էր երկրի վրան և պէտք էր մասձել գի-
շերելու մասին: Ես յիշում էի իմ թիֆլիսեցի ծանօթների նա-
խազդուշութիւնները—գիշերը հասնելու ժամանակ դադարեց-
նել ճանապարհորդութիւնը մինչև վաղ առաւոտը—և այս պատ-
ճառով մենք վճռեցինք գիշերել մօտիկ իջեանում—Ուզուն-
թալում:

Գիշերով ճանապարհ գնալը ճշմարիտ որ երկիւղովի էր:
Դա կարելի էր եզրակացնել նրանից, որ անդրքովկասեան—պարս-
կական սայլերի կարսւանները, որոնց ետեւց մենք հասկել էրնք,
ույնակէս սկսեցին պատրաստուշ գիշերելու ճանապահի մօտ ե-
ղած գինեանները հայաթներում:

Այս անդրքովկասեան-պարսկական սայլերի (Փուրգոնների)
կարսւանների մասն առելորդ չեմ համարում մի քանի խօսք
ասել:

Ուստասանի և Անդրքովկասի մէջ, իսկ Անդրքովկասի մի-
ջով և Պարսկաստանի հետ լլուում է բաւական ընդարձակ տրան-
զիտի առեւտուր: Ուստաց ապրանքներով բեռնաւորված կարս-
ւանների երթեւեկութիւնը մանաւանդ նկատելի է լինում նիժ-
նայի տօնավաճառում գլխաւոր պայմանագրերը կատարելուց յե-
տոյ: Ապրանքների մի մասը գնում է Նիմնայից Վոգայով, իսկ
յետոյ գնում է կասպից ծովով. միւս մասը երկաթուղիներով
գնում է մինչև Վլադիկավկազ և այնտեղից—առաջ պատերազմա-
կան վրաց ճանապարհով մինչև Թիֆլիս, իսկ Թիֆլիսից մինչև
Երևան, Նախիջևան, Օրբուբաթ, Թավրիզ և այլն: Այս վեր-
ջին ապրանքները փոխադրվում են առանձին կարաւաններով
լեռնային ճանապարհների համար մասնաւորապէս յարմարեց-
րած սայլերում: Այդ սայլերը չորս ձիանի են և ամենքը կտ-
տարեալ մի տեսակ շինաված: Նրանք չափազանց ծանր և երկայն
են. միատեսակ ծանր և պինտ են անիւները, որոնց վրա պըն-
տացրած են այնպիսի հսկայական երկաթէ ձողեր, որոնցից մէկը
ոչ մի ժամանակ մի հսկայ չէ կռացրել, թէպէտև նա կարո-
ղութիւն ունեցած լինի պատառել «ինձի մորթին» (ես հաս-
կանում եմ հասարակ «ինձի մորթի», և ոչ թէ կովկասի
երեկելի պօէման—«ինձի մորթին», որ ամեն մի լուսաւորեալ
վրացու հպարտութիւնն է), ինչպէս մեր (ռուսաց) Եանուսմօշ-
վեց մի ժամանակ պատռել է եղան մորթին. այդ անիւներին
դժմանում են միայն կովկասի և Անդրքովկասի քարտու ճանա-
պարհները: Տաք արեւի ճառագայթներից պահպանելու համար
այդ սայլերի վրան զցած է կտաւի ծածկոց, որ հանդչում է
ութ ահազին փայտեայ շրջանակների վրա, ուտնք անպատճառ
ներկած են լինում սև ներկով սպիտակ և գեղին ծաղկիների
հետ: Այդ սայլերը տեսնելիս լինձ միշտ մի պատճառով թւում
էր, թէ նրանց ձեր, ներկը և նոյն իսկ ծաղկիները անփոփոխ
մնացել են կամբիւսի ժամանակներից, որոնց երբեմ-
նան հողերով են այժմ պտտում այդ ծանր սայլերը: Եթէ յար-
գելի մ. Ա. Ստասօվ գտնում է, թէ մեր ուկեղօծ չաքարահա-
ցերը և Պետերբուրգի կառքերի կամալները (Այրա) մի և նոյնն

և ն մնացել մեր հայրեն՝քում, ինչպէս եղել են տմենաշին Հընդ-կաստանում, երբ առեղջվել են «Բամսյեանս և Մահաբհարա-տո» պօէմաները, իսկ փրիգիտկան դլխորկը մինչեւ այժմ մնում է իտալական ձկնորսների՝ արոյացի՝ կնէջն սերունդների դլիմն, նոյն իսկ այն անփոփոխ ձեռւմ, ինչպէս նա եղելէ մի ժա-մանակ, Հռոմեասի օրերում, Հերմես-Մերկուրիոսի երեւակայական դլիմն, որեմն ինչու չի կորելի ենթագրելթէ Կիւրոսի և Կամբիւսի հագատակները, նոյնպէս և Շամիրոսի կախ ընկած այդ ների շե-նողները առնում էլն այդ պետերի մայրաքաղաքները այն ժա-մանակուայ յայտնի աշխարհի հարստութիւնները նոյն իսկ այն սայլերով, որոնցով ես հետաքրքրվում էի թիֆլիսից դէպի Ա-րարատ տանուշ ճանապարհի վրան: Ախր հէնց դրանում է ծածկ-ված գաղանէքը Արևելքում ճանապարհորդութիւնների այն թո-վէ չքնաղութեան, որի պէտը չի տալիս ոչ մի ճանապարհորդու-թիւն կուլտուրական, ուղղացրած և մաքրած Արևմուտքում (ես չեմ խօսում պատմական յիշատակարանների, գիտութիւննե-րի՝ շատակարանների և միւսերի մասին): Արևելքը Փանտազիային այնքան կերակուր է տալիս, այնքան կախարդիչ դմոյլմունք ունի իր մէջ, այնքան վայրենի և զարմանալի մի և նոյն ժամանակ անձո՞ն՝ պոյշառութիւն ունի, որ ճանապարհորդութիւնը Ա-րևելքում միշտ կը պահէ իր մէջ անփոփոխ չքնաղութիւն: Ախր եթէ անդիհացիք, որոնք ճանապարհորդութիւնների մասում մի փարթամացած ժողովուրդ են, եթէ նրանք իրանց երկարա-մեայ թափուումներից յետոյ եւրոպական ջրերում, լրջանալու աեղերում և թղթականդի աներում, կմսից, Վախագենից, կես-սինգինից, Համբուրգից, Կարլս-Ֆրանցինս-Մարենից և ուրիշ «բաղերից» յետոյ, այս ամեն Բնարիցներից, Տրուվիլներից, Նիցցաներից, Մենոնաներից, Մանակներից, Մօնակներից, Գիերներից, Անտիբաներից յետոյ՝ եթէ անդիհացիք այս ա-մենից յետոյ, տաղուկանալով արհեստական Արևելքում թափա-ռելոց վերջացնում են նրանով, որ զնում են բուրգերի մօտ Պալեստինա, Պալմիրի և Բաբիլոնի աւերակները, մի խօսքով

մտածում են հեռու Արևելքի մասին՝ ուրիշն միայն սա չատ է խօսում յօգուտ վերջինիս: Խոստովանվում եմ, ես էլ սիրում եմ առելի թափառել կախարդող Արևելքում, քան զմայլեցուցիչ Ա-րևմուտքում, ըստ Արևելքում այդ թափառել հա-վու իր կեանքի վերջանալուն պատճառը չփառաւ և որ ստա-նութիւն Արևելքում համարեա թէ մահացնող հիւանդութիւն, ես հարկադրված եմ այս բոպէիս մահից փրկութիւն որոնել ոյանեղ, Արևմուտքում, այս չքնաղ, բայց ինձ համար ոչ հա-մակրելի Մենաօնայում:

—Կը ցանկաք, ես կը պատուիրեմ երեկոյեան ճաշին պատ-րաստել չա—խօսի—բելի», խանգարում է պ. Մօրտուլաձէն իր պատմական մուածողութիւնները Կիւրոսների և Կամբիւսների մասին, երբ մենք արգէն աեղաւորվել էինք գիշերելու Ուղոն-թալա իջևանում, որ գանվում է Դերջանի շքեղ հովիսի կամ ողիզ տասած լեռնամեջի մուտքի մօտ:

—Դո ի՞նչ «չա—խօսի—բելի» է:

—Մի շատ ախորժելի կերակուր է հաւի մսից շնած, կա-տարինալ արևելեան կերակուր է:

—Շատ լաւ կլինի: Իսկ համը քաղցր է:

—Մասներոց կը լիլէք—խօսապէս կլիպէք, որովհետեւ այստեղ չա—խօսի—բելին ուտում են առանց պատառաքաղի, մասներսի, այստեղ պատառաքաղ չի լինի:

Կերակուրը ճշմարիտ շատ քաղցրահամ էր. հաւը կոտորած է մանր մասերի և մի քանի համեմութիւններով տապակած է և շատ հիւթալից և անուշահոս է:

—Ի՞նչ չնաշխարհիկ զիշեր է:

—Միայն քեզ մօտ, հարաւում, լինում են այսպիսի զիշերներ:

—Այս, ես գիտեմ: Ես մեռնելիս էլ չեմ մոռանայ այն դի-շերը, որ ես անցրի Երիքովում, Մեռեալ ծովի և Յորդանանի առջեւ:

—Նոյն էլ է զմայլվել այսպիսի զիշելներով, երբ դուրս է եկել տապանից, այնպէս չէ:

— զեմ կարծում . . . Այնուղղ ասում են, դիշերները այսպէս չեն:

— Իսկ ձեր Պետքը բուրգի դիշերները: Ես մի անդամ Պետքը բուրգում էի և նոյնպէս չեմ մոռանայ նրա ամառնային կարծ դիշերները:

Եւ այսպիսի չնաշխարհիկ դիշերը, դեղիջանի դռների մօտ ուրքան ծղրիդներ կան: Աներեակայելի մի մուգլկայ է զա: Իսկ հայաթում շքեղութիւն է տիրում, բայց քնել վտանգաւոր է: Ականջ գնելով դիշերային թռչունների ձանձրալի ձայնին, ես քնեցի, մոտածելով կիւրոսի և կամբիւսի, Շամիրամի և Նոյի մասին:

«Ժամանակ է գնալ—շուտով առաւօտ կլինի»:

V.

ԴԻԼԻԶԱՆԻ ԿԻՐՃԸ, ՍՅԻՆԱՐՅԻ ԱՄԵՆԱԳԵՂԱՆԿԱՐ ՏԵՂԵՐԻՑ ՄԻՒԾ:

Միւս օրը, օգոստոսի 4-ին, մենք դուրս եկանք Ուղունալից շատ կաղ, արեգակը դուրս գալուց շատ առաջ:

Առաւօտը հրաշալի էր և խոստանում էր այնպիսի տաքօր, ինչպէս էին անցեալ օրերը: Մենք գնում էինք դէպի սարերի մէջը, թէպէտ նրանք դեռ այնքան չէին մօտացել որ կիրծ կաղմին և բաց էին անում մի չքնաղ պատկեր զանազան զառի վայրերի և խորխորանների, որոնք խիստ կերպով ծածկուած էին կանանցով, որ տեղ տեղ բաց էր անում մոխրագոյն ժայռերը և նրանց զլիւին տեղաւորվուծ գրանիտաեայ հականները: Խոր մթին խորշերից տեղ տեղ դուրս էր սովում մշուշը և տանտաղ կերպով հալվում էր առաւօտեան օդի մէջ:

Բօստանների մէջ, որոնք կանաչած էին ձանապարհի երկու կողմերում, մերթ մերթ թափառում էին մարդկանց ձեւակերպութիւններ: Դրանք զարթնած բօստանչիններն էին, այդ բօստանների տէրները կամ պահապանները, որոնցից մի քանիսը ա-

սիական կերպով նստած դեանի վըան, Ալլահին աղօթք էին մատուցանում, որ նա պարզեց իրանց շատ խոշոր ձմերուկներ և սեխեր, այնապի խոշոր, որչափ մեծ է մարգարէի ողորմութիւնը. իսկ միւսները հրացանները ուսերին ման էին գալիս բօստաններում, նայելով իրանց հարատութիւններին և նշանակելով այն ձմերուկները կամ սեխերը, որոնք պիտի կտրվէին:

Ուգան մենք լեռնամիջով առաջ էինք գնում, այնքան ևս սարերը միմեանց մօտենում էին, գառնալով համարեա ուղղաձիգ և թողնելով մի քիչ տեղ չքնաղ Աղստափա գետի տաշի և նրա եղերքը պատող հսկայած ծառերի համար: Եւ ինչպէս շքեղ են այս հալիւր, կարելի է, հազար տարեկան ծառերը:

Քարքարոտ խճուղին պտոյտ է գալիս գետի ափի մօտով մասսմբ ծառերի շուաքներում, մասսմբ էլ ժայռերի ծածկոյնների տակով: Մէնք մանում էինք մի կատարեալ վայրինի, թէպէտ և անսովոր գեղեցիկ կիրճ:

— Կանգնիր, կանգնիր, գոչում է պ. Մօրտուլաձէ իր սոյլապանին: Գոչում էլ լենդրեմ կանգնեցէք (վերջին խօսքերն ինձ էր ասում):

— Ի՞նչ կայ:

— Այս ժամին կտեսնէք:

Եւ ոելովիր ձեռքին, նա դուրս թռաւ սոյլակից: Զըլինի թէ աւազակներ են: Իզուր չէին ինձ նախազգուշացնում գելիջտնի կիրծի մասին:

— Ի՞նչ է պատահել, հարցնում եմ ես սոյլապանից:

— Նապատակներ են, հրէն նապատակները փակչում են:

Նայում եմ և ձշմարիս աւազակների տեղ տեսնում եմ նապատակներին: Նրանց մի ամբողջ ընտանիքը տեղաւորված է մի տափարակ ժայռի վըա խճուղուց ոչ շատ հեռու և ըստ երեսյթին զուարձանում է նապատակային խաղերով:

Մէկնած ձեռքով և ոելովիրով պ. Մօրտուլաձէն գնում է ու զեղ գէպի նրանց: Նապատակները—ի՞նչ անմեղութիւն—ովնչ ուշագրութիւն չեն գարձնում և շարունակում են իրանց

նապաստակոյին վռւարձութիւնները: Արեւում է այսուեղ այնքան խուլ է, այնքան հեռու է խորամանկ քաղաքակրթութիւնից, որ հնարել է հրացաններ և ռեվոլվերներ, որ նապաստակներն այդտեղ չնայած իրանց ամբողջ աշխարհին յայտնի խելացի դրոշութեան, գեռ չեն սովորել վախել խորամանկ մարդու և յարգել հրացանի նշանակութիւնը:

Արիւնարբու վրացին ել աւելի մօտենում է և արձակում է ռեվոլվերը ուղեղ անմել ձագերի և նրանց ծնողի վրան:

Հարուածը չը յաջողվեցաւ: Նապաստակները դադարիցին խաղալ զարմացքով նայում են օդի մէջ կորչող ծխին և անշխատ մեկնած ձեռքին, իսկ փախչել չեն էլ մտածում: Ի՞նչ սուրբ պարզութիւն:

— Այ, այ, նապաստակները վախեցել են, չեն փախչում, շնչում է իմ թուրք սայլապանը:

Կրկին երեւաց ծուխը: Թրը ինկ . . . և կրկին անտջող հարուած: Նապաստակները սկսում են մի բանի վրա կասկ սծել և գնում են գեղի բարձր:

Կրկին մի հարուած և կրկին անտջող:

— Ախ սատանան տանէ, ի՞նչ ամօթ է . . .

— Եւ շատ լաւ է, որ ամօթ դառաւ:

— Ախր ես ամբողջ զօրագնդում համարվում եմ առաջին հրացանաձիւը:

— Դա ել աւելի լաւ է նապաստակների համար:

— Ոչ, անիծեալ ռեվոլվերը մի արշին գեղի աջ կողմն է իր փում:

Արեակայում եմ, որքան օգուտ կը բերէր մեզ այդ ռեվոլվերը, որ գնտակը նշանից մի արշին գեղի աջ է ձգում, եթէ մենք հարկադրված լինէինք պաշտպանել մեր կեսնքը աւաղակներից, բայց բախտառողպէս մենք նրանց չի պատահեցինք այս չքնաղ առաւօտին մինչեւ Կորվանսարայ իջևանը:

Այս իջևանը գտնվում է գեղեջանի կիրճի մէջ, մի անսուր գեղանկար լեռնային անցքում: Քանի որ մեզ համար ձիա-

ներ էին լծում և նայում էին մեր թզթերին, մենք գնացինք շըջել գիւղի միջով, որ կրում է կարվանսարայ արեւելեան անունը: Այդ գիւղն ունի իստակ ասիսական ձեւ: Նրա մէջ ոչ մի բան չի յիշեցնում Ռուսաստանը, նրա ոչ բնակիչների տեսքը, ոչ տնակների ներքին և արտաքին ձևերը, որոնք տեղաւորված են գուգուազող Ազստափի երկու ափերի մօտ, ոչ էլ այս ասիսական գուգանները ասիսական ապլանքներով: — Մյա ամենը նմանում է համ Պարսկաստանին համ Թիւրքիային: Զգում ես, որ գտնվում ես մի անյայտ երկրում և չես հաւատում, թէ այս ամենը պատկանում է Ռուսաստանին, թէ ուսի անունը ունի այսուեղ մի նշանակութիւն և ոյժ:

Բայց շուտով յայանվեցաւ, որ այդ անունն այսուեղ պահում է «խատիւ և պատվով», ասելով Նօվգորոդի նուածման ժամանակակից Մօսկվայի լեզուով:

Երբ մենք շըջում էինք բազարում աղասելով ձիտնց լծելուն, մեզ մօտ եկան երկու սայլակներ Վալդայի գանգակներով վալդայի պարզեները) և թուրք սովորագններով: Մի սայլակի ետևից գալիս էր մի ձիաւոր, ոտքից մինչև վլուխ գինուորված Ոինալլօ Ոինալլզինի պէս:

Նոյն ժամանակ մօտեցաւ ինձ իջևանի վերակացուն ոռուսաց արքունական համազգեստում և տալով ինձ ձանապարհաթուղթը և պ. պ. Վտարօսելակու և Տօմիչի բաց հրամանագրերը, պաշտօնական ձեռվ յարգանօք ասաց, ցոյց տալով Ոինալլօ Ոինալլզինին:

— Սա զինուորված ձիաւոր է ձեր անձնաւորութեանը ուղեկցելու համար:

Նս հիացմունքով նայեցի գեղեջիկ ձիաւորի վրա: Դա մի քաշատես տեղական թուրք էր, կօղակի պէս մի բան, զինուորական արեւելեան հագուստում և մի մեծ մորթէ գտակ զլսին: Նրա ուսից կախ ընկած էր մի հրացան թաւամազ պատեանի մէջ գրած:

Նլա միւս ղենքերը, սկսած սրից և վերջացրած իսէնջա-

րով և առլճանակներով նայում էին նոյնպէս շատ համոզիչ կերպով: Տղամարդը իմ առջև թամբի վրան ու զղվեցաւ և ինչպէս երեւում էր, սպասում էր իմ հրամաններին: Խոկ հրամաններ տալ ես չէի սովորած, այս պատճառով ես միանդամից չը կարողացայ ընդունել հոյր-հրամանատարի գերը:

— Ի՞նչ կարիք է . . . Ահա ամենը, ինչ ես կարողացի ամել և հրամայեցի սայլապանին ձիաները շարժել:

«Ահա որտեղից է սկավումնա», մտածեցի ես, լսելով իմ քամակիս իմ թիգնապահի ձիու ոսների ձայնը և նրա զէնքերի չըլսկը լսկոցը, «ահա որտեղ այսի պահապաններով դնամիս»:

Հասկանալի թէ ինչի մասին էի ես մտածում:

Ինձ մօտ մի զինուորպած ձիաւոր կարգելը նշանակում էր, թէ ես մտել եմ այնպիսի տեղեր, ուր գեներալ Ստարօսելսկու պէս ասած իմ ձանապարհորդութեան «ապահովութեան համար» անհրաժեշտ էր համարպած տալ ինձ «հարկաւոր կանվոյ քաղաքական պահապաններից»: Այդ կամնվոյը իտրու էր ինձ հարկաւորվել հէնց այստեղ և այս մասին էլ տուին ինձ:

Այս կանվոյն այնտեղ անուանվում է «չապար», իսկ ինքը ձիաւորը — «չապարին»: Այստեղից սկսած ես ամեն տեղ գնացի կանվոյի հետ մինչև նոյն խոկ Արարատը, նոյնպէս և այնտեղից գեպի յետ, մինչև Գելիջանի կիրճից գուրս գալը:

Որովհետեւ իմ ամբողջ ձանապարհորդութիւնների ժամանակ այդ տեղերում ես չենթարկվեցի ոչ մի վասնդի ուրիշ բարեկը սիրովների կողմից, այդ պատճառով իմ ետևից եկող ձիաւոր մարդկանց պարտաւորութիւնը շատ բաղմատեսակ չէր. «չապարը» սովորաբար արշաւում էր իմ փոստոյին սայլակի ետեից, երբեմն ինձ հետ մի տեղ և երբ տեսնում էր առաջներիս կարաւան կամ որ և է սայլ բարձր ձայնով կանչում էր «խարարդա» և իր ձեռքի մարտկով սիրովներ էր տալիս, որ ձանապարհից գուրս գան, կամ թէ արագութեամբ առաջ էր վազում և շուտափոյթ կերպով մաքրում էր ձանապարհը իմ համեստ անձնաւորութեան անցնելու համար:

Իջևանում ես առփորաբար տալիս եի ձեռ որին մի պարզե և նրան մինչեւ միւս իջեւանը փոխարինում էր մի ուղիւ «չապար»:

Յայտնի է, թէ որքան շատ է գլուխ կովկասեան սորելի անսովոր գեղանկար լինելու մասին և մանաւունը ուտաերազմանկան վրաց ձանապարհի մասին, դարեալի կիրճի, իր ճնշող զարգերի մասին և Տերեկի ջրալից ժամանակների կատաղի գոռոցների մասին: Ոչ չէ հիացմանքով նոյնել կաղեկի տեսքին ոչ ոյնքան նոյն անուանի իջեւանի կողմից, որքան Կոլի իջեւանի կողմից, երբ նա բոլորովին անսպասելի կերպով բարձրացնում է իր ալեւոր զլուխը վայրենի ժայռերի քամակից, որոնք կալծես կազմում են նրա առաջապահ պահապանները: Ու մին չեն առշեցրել գուղարի բարձրութիւններից երեւացող հրաշուլի պատկերները, երբ հիացած, յափշտակված և մի և նոյն ժամանակ վախեցած տեսողութիւնը անցնում է այնպի բարձրութիւններից, որոնք կազմում են կովկասեան լեռնային շղթայի բարձր կէտերը, գեպի այն լեռնամեջի սարսեցնող խորութիւնը, որտեղից գուրս է գալիս Արագվան: Մարդու գլուխը շուռ է տալիս և սիրան անզպայանում է այն սարսափից, որ զգում ես մատծելով, թէ գանվում ես մի այնախի մինչեւ երկինքը հասնող բարձրութեան վրա, ուր ամենասաք ամառնային օրը ձեզ զիազում է աշնանային ցրառութիւնը և ականջներում գգում ես նօսրացած օդի աղմուկը: Պատերազմական — վրաց ձանապարհի այդ գեղեցկութիւնները ամենքին յայտնի են: Ովնրանց չէ տեսել իրանց տեղը, իհարկէ կարողացել է ծանօթանալ նրանց հետ լինչերսկի պատկերահանի կամ թիֆլիսի լաւ լուսանկարների գեղարուեստական պատկերահանի վրա:

Խոկ գելիջանի կիրճի գեղեցկութիւնները քիչերին յայտնի են. նրանց տեսել են ոչ շատերը, որովհետեւ քիչ ցանկացողներ կը գտնվին, որոնք նոր տեղեր սիրովների պէս ուղենային փորձել այսպէս անուանուած Փոքր — կովկասեան ձանապարհորդութիւն անելը: Այն սակաւաթիւ մարդկանցից, որոնք եղել են այնտեղ, ես առաջ լսել եմ, թէ գելիջանի կիրճն աւելի գե-

զիցիկ է. քան Տերեկի կամ Արտավազի կիրճ՝ բրու։ Ես, խոստովանելում եմ, առաջ չեմ հաւատամը գրան։ Ինձ շատ անդամ է պատահած կարգաղ և լսել ականատեսներից—մի քանիմներից,թէ ամբողջ աշխարհում այն պանօրամանցից դեղիցիկը չկայ, որ բայց է անում ձեր հիացած տեսութեան առջև բռնփորը երբ դուք մասենում եք Կ. Պալեն և Ոսկէ եղջուրէն, կամ թէ երբ դուք Պօլսի գերեզմանատնից Նայում եք այդ պանօրամային Սիւասարիի, Պրինցների կզզների և Մարմարեայ ծովի հետ միասին, միւսներից լսել եմ, թէ ամբողջ Եւրոպայում չեք գտնի Վրիմի հարաւային ծովեղերից էլ չքնազ և հրապուրիչ տեսք, թէ այդ Ալուշտաները, Ենուաները, Ալուակաները, Օրխանգաները և միւսները ծովի կողմից լինի, թէ Եսայիլի կամ Զաղիբրդազի բարձրութիւններից լինի, որտեղից բացվում է ձեր առջև ամբողջ Վրիմը իր երեք ծովերի—Սև, Ալովեան և Փասծ—Սիվաշը ծովերի հետ, կարծես ամենը մի գեղաքանդակ մատուցանում գրած, թէ այս ամենը «գլուխ շուռ գալու» չափ լւաէ և հիանալի. վերջապէս երրորդներից լսել եմ թէ մեր մոլորակը չի ներկայացնում ոչինչ գեղեցիկ բան, քան Միջերկրական ծովի ափերի այն մասը, որտեղից նայում են նրա վրա այդ մոլորակի այնպիսի ակունքներ, ինչպէս են Հիերը, Կաննը, Նիցցան, Մենաօնան, Սան—Ռենօն և որտեղ այդ ափի մօտով, պատոյա է գալիս Նապոլէոն I—ի նշանաւոր ճանապարհը, որ անուանվում է «route de la Corniche», խելացնոր շինելու չափ չքնազ է։ Այժմ ես, ինչպէս այս ամենի ականատես, և Բառփորի Ոսկեղջեւրի հետ, և Սկուտարիի, և Վրիմի հարաւային ափերի և «route de la Corniche»—ի, և պատերազմական—վրաց ճանապարհի և վերջապէս Գելիջանի կիրճի, կարող եմ գրականապէս հաստատել, որ աշխարհի այս շորս ամենազեղեցիկ տեղերի գեղեցկութիւնների միմեանց հետ համեմատելը մեծ սիսալ կլինէր։ Նրանց ամեն մէկի գեղեցկութիւնը չափազանց ինքնուրոյն է, և համեմատել բռնփորը Տերեկի հետ կամ գարեալի կիրճը Գելիջանի կիրճի հետ մի և նոյնը կլինէր, ե-

Թէ միտւորէինք անմիտւորելի մեծութիւնները:

Գելիջանի կիրճը, այս ամբողջ ձանապարհը Ուզուն-Թալից
և Կարվանսարացից մինչև Գոկչի բարձրութիւնները և մինչև
նոյն իսկ Արարատը ճշմարիտ որ հիացնում է իր առանձնատե-
սակ, դրաւիչ գեղեցկութեամբ։ Այս ձանապարհը կարելի է, գեղե-
ցիկ է պատերազմական-վրաց ձննապարհից, բայց վերջինս աւելի
բարձր է իր Ճնշող վսիմութեամբ։ Նա կարող է ձանձրացնել իր
Ճնշող միակերպութեամբ։ ամեն տեղ սարեր են և ժայռեր, և
այս ամենը խելպում է իր շքեղատեսութեամբ։ իսկ Գելիջանի
կիրճը աւելի վայելուչ, աւելի բազմատեսակ է, թէպէտ և նրան
հուզ առողջ ժայռերն ու սարերը քիչ շքեղատեսիլ չեն, քան
թէ Դարեալի, Լարսի, Կօրիի և Գուգառուրի սարերն ու ժայռե-
րը։ Երկու տեղերում էլ շատ պօէզիա կայ, բայց առաջինի
պօէզիան շատ մուայլէ, իսկ Գելիջանինը կախարդիչ է, հիացնող է։

Ոլքան խոր էք գնում գուք կիրճի միջով, այնքան էլ նա
գեղեցկանում է: Նրան շատ չքնաղը թիւն է տալիս շքեղ բու-
սականութիւնը, որ այն աստիճան հարուստ է, որ չես հաւա-
տում, թէ դա արևադարձի տակին չէ, թէ դա Գանգեսի կամ
Ամազոնկայի ափերի վրան չէ: Այնտեղ սկսած կարսից և դա-
րեալից մինչև Գուգառը, մինչև այն էջքը, որտեղ բանաստեղ-
ծի ասելով սկսվում են շքեղ Վրաստանի հովիաները, ամեն ին-
չը չորս կողմում մերկ է, մեռեալ է. այստեղ Ուզուն-Թալից սկսած
մինչև նոյն իսկ Գոկչան, իսկապէս մինչև մօլոկանների Սւեննով-
կա գիւղը — տամեն ինչ ընկղմված է կանաչեղէնի մէջ: Զեր լսելի-
քը այստեղ չի ձանձրանում, ինչպէս այստեղ Տերեկի միանման
գուոցից: Ընդհակառակը — այստեղ ձեզ կախարդում է Աղստա-
ֆի բիւրեղի նման պարունակութիւնը: Վարերի վրայով վազող ջթերի լսելի-
քը փայփայող քչքչողը: Այստեղ շատ թոշուններ կան, որոնք
անսովոր կերպով կենդանացնում են ամեն տեղեր. ձկնկուլների,
վայրենի աղաւնիների, տատրակների և մանաւանդ լեռնային
տգուանների ձայները ուղեկցում են ձեզ հետ ամբողջ կիրճով
50-60 վերստ տարածութեան վրա:

Նշանաւոր է, որ այս իջևանը պահում են ռուսաց մօլոկանները:

Ես շատ զարմացի, երբ ներս մտի իջևանի բակն և տան ծածկոցի տակ տեսի մեր մուժիկների մի ահազին ընտանիք. նրանք բաց օդի մէջ շարվել էին ձաշելու համար և նըրանց մօտ, սեղանի վրա, աշքի էր ընկնում ռուսաց ինքնաները: Սեղանի յետևում և տակին շարժվում էին շիկահեր, կարմիր շապիկներ հագած բորլիկ երեխաներ. ռուսաց կանայքը լուսնում և սրբում էին ամանները. խարտեաշ և շնկամիրուք մուժիկները նոյնպէս հագած կարմիր շապիկներ, վերջացնելով հացկերոյթը ուզդվում էին և խաչակնքում էին բերանները: Այս ամենը, անսովով շլջանի մէջ, ասիական աշխարհի խորքում, արելեան հազուսաների և տիրաբի մէջ—այս ամենը աշքի էր զարնվում և ներկայացնում էր տեսողութեան խարողութեան նման մի բան: Կաելիքը զարմացնում էր ռուսաց խօսակցութիւնը, որ այստեղ մի կերպ օտարօտի էր հնչվում, մանաւանդ երբ հենց այդտեղ ռուսաց լեզուին յատուկ մի ֆրազայից յետոյ նոյն իսկ այդ տամրովցու կամ պենզենցու բերանից լսվում էր թրքերէն խօսակցութիւն, որ ուզդված էր լինում կամ մեզ տանող թուրք—սոյլապաններին կամ իմ թիգնապահ ձիաւորին:

— Է՛յ, տանուտէր *) Պաշկա, ընդունիր պարոնների ձանապարհաթուղթը: Արեւումէ սպիտակահեր Պաշկան, որ համարեա երեսոյ է, և թուրքերէն մի բան է տառւմ իր սայլապաններին: Սայլապանները պատասխանում են նոյն տախական կոկորդային խօսքերով:
— Լաւ է, օծիր անիւնները և լծիր, կարգադրում է նոյն Պաշկան:
— Է՛յ, պարոն Պաշկա—ի՞նչպէս է ձեր հօրանունը:
— Ի՞նչ կը հրամայէք:
— Զի՞ կարելի ձեզ մօտ մի բան ուտել:

*) Այստեղ պահուածէր չը պէտք է հասկանալ գիշական պահուածէր, այլ դա պէտք է պաշտան է գործադրութեան իշխանութեան: Ծ. թ.

— Մեզ մօտ ոչինչ չկայ:

— Ի՞նչպէս թէ ոչինչ, պարոն Պաշկա:

— Ոչինչ չկայ:

— Իսկ ձու կ՞այ:

— Ձու էլ չկայ—հաւերը շեն ածում:

— Իսկ ի՞ւզ:

— Իւզ էլ չկայ—որտեղից ձարենք, թուրքերը քոչել են:

Այնպէս էլ յամառ Պաշկան մեզ ոչինչ չի տուեց:

Դա այն պատճառապէտ է, կարծեմ, ինչպէս ես նկատեցի, որ այնտեղի ռուս մօլոկանները ակներեւ թշնամաբար և առհասարակ ոչ սիրով են վարվում Ռուսաստանից եկած ռուսի հետ, մանաւանդ պարոնների հետ: «Դուք մեզ դուրս արիք ձեր մօտից, ինչպէս չների, ուրեմն հարկաւոր էլ չէ մեզ հետ խօսել», այս է կարգացվումներանց երեսների վրան: Եւ զարմանալի չէ նրանց համար Ռուսաստանը օտար երկիր է, և նրանք նրա համար մի կտրված կտոր են:

Թարսաչայից ձանապարհն ընկնում է մինչեւ նոյն իսկ Դելիջանը, դէպի այս անուանի քաղաքը: Սարերի զառիվայրերով բարձրանալը աւելի ևս նկատելի էր դառնում և լեռնամէջն չքնաղ տեսարանները փոխարինվում էին կարծես մի դիւթական խոշորացյացի մէջ:

Այստեղ, թարսաչայի և Դելիջանի մէջ, լեռնային չքնաղ հովիտներում, ես առաջին անգամ տեսայ Անդրկովկասի թափուռող ազգաբնակութիւնը: Նրանք նոյն զաղախեցի թուրքերն էին, որոնց ամբողջ ամառը գատարկ թողած բնակարսնները, կամ լաւ ևս ասած խրճիթներն ու որջերը նոյնպէս և գերեզմանատները անցեալ օլերում զարմացրել էին ինձ իրանց տեսքով, երբ մենք անցնում էինք կարաեազի անսապատով:

Այս թափառականները նման չեն միւսներին, որոնք ապրում են ասիական կամ աֆրիկական անապատներում: Դրա պատ-

ձնուն է իշարկէ այն տեղերի լեռնային բնութիւնը, որոնցով
պիտի թափառեն անդրկովկասեան թափառականները:

Ի՞նչքան պօելիս կայ կեցութեան այս կատարեալ գրախ-
ային եղանակում: Մի որ և իցէ լեռնային հովիտի կամ խո-
ռոշի մէջ, անպատճառ լեռնային գետակի կամ գետի ափի վրան
գուք տեսնում էք սարքած վրաններ, որոնք շատ դէպքերում
զանազանվում են և արտաքին գեղեցկութեամբ և մանաւանդ
ներքենի շքեղութեամբ, գոյնզգոյն գորգերով և գեղեցիկ կիր-
ով հիւսուած փսխաթներով: Շատ տեղերում վրտնները կամ
«չաղիրները» տեղաւորվում են շքեղ լայն բացված ծառերի
շուաքում: Այդտեղ էլ դուք կը տեսնէք, այդ ծառերի շուաք-
ներում, թափառող գիւղի ամբողջ բնակչութիւնը, աղամարդիկ,
օգուտ քաղերով իրանց ապահովացրած զրութիւնից, բոլորովին
ոչինչ չեն անում և միայն առաւօտից մինչեւ երեկոյ ծալապա-
տիկ նստած ծխում են իրանց չիբուխները և ըստ մեծի մասին
լուծ են լինում, ինչպէս վայելուչ է բոլոր արևելեան պատուա-
ւոր մարդկանց, իսկ կանայքը կարում են, գործում են, ոչխա-
րի կաթից իւղ են հարում, պանիր են շինում, կերակրում են
երեխաներին և ձրիառէր տղամարդիկներին: Իսկ դեռահաս աղջ-
կերքն և շատ ջահէլ երիտասարդները, ամեհի կաղնու կամ ըն-
կուղենու ծիւղերի մէկից ծօճանոց շինելով, օրօրվում են և եր-
գեր են երգում մի արշալոյսից սկսած մինչեւ միւս արշալոյսը:
Սարերի վրան տեղ տեղ խելօք շների և երկու կամ երեք երե-
խաների վերակացութեան տակ արածում են ոշխարների ահա-
գին հօտերը, որոնք կազմում են նրանց ամբողջ հարստութիւնն
ու գրախառյին կեանքի աղըիւրը:

Այսպէս թափառելով մի տեղից միւս տեղ, մի գեղանկար
դաշտավայրից միւս աւելի գեղանկար դաշտավայրը, մի արօ-
տատեղեց միւս արօտատեղի, մինչեւ որ կհասնեն ձմեռուայ բու-
քերը, որոնք ծովի մակերեսոյթից տասն հազար ոտնաշատ բարձ-

րութիւն ունեցող սարերի վրա, մինչեւ անդամ հարաւային տե-
ղերում, բաւականին գաժան և խիստ են լինում: Այդ բուքերը
հալածում են նրանց գէպի իրանց առաջուայ խրձիթները, գէ-
պի իրանց հայրենի օջախները, գէպի իրանց պապերի գերեզ-
մանատները: Իսկ այնտեղից գարնանը կրկին քոչում են: Քոչա-
տեղիքը նրանց համար գրախան է, իսկ հայրենի օջախները,
գետնափոր որջերը նրանց ժամանակաւոր քաւարաններն են:

Եւ ի՞նչ չքնազ տիպեր ունին նրանք: Կեցութեան այս
կերպը ինչպիսի գեղեցկուհիներ ու գեղեցկուհիներ է ստեղծում:
Խոսանովանվում եմ, ես ակամայ զուարձանում էին նրանց վրանայելով:

Անցնելով մի քանի քոչատեղերից, մենք վաղ կէսօրին հա-
սինք գելիջան, այդ անունով կիրճի նոյն իսկ մէջ տեղը: Գելի-
ջան—դա մի բաւականին մեծ քաղաք է խտակ ասիական տես-
քով և տեղաւորված է չափաղանց գեղեցիկ կերպով:

Այստեղ ես մնաք բարեաւ ասացի իմ սիրելի ուղեկցին,
պ. Մօրտուլաձէին, որ գելիջանից պիտի շուռ գար գէպի սա-
րերի ամենախուլ տեղը, ուր չը կայ սայլի ճանապարհ, այլ
միայն մի ձիու ուղի: Ես էլ այստեղից պիտի շարունակէի ճա-
նապարհս բոլորովին մենակ, բայց իշարկէ քաջ «շապարի» հետ:

Չեմ կարող լռել պ. Մօրտուլաձէի ամենասիրելի ծառայ
զինուոր լիլայի ինձանից սրտաշարժ կերպով հրաժարվելու մա-
սին: Նա թէպէտ և թուրք էր, բայց մասամբ ինձ հետ մի
երկրացի էր. նա էլ էր Սորատօվից. նա զինուոր է վեր առած
Սարատօվի նահանդի կուղնեցկի գաւառից, որտեղ նա ծնվել
էր և մեծացել մի խորին անիմացականութեան մէջ այն ամենի
մասին, թէ ինչ է լինում աշխարհում:

—Բախտաւոր մնաք, ասում էր նա, —մնաք բարեաւ ասելով
ինձ. —ձեզ բարի ճանապարհ:

—Շնորհակալ եմ, լիլա:

—Ոչնչից, աղա, այժմն դուք ուրեմն այստեղից գէպի Արա-

րա՞նն էք գնում:

—Այ՛ո, եթէ Աստուած աջողի:

—Մեքենայով էք գնում:

—Ի՞նչ մեքենայով:

—Այսինքն դուք դէպի Արարատը մեքենայով էք գնում:

—Ինչու մեքենայով: Այնտեղ երկաթուղի չկայ:

—Դա ի՞նչպէս է: Ասր ճանապարհը Ոռւսաստանի միջովն է, չէ՞:

Պարզ էր, որ Խեղձը չէր կարողանում ջոկելիր Խելքն ու աղքատիկ աշխարհագրական գիտութիւնները, որոնց նա սովորել էր տանը և ծառայութեան մէջ: Նա չէր իմանում թէ Ոռւսաստանը որ կողմում է դժոնվում:

—Ո՛չ, իլիս, ես Ոռւսաստանով չեմ գնում դէպի Արարատը. Ոռւսաստանն այնտեղ է մնացել:

—Այնտեղ . . . իսկ ես մոածում էի թէ այնտեղ թի Փլխն է:

Նա մի կերպ ցնորուածի պէս յետ նայեց, երեւակայելով, որ ինքն էլ է հեռանում Ոռւսաստանից, որը ըստ երեսյթին նրա համար դեռ թանգ էր:

Ահա մի սրտառուչ դրութիւն: Խեղձին տարել են մի այն-պիսի հեռու տեղ, ուր նա չէ իմանում անդամ, որ կողմում է գտնվում նրա հայրենի հողը—այնտեղ որտեղեց բարձրանում է արեգակը, թէ այնտեղ, ուր նա մայր է մտնում:

Իմ սայլակը շարժվեցաւ և դանդակի ձայնը չը թողեց ինձ լսել, թէ ինչ էր ասում ինձ գեղեցիկ վրացին. իմ լսելիքիս հասան միայն նրա վերջին խօսքերը. «Երեք չեմ մոռանայ այս պատահելը»:

VI

ԱքՍՈՐՎԱՇ ՄՈՒԾԿԱՆՆԵՐԻ ՍՕՑ. ԳՈԿՉԱ ԼԻՇԵ:

Դելիջանի ետքում սկավում էր վերջին բարձրանալը դէպի սարերը, Փոքր Կովկասի լեռնային գօտիից անցնելը:

Առաջ մենք գնում էինք մի լեռնային՝ անսովոր սրընթաց և գեղեցիկ գետակի ափով—դա նոյն Աղստավայշի սկիզբն էր: Անցանք մի քանի թուրքի քոչատեղերից, որոնք գեղեցիկ կերպով տեղաւորված էին կիրճի մօտով, վիթիւարի քարերի ծածկոցի տակ, իսկ յետոյ սկսեցինք սարը բարձրանալ:

Դա մի կատարեալ ուղղաձիգ բարձրանալու տեղ էր, որի նմանը ես ոչ մի տեղ չեմ տեսած: Ամենքին յայտնի է Մելուից գուգաւոր բարձրանալու անսովոր զատիվայր Ճանապարհը, որտեղից սարավելի է դէպի ցած նայել, որտեղ և ո՛չ թուլասիրտ անցողի գլուխը շուռ է տալիս և սիրոը անդպայանում է, տեսնելով այն ահռելի խորխորասներն, երբ դուք գնում էք կարծես ոչ թէ Ճանապարհով, այլ մի՝ իր բարձրութիւնով վախեցնող բարձրավանդակի կտրնիղի վրայով: Բայց Դելիջանից բարձր տանող Ճանապարհը կարծեմ էլ աւելի զառիվեր է: Այնուամենայնիւ նա այնքան սարավելի չէ, թէպէտ և դուք բարձրանում էք որպէս թէ մի վիթիւարի պատի գլուխ, իսկ երբ դէպի յետ էք գնում, կարծում էք, թէ թռչում էք դէպի մի խոր անդունդի մէջը: Դելիջանի բարձրանալու և իջնելու Ճանապարհն աւելի քիչ է սարավելի երեւում այն պատճառով, որ դուք համարեա չէք նկատում այդ սարմիչ բարձրութիւնը. այդ բարձրութիւնը ծածկում են ծանապարհի կողքերով և որոնք ծածկում են ձեր աչքերից այն անդունդը, որի եղերքով դուք գնում էք: Գուշգառը Մելուայի վրա իջնելիս, դուք միշտ տեսնում էք ձեր նստած կառքի առաջին, կամ աջ, կամ ձախ կողմին, դուք, կը ըկ-

նում եմ, միշտ և անպատճառ պիտի տեսնէք ձեր ոտքերի մօտ սարսափելի անդունդը և ակամայ մտածում էք, թէ մի փոքր անգամ շութիւնից կամ կառավարի գանգաղաշարժութիւնից զառիվայր ելեւթերում—ձեր կառքը կթոշէ այդ սոսկալի անդունդի խորքը: Վերջապէս, բաւական է, որ ձին խրանէ կամ մի բանից վախի, գեռ գտ քիչ է, բաւական է քամու մի սաստիկ յարձակումը, որ ձեր կառքը վայր ընկնէ քարեայ վանտակից, որ շատ թոյլ է նրա համար, որ կարողանայ պահել ծանր կառքի վայր ընկելը ճանապարհորդների և ձիանիրի հետ: Եւ այսպիսի տրագիկան գէպքեր արդէն պատահել են Գուգառուից Մշտ իջնող աշռելի ճանապարհի վրան. կառքերը, Փուրդոնները, զիլիժանները վշուր են գարձել մարդիկը, ձի սնքը կոսորվել են:

Դեղիջանի ճանապարհի վրան հոգիւ թէ կարողանային այսպիսի սարսափելի գէպքեր պատահել: Այսաեղով չեն գնում ոչ ծանր փոստային սայլեր՝ ծանր բեռներ բարձած, ոչ դեղիժաններ, այսուղով գնում են հասարակ թեթև սայլակներ, բարձանալիս երեք ձիով, իսկ իջնելիս երկուով. և այսպիսի սայլակները հեշտութեամբ է կարելի կապել կամ կանգնեցնել ձիանց շուռ վազելու ժամանակ, մանաւանդ ճանապարհի բազմաթիւ պատյաններում: Եթէ մի անբախտութիւն պատահի, այդպիսի սայլակը գէպի անդունդը շուռ գայ, նա չի հասնի մինչեւ զառիվայրի վերջը, այլ կը կազի մի որ և է ծառի: Ամենաշատը կարելի է այդտեղ մի քիչ տանջվել, կամ կոտրել ոտք կամ կողքը, բայց կեանքից չի զրկվիլ: Իսկ այնաեղ, Գուգառուի ճանապարհին ամեն մի անբախտ գէպք պատճառում է անխուսափելի մահ:

Այս է դեղիջանի և Գուգառուի մէջ զանազանութիւնը:

Ուժեղ ձիանքը մի որ և է կէս ժամանմ ինձ գուրս բերին Անդրկովկասեան լեռնային գոտիի ամենավերջին բարձրութիւնը: Այդ բարձրութիւնը իրան ցոյց տուեց նրանով, որ իսկոյն այն սարսափելի տաքից յետոյ, որին ես ենթարկվեցայ դեղիջանի

կիրճում, սարի գլխին յանկարծ ինձ բռնեց աշնանուին ցուրտը: Հայելով նրան, որ հարաւային արեգակը այրվում էր իշղլիսնոյն պէս պայծառ, ինչպէս և հովիտում, որից ես ոյս ժամանեմ գուրս եւ կէլ մի քանի ժամանմ 7-8 հայրը ոտնաշատ ի բարձր ամեն գլուխը:

Ո՞ւր մնաց և այն շքեղ բուսականութիւնը: Նա մթին կերպով երեւում էր հեռու մի տեղ ներքեռմ, լեռնամէջերում և խոռոչներում, որոնք այնաեղ, իմ ետե իս են մնացել, իսկ իմ շուրջն մերկ էր և անկենդան, կարծես ես գտնվում էի մի Տամբովիան կամ Սամարեան անապատում: Աշնանաւ ին քամին թափանցում էր իմ ներաս, այնպէս որ ես հարկադրված: Էի փոթաթվել վերարկուի մէջ, այն իսկ վերարկուի մէջ, որ 1879 թւի ամառը տաքայնում էր ինձ Զագիրդաղի բարձրութիւնների վրան, իսկ 1881 թւի մայիսի վերջին—Քիոպսի բուրգի գագթին, Սահարացի ցրվող աւագների առջեւ:

Շուտով երեւաց մի զիւղ, որի տեսքը ներդաշնակում էր ինձ շրջապատող տղբատիկ բնութեան հետ, որն որ բոլորովին նման էր հիւսիսային բնութեան: Գտ ոռւսաց զիւղ էր—աքսորված մօլոկանների զիւղը: Թէպէտ և ես իմանում էի այս, բայց զիւսակցաբար խօսք վեր բերի: Իմ թուրք սայլապանի հետ մօլոկանների մասին:

—Այս ի՞նչ զիւղ է:

—Սեմենովկան է—ոռւսաց մօլոկանների զիւղը:

—Սա մօլոկանի՞ զիւղ է:

—Մօլոկանի է:

—Ինչո՞ւ չեն նրանք ապրում Ոռւսաստանում:

—Ոռւսաստանից նրանց արտաքսել են:

—Ո՞վ է արտաքսել:

—Ոռւսաց մօլան—տէրտէրը:

—Ինչո՞ւ:

—Մօլոկանը տէրտէրին փող չկել տալիս: տէրտէրը վեր է առել դրանց արտաքսել գէպի մեղ:

—Իսկ նրանք ձեղ մօտ լաւ են ապրում:

— ՕՇ, շատ լաւ, հաց և ձիաներ շատ ունեն նրանք:

Գիւղը, ծշմարիտ, նման էր ռուսաց գիւղերին: Այս դիւղը տեսնելուն պէս ես միանգամից այնպէս կարծեցի, թէ յանկարծ մի զիւթական ոյժ տարել է ինձ դելֆանի շքեղ կիրճից դաժան հիւսիսը: Չորս կողմում չկայ ոչ մի պատիկ ծառ, ոչ մի թռփ: Երեսում են միայն վարելահողեր, հացաբոյսի լայն ձողեր, ուրնք գեռ չէին հասել և հնձվել: Դա զեռ օգոստոսում էր այդպէս, երբ ես յուշիսի քանները թւերում Պետերբուրգից դուրս գտնես, այնտեղ արդէն սկսել էին Պավլովսկի և Յարսկի Սելի շրջակայքում հացը հաւաքել, իսկ այստեղ հարաւում, համարեա Արարատի մօա, ուր արդէն հասնում էր խաղողն ու քիշիշը, այստեղ գոկ ի շրջակայ դաշտերում կանգնած է զեռ չը հնձված հացը: Գաժան, ծշմարիտ որ «սիրիլեական» աեղ է: Իզուր չէին այստեղ ուղարկել խեղճ՝ լացիօնալիստ^{*}) մօլոկաններին: Այստեղ ամառը տեսում է միայն երկու ամիս, նա էլ ինչ տեսակ ամառ է. ցուրտ, գաժան, մշտական խիստ քամիներով: Պայծառ արելը այստեղ չի տաքացնում, կարծես նա ոչ թէ հարաւային, այլ մի լապլանդիայի և բեկուային արե է: Բայց և բեկուային արեգակը, թէպէտ ոչ երկար, բայց էլի տաքացնում է և եփում ամառը: Մինչև անգամ Սիրիլում արեգակը աւելի քաղցր է և ամառն աւելի տաք է, քան թէ ոյստեղ: Լաւ են իմացել «ռուսաց մօլլաները», թէ ուր պիտի ուղարկեն զդբախտ մօլոկաններին:

Ես հետաքրքրութեամբ զննեցի այս ռուսաց գիւղը, որ գցված էր Ասիայի ամենախոր տեղը, համարեա Պարսկաստանը: Քաղցրիկ ռուսաց պատկերներ: Նրանցից ցուրտ է փշում, թէպէտ և նրանք մեզ համար խորթ չեն:

— Զեր սիրտները Ռուսաստանը չի՞ ուղաւմ, հարցրի ես մի

*) Այս անունով էն առլում այն հարդին, որտես ամենայն լինչ հիմնում էն հարդի դաստիարակութեան և բանականութեան վրա և որոնչ գերբնականութեան:

Տերունուց իջևանում, երբ ինձ համար սայլ էին պատրաստում և լծում էին ձիաները:

— Ինչո՞ւ պիտի ուզեն, երբէք, — ժպտաց ծերունին:

— Իսկ չէք մոռանում նրան:

— Ինչո՞ւ ենք մոռանում:

— Իհարկէ . . . իսկ գուք այնտեղեց վաղո՞ց էք եկել:

— Շատ վաղոց: Տարիքների թիւը կորցրել ենք:

— Իսկ ո՞րտեղից են ձեզ աքսորել:

— Մէնք Տամբովցին ենք եղել: Մ'զ մօտ Սարատօվցիք էլ կան:

— Ուրեմն իմ երկրացի էք:

— Դուք էլ էք Սարատօվցիքի:

— Այս, — մի քիչ . . . Այստեղ լա՞ւ էք ապրում:

— Պէտք չէ Ասածուն բարկացնել ապրում ենք և հաց ենք ծամում:

— Միայն ձեզ մօտ ցուրտ է, ինչպէս Սիրիլում:

— Դա ձիշտ է, տաքութիւն մեզ մօտ չկայ: Աստուած մեզ տուել է երկու ամիս ամառ, այն էլ տեսնում էք, թէ ինչ ամառ է: Իսկ գուք ո՞ւր կը բարեհաջիք երթալ:

— Այժմ Երևան եմ գնում:

— Ծառայութեան համար, պէտք է ասած:

— Ոչ, այնպէս . . .

— Բարեկամներիդ մօտ:

— Ոչ . . . Յանկանում եմ նայել Արարատին:

— Հա . . . կարելի է խոստունք էք առել: Ախր այնտեղ այստեղացիք ուխտ են գնում:

— Ես համարեա հէնց այդ մասին էլ գնում եմ:

— Բարի է:

Ես նկատեցի, որ ծերունի մօլոկանները ջահելներից աւելի բարեհոգի և խօսակցութիւն սիրող են: Ջահելները մի քիչ աչքի տակից են նայում ռուսներին: Մէնք նրանց համար ոչ միայն խորթ ենք, այլ մասսամ թշնամիների պէս ենք. մենք գուրս արինք նրանց հայրերին մայրենի երկրից, մենք նրանց վերաւորեցրինք և նրանց հոգու մէջ չի կարելի, որ չլինի մի գառն

զգացմնենք Ռուսաստանին և ռումեներին վերաբերեալ։ Ծերերի համար Ռուսաստանն էլի մնում է հայրենի երկիր։ Հին վիլաւորանքի հետ նրանց արդէն հաշուցրել է ժամանակը և ոյս պատճառով, աեսնելով ռուսին, նրանք ակամայ պիտի յիշեն իրանց հեռու հայրենիքը։

Բոլորովին ուրիշ բան է երիտասարդութիւնը։

— Իսկ դուք կուղէի՞ք լինել Ռուսաստանում, հարցը ևս մի երիտասարդից։

— Ի՞նչ՝ համար լինեմ Ռուսաստանում, իր կողմից հարցեալ է ինձ երիտասարդը։

— Այնպէս—աեսնելու համար։

— Ո՛չ, աղջյ, ևս սէր չունեմ այնտեղ գնալու։

— Ի՞նչու։

— Այնուշը լսում ենք, մեր մօլոկաններին բանան են զնում։

— Դա ոյսմ չկայ։

— Չեմ հաւատում։

— Ի՞նչու։

— Մարդիկն են ասում։

— Եւ ճշմարիտ, ասում է մօտի կամնգնած էնիկը, որ ինձ համար կվաս էր բերել խմելու—դա վերջին բանն է, որ աղօթքի համար մարդկանց բանտերին են ածում։

Այսպիսի հաստատութեան գէմ ևս անողոր դանվեցայ պատասխանելու։

Դուրս դալով Արմենօվկայից, ևս բոլորովին մոռացել էի, թէ գտնվում եմ երեւելի Գոկչա ՂՃի շրջակայքում։ Քամին ուժգնութեամբ շարունակում էր փշել հիւսիս—արեւելքից։ Յուրան այնքան էր ինձ մրսացրել որ ևս չէի իմանում ինչու տաքանալ, և ոյս պատճառով, բացի վերաբերից, հարկադրվեցայ հագնել կաշեայ շորեր, որ առել էի Պատերբուրգում Արարատը բարձրանալու համար։

Յանկարծ, բոլորովին անակնկալ կերպով, իմ աչքերիս առջև բացվեցաւ մի զարմանալի տեսարան։ Տովի մակերեւոյթից

եօթը հազար ոտնաշափ կամ դրանից էլ աւելի բարձրութեան վրա, զատիվոյր, ժայռոտ սարերի մէջ ես աեսայ մի նոր ծով, մի ծով, որ գանվում է Եսլիլից և Զաղիրդաղից երկու հազար ոտնաշափով աւելի մի բարձրութեան վրա։ Դա ճշմարիտ որ բնութեան մի հրաշ ք է։ Նոյն անվերջանալի ծովային հեռաւորութիւնը, նոյն անսահման ջրային հարթութիւնը, որ հասնում է հորիզոնին, նոյն հրաշալի կապուտակութիւնը, որ բայց վում է աչքի առաջ Սև կամ Միջերկրական ծովը աեսնելուն պէս և սա որամնութիւն լեռնային շղթաների զլի ին, 7000 ունաչափ բարձրութեան վրա։

Դա էր նրեւելի լիձը—Գոկչան։ Ես պատրաստ էի գոշել այսպիսի բարձրութեան վրա ծով չէ կարող լինել։

Իսկ դա ճշմարիտ որ ծով էր. նոյն աեսակ ալիքներ, ինչպէս լինում են միւս ծովերում, շրջում էին այս զարմանալի լճի փիրուզայի նման մակերեւոյթի վլայրվ և աղմուկով փշրում էին զարնիվելով եզերքի ժայռերին ու քարերին. նոյն տեսակ, ինչպէս և միւս ծովերի վրա ձկնորս թռչունները պտտում էին նրա վրայով, աղմուկով օդը իրանց տիսուր ձայներով. կայ նոյն ահաւելի վաւմութիւնն և նոյն երեւակայութիւնը վախեցնող անյայտութիւնն թէ այնտեղ, այդ հողին սառցնող կապուտակութեան ետեւում ի՞նչ կայ։

Աջ և ձախ կողմից այդ ծովային կապուտակութիւնը պատել են մոխրագոյն սարերը, իսկ ուղիղ աչքերի առաջ ընկած է մի անվերջանալի հեռաւորութիւնն, ջրի անափելի մասսա։

Անցնելով մի փոքրիկ թռւքի զիւղից, ուր կային չոր աթաղի սև բուրգեր և կօնուսներ, ձանապարհը գնում է Գոկչի աջ—հարաւարեւմտեան ավով։ Այդ զիւղի արտաքին ձեր և բնաւորութեան մասին կարելի է նոյնը կրկնել, ինչ ասում է Ի. Ս. Պղեակօվ, որ ձանապարհորդել է այս տեղերով 1879 թոփ աշնանը Նոր Բայազէտի և միւս ուրիշ զիւղերի հնագիտական հետազոտութիւնների համար։ «Մասնակալով Նոր Բայազէտին—դրում է նա—ես չէի ուզում հաւատալ, թէ դա քաղաք է. նրա

առաջին պլանում կանգնած են չոր աթարի բարձր բուրգերը. այդպիսի բուրգը էտղմում է տեղական բնակչի հարստութիւնը, որովհետեւ այն ամեն սարերում, որոնք գանվում են Գոկի հարաւարեմտեան ափերում, չկան ոչ ծմակներ, ոչ էլ թփեր: Մի խօսք, այնտեղ գոյութիւն ունենալու համար պէտք է անանաւուահ լինել, կերակուր եփելու և վառելեքի փայտ ունենալու համար: Ծակի այդ բացակայութիւնը հարկադրել է տեղական բնակիչներին խորացնել իրանց խրճիթները գետնի մէջ, քանի դեղով բաւական խոր փոսեր: Շատ զէպքելում քարը նրանց մօտ փոխարինում է փայտին. քարից են շինվում խրճիթի պատերը փոսի մէջ և մինչև անգամ դուրս են բերվում պատերը հողի մակերեւոյթից մի քիչ բարձր: Քարը գործ է ածվում առանց տաշելու, դարսվում է առանց որ և է կոցնող բանի, ամենաշին ձևով: Մի ոյն կտուրի համար գործ են ածվում փայտէ ձողեր, որոնց վրա ածում են հող: Տների մօտ անասունների համար շինած չափարը, նոյնպէս և կալերի չափարները—այս ամենը շինվում է փայրենի, անտաշ քարից. քարից էլ շինված են մի քանի անօթներ. տաշտակներ, անդեր, և այլն: Եւ այսպէս, եթէ աթարեայ բուրգերը կամ զիւղի մօտ խոտի գէղերն ու խրճիթներից դուրս եկող ծուխը չը լինէր, դժուար կլինէր զանազանել այստեղի գիւղերը այստեղի սարեդի և թումբերի բնական բարձրութիւններից . . . Անցնելով գոկչի հարաւարեմտեան ափի ժայռից, ամեն տեղ պատահում ես այդ տեսակ շինութիւնների, որոնք մասամբ մեզ ժամանակակից են, մասամբ հին, վաղուց թողված են: Բայց այժմեան հովուական շինութիւնները նոյնքան քիչ են զանազանվում վաղուց թողուածներից, որքան և նոր հովենները զանազանվում են այն հովեններից, որոնք յայտնի են եղել արեմտեան Ասիայում խորին հին ժամանակները»:

Ով բարձրացել է ջադիրդաղը և տեսել է այն տեղի թուրք հովեններին և նրանց քարէ հնաձև խրճիթները, նա արդէն ծանօթ է մեր ժամանակակից ներլոթներինահապետական կեանքի

պատկերների հետ, նոյնպէս և նրանց կեանքի հետ, որոնք մի ժամանակ եղել են Ասիայում թագաւորներ, աշխարհի երեսին առաջին պատամական թագաւորներ:

Մինչեւ յաջորդ մօլոկանն զիւղը և մինչև Ելենօվկա իջեանը Ճանապարհը գնում է գոկչի զառիվայր քարքարուա ափով: Այս Ճանապարհն այնքան սեղմված է սարերով ափերի զառիվայրին, որ նրանով գնալը շատ շփոթացնում է. Հենց կարծում ես թէ անիւնները արագութեամբ գլորվելիս կամ անզգոյշ շուռտալիս խոկոյն կը թռչես զառիվայրի տակ փրփրած փիրուզայի նման լիճի մէջը:

Չախ կողմնում, ափերից քիչ հեռու, երեւում է մի փոքրիկ ժայռոտ կղզի, որ համարեա անմատչելի է լճի կողմից. Կարծում ես թէ նա մի ամբոց է: Նրա վրա երեւում են հին շէնքսերի և խկական ամրոցների պատերը, որոնց վրա կանգնած են հայկական եկեղեցւոյ նոյնքան հին, կօնուասական գմբեթները: Դա մի հին հայկական վանք է, որի համար յիշում է պ. Զելինսկի իր Երևանի նկարագրութեան մէջ: Նա ասում է, թէ այդ վանքի հնագարեան եկեղեցւոյ մէջ, զրան ճակատին, մինչեւ այժմն պահպել է մի արձանագրութիւն, որ ասում է թէ 1557 թւին, երբ տաճիկները նուածեցին պարսիկներից Երևանեան նահանգը, Երևանը կառավարում էր մի Ագուպ-բէկ:

Այդ անմատչելի կղզուց, որ գոկչի հետ հայերէն անուանվում է Սևան, բուրում է խորին մենակութիւն: Այդ մենակութեան լոռութիւնը խանգարում են միայն ալիքների միանման վշշոցը և ծովային ձկնորս թռչունների տրտմալի ձայները:

Համարեա մինչև Ելենօվկան Ճանապարհը գնում է գոկչի այդ զառիվայր ափերով: Մի տեղուր ձեռնուր թափվում են հարեան սարերից ձիւնի կոյտերը, Ճանապարհի վրա շինված է քարեկրի գալերէա փայտէ նեցուկների վրա, մի քանի կողմանկի լոյս անցնելու տեղերով: Նրա միջի ցուրտն ու խոնաւութիւնը կատարեալ գերեզմանական են:

Ելենօվկայում, որ մի բաւական մէծ զիւղ է, լինում են

նոյն մօլոկաններն ու նոյն աշխանային ցուրտը, բայց երեւացող բնակիչների առատութիւնը, ցորենով ցանած ահագին գաշտերը, անցեալ տարուց մնացած հացի մեծ կոյտերը և բնակիչների տուող տեսքը բաւականին վարձատրում են մեր աքսորված ժողովրդական փիլիսոփայ-բայցինալիսաների սիրիբական կեցութիւնը: Իսկ այդ ռուսաց գաղթականութիւնները շրջապատող տեղի գիրքը չի թողնում ցանկալ ոչինչ մի լու բան: Սարերը, որոնք ամֆիտէատրոնի պէս պատում են և Գոկչա լիճը, և ամբողջ հարաւ-արևեմտեան հօրիզոնը, տաղիս են այդ ամբողջ տեղին շատ վաեր առէզիա:

Եղենօվկոյի եռքում, դէպի Ախատի իջևանը տանող ձննապարհին գոկչան կորում է և այդ տեղը սկսում է քիչ քիչ ցածրանու մինչև Երեսնը և մինչև Արաքսի շքեղ հովիտը, որ մի հարուստ գորդի ուս փռուած է Արարատի ոսների տակին:

Օրը թեքվում էր դէպի երեկոն, բայց ինձ հարկաւոր էր մինչև պիշեր անցանել գեռ երկու տարածութիւն:

Առաջին տարածութիւնը մինչև Ախատի իջևանն էր, որ մի հարուստ և լայնարձակ թուրքի գիւղ է, որի բնակչութեան կէսը կազմում են մօլոկանները և մասամբ հայերը: Երկրորդով ես պէտք էր անցնէի փոստային ձննապարհից գուրև, դէպի աջ մի բարձր լեռնամիջով, ուր այդ ժամանակը գտնվում էին աշմառնային քոչառեղերում ինչպէս Եւեանի նահանդապետը, նոյնպէս և բոլոր նահանդական իշխանութիւնները:

Այդ քոչառեղին մի հին հայոց զիւղ է արերի միջում, որ ասվում է Դարաշիւագ:

Դարաշիւագը ես պիտի այցելէի շատ պատճառներով: Գլշխաւորը նա էր, որ ես պիտի ստանայի նահանդապետ Միխայիլ Ենակովլիվիչ Շալիկովի հրահանգները և ինդրէի աջակցել ինձ: Նահանդապետին ես պիտի ցոյց տասի ինձ հետ Պ'րաերբուրդից բերած նամակը, որ տուել էր ինձ իմ բարի ծանօթ, սիրելի, պարտաւորացնող և բաղմակովմանի լուսաւորված Նեկոյայ Գեմենտեվիչ Նօվիցկի, որ այժմ Տուրկիստանի գլխաւոր նահան-

դապետի շտաբի գլխաւորն է, նոյնպէս և Կովկասեան ռւսում նարանական շրջանի հոգաբարձու մեծարդոյ Կիրիլ Պետրովիչը Եանովսկու նամակը և վերջապէս պիտի ասէի բերանացի յանձնարարութիւն և բարե տայի Կովկասին և Անդրկովկասին յայտնի քաջածանօթ գեներալ ի. ի. Ստեբնիցկու կողմից, որ այնքան շատ աշխատել է այդ երկրի ռւսումնասիրութեան մասին:

Մ. Եա. Շալիկովից ես յոյս սնէկի ստանալ հրաման տեղական իշխանութիւնների վան, որ ինձ օդին այն պլանը կատարելու համար, որին ես այնքան վստահ կերպով անձնատուր էի եղած, չը կասկածելով թէ ինչ կը նստէր ինձ վրա այն ամենը, որին ես էի որոնում:

Նոյն օրը, Օգոստոսի 4-ին, իրիկնապահին ես Դարաշիւագումն էի:

VII

ԴԱՐԱՇԻՒԱԳ:

Դարաշիւագը—Երեւաննեան իշխանութիւնների ամառնային քոչառեղին, տեղաւորված է սարերում, փոստային ձննապարհից 7 վերստ դէպի աջ և Երեւանից 50 վերստ հեռու: Այս արիստոկրատիկական քոչառեղով երջանիկ դիրքն ու յարմար, մեզմ ողի բարեխանութիւնը պայմանաւորվում են զլատարարէս երկու հանգամանքներով: առաջնը, Դարաշիւագը տեղաւորված է մի լեռնային բարձրութեան վրա, որ ոնի ծովի մակերեւութիւն մի քանի հազար ոտնաչափ, և այս մէկը աղատում է նրան Երեւանի արևադարձի ջերմութիւնից, ուր ջերմացափը այդ ժամանակը բարձրանում էր համարեա մինչև 50 աստիճան և ուր ամոռն ինչպէս օդը, նոյնպէս և կեանքի բոլոր պայմանները գրականապէս մահաբեր են, իսկ հասարակ աչքով անտեսանելի մժեղների բիւրաւոր բազմութիւնները գիշերները

թունաւորում են այն համբերող և սովորած աեզական ընակիչների գոյութիւնը, որոնք գործերի ակամայ պահանջների կամ աղքատութեան պատճառով գատապարտուած են ամսութ մընալ այդ հնոցում. երկրորդ, Դարաշխատն այնպէս բախտաւոր աշխարհագրական տեղ ունի բունած, որ մարդ, աղքատութիւն որոնելով երեանեան հնոցից լեռնային բարձրութեան վրա, նոյն ժամանակ չէ զգում այդ բարձրութեան վրա այն աշխանային ցրտերն ու քամիները, որոնք տիրում են ամսութ Գոկչի շրջակայքում, որովհետեւ հիւսիսից նու պահպանվում է բարձր սարերով, նշանաւոր Արագածի կողմանկի շարքերով, որոնք պատում են նրան հսկայական պայտի նման, իսկ հարաւից և արեւելքից նրան տաքացնում է նոյն արեգակը, որ այնքան սպանիչ է Երեանում և այնքան քաղցրաբարոյ է սյատեղ մի քանի հազար ոտնաչափ բարձրութեան վրա:

Ահա ինչ պատճառով են այսաւելքոչում բոլոր Երեանեան իշխանութիւնները, որոնք ամառն էլ պարտաւոր են զործել—թղթեր յօրինել և ստորագրել: Այսպէս, զա տեղային ինակւլիքենցիայի համքոչառեղին է, համ էլ ամորանոցը:

Ամբողջ Դարաշխագը բաղկացած է համարեա մի փողոցից, որ ընկած է լեռնային զառիվայրով, որի երկու կողմին սպիտակի են տալիս փոքրիկ տնակներ, որոնք ըստ մեծի մասին պատկանում են Մօլոկաններին, որոնք այս առանձնատեսակ Երեանեան քոչառեղոյ տիրապետող տարրն են կազմում: Հենց այս տնակներում են ասպրում ամառ երեանեան իշխանութիւնները: Այդ պատճառով այս կատարեալ մութիների դիւզը մտնելուն պէս, մի կերպ օտարոտի են երեւում փողոցներով անցու գարձ անող բոլորովին ոչմուժիկային գէմքերն ու հագուստները, սիրունատես տիկիններ և օրիորդներ մօդնի շրերում, հարուստ ծնողների գեղեցիկ հանգած երեխաները ծծմայրերի հետ, նահանգական առիւծները, օֆիցիեները և գեներալները սպիտակ համազգեստում, պոլիցիական աստիճանաւորներն ու զինուորները, և այնուղ նրանց շարքում և մօլո-

կանները իրանց կատարեալ մոսկովեան կապաններում և կարմիր շապիկներում, մօլոկանուհիները մաքուր շրմերում սպիտակ գոգնոյներով, մաքուր անտապ ործ հագնված: Այսուղ են և հայերը, և թուրքերը և թուրքերի կնիւները կարմիր շալվարներով և ֆէսերով, նոյն իսկ այն թուրքերի կնիւները, որոնք այնպիսի վայելուչ կերպով իրանցով զարդարում են իրանց սեփական, իսկական քոչառեղիքը չափեների և միւս վայրենի, բայց գեղանկար շրջանի հետ:

Մանելով Դարաշխագը և բարձրանալով մինչև փողոցի կէսը, իմ սայլապանը կանգնեցրեց ձիաներին:

— Ինչո՞ւ գու կանգնեցիր, հարցնում եմ ես:

— Զի՞ն պիտի մի քիչ հանգստանայ, պատասխանեց նա.— շատ զարկելը (ԿՐՅՏՕ) է այս փողոցը, ինչպէս Ալագեապը (Արտգած):

— Միթէ Արագածը շա՞տ զարկելը է:

— Ուհ, ինչպէս զարկելը է:

— Եւ բա՞րձր է:

— Ուհ, բարձր է:

— Արարատից բա՞րձր չէ:

— Իմ թուրքը մինչև անգամ նայեց ինձ վըս:

— Բա՞րձր է, ինչպէս բարձր է: Արարատը բոլորովին բարձր սար է, ուհ որքան բարձր է, իսկ Ալագեապը բոլորովին փոքր սար է:

— Իսկ կարելի՞ է բարձրանալ Ալագեապի գլուխը:

— Կորելի է:

— Իսկ Արարատի գլուխը:

— Ո՞հ, Արարատի գլուխը բոլորովին չի կարելի:

Ես զիտակցաբար էի հարցնում նրան Արարատի մասին: Ես իմանում էի, թէ ինչպէս տեղային մահմետական թուրքերի, նոյնպէս և հայերի մէջ խոր արմատացած է այն համազմունքը, թէ Արարատ բարձրանալը անկարելի է, թէ դա մարդկանց արգելած են քրիստոնէի Աստուածն էլ, Ալագեն էլ թէ

այն յանդուգն մարդիկ, ոլոնք համարձակվում են չը լսել Աստ տուծոյ պատուիրանքին և փորձում են բարձրանալ սրբազն առըլը, կորչում են ամենասասրաւիկելի կերպով:

— Ինչո՞ւ չի կարելի Արարատը բարձրանալ, հարցնում եմ ես:

— Ալլահը չի հրամայել:

— Ե՞ն, ինչ անենք թէ Աստուած չի հրամայում, իսկ մարդիկ էլի անում են:

— Ո՛չ, բոլորովին չի կարելի: Մի անգլիացի կար—նա մեքենայի վրա գնաց Արարատ: Գնաց, գնաց, հասաւ սարի կէսին, իսկ այնտեղ Աստուած ուղարկեց քամի, այնպիսի մեծ քամի, որ նա միանդամից վեր առաւ անգլիացուն. նա նրան վեր առաւ և յայտնի չէ թէ որտեղ է դրել. այնպէս էլ նա կորաւ:

— Օ՛հ, ինչ սարսափելի է:

— Այո՛... իսկ մի ֆրանսիացի կար—նա էլ շինեց մի անսակ պարկ, և այս պարկի հետ թռաւ Արարատի զլուխը: Այնտեղ նրան բռնեց մեծ քամի իր պարկի հետ և յայտնի չէ, թէ որտեղ է դրել. ֆրանսիացին էլ կորաւ:

Թէ ինչ էր հասկանում նա պարկ բառով—ես չեմ իմանում, բայց, երեխ, նա մի բան լսած է օդապարիկի մասին և այս տեղեց գուրս է բերել պարկը և ֆրանսիացու անբախտ օդագնացութիւնը:

Դարաշիշագում ես մնացի այնտեղի այսպէս անուանված «Հիւրանոցում»: Դա մի օտարոտի, կիսաարևելեան բնակարան էր, ծածկուած յարտով, և այնպիսի սենեակներով, որոնց համար ան կարելի է մի անուն ձարել դրանք աւելի նկուղներ էին, քան թէ սենեակներ. ընդ ամենը կային երկու միջով անցնելի նկուղներ և մի կիսանցնելի նկուղ և այդ վերջն նկուղը նշանակեցին ինձ համար: Ես հրամայեցի պատրաստել ձուաձեղ. երեկոյեան մի բան պատրաստել ուշ էր, և ես կերպ այդ շըշեղ կերակուրը, նստելով պատուհանում, որովհետեւ սեղանի վրա ճաշել բոլորովին անյարմար էր:

Խնդրեցին տալ իմ անցաթուղթը պոլիցիյմէ յստերին (նըրան էլ էին անհրաժեշտ համարել քոշատեղի բերել) ցոյց տալու համար:

Ես կատարեցի որէնքի պահանջը, իսկ առաւօտեան ինքաղնացի պոլիցիոյի գլխաւորի մօտ (որ մի շատ սիրելի և ըստ երեսյթին կակուղ մարդ էր), որ նրա հետ միասին գնանք նահանգապետի մօտ: Այդպէս էլ արինք:

Ետհանգապետն ընդունեց ինձ այնպէս, ինչպէս ես մասմբ սպասում էի, որովհետեւ դրանից առաջ ես լսել էլ նրա մասնին շատ լաւ բաներ, ինչպէս նահանգապետի և ինչպէս մարդու մասին:

Լաւ ընդունելութեան կարող էին, իհարկէ, նպաստել և ինձ հետ բերած նամակները, բայց և առանց գրան, ես գտի նրա մէջ շատ ախորժելի, հասարակ և համակրելի մի անձնաւորութիւն:

Մենք խօսեցինք, իհարկէ, իմ ճանապարհորդութեան նըրապատակի մասին: Ամենաբարի գեներալը յայտնեց, իհարկէ, իր սովորականարեալ պատրաստականութիւնը անել ինձ համար այն տմենը, ինչ կարող էր իրանից կայսերած լինել, ինչպէս այդ երկրի զլխաւուից, այսինքն յանձնել ինձ Արարատի մատերքում եղող իշխանութիւններին ցոյց տալու ինձ օգնութիւն այն առմանում, ինչից կարող էր կոխված լինել իմ էկոպեգիցիոյի աջողութիւնը, տալ ինձ փորձված ուղեցոյցներ և պահապաններ, ցոյց տալ ծեր մարդկանց, որոնք կարող լինեին յիշել, թէ ինչ կերպ է կատարել Արարատ բարձրանալը 1850 թւականին պատօգկո պ. պ. Խանիկովի, Ալէքսանդրովի, Մօրիցի, Ռուլարի, Շարօնանի և ՅՈ հատ զինուորների և կօղակների հետ:

— Ահա այն ամենը, ինչ ունեմ ես իմ կարգադրութեան մէջ, վերջացրեց նա.—իսկ էկապեգիցիայի աւելի մօտիկ կարգաւորութիւնը կախված կլինի ձեզանից:

— Իհարկէ... Շնորհակալ եմ ձեզանից... Ես յոյս ունիմ՝ թէ կարելի է իրա՝ Արարատի մօտ կը դանկին ցանկացողներ

ինձ հետ բախտ վորձելու, թէպէտ և այդ բախտին, ինչպէս
առում են, հասնվում է ոչ առանց երկիրդի:

— Ո՞ւմ վրա էք գոք վսահ:

— Ես էլ նամակ ունեմ գեներալ Նօվիցիուց նրա լու ծանօթ
և զբու որական ակադեմիայի ընկերակից պոլկօմինիկ Նևիլով-
սկու վրան:

— Ումանեան կօգակների գնդի Հրամանաստրի՞ն, որ գործ-
վում է Արտիկում:

— Այո՛, հէնց նրա վրան:

— Բայց նա այժմն ձեր գժբախտութիւնից չը կայ Արալիս
զիւղում:

— Իսկ որտե՞ղ է նա:

— Արձակուրդում է—Պետական կայութիւն ջրերում:

— Ափո՞ս, ես նրա վրան մեծ յօյսեր էի գրել:

— Բայց և այդպէս, գոք կարող էք զիմել պոլկօմիկ
Ասաքելօվին, որ այժմ Նևիլովսկու տեղ ժամանակաւոր կա-
ռավարում է զօրագունդը. նու մի շատ լաւ և ամենքից յարգ-
ված ծերունի է և չափազանց պարտաւորացնուղ մարդ է. նու ձեզ
համար ամեն կարելի բան կանէ: Բարեւցէք նրան իմ կողմից:

— Ենոր հակայ եմ, ես կօգտուիմ ձեռ խորհուրդով և կը յու-
սամ, որ . . . :

— Ա. հա՛, հա՛, տեղու եկառ: Ես քիչ էր մնացել մոռա-
նայի, ընդհատեց Միլայիլ նակօվելիցը. — այսակդ, Գարաչի-
չագում այժմեան բազէում գտնվում է Առւրամալուի գաւառապետ
ու. Կոկչակի. նա եկել է այսակդ իր բարեկամների մօտ մի
քանի օրուայ ժամանակով: Նա ձեզ համար ամենաօգտակար
մարդը կլինի: Արարատը գտնվում է նրա գաւառում. նրա
ձեռքին տակ էլ գտնվում են բոլոր միջոցները ձեզ առաջնոր-
դելու համար: Ես այս ժամին կը զըկեմ նրա ետեից և մենք
պայմաններ կը գնենք ինչ կերպ օդնել ձեր գործին:

Դա ինձ համար մի գիւտ էր. գրանից լաւ բան էլ չէր
հարկաւոր իմ նպատակների համար:

գեներալը իսկոյն հրամայեց խնդրել իրա մօտ այս ինձ
համար ցանկալի անձը, և մի քանի բոպէից յետոյ Սուրմալուի
գաւառապետն արդէն մեզ հետ էր: Նա երեաց ինչպէս իմ
պահապահ հրեշտակը, թէպէտ ոչ նա, ոչ էլ ես իհարկէ չէինք
կարող նախառնել, թէ ինչ է սպասում մեզ առաջներիս. իսկ
իմ առջես սպասում էր ինձ խորին զարմացք և ու այնպիսի
գժբախտ ելք, որին ես ամբողջ կեանքում չեմ մոռանայ:

Բայց ինչո՞ւ համար անցնել ապագայի սահմաններից:

Նահանգապետի կանչելուն վրա երևացած Սուրմալուի
գաւառապետը, Նիկոլայ Պետրօվիչ Կոկչակի, ինձ վրա շատ
լաւ տպաւորութիւն գործեց: Դա հարաւային մարդու մի մա-
քուր, առհմական ախող էր. գեղեցկատես, սեղրակ աչքերի կին-
գանի, պայծառ փայլի հետ:

Իմանալով թէ ինչ բան կայ. նու ըստ երևոյթին հրձու-
անքով ընդունեց նահանգապետի առաջարկութիւնը: Նու ինքն
էլ վաղուց ուզեցել է վորձել իր բախտը—բարձրանալ Աստուա-
ծաշնի սարը, բայց միջոց չէ պատահել և հէնց մէկը չի
գանվել որ իրա հետը գնայ, թէպէտ Արարատը միշտ նայում
է նրան նրա առանձնասենեակի պատուհանով Խղզիրում; որ
գանգում է սրբազն սարի սակ տակ, ուր և գտնվում է նրա
բնակարանը: Նա խստացաւ ինձ հետ միասին բարձրանալ այդ
պատմական սրբութեան զլուխը, որի մասին միտքը, ինչպէս
ուժեւ հայութանես, իլել էր իմ քունք, տիրել էր
իմ երեակացութանս, իլել էր իմ քունք:

— Այո՛, ես ինքս իմ ձեռքերով կը գնեմ Դանիէլ Առաքիւն
Արարատի զագաթի վրան:

Ահա ակ. Կոկչակի սեփական խօսքերը:

Ցետոյ նահանգապետը հրամայեց պատրաստել ինձ համար
բայց հրամանազիր, որի մէջ ասվում էր. «Հրամանագրվում է
քաղաքական պահապանների իջևանների կառավարիչներին Գա-
րաչչաց աւանից մինչև Երևանեան նահանգի զանազան տե-
ղերը սրան ցոյց տուողին (այս ինչ մարդուն, այսինքն ինձ) տալ

անյապաղ ամեն պօստերից ապահով կանվոյ քաղաքական ձիաւոր պահապաններից և առհասարակ ցոյց տալ ամեն կերպ օրին ուոր օգնութիւն»:

Ճամը երկուսին նահանգապետութ հրատերեց ինձ և աղ. Կոկչանին իրա մօտ ձաշել որպէս զի վերջնականապէս վը ձնուին մեր էկապեգիցայի պայմանները:

Առ ժամանակ մնաք բարեաւ տաելով իմ սիրելի տանտիրոջ, ես դնացի թափառել Գարաչիչագում և տեսնել այս հետաքրքիր տեղի նշանաւոր հնութիւնների մնացորդները, որոնք հէնց նահանգապետի տան առաջըն են գտնվում:

Ամենից առաջ աչքի է ընկնում մի կիսաւեր աշտարակ, որից մնացել են միայն հաստ պատերի, դռուն և պատուհանի մասը: Ես ներս մտայ գտնով. գա գուռ էր, այլ մի ահազին ձռքուած, որ կարծես բացվել էր թմնդանօմի կամ մանգղենի հարուածով, թէպէտ և այդ տերիչ մանգղենուր կարելի է մի ժամանակ է եղել որ իր ծանր ձեռքը դրել էր մի ժամանակ ծաղկած և փառաւոր Հայաստանի պատմուկան հնութիւնների վրան, Հայաստանի, որ մի անկախ թագառորութիւն է եղել, որ քաջութեամբ կռվում էր մի ժամանակ պարսիկների և տաճիկների հետ: Գժուարութեամբ անցներով քարերի և աղբի վրայով այդ դռան միջով, որ վաղուց է զըկվել իր ծանր քարէ սիւներից, ես երկար զննում էի քանդուած շէնքսի տիսուր ներքին կողմը. գոան երկու կողմին, անկիւնների մօտ, ամբողջ մնացել էին փոքր խորշերը, որոնք ըրջապատուած էին տաշոծ քարերով և այդ խորշերից դէպի պատի մէջը տարված էին մի տեսակ ծակեր, որոնք կամ գտղունարաններ էին կամ խողովակներ: Կիսաւեր պատուհանները պատերի միջից այնպէս էին նայում, որ կարծես դրանք մեռած մարդու կառափի սե աչքատեղերն են: Նրանք պատած են կարծր քարով, գեղեցիկ կերպով տաշած, բայց շատ կերպած ժամանակի և օղի գործողութիւնից: Ամբողջ պահվել է միայն ներքին, փոքր գուռը, որ գտնվում է ուղիղ դրսի գլխաւոր դռան առաջին. բայց թէ

դէպի որ կողմն է տանումնա—այդ մնում է ժամանակի և կործանման գաղտնիք:

Այդ աշտարակից մի քիչ հեռու, մի քիչ բարձր՝ դէպի սարը գտնվում են եկեղեցիների փառահեղ աւերակները: Այդ շէնքսերը, չը նայելով նրան, որ սարսափելի կերպով այսպէս ասած կրծված և ծակոտված են ժամանակով և մինչեւ կէսը աւերված են, մինչեւ այժմ վկայում են գիտութեան այն բարձր տարինի մասին, որին հասել էր մի ժամանակ հայկական թագաւորութեան ճարտարապետութիւնը: Ինչ մաքրութիւն, շքեղութիւն և նրբութիւն ունին այդ շինութիւնները: Ինչ քաշն վսեմութիւն և գեղեցկութիւն կայ ամբողջի մէջ: Միայն ձախ կողմի եկեղեցին կամ մատուռը բաւականին լսու է պահվել, միայն կոնուսաձեւ գմբէթն ու փոքր աշտարակն են կիսով չափ քանդվել: Բայց և այսպէս այդ շինուածքը շատ գեղեցիկ է, մանաւանդ պատերի մէջ պատուհանների տեղ թողած բարակ ձեղքերը, միջին, փոքր եկեղեցին նոյնպէս ներկայացնում է համարեա միայն մի մեռած կմակր, բայց նոյնպէս սովորականից գուրս շքեղ է: Վերջապէս աջ կողմի շինութիւնը—գըլիստուր եկեղեցին, կամ կարելի է մայր եկեղեցին, ապշեցնում է իր քանդված գրութեան մէջ իր վսեմութեամբ և գեղեցկութեամբ: Մանաւանդ փառահեղ է այդ շինութեան զլխաւոր դմբէթը, որ նոյնպէս կիսով չափ թափուած է:

Երկար ես թափառում էի խորին մոսածութեան մէջ այն հին թագաւորութեան չքնաղ մնացորդների մէջ, որ այժմ նոյն կերպ քաղաքականապէս մեռած է, ինչպէս և այս աւերակները, քամու ոյժով վեր ածած խաչերը, կիսաքանագ գմբէթներն ու պատերը, կիսով չափ կոտրատված գերեզմանաքարերն ու թափված կալնիզները: Եկեղեցիների շրջակայքում, բակում, քանդված շրջապարիսպի մէջ, նրանից գուրսում ամեն տեղ գտնվում են գերեզմաններ, մահարձաններ հայկական ուռած վերնագրերով, որոնց որդների պէս կրծել են ժամանակը, անձրեններն ու արելը, իսկ այս բոլորը կեանքի և կործանման

սեպուհ Փակտորներ են: Եւ ինչ մի ուրիշ բան է նոյն ինքն կեանքը, եթէ ոչ մշտակ ան կործանումն: Եւ ինչ բան է այդ կործանումն, եթէ ոչ անվերջանալի յաւիտենական կեանք: Կեանքն ու մահր-զրանք հարազատ քոյրեր են, երկուորեակներ. մահր տալիս է կեանք, միոյն ոչ մեռածին, խոկ կեանքը տալիս է մահ, ապրողի համար հետզետէ մեռնելը:

Աւերակների երեսի կողմին կայ մի ամբողջ շարք կանգնած մահարձանների հին հայկական վերնազրերով, որոնց նոյն պէս կրծել է ժամանակը, կարծես թէ դրանք նոյն խոկ մեռեալներն են կանգնած և բարբառում են իրանց մասին, թէ ովքեր են եղել ինչպէս են մի ժամանակ զօրեղ և երջանիկ եղել: Հայաթի մէջ նոյնպէս կան մահարձաններ վերնազրերով և խաչերով և այս ամենը խօսում է մահի, յաւիտենական աւերման մասին. շատ անուններ ջնջվել են, նրանց գործքերը մոռացվել են, ինչպէս և մոռացվում է մի ժամանակ փառաւոր և անկախ Հայաստանի յիշատակը: Ամեն ինչը ջնջվում է . . . Խոկ ահա դեռ չէ ջնջվել մի բաւական թարմ վերնազրի սորովիւրից շինած մի գերեզմանաքարի վրա. «Այսուղ հանգչում է պոլկօվնիկ իվան Նիկիտովիչ Պապաջանովի փոշին, որ ծնվել է 1801 թւին, վախճանվել է 1875 թւին, յօւիսի 22-ին»: Ներքեում կայ և հայերէն վերնազրի: Խոկ ահա այս քարի վրան քանդված են միայն երկու, բայց շատ սրտառուչ բառեր. «Մեր Նինային»: Նինա—մի շատ սիրելի անուն է ամբողջ Անդրկովկասում:

Ամեն տեղ, ուր կոխում է ոտը, ուր նայում է աչքը, ամեն տեղ մահ է և կործանումն, խոկ նրա մօտ եռ է գալիս կեանքը. պատերի Ճեղքերում բուսել է թարմ կանաչկոտ և այն անվերից նայում են ծաղիկները. ամբողջ բակը և հին վերնազրով զարդարված վերեզմանաքարերը ծածկված են խոտով. բիւրաւոր, խոկապէս բիւրաւոր մօղեններ պտտում են գերեզմանաքարերի վրայով, խայտաճամուկ կարնիդներով, մինչեւ անգամ հարթ պատերով—այս ամենը ապրում է, տաքանում արեգակի

տակ, թագնվում է կանաչկոտի մէջ: Գլխաւոր շէնքսի զլխին, բարձր գմբէթի մէջ գտնվում է շահէնի բյոնը, որի մէջ ճվճը վում են ապագայ գիշատողները, այդ կեանքով բերկրող մողեսների վիշայնողները, որոնք գերեզմանատան կենդանի բնակիներըն են:

Եկեղեցիների և մահարձանների շրջապարիսպը գարսված է նրանց կոտրներից, խայտաճամուկ, կոտրատված կարնիդներից, քարեայ խառներից. այդ աւերակները իրանք են իրանց պահպանում, պահպանում են այն, ինչ որ դեռ չի փոշեցել, ինչ որ չի ցրիւ եկել: Խոկ այդ շրջապարսպից գուրս գտնվող գերեզմանաքարերի կոտրատված և վայր ընկած կարնիդների, քարից շինած խաչերի վրայով արդէն թրիսկթրիսկում են սարերի սայլերի անիւները:

Որքան հանդարտ է չորս կողմում . . . Միայն երբեմն լեռնային թեթև քամին շարժում է չորացած խոտը և կարծես այդ խոտը մի բան է շշնջում, այնպէս որ ակամայ նայում ես չորս կողմի՞՝ կայ արգեօք այդտեղ մի կենդանի արարած: Բայց ոչ չկայ . . . Դա քամին է խօսում չորացած խոտի հետ, կամ արեգակը խաղում է մի որ և է հարթ գերեզմանաքարի վրա, այն արեգակը, որ մի ժամանակ լցու է տուել անկախ Հայաստանին, այն արեգակը, որ կենդանացնում է բուսուցանումէ հէնց նոր բանը և բողորովին կործանում է ամեն մեռած բան, որ աւելորդ է, որ ոչ ոքին հարկաւոր չէ . . . :

Գառնալով աւերակներից դէպի իմ «Հիւրանոցը», ես ընկնում եմ մի աղմկալից, այլատարազ ամբոխի մէջ, որ կտկել էր Դարաշիշաղի ամբողջ փողոցը և գոռում, գոշում էր ամեն տեսակ:

Երիտասարդ մօլկաններ, կարմիր շապիկներում և սև պղեսեայ անդրավարակիքներում կանգնած՝ խմբովին և բարձրաձայն ծիծաղում են մի հարբած ռուսաց մարդու վրան, որ կանգնած է նրանց առաջին ըմբիծի ձեռով և հայշոյում է.

— Անիծեալ մօլոկաններ. անիծեալ ցեղ: Ումի՞ն ես պէտք է

գանգառվիմ:

Մօլոկանները քրքպում են, որով տւելի բարկացնում են հայրածին:

—ՔԸՆ, ՔԸՆ Ժողովարան գնացէք, անիծեալ կաթնակերներ.
Ժողովարան գնացէք:

Լսվում են և խտակ արեելեան ձայներ. «Ալլահ լիւա Ալլահ» : «Ճիւրանոցում» ես իմ նկուղում տեսնում եմ ուշացեայ հայուհիներին, հիւրանոցի հայ տիրոջ եղբօր աղջկներին: Նըրանք թղթախաղով զբաղուած էին. խաղում էին «ԵՖ Դյրաչ-ԷԱ» և ես լսում եմ, որ կօղերի թագաւորին անուանում են «կօղիրի շահ»: «Շահ» — դա Պարսկաստանին է յիշեցնում: Այսու ամենայնիւ այդ աղջկերքը սովորում էին Երեանում տիրին Ստասիւլիվիչը պանսիօնում, որին շատ յարդում են ոչ միայն ուուսներն ու հայերն, այլ մինչև անդամ մաւսուլմանները, ուրոնք հեշտութեամբ են տալիս իրանց որդկերանց տիկին: Սաասիւլիվիչին:

Աղջեկները, կամենալով պարծենալ, թէ իմանում են ոռուսերէն կարդալ, մի դասագիրք բերին և կրտսերը բաւականին յաւ կարդաց:

Նահանգապետի մօտ ձաշելուց յետոյ ես խկոյն պատրաստվեցայ Ճանապարհ ընկնել: Բայց դուրս գնացի Գալուշիչազից միայն մթնած ժամանակը, որովհետեւ իրա Դարաշեշտղի մէջ փոստային իջեան չկայ և ճիմներ բերել տալու համար հարկաւորմեցաւ մարդ ուղարկել Ախտի:

Նրիտասարդ լուսնեակի մանգաղը պայծառ կերպով փայ-
լում էր պարզ երկնքի վրա երեկոյեան աստղի տակ: Ես խորը
զգացի, որ իմ շուրջո է գտնվում բանաստեղծական, պատառու-
փած, պայծառ, չքնաղ և հրապուրիչ, թէպէտ և իր ժան-
տախաներով, ջերմուգենաերով և ամեն տեսակ հիւանդու-
թիւններով վախեցնող Արևելքը: Անխւները թրսկթրսկում
էին քարերի վրայով, կարծես իմ ջղերով: Երբեմն
պատահում էին անձոռնի այցեր, անձոռնի գոմեների հետ:

Աթութեան մէջ լսվում էր սայլապահնի զգուշացնող ձայնը «Խաբարով՝ ա»:

Ես իջեանը հսսայ կատարեալ մթութեան մէջ: Թէ և նա-
հանգապետի տուած բաց հրամանադրի համաձայն իրաւունք
ունէի պահանջել ինձ համար պաշտպանութիւն — զինուորված
կանվոյ, բայց ես վճռեցի համբերել իջեանում, մինչեւ կանցնի
հարաւային գիշերուայ խաւարը, որպէս զի առաւօտը, ըյսով լաւ
տեսնեմ այն ճանապարհը, որով ես շատպում էի գէպի լիմ
նպատակը:

— Օ՛՛, զու երէկ լինձ չետ Դարաչիչագ գնացիր, լսում եմ
յանկարծ մի ձայն իմ քամակիս:

Նայում եմ խստարի մէջ—բահ, դա ինձ ծանօթ, բարեհովի գունչն է: Դա նոյն ընտանեցրած թափառականն է, որ երեկ ինձ պատմում էր, թէ ինչպէս մի անդլիացի «մեքենայով» և մի Փրանսիացի «պարկով» գնացել են Արարատի գլուխը, իսկ քամին նրանց յայտնի չէ ուր է տարել:

— Այս, այս, դա ես եմ, բարեկամ, ուրախացի ես իմ ծառնոթ վայրենու գեմքով. երբ մենակ թափառում ես քո աեղերից շիռու, ամեն մի բարի գունչ ուրախացնում է քեզ:

— ՕՇ, զա գոմել է, լսում եմ յանկարծ խաւարի մշջ մի ուսուից ձայն։

—զոմել է, ես զոմել եմ, իսնարհութեամբ պատասխանում
է իմ ծանօթ վայրենին:

Խաւարի մէջ իշխանի տան սրահում ես նշմարում եմ մի
ու գծագրութեան և վերաբկուի տակից նայող մի սպիտակ հա-
մազգեստ։ Խօսակցութեան ձևից ես ճանաչում եմ ոլ նա ոռու է։

—**ՊԵՇԻ**, զոմիշը, բեր այստեղ արկղները:

Գոմիշը խոնարհութեամբ վեր է առնում սայլակից արկվը
և լրութեամբ տանում է դէպի սանդուղքը:

— Իմ իրերս էլ ասըէք, բարեկամներ, առողջ եմ ես:

— Ի՞նչ է աղայ, ուզում ես զիշերի՞ւ, հարցնում է մի հսկայ

Խասհակի *) դմբէթի մեծութեամբ մի գլակ դրած:

- Ա. Շ.՝, զիշերում եմ:
- Ենողհակալ եմ, աղայ, ձին ոչինչ չի կերել:
- Ուրեմն մի տեղ կը զիշերենք, առում է սպիտակ համազգեստը:
- Եստ գեղեցիկ:
- Ուր կը բարեհածիք գնալ:
- Երեանի վրա:
- Իսկ ես Երևանից, Խոջիվից եմ գալիս:
- Ցայտնիում է, որ դա Խոջիվի նամակատան զլխաւորն էր,
որ նոյն պաշտօնով փոխվել էր Պարաքլիսա:
- Սենեակն է մոնում մի ուրիշն էլ:
- Օ՛հ, կնքաւոր, ու՞ր կը գնաք:
- Պարաքլիսա:
- Գրանք երկու հին ծանօթներ էին. եկողը տեղական անզոհնդկական կամ հնդիկ—եւրոպական հեռագրական գծի կառավարիչն էր, իսկ սպիտակ համազգեստը ծառայել էր այդաեղ առաջ. խօսակցութիւն բաց արին: Ակսեցին ինձ էլ հարցնել թէ ու՞ր և ինչո՞ւ եմ ես գնում: Պէտք էր պատմել: Խորին զարմացք! . . .
- Դա անդիսականի պէս է, նկատեց դժի կառավարիչը. մօտ ժամանակներում այսուեղով Արարատի վրա գնաց մի յայտնի անդիսացի ճանապարհորդ:
- Ո՞ւր:
- Լորդ Խլշեստեր . . . Մայիսումնա Հնդկաստանից գնում էր Թափլիզով և ինձ հեռագրեց այդ մասին: Դեռ երիտասարդ էր—երեխ շատ հարուստ էր—ուղեղ Լօնդօնից էր գնացել: Իսկ յուլիսում ահա այս տեղով յետ էր գառնում մի ուրիշ լորդի հետ, որ բոլորավին ջահիլ էր, բեկել էլ ըսնէր:
- Շուտով ծանօթներս գնացին և ես պառկեցի քնել: Արարատի մասին ունեցած մոքելի հետ էլ քնեցի: Ախր էգուց վաղ առաւտեան ես կտեսնեմ նրան! . . .

*) Պէտքերութիւն հայր Եղիշեյին է: Յ. Թ.

VIII.

ԱՐՄՐԱՑԻ ԴԻՍԱՑ

Գիշեր է թէ առաւօտ: Ես չեմ կարողանում ինձ հաշիւտաւ: Կարծեմ առաւօտ է:

Ու՞ր եմ ես այժմ: Օ՛հ, յիշում եմ. ես Գարաշիչագումն եմ: Ամբողջ զիշերը ինձ չի թողեց իմ ուղեղի և ջղերի մէջ նստած մի չքնաղ ստանեաւորի այս անմռուանալի մելօղիան.

Նրանց տները քամին ցրվեց

Նրանց շիրիմները քանդեցին արօները

Եւ ժանդի բացը լափեց

Նրանց սաղաւարտներն ու սրերը:

Դա Պարաշիչագումն է աւերակների մուգիկան է—դա մահուան մէլօղիան է:

Ո՛չ, ես Պարաշիչագումն չեմ: Ես զեռ երէկ եմ թողել նըրան, իսկ այժմ զիշերում եմ Ախտի իջևանում և հէնց այսօր կը տեսնեմ այն, դէպի որը ձգվում էր իշ միոքս:

«Դէպի Արարատն ունեցած ընդհանուր կրօնական յարգանքը հնութիւնով մարդկային ցեղի պատմութիւնից յետ չի մնայ: Նա հիմնաւորված է այնպիսի աւշանդումիւնների վրա, որոնք ունին անհերքելի խորին նշանակութիւն, մի քանի ձայների վրա, որոնք մեզ են հասել վաղուց անցած մարդկային կեանքից և որոնք պատմում են մեզ այդ կեանքի մասին, ինչպէս մանկութեան անորոշ յիշողութիւններ մեր գոյութեան սկզբի մասին. այս պատճառով գիպչել նրանց—կը նշանակէ վրդովել այն, ինչ մարդը անուանում է սրբութիւն: Հաւասար կերպով մենք աւելորդ ենք համարում լուծել ունի՞ արգեօք թէ չունի մի հիմք այն կրօնական համազմունքը, որ տիրում է Հայաստանի մէջ սրբազն սարի գագաթը հասնելու անկարելի լինելու մասին»:

Այսպէս է առում հոչակառը զիանական Արիս, որ երեք անգամ փորձել է բարձրանալ այդ սոսկալի սարը և չի կարողացել համել նրա խորհրդառոր զլիսին, կամ նրա վրա եղած կատաղի փոթորիների պատճառով (դա Ալահն էր ուղարկում յանդուգն մահկանացուի վրան իր մրկալից շունչը, կամ բարկացած Եհովան էր շանթեր արձակում և դողացնում երկրի հիմունքները), կամ թէ այն պատճառով, որ խոր ձիւները, որոնք կանված էին ժայռերի և անդունդների վրայից, սպառնում էին թաղել իրանց տակին այդ համարձակ մարդուն:

Բայց չորրորդ անգամում, 1845 թւի յուլիսի 29-ին, նրան վերջապէս յաջողվեցաւ համել այն տեղին, որ անհասանելի էր համարվում:

Արդեօք ես է՞լ կը համեմ:

Նրանց աները քամին ցրվեց

Նրանց շերիմները քանդեցին արօնները...

Ումի՞ «աները», ումի՞ «շերիմները». իշարկէ նրանց, որնց մասին ես այլքան շատ մտածում էի այդ օրերու մ—երկու՝ այժմ գոյութիւն չունեցող պետութիւնների—Հայոց և Վրաց թագաւորութիւնները տները, որոնց յիշատակարաններով լիքն են այս տեղերը: Ա՛խ, այս պատմական յիշողութիւններն էլ վրդովեցնում են իմ քունս, զրդում են ջղերս:

Ճամանակ է զնալ—շուտով լոյսը կը բացուի:

Ես դուրս եմ գտիս սրտհը: Հարաւային գիշերը նայում է ինձ վրա իր բոլոր աշքերով, իր բոլոր աստղերով: Բայց արշալոյսը քիչ քիչ ծագում է:

Կիսամթութեան մէջ, սրահում մի վափուկ, կենդանի բան ընկնում է սուերիս տակը: Մի բան համեստութեամբ, երկիւղածութեամբ ճշաց, ձնշվելով իմ ոտի տակ: Դա մի շնիկ էր, որ պահպանում էր իմ քունը: «Ալս, շնիկ, ներիր—չեմ տեսել»: Նա վայխայում է—իմանում է իր գործը. անցորդ է, նոյնն է, ինչպէս և իր տէրը: «Դէ՞ն, խելօք, վաղիր, վերկացրու սայլապաններին»: Նա զնաց պտտեց մի տեղ, և չի մա-

նալով թէ այլ ես ինչ անէ, սկսեց քորել զինքը:

Բայց ահա և սայլապանները: Մի բան մօտեցաւ սրահին: Կսոքի միջից գուրս են գալիս վաթաթված մարդիկ, մօտենում են ինձ և ողջունում են: Խօսակցութեան ձեռվ իմանում եմ, որ զրանք օրինտալիստներ, իսկ հասալակօրէն ասած—արեելեան մարդիկ են: Սկսում են հարց ու փորձը:

—Դուք ո՞ւր էք գնումի:

—Երեւան:

—Իսկ ո՞ւստի վեց էք դալիս, թոյլ տուէք հարցներ:

Ես ասացի: Նրանք ըստ երկութիւն զարմացին, որ պյտքան հեռու տեղից մարդ է գնում երեւան:

—Իսկ թիֆլիսից երկաթուղիներով եկաք, հետաքրքրվում են նրանք:

—Ո՛չ, փոստային սայլով:

Նոր զարմացք: Ես բացատրում եմ, որ գեղի այս կողմը երկաթուղի չկայ:

—Ի՞նչպէս չկայ: Այս մինչև փոթի և բագու կան:

Պարզ էր, որ նրանց համար իլիայի նմանք զժուար էր իմանալ, թէ Ոռուսատանը որտեղ է: Նրանք ուժով ուզում են իմանալ, ինչու համար եմ գնում: Զուգենալով նրանց տանջել, ես վճռում եմ շփոթացնել իմ օրինտալիստներին և ասում եմ, թէ գնում եմ Արարատի վրա: Եւ իրաւ շփոթացրի նրանց:

—Այս Արարատի վլուխը չե կարելիք բարձրանալ, հաւատացնում են ինձ:

—Ահա ես ուզում եմ փորձել բախոս:

—Այս այնտեղ ոչ ոք չէ բարձրացել:

—Ո՛չ, բարձրացել են Պարսոտը, Բերենաը, Ավտօնօմօվ-Ապասկին և Արիլիը:

—Դրանց մասին մենք չենք լսել: Բայց Արարատը բարձրացել են ննգելքարդ և Աբովեանց և երկում էլ բոլորովին կորել են:

Իմ ձիանքը պատրաստ են: Թիգնապահ՝ ձիաւորը նոյնպէս պատրաստ է ձիու վրա: Ես միանք բարեաւ եմ ասում անծանօթ

օրիենտայներին և ճանապարհ եմ ընկնում:

Նքեղ երկնքի վրա մի կտոր թուզպ, մի շուաք էլ չկայ. երկինքը կուսական, մաքուր է: Աստղերը ծանր, բայց նկատելի կերպով հանդչումեն. ինձանից վերև չորս կողմնամ արիում է հիսնալի կապուտակութիւն, որ նման է մութ-փիլտւզայի գոյնին, և միայն հօրիզոնի մօտ կայ մի աւելի քիչ կապոյտ շերտ. երեխ դա երկրի մթնոլորդն է, որ չի հանում յայտնի բարձրութեան:

Եւ յանկարծ հօրիզոնի այդ մթին—կապոյտ շերտի վրա մի պայծառ, օտարութի, անբնական սպիտակ բան կարծես թէ փայշեց: Դա ի՞նչ է:

Դա նա ինքն է — Արարատն է։ Մի բան ճշնջեց իմ սիրող։
Ես նայում եմ դէպի աջ — այնտեղ էլ է բարձրացել մի հըս-
կայ ձիւնային գագաթով։ Դա Արագածն է։ Բայց նա ոչնչու-
թիւն է Արարատի առաջն։ Սրանից ես չեմ կարողանում անց-
նել իմ ապշած, աւելի քան ապշած — վախեցած հայացք։ Դա
մի անհասանելի բան է։ Մի ամբողջ սար, ձիւների մի ամբողջ
վիճակ կանգնում է ձեր առաջին 100 վերսափց տւելի հռուտո-
րութեան վրա, այնքան մեծ է այդ հողի և քարերի մասսան,
որ հանում է երկնքին և ծածկուած է ձիւնով։ Եւ դուք նայում
եք այդ՝ միաքն ու հողին վախեցնող տեսարանին 6000 ոտնաչափ
բարձրութիւնից, ուրեմն Զագիրդաղիցն էլ բարձր տեղից։ Մի չը
տեսված, համարեա չեղած պատկեր է դա։

Այնտեղ, որտեղից ես նայում եմ այդ պատկերին - գեռ կիսամթութիւնը պատում է շրջակայքը, արեգակի նշանն էլ չկայ, իսկ այնտեղ նա արդէն ոսկիացրել է սարի ծիւնապատ գագաթը և իր առաջին ճառագայթները ուղարկում է Արագածի սրածայր, նոյնպէս ծիւնապատ կտարհներին:

«Առջեւում երկու ամենի սարեր դուրս են գալիս հօրիզոնի վրա», ասում է պ. Պոլեակով իր հնագիտական գրուածքի մեջ այն մասին, թէ ինչ տպաւորութիւն է արել նրա վրա Արարատի տեսքը, երբ նա առաջին անգամ տեսել է այդ սարը այնտեղից, որտեղից ես առաջին անգամ տեսել եմ նրան։ «Թէ ստորադր և թէ միջին մասը կրում են իրանց վրա միւս ամեն

սարերին յատուկ գեղին — մոխրագոյն ներկ, բայց նրանց ձիւ-նապատ դագաթները, համնելով բարձրութեան, ընդունում են կապոյտ գոյն, այնպէս որ վերջապէս համարեա անկարելի է լի-նում ջոկել սահմանները, որտեղից սկսվում է ել կ'քի կապուտակութիւնը և որտեղ վերջանում են սարերի գագաթները։ Դրանք երկու գագաթներ են. Մեծ և փոքր Արարատ և տեղական բնակչութեան շատ հիմք ունին տեղաւորել նրանց գլխին ոչ թէ երկրային, այլ երկնային զօրութիւններ։ Մեծ Արարատը, ծովի մակերևոյթից բարձրանալով 16,919 ոտնաչափ և հինգ հազար ոտնաչափով գերազանցելով նրան շրջապատող ամենաբարձր սարերից, կատարեալիս տիրում է ոչ թէ միայն մօտիկ շրջակայքում, այլ և հեռու, այն սարերի վրա, որոնք ձգվում են նրանից ամեն ուղղութեամբ — դէպի հիւսիս, դէպի հարաւ և աշխարհի միւս երկներով։ Արարատը տեսնվում է մինչև երկնքը բարձրացած ոչ միայն գոկչա լիճից ցած բերող ձանապարհից, այլ էլ աւելի հեռու տեղերից, Աւ ծովի ափերից մինչև Տիգրիսի և Խփրատի հովիտները։ Այս մասին շասկանալի է նրա գերը, ինչպէս մի սրբազն սարի, բոլոր պատմական աղգերի մէջ արևմտեան Ասիայում։ Բայց աւելի պարզ կերպով երեսում է Արարատը Արաքսի հովիտի ձախ կողմից։ Հակառակ ասիական միւս իեռնային շղթաների շատ ամենաբարձր սարերի գագաթներին, Արարատը չունի կողմնակի սարեր Արաքսի կողմից։ Այս պատճառով այդ կողմից նա երեսում է իր ամենամեծ փառահեղութեան մէջ։ Սկսվելով մի մասսիվ չափազանց լայն հիմքի վրա, մի քանի հազար ոտնաչափ բարձրութեան վրա նա բաժանվում է երկու գագաթների, որոնցից բարձրը ծածկված է յաւիտենական ձիւնով, իսկ ցածը ամառը մի քանի ժամանակ կորցնում է իր ձիւնային ծածկոցը (այդ պատճառով տեղական բնակիչները Մեծ Արարատը նմանեցնում են զիաւուր հրամանատարի, իսկ Փոքրը նրա աղիւտանդին, որովհետեւ սա էլի մի առ ժամանակ վերցնում է իր ձիւնային դգակը իր հրամայողի առջեւ)։

Սուխոյ-Ֆանտան իջևանում ես տեսայ մի շատ սկզբնական նախաձաշիկ, որ սարքել էին բակում վայրենի թափառականները, որոնց ոռուաց քաղաքակրթութիւնը շինել է սայլապաններ և քաղաքական ձիւոր պահապաններ:

Նստած են վայրենիները տեղական ցորենի գետնի վրա ցրված մի քանի խուրձերի մօտ. այդ ցորենը մի քիչ նման չէ մեր՝ ռուսաց ցորենին, ինչպէս իր հատիկներով և յարդով, նոյնպէս և համով: Տեսնում եմ—ցրված ցորենի մօտ նատածներից մի քանիները զանազան կողմերից կրակ են տալիս նրա յարդը, որ և սկսում է այրվել, կրակն անցնում է բոլոր խուրձերով և փունջերով, համարեա բոլուվին այրում է յարդը իսկ հասկերը խորովում է: Վայրենիները մի բուռը այդ խորոված հասկերից վեր են առնում իրանց ձեռքերի ափի մէջ, շփում են, յետոյ փշում են, որ կեղեները վեր կենան (ահա ինչ տեսակ է հետագարեան կալսելու եղանակը) և մաքրած հատիկները շուտափոյթ կերպով զցում են բերանները և երեկոյի զմայլմամբ ծամում են այդ արագ պատրաստած անհնարագէտ ուտելիքը:

Ես նատում եմնրանց մօտ: Ի՞նչ ձեռքի ափեր ունին ողաշմարդիկը. կարծես երկանաքարելը լինեն, այնքան կարծր են:

—Ի՞նչ է, աղայ, լու՞նախաձաշիկ է, դառնում է դեպի ինձ մի պնտակազմ ծերուկ, շփելով հասկերը իր երկանաքարերով:

—Պէտք է լաւ լինի—պատասխանում եմ ես—երբ այդպէս ուտում էք. ցանկանում եմ ձեզ լաւ ախորժակ:

Ամենքը մտերմութեամբ ծիծաղելով, ցոյց են տալիս իրանց շան ատամների պէս սպիտակ ատամները և ջանքով փշրում են նրանցով խորոված հատիկները:

—Ա՛ռ, աղայ, դու ել կեր—ատում է պնտակազմ ծերունին իր երկանաքարի նման ձեռքերով ածելով մաքրած հատիկները իմնիհար ափի մէջ:

Ես կերայ—ճշմարիտ որ ախորժահամ է:

—Ել վերտու, աղայ—շնորհակալ ենք, որ մեղ հետ ուտում ես:

—Ես ծեր եմ, ո՞չ, ո՞չ, որքան ծեր եմ:

—Իսկ նայում ես քաջ մարդի պէս:

—Այ՛ս, այ՛ս, աղայ, ես քաջ մարդ եմ, ես եղել եմ Մոսկվայում, կազմանում, իրկուտսկում, Կունգուրում, ամբողջ Սիբիրում:

—Ի՞նչպէս ես եղել:

—Մի աղայ վեր է առել ինձ իրա հետ . . . 05 ես պառաւ եմ:

—Քանի՞ տարեկան ես:

—Ես քառասուն տարեկան եմ: Պատկեվիչը Երևան առնելիս ես երկու տասը տարեկան էի:

—Քսա՞ն տարեկան:

—Ո՛չ, տաս մին էլ երկու:

—Տասներկո՞ւ:

—Այ՛ս, տասներկու:

—Ե՛չ, եղանակ, դու ուրեմն ոչ թէ քառասուն, այլ վաթունից էլ աւել ես:

—0՛չ, վաթանո՞ն, ես պառաւ եմ:

Գէպի ինձ մեկնվեցան և ուրիշ ձեռքեր մաքրած հատիկներով—սիրալիր հիւրասիրում էին: Ես չեմ մերժում, չուզենաւ վկլրաւորել արեւելիս հիւրասիրութեան զգացմունքը և ինքս էլ շփում եմ այրված հասկերը:

«Հէնց կասես առաքեալները լինին», միտս է գալիս աւետարանական այն աւանդութիւնը, թէ ինչպէս քաղցած առաքեալները, անցնելով ցորենի արտերի մօտով, քաղում էին հասկեր, շփում էին ափերի մէջ այս վայրենիների նման և ուտում էին:

«Եւ եղեւ ի շաբաթու յերկրորդում առաջնոյն՝ անցանելնա ընդ արտորայսն, և աշակերտքն նորա կորպէին հասկ շըփէին ընդ ափ և ուտեին: Եւ ոմանք ՚ի փարիսեցւոցն ասեն ցնոսա. Զինչ գործէք՝ զոր չէ օրէն ի շաբաթու: Պատասխանի ետ նոցա թիսուս և տու. Զիցէ՝ ընթերցեալ ձեր զոր արարն դաւիթ յորժամ քաղցեալ ինքն և որ ընդ նմայն էին: Զիարդ

եմուս նա ի տունն Աստուծոյ և զհացն գառաջաւորութեան եկեր, և ետ այնոցիկ՝ որ ընդ նման էին. զոր ոչ էր օրէն ումեք ուտել, բայց միայն քահանայապետիցն: Եւ ասէ ցնոսա. Տէր է Որդի մարդոյ և շաբաթու»: (Աւետարան Ղուկ. Զ. 1—5):

Եւ իմ վայրենիներն էլ էին նոյնը դորձում տօն օրում, այն էլ մի մեծ տօն օր. դա էր այլակերպութեան տօնը, Օդոսափի Յին, երբ ես առաջին անդամ տեսի Արարատը:

Մի տեսակ նախապաշարմունքով լի երկի զ մտաւ իմ հոգու մէջ. այս իսկ օրը, Օդոսափի Յին, աւանդութեան համեմատ, Քլիստոս սարի վրան էր, ուր կատարվեցաւ նրա այլակերպութիւնը: Իսկ ինձ ի՞նչ է սպասում այն սարի գլխին, որին ես մօսենում եմ:

Այդ բոպէից յետոյ Արարատը չէր հեռանում այն ազգու պատկերի միջից, որ տարածված էր իմ առաջիւ:

Վ'III.

«ԿԱՒԵՂԵՆ ԿԱԹՍԱՆ» ՀՆՈՑԻ ՄԷֆ:

Առաւ օտեան ժամը 11-ից մօտ ես արդէն Երեանումէի, կառ մոտայ տանջվելով այնպիսի դժոխային ջերմութիւնից, որի նմանը ես Եգիպտասում և Պալեստինայում եղած ժամանակն անգամ չեմ տեսել այնաեղ:

«ԹՐԻՎԱՆԻ» բառը—ասում է Ս. Պ. Զելինսկի, Անդրկովլին նշանաւոր ծանօթը և անխոնջ քննողը—հայերն արտասանում են Երեան, որ նշանակում է երեւում է, տեսնիում է: Այդ խօսքի ծնունդը աւանդութիւնը հասցնում է նոյի ժամանակներին: Երբ նոյը որպէս թէ նայել է Արարատ սարի գլխից շրջապատող տեղերին, այն ժամանակ առաջ նրա աչքին են ընկել Երեանի հիւսիսային և հիւսիս-արեւելեան բարձրութիւնները, որոնք ուրիշ տեղերից վաղ են երեացել ջրի տակից (համաշխարհական ջրհեղեղից յետոյ), այս մասին նա ասել է Երեւում

է (Եթէ միայն Նոյը հայերէն է եղել խօսելիս. կարելի է խօսելիս էլ է եղել):

Իսկ իմ կարծիքով Երեւան բառը աւելի լաւ պիտի նշանակէ բժիշտէ. Հնոյի, դժոխային ժաղանքի նման մի բան: Դա Ճիշտ որ գժոխային քաղաք է, և այս ես կարող եմ հաստատել փաստերով, նոյն ինքն մեծարգոյ Ստեփան Պավլովիչ Զելինսկու խօսքերով:

Մի ժամանակ այդ քաղաքը կազմում էր Հայոց թագաւորութեան քաղաքների և հողերի մի մասը, բայց 1441 թւականից գառնում է, նոյն հեղինակի վկայութեան համեմատ, «մի խաղալիք պարսիկների և թիւրքերի ձեռքերում», մինչեւ որ վերջապէս չի ընկնում Ռուսաստանի իշխանութեան տուկ: Ռուսաց զինուորների այդ քաղաքը առնելովը նրանց զօրապետ Պասկեվիչի տոհմանունի վրա աւելացաւ «Երեւանեան» մականունը:

«Պարսիկների մէջ Երեւանի վերաբերութեամբ կազմվել է մի առած: «Երեւան—երջանիկ փոս»: Եւ Ճշմարիտ, այդ քաղաքի շբջակայ բարձրութիւններից նա երեւում է մի ամենաշքեզ փոսի պէս, որ ընկզմված է այզիների պայծառ կանաչեղէնի մէջ: «Բայց կայսր Նիկոլայ Պավլովիչը—ասում է պ. Զելինսկի, իր 1837 թւին Երեւանում եղած ժամանակն անուանել է Նըրան «կուէ կուլառյ» (մի և նոյն ժամանակ «բոցեղէն հնոցի մէջ» կաւելացնենք մեր կողմից): Պարսիկները սխալվել են, անուանելով նրան երջանիկ, բայց Նիկոլայ I վերե յիշած երկու բառերով բոլորովին ուղիղ կերպով է նկարագրել Երեւանի գուրուս: Կաւեղէն տներ կաւեղէն տափարակ կուրներով, կաւեղէն փողոցներ, կաւեղէն հրապարակներ, վերջապէս կաւեղէն շրջակայքը—ամեն տեղ կաւ և կաւ, եթէ միայն չը պէսպէսացնէր և չը գեղեցկացնէր այդ միատեսակ կաւը կանաչեղէնի կախարդեցքնութիւնը, որ և շինում է այդ կաւեղէն բոցեղէն հնոցը շքեզ, կախարդական, խտակ—ասիական մի բան, բայց միայն հեռուից, բարձրութիւնից, թռչունների թռիչքի տեղից:

իսկ ներանից, կրկնում եմ, դա մի կատարեալ դժոխք է, ըստ նայած կանաչեղինի ամբողջ շքեղութեան և մզկիթների փերուգանման դմրէթներին:

Ոլի միջին բարեխառնութիւնը այդ բոցեղէն հնոյի մէջ ամառը հաւասարվում է Սան-Լուի, Սավաննա, Սանտա-Կրուցա, Ալժիր քաղաքների բարեխառնութեան: Արեգակի տակ նա հասնում է 50 աստիճանի—մի անհնարին դժոխք է! . . .

Բայց դա գեռ ցաւ չէ: Տաքութիւնից կարելի է մի կերպ ազատվիլ: Բայց ազատվել մահաբեր կլիմուից, այն տարափոխիկ ցաւերի բոլոր արհաւերքներից, որոնք լողում են օդի, ջրի մէջ, բոյն են գնում գետնի մէջ, նոյն իսկ բոյսերի և շքեղ կանաչեղինի մէջ—այդ արհաւերքներից ազատվել անկարելի է:

«Ընդհանուր վիսյութիւնների համեմատ—ասում է այդ դժոխին լաւ ձանաշող պ. Զելինսկի, —Երևանի կլիման անպայման վնասակար է մարդու առողջութեան համար, և շոտերը կարծում են, թէ դրա պատճառն ամառնային տաքերն են: Բայց չի կարելի երկմուռթիւն ըլ յայննել, որ միայն տաքն ունենար այստեղ վնասակար ներգործութիւն մարդկային օրգանիզմի վըրա, առանց այն վնասակար խառնութիւնների, որոնցով լցուած է օդը: Այստեղ օդը նոյնպէս կիզող է ամսուր, ինչպէս Անդրկովկասեան երկրի միւս շատ տեղերում. բայց նա, բացի զրանից նշմարվում է մի ուրիշ տեսակ խեղդող յատկութեամբ, որ առաջ է գալիս նրա վարակուած դրութիւնից, որի պատճառը ծածկվում է գլխաւորապէս Երևանի առասպելական վանմաքրութեան մէջ: Որպէս զի աւելի պարզ կերպով երեակայել երեանեան մթնոլորդի վատութիւնը, հարկուոր է առաջ մոռարերել որ Երևանի «հին բազարը» խակապէս դարձած է մի ահագին կեղտոտութիւնների փոս. ահագին տարածութեան վրա ընկած են հարիւրաւոր խանութիւնների աւելակները և այդ աւերակների մէջ, նմանապէս և բաց տեղերում գտնվում են հրեշտար կոյտեր աղքի, ցիսի, փտած բաների, մարդկային արդատրութիւնների, կաշուի, բրթի, սեխի և ձերուկի կեղենների, ա-

մեն տեսուկ չթերի պատառների (այսինքն փալասների), ամեն տեսուկ կենդանիների ուկորների և այլն և այլն: Այդ օրգանական իրերը մի քանի տեղերում բարձրանում են ահագին թումբերի պէս, ունենալով գոյութիւն Պարսից կառավարութեան ժամանակներից և հետեւաբար մեծանալով ամեն օր, կարծես այստեղ անդադար գործում է մի առանձին ոյժ: Հասկանալի է, որ այդ իրերը միշտ փթում են և լցնում են օդը այնպիսի գարշահոտութեամբ, որին չէ կարող անպատիժ կերպված համբերել մինչև անգամ տեղացիների սովորած օրգանիզմը: Գլուխ շուռ տալ և մի ծանր զազրութիւն զգալու համար պէտք է միայն մօտենալ հին բազարին: Աւելացրէք այդ գարշահոտութեան օջախի վրան հին և նոր գերեզմանատները, ախոռների և իջևանների բազմութիւնը իրանց աղըի կոյտերով, կարգանարանները, որոնց բակերը ախտների են գարձրել իսկ վոքրիկ սենեակներն ու խուցերն արտաքնոցների, երեանեան կարգից հանած ամրոցը բազմաթիւ վլատակների հետ, որոնք մնում են առանց ինստիքի և որոնց համարակ կինուորները շինել են արտաքնոցներ, նոյնպէս և փողոցների վատ պահելը, հոտող ցեխը ջրի խողովակների մէջ, որոնք ցանցի պէս անցնում են ամեն կողմերով և ներկայացնում են ձահիճներ, այս բառի բուն նշանակութեամբ,—այն ժամանակը համարակ կլինի, թէ ինչու Երևանի օդը ծառայում է ինչպէս թոյն այստեղի մարդու համար: Մինչև անգամ չի կարելի առողջապահական կողմանէ վնասակար տեղերի շարքից գուրս դցել զբօնելու այդիները քաղաքի կենտրոնում, բնակիչների բակերը ու տները, որովհետեւ վերեկի այգու մէջ ջուրը հոտում է աւազանների մէջ, իսկ ներքեւի, «անգլիական» այգու մէջ գոյութիւն ունի մի ձահիճ, որ ծառայում է ինչպէս, այսպէս ասած, ջերմուտենդի արմատ: Ինչ վերաբերում է բակերին, նրանք ունեն մի քանի արտաքնոցներ, որովհետեւ այստեղ գոյութիւն ունի սովորութիւն մարդկային արդատրութիւնները չը գուրս տանել, այլ թաղել նրանց գտնված տեղը, բակի մի անկիւնում և ծածկելով հին տեղը

նրաս փոխարէն բաց են անումնորերը: Եթէ մոտարելի, որ այդ սովորութիւնը գոյութիւն ունի ամենահին ժամանակներից, ուրեմն կատարեալ համոզմունքով կարելի է ենթադրել թէ Երեանի հողի տակ գոյութիւն ունի մի մեծ արտաքնոց: Սրանով բաւականին բացատրվում է, թէ ինչու Երեանի բնակիչներն այնպիսի հիւանդոս, թուլակազմ են և նրանց թիւը չի աւելանում:

Բայց սա դեռ բոլորը չէ. ոչ միայն Երեանի մթնոլորդն է բերում իրա հետ մահ այնտեղ ամեն մի ապրողի համար. Երեանի ջուրն էլ աւելի մահացուցիչ է քան մթնոլորդը:

Սրանք էին մասամբ նրա պատճառը, որ յետոյ Արարատը բարձրանալիս՝ դժոխոյին Երեանում մնալուց յետոյ, ես արդէն կրում էի իմ մէջ վարակիչ հիւանդութիւն, իսկ մնացածն՝ Արարատը դիստացրուց: Ես միայն հրաշքով խուսափեցի մահից, իսկ նրա սերմերը մինչեւ այժմ կրում եմ իմ այն ժամանակից դեսը ցաւող կրծքի մէջ:

Ահա ինչ է ասում Երեանի վարակող ջորի մասին՝ պ. Զելինսկի. «Երեանում չորս տեսակ ջուր է գործ ածվում: «Զանգիի ջուրը»—Զանգի գետից, և նրանից վեր առած առուներից. «Սեգիւտուղի»—Ճահճային աղբիւներից. «Կրիս-Բուլաղի»—այդ անուն գետակից, վերջապէս աղբիւրի ջուրը: Զանգի գետը սկզբում է Գոկչա լճից և հոսում է 100 վերստ չափազանց Ճահճային տեղերով, և այդ պատճառով նրա մէջ գտնվում է ինքուզօրիների և զանազան ջրային բոյսերի ամենամանը՝ մասերից գոյացած զանազան վնասակար իտառնակութիւնների բազմութիւն: Պարզ է, որ այդպիսի ջուրը չէ կարող ըլ թունառել: Այդ թոյնի հետ կապված է և բնակիչների մշտական մսհուամբ սպառելը այն թաղերում, ուր խմում են այդ ջուրը: «Սեգիւտուղի» ջուրը նոյնպես Ճահճային է, զանազան վնասակար աղերի իտառնակութեամբ: Նոյն իսկ տեղական բնակիչներն անուանում են այդ ջուրը կարտոսութեամբ: (Աև ջուր կամ ուռ-

սերէն «Մերտվայ вода»). Արա գործ ածելը որովայնի մէջ ծակոց է պատճառում՝ այդպէս է այդ խմիչքը: Արխ-Բուլաղի» կամ «Քառասուն աղբիւրների» ջուրը հաւաքվում է քաղաքային ջրամբարի մէջ: Բայց սա ինչ ջրամբար է և նրա ջուրը ի՞նչ տեսակ է: Նա կեղսոտ է և պղողոր: «Ջրամբարի պատերը, ուր թափվում է այդ ջուրը, միշտ պատած են կեղսոտա խճային հիւթերի հաստ շերտով և նրա մակերևոյթի վրա լողում են ջրային բոյսեր, ձարպի կաթիլներ և արիւն այս տեղ լուացվելիս մսից (գա ջրամբարումն է—և այդ ջուրը խըմում էլ են): . . . Այսպէս այս ջրամբարը գտանում է մի աղբանոց և գորտային թագաւորութեան ամառնային բնակութեան տեղ, որ տալիս է Երեանին ձրի անշուռ երաժշտական հանդէսներ:

Այս ամենով է բացատրվում աշկարայ փաստը—տեղական բնակչութեան մահաճարակ լինելուն փաստը կլիմայի մահաբեր պայմանների պատճառով:

Ել ի՞նչն է հարկադրում մարդկանց ապրել այստեղ, այս սպանիչ կլիմայի մէջ: Այն, որ այստեղի բնութիւնը, այստեղի հողը և այս կիզող արևը տալիս են մարգուն այնքան երկրային բարիքներ, որքան նա կարողութիւն ունի վեր առնել: Երեանի ձորը և Արաքսի ընդարձակ հովիտը մինչ Արարատի ստորոտը մի այնպիսի երկրային գրախտ է, որին հազիւ է կարող նկարել ամենասաք երեակայութիւնը: Ես խօսում եմ Փոքր Ասիայի այս քիչերին յայտնի անկիւնի բուսական հարստութիւնների մասին, երկրային պտուղների առատութեան մասին:

Միայն խաղողն ունի այստեղ հազար տեսակներ: Դժուար է հաշվել և միայն գլխաւոր տեսակները. «Խաջի», «ասկեարի», «ոիշի-բաբո», «մսիալի», «քեարիմ-պանդի», «թաբարզա», «խալիի», «քիշմիշ», «հաչա-բաշ», «եղանդարի», «չերշիրասղարի», «ալ-խակի», «շանի», «շափէի», «խալաչի»:

, Խալելին,, չքնազ ամենից համեղ խաղողն է, բոլորովին
առանց կորիսի:

Մրգի այդիներում գուք կը գտնէք. ծիրան, խնձոր և տանձ
բազմաթիւ տեսակների, մերգելի, զանազան տեսակ սարոր, ալու-
շա, բալ, կեռաս, նուշ, ընկոյզ, թուզ, նուռ, դեղձ և այլն և
այլն: Մինակ դեղձերը բաժանվում են 50 տեսակների և ել ա-
ռելի: Այսպիսի մրգի այդիներ մենակ նրեանում հաշվում են
մինչեւ 700:

Երեանեան անտառներում գտնվում են շլացնազ բարձրու-
թեան բրդաձև սօսի ծառեր, իսկ կարաղաջը հասնում է այն-
պիսի աշազին չափսերի, որ նրա գնուածեւ թագի շուաքում կա-
րող են ազատ տեղաւորվել մինչեւ 60 մարդ և այնտեղ էլ ծածկ-
վել անձրելից, որովհետեւ նա այնքան տերեւմիխտ է, որ նրա
միջով չի անցնի մինչեւ անգամ առատ անձրելի կաթիներից մէկը:

Չմերուկների և սեխերի հարստութիւնն ապշեցնող է: Կայ
վերջիններիս մի առանձին տեսակ, որի մասին չի կարելի լուել:
Դա ,գութմա,, սեխն է: Նրա մէջ նշանաւոր է այն, որ նա
բանում է ոչ թէ արեգակի տակ, այլ ինչպէս սոխ կամ գետնա-
խընար—գետնի տակ: Երբ ,գութմի,, պտուղը օդի մէջ հաս-
նում է աղաւնիի ձորի մեծութեան, այն ժամանակ նրան վերելից
ծածկում են նոյն այդ ,գութմի,, կեռացրած տերեւով և յե-
տոյ հող են ածում, թողնելով մի պսափիկ ծակ օդի համար,
,գութման,, այնպէս արագ է բանում, որ երբեմն հարկաւոր է
լինում օրեկան երկու անգամ ծածկել նրան հողավ, այլապէս նրա
մէջ որդներ կը գոյանան: Երբ հողէ ծածկոցի տակ ,գութման,,
լընվում է մինչեւ հարկաւոր մեծութիւնը, սկսում է դեղնել և
նրա հետ գաղարում է մեծանալ այն ժամանակ նրան բաց են
անում և հարաւային արեգակի կիզով ճառագայթերի տակ նա
բոլորովին հասունանում է:

Աս կերպ այդ ,գութման,, (Ս. Պ. Զելինսկին հիւրասի-

րեց ինձ բօստանային թագաւորութեան այդ հազուագիւտ բա-
նով) և գանում եմ, որ նրա համը կախարդիչ է, նոյնպէս և
անուշահոսութիւնը:

Երեանում կայ ևս լօբիաների մի տեսակ—, բակլա,, Այդ
զարմանալի լօբիայի կերակրի մէջ շատ գործ ածելուց, ինչպէս
առում են, մարդիկ յիմարանում են, և այս պատճառով այդ սար-
սափելի ,բակլա,, —ին ես մինչեւ սնդամ ձեռ չը տուի իմ Ե-
րեանում եղած ժամանակը:

Նրա մասին Հայաստանում գոյութիւն ունի մի այսպիսի
աւանդութիւն. մի եղիպացի փարաւօնի յիմար գլուխը, երեւ-
բակլայի շատ գործ ածելուց, միաք ընկաւ— ինչ խորամանկու-
թիւն բանեցնել աստուած լինելու համար, կամ գոնէ որ ժողո-
վուրդը իրան աստուծու տեղ պաշտէ: Սրա համար նա հրաման
տուեց, որ նրա հպատակներն եօթը տարուայ միջոցում հացի
բյուրելի տեղ միայն բակլա վարեն և միայն նրանով կերակրվեն.
Եղիպացիք, իհարկէ, կատարեցին թագաւորի այդ իմաստուն
հրամանը: Եօթը տարուց յետոյ բակլայի գործածութիւնից նը-
րանք այնքան յիմարացին, որ ծշմարիտ իրանց խելօք պետի ա-
ռաջին հրամանով, միաձայն նրան աստուած ընդունեցին: Յւ-
ինչու ընդունէին: Ախր Ապիս—եղը իհարկէ, քիչ բանով եր-
խելօք փարաւօնից, և նրան ախր եզիպատում աստուած էին
հաշվում: Ինչու համար աստուծոյ տեղ ըլսդունել և մի ուրիշ
յիմարին, որ թէպէտ և եղջերներ չունէր, բայց եզան պէս
մնչալ խօ գիտէր:

Ահա ինչ բան է այս զարմանալի բակլան: Խօսելով նրա
մասին իր Երեանի նկարագրութեան մէջ, պ. Զելինսկի մեծ սրա-
մատթեամբ բացարում է. , նշանաւոր է այն հանգամանքը, որ
բողէն ու բակլան, որոնք առաջուայ ժամանակներում կազմում
էին հայերի համարեա մշտական պասվան կերակրուը, այժմ
բոլորովին գործածութիւնից դուրս են եկել,,:

Բայց շարունակում եմ իմ պատմութիւնը:

Գալով Նրեան և իջնելով կովկաս հիւրանոցում, ես մի
թեթև ճաշելուց յետոյ, իսկոյն գնացի քաղաքը տեսնելու:

Ամեն մէկը, որ շատ ճանապարհորդել է աշխարհում, ի
հարկէ շատ լաւ է իմանում, թէ ինչ բերկրանք է անծանօթ
քաղաքում առաջին անգամ թափառելը, շընելը անծանօթ փո-
ղոցներով, չիմանալով թէ ուր է տանում այդ փողոցը, մուախոհ
լինել անծանօթ, առանձնատեսուկ կեանքի, անծանօթ մարդ-
կանց մասին: Բայց ճանապարհորդի համար ամենամեծ հիաց-
մունք է կազմում այդպիսի թափառելը Արեւելքի քաղաքներում:
կախարդիչ—անկանոն, աչքերը ցաւեցնելու շափ փայլուն, կեղ-
տոտ և մի և նոյն ժամանակ կոպիտ—շքեղ կեանքը արեւելեան
քաղաքներում կատարելապէս յափշտակում է մարդուն, փոխա-
ղբում է նրան Փանտազիայի, պօէզիայի և առասպելական աշ-
խարհը:

Այդպիսի զմայլեցուցիչ անծունութեան դուք պատահում
եք և Երեանում:

Այսպէս, զլ ացու պատճառելու չափ թափառելով քաղա-
քի մէջ, անցնելով նրա ծուռումնու, կեղտոտ և հոտած փողոց-
ներով և բաղարներով, ես յետոյ ուղևորմեցայ դէպի հայերի
խանութերը մի քանի իրեր գնելու համար: Ամենից առաջ ինձ
հարկաւոր էր առնել մի հովանոց, առանց որի դժոխային ջեր-
մութիւնը իսկապէս կիզում էր իմ գլուխն ու ուսերը: Ինձ մօտ
ձմարիտ, կար մի հովանոց, սոյլակով ճանապարհորդելու հա-
մար, բայց Թիֆլիսից մինչեւ Երեան գնալը նա այնքան քայ-
քայվել էր, այնքան էր քավել ծակոտող չոր խոտին (ախր սայ-
լակների երերանքը սարսափելի է և հազիւ դուք գնում էք մի
քանի լուգէ այդ երերող սայլակի մէջ ձեր հովանոցը և նա իս-
կոյն պատառուակում է և քայքայվում)՝ այնպէս որ Թիֆլիսում
գնած հովանոցս այնքան էր քայքայվել, որ նրա միջով արե-
գակն անխնայ կերպով կիզում էր ինձ: Յետոյ ես պիտի գնեի
ճանապարհաքսակ, որովհետեւ Պետերուրուգում առած իմ ճանա-
պարհի մնդուկը նոյնպէս փշուր փշուր էր դարձել, և ես ձգե-
ցի նրան Երեանում: Վերջապէս ես պիտի առնեի և բարձր որ-
որդականն կոչեներ Արարատի վրա բարձրանալու համար, նրա

յաւիտինական ձիւների համար, և առք ձեռնոցներ այդ նպա-
տակի համար, որին, աւաղ, ես չը հասայ:

Գնելով այդ իրերը և մի քիչ սպասելով, որ դժոխային *)
ջերմութիւնը հէնց մի քիչ մեղմանայ, ես գնացի որոնել շատ
տեղերում յիշած Ս. Պ. Զելինսկուն, որի վրա նսմակ ունէի կոյ-
կասեան ուսումնարանական շընանի հոգաբարձու Կ. Պ. Ես նովս-
կուց: Զելինսկուն ես չի գտույ տանը, բայց իմանալով իմ գա-
լուստա՝ նա շուառվ այցելեց ինձ հիւրանոցում և անասելի կեր-
պով ուրախացաւ, յայտնելով պատրաստականութիւն ուղեկցել
ինձ իմ յանդուզն, բայց խաբուսիկ ճանապարհորդութեան մէջ:
Ինձ համար իհարկէ շտու ախորմելի էր ունենալ ճանապարհի
ընկեր երկրին այդպիսի քաջածանօթ մարդուն և Անդրկովկասի
մէջ անխոնջ ճանապարհորդուին, այնպէս որ ես բողորովին քա-
ջալերվեցի Թիֆլիսի անաջողութիւններից յետոյ:

Ստեփան Պալօվիչ Զելինսկուն Երեանեան զիմնազիայի ու-
սուցիչ և գիրեկտորի պաշտօնակատար է: Զը նայելով իր ըստ
երեցին լիհական կամ մազօսիական առհմանունին, նա Հա-
յատանի հարուզատ որդին է և այնտեղ է ծնվել: Համակրո-
թիւնն ու անկեղծութիւնը առաջին անգամից ձեզ կապում են
այդ մարդու հետ: Նա խոր կերպով կապված է իր հայրենիքի
հոգեկան շահերի հետ, ճանաչում է նրան աջ ու ձախ, լուս-
ւորելով ամբողջ Անդրկովկասը իր տոհմագրական և հնագիտու-
կան էկսկուրսիաներով և ունի տեղեկութիւնների ահազին պւ-
շար այն ամենի մասին, ինչ վերաբերում է Անդրկովկասեան
երկրին:

Պ. Զելինսկուց ես շատ հետաքրքիր բաներ իմացայ, որոնց
շետ կարդալ ոչ մի գլուխում: Մենք երկար խօսեցինք նրա հետ:

*) Ելեկ Երեանի նշեմայուն պայմաններն ու օրէ և ջրէ յափիւալիւն-
ներն իրաւունք են պալիս հեղինակին անուանել նրան քժուիչ, ուրիշն
նոյն պայմաններին ու յատիւալիւններին նոյնած իրաւոյի հենէր մեր Շու-
շին գրախառ անուանել: Ս. Պ.

Արարատ բարձրանալը նրա վաղեմի ցանկութիւնն է եղած և նա այնպիսի ոյժգին սիրով, այնպիսի եռանդով վերաբերվեցաւ գէպի մեր առջեկի վասնգալի էկակուրսիան, որ պատրաստ էր ամեն ինչի, ամեն գժուարութիւնների և զրկանքների:

—Նթէ որ հիւանդանամ էլ այդ խորհրդաւոր սարի վրան, մեռնեմ, թողնեմ իմ ոսկերքը անհասաննլի բարձրութիւնների գլխին, բայց էլի կաշխատեմ դնել իմ յանդուգն ոտը հակայի ձիւսապատ գագաթի վրան, ողերդված կերպով ասաց նա: — Յանկանում եմ կանգնել այնտեղ, ուր կանգնած է եղել տապանը:

—Իհարկէ, իհարկէ . . . Նթէ ծերունի նոյր կարողացել է այնտեղից ցած իջնել և իրա հետ բերել երկրի երեսը իր ամեն պանսիօներներին, սկսած կատուից և հաւից և վերջացրած առիծով և արծիւով, ուրեմն դուք ել անպատճառ կը բարձրանափ այնտեղ:

—Կը բարձրանամ, ինչպէս որ լինի:

—Իսկ ահա և ես, լսվեցաւ իմ սենետկի գոներում մի ծառօթ ձայն:

Դա ն. Պ. Կոկաւեմն էր, որ հէնց այդ լոպէին էր վերադարձի դարաշեխչագից:

—Ուրեմն էգուց զնո՞ւմ ենք:

—Անպատճառ . . . Ահա և Ստեփան Պալօվիչն էլ է գալիս մեզ հետ:

—Եատ լաւ: Որքան մենք շտա լինինք, այնքան էլ ախորժելի լինի մեր ձանապարհորդութիւնը:

Իսկոյն մենք սկսեցինք մտածել և խորհուրդ անել մեր ուղեգնացութեան պլանի մասին: Հարկաւոր էր գատել և նախատեսնել ամեն ինչը—թէ ինչ պաշար կամ խմիչք պէտք է վերցնել ձանապարհին, և հանդստանալու ու գիշերելու համար ինչ տեսակ կատարելագործութիւն անել. առաջ հարկաւոր էր գնել թէյ և կօֆէ պատրաստ (կօնսերվ), որովհետեւ 10000 ոտնաշակ բարձրութեան ձիւների մէջ կարելի չէր օգտվիլ կոֆէով շափակին կերպով ամեն տեսակ շքեզութեամբ. դեղատունից պէտք տնային կերպով ամեն տեսակ շքեզութեամբ:

Էր վեր առնել դեղբայք սարի վրա հիւանդանալու, մրսելու, գլուխ պատելու, նօսրացած օդում ստամոքսը խառնելու դէմ և այն և ոյլն, պատրաստել ձանապարհի վըաներ, կաթսայ և պղնձէ աման թէյ և կօֆէ պատրաստելու համար: Պ. Ֆօն-Կոշկուլ գեռ թիֆլուտմն էր ինձ խորհուրդ տուել անպատճառ վեր առնել հաստ թօկեր, ՅՈ սաժէն երկայնութեամբ. իսկ ամենից լաւ էր առնել Արալիսում, ուր կենում է ումանեան կօղակների զօրագունդը, ձիաների ոտնակապեր, նրա համար, որ եթէ մէկը վայր ընկնէր զառիվայրից, կամ ընկնէր խորխորատի մէջ՝ կարելի լինէր նրան օգնութիւն տալ: Աիրելի Կօշկուլը առւեց ինձ այս բանի համար իր լինային ցուպը. զա նրա պատուիրով գեղեցիկ շինված մի երկար գաւազան էր, նիզակի նման երկաթեայ ծայրով գեանին կամ քարերին դէմ տալու համար, իսկ վերեկ կողմում կային երկու կեռ Ճիւղեր՝ զիտակ, ջրի կամ օղիկ աման կտիս տալու համար, կամ թէ մի որ և է սիդնալի համար փոքրիկ գրօշակ կախելու համար: Երբ Բերենս Արարատն էր բարձրանում, այն ժամանակ բացի այսպիսի ցուպից և երկու հաս թռկերից, նա վեր է առել իր հետ մի մուրճ ժայռերի և սառուցների մէջ աստիճաններ շինելու համար, իսկ ձեռքերի և ոտերի համար պատուիրել էր պատրաստել առանձին երկաթեայ կեռեր, որ քարերի վրայով սողալը հեշտ լինի:

Այս խորհուրդում վճռված էր, որ մեսք պ. Կոկչակի հետ էգուց տուաւուեան գնանք Խղիիր—գաւառապետի բնակութեան տեղը, իսկ պ. Զելինսկի, կարգի գնելով զիմնաղիայի մի քանի գործեր, զայ այնտեղ մեր ետելից:

Այս զիշեր ես համարեա բոլորպին չի քնեցի: Մնալով մենակ իմ սենեակում, ես երեկոյից պատրաստում էի ամեն ինչը ձանապարհ ընկնելու համար և անհամեր սպասում էի առաւտուին: Վ. Բարդուցից մտածողութիւններն ու շփոթուած հոգու անհանգստութիւնը չը թողեցին ինձ քնել: Հէնց միշտ մոտածում էի. ի՞նչ կլինի էգուց, ի՞նչ կբերեն ինձ համար հետագայ օրերը: Կարծես վրդովված հոգիս նախազգում էր այն դառն

անաջողութիւնն և այն ամեն ավսուր հետեւանքները, որոնք հազիւ ինձ գերեզման չի տարին:

Եւ այնաեղ էլ քաղաքում, այն վայրենի ձայներն են լըռվում, կարծես մէկին խեղում են: Պա ո՞վ է բղաւում: Ի՞նչ են ուղումնրանք: Եւ ինչո՞ւ համար են այդ վայրենի բղաւոյները: Յայնանք ցաւ, որ դրանք դիշերապահների ձայներն են:

Իսկ այսուղ կեղեքում են այս սարսափելի մժեղները, որոնք ձեր անկողինը գարձնում են սաստիկ չափանաց տեղի: Դուք նրանց չեք տեսնում, մինչև անդամ չեք լսում, թէ ինչպէս են նրանք մտնում ձեզ մօտ վերմակի ասել, բայց միայն զգում էք, որ ձեզ մի բան անտանելի կերպով այբում է: Առաւոտը դուք տեսնում էք, որ ձեր մարմննը ամբողջապէս ծածկված է փշտիկներով, կարծես վարդախտով էք հիւանդացել և դուք յետոյ երկար ժամանակ զգում էք անտանելի քորոց ամեն կծած տեղերում:

Հազիւ էր սկսել ըւսանալ երբ ես դուրս եկայ տանից՝ դառն զիշերից յետոյ հովանալու համար: Խուլ խառն աղմուկը ցոյց էր տալիս, որ քաղաքը զարթնում էր:

Շուտով Արարատի և Արագածի գլուխները ոսկիացին արեգակի առաջին ճառագայթներից: Ոլքան անհատանելի բարձր գէպի երկինք են գնացել այդ ձիւնապատ գագաթները . . .

X

ԱՐԱՐԱՏԻ ՍՑՈՐՈՒԹՅՈՒՆ:

Օգոստոսի 7-ին, հազիւ էր արեգակը հօրիզոնից երեաւցել Փոքր Արարատի ձախ կողմից, երբ մենք պ. Կոկչաեվե հետ արդ էն դուրս էինք գալիս Երևանից, յարմարութեամբ տեղաւորվելով հանգիստ չորս տեղանի Փայէտօնում, որին լծված էին շարքով չորս ձիանք: Անցնելով բաղարով, որ բոլորովին լին էր

արեւելեան մարդկութիւնով, ձիաներով, գոմէշներով, էշերով, այծերով, ու խարներով՝ օդի մէջ կանգնած աղմուկի, գոռոցների, բառաչոցի, մայումի հետ, — ես կարծում էի, թէ կը խլանամ այդ արեւելեան մաւզիկայից:

Դրանից յետոյ ամբողջ Ճանապարհին, 50—60 վերատ տարածութեան վրա, Արարատը չէր ծածկվում այն պատկերի յետին կողմից, որ գերել էր իրանով իմ հայացքը: Մեր Ճանապարհին ընկած էր Արաքսի հովիտով, որ անսովոր կերպով հարթէ: Նա ամբողջապէս — Արագածի ստորոտից մինչև Արարատի ստորոտը — կտրտված է տուռներով կամ արխերով գաշտերը ջրելու համար, և ցանած լինելով կանանչե մէջ ընկվածված գիւղերով, ներկայացնում է մի գեղանկար պատկեր: Մանաւանդ գեղեցկացնում են նրան բրգաձեւ կաղամախենիների խումբերը, որոնք անսովոր բարձր և վայելչաւես են, այնպէս որ Արաքսի հովիտի այդ մասը լիշեցնում է իրանով մի ահազին ծաղկափթիթ այզի:

Զորս ուժեղ պնդակազմ անդրկովկասեան ձիաները տանում էին մեզ արագութեամբ, հանդիխով, մի ահսակ ասիական վեհապետեամբ. ձիաները տանում էին ոչ թէ մի հասարակ մահկանացուի, այլ համարեանոյն իսկ սարգարին — այդ երկրի գլխաւորին, իսկ նրա հետ մի ոչին յայտնի պետոր միրուք՝ սպիտակ զինուորական գլխարկով: Աւրեմն գնում էին որ և է շատ մեծ մարդիկ: Իսկ ասիացին սիրում է, որ իշխանութիւնը երեայ մի անմերձանալի բանի ձեռով, հանդիխաւորութեան բարձր աստիճանում, որպէս զի ամեն ինչը նրա առաջին խոնարհի և զոլոյ: Մէնք այդպէս էլ երեւացինք: Մեր առջենից և յետելից ձիարշաւում էին բեխերտւոր գեերը, որոնք ներկայացնում էին պատուաւոր կանվոյ: Հազիւ էր հեռուից ելեւում պահապաների կաւեղին աշտարակը, որի նմանները պահպանում են Եափփայից Երուսաղէմ տանող Ճանապարհը, և ահա մեր գեերից մէկը, կարծես կատաղած լինի, գլուխը կարտաելով առաջ էր թռչում, որ յայտնէ, թէ ով է գալիս և աշտարակից բաժանվում էր զիւուրիվոծ ասիացին, որ յայտարարում էր յարգելի նիկոլայ Պետ-

լովիչին, թէ սահմանագլխի մօտ և ճանապարհի վրան առմեն ինչը իր կարդին է, այսինքն թէ, զարմանալի է, որ այսօր ոչ ոքին չեն մորթել և եթէ սպանել էլ են, բայց սպանողները անցել են պարսից սահմանը և այն: Պ. Կոկչտեվը հանդարտութեամբ տաւ լիս էր հրամաններ և մենք գնում էինք տուաջ նոյն ազգող հանդիսաւորութեամբ: Պատկերը Ճիշտ որ ասիսկան է: Այս տեղ և այստեղ թափառում են ուղտերի խումբերը—դրանք են խոր Ասիայի և Աֆրիկայի համբաւաբերերը: Ուսուղ արխերով անց կենալիս ժամանակ ջրի մէջ են թրմփում վախեցած կրիաւները, շողշողալով արեգակի տակ իրանց սե, հարթացրած մէջ քերով: Այդ արխերի ափերով գանգաղ կերպով երկան են դաշլս արագիլները և փոխագրում են ձեր երեակայութիւնը գէպի Նեղոսի ափերը, հեռու և կախարդական Եղիպտոսը: Կապոյտ օդի մէջ, հովիտից շատ և շատ բարձր թռչում են պայուններ դործելով արծիւները:

Իսկ Արարատը հէնց մեր տուաջին է:

— Դուք հէնց նրանով էք զուարձանում:

— Այ՛ս, Նիկոլայ Պետրովիչ, և զուարձանում եմ և վրդով մունքով զննում եմ:

— Ի՞նչ կայ, ի՞նչ էք նկատում:

— Հէնց միշտ նայում եմ, արգեօք չի՞ երեալ նրա վըս մի փոքրիկ ամազ: Այժմ նա այնպէս պարզ է, մոքուր է, իսկ յան կարծ կը ծածկուի ամպերի մէջ—ահա այդ սարսափելի կլինի:

— Այ՛ս, դա ուղղել է: Ես ինքս էլ չեմ աշքերս կտրում նըրանից, զննում եմ—ծերունի Մասիսը (Արարատի տեղական առնունն է) գեռ իրան լաւ է վարում, ողորմածութեամբ, մի առմենափոքրիկ ամազ էլ չկայ:

— Աստուած տայ:

— Իսկ հրէն երեաց մի պատիկ ամազ. կարծես սպիտակ ծուխ լինի:

— Այ՛ս, քթի աղլուխի պէս մի բան:

— Ծերունին խնցում է, — հանաքներ է անում պ. Կոկչակի: Իսկ իմ սիրալ կատուներ են ծուատում: Ես մինչեւ անգամ պ. Կոկչակին վախում եմ հաւատալ իմ վրդովված մաքերը: Հրէն մի քթի աղլուխ էլ բաժանվեց սարից և հալվեցաւ օդի մէջ, կապոյտ եթերի (Յթարք) մէջ: Հրէն միւսը, երրորդը . . .

Ես հասկանում եմ թէ դա ինչ ամազ է քթի աղլուխի նըրման, դրանք ձիւնակրյուեր են, որոնք թափիլով, դուրս են բերում իրանց միջից հրացանի ծուխի պէս մի բան:

Այս երեսյթը նկատել է և պ. Պղետկով, առաջին անգամ մօտիկանալով Արարատին: Յետոյ արգէն նա հասկացել է, թէ դա ինչ է:

«Եր աշքերի առջե», ասում է նա — «անցնում է երեսյթների մի շաբք, որոնք այնքան ահուելի և գողացնող են, որքան վեհատեսիլ են: Դա ձիւնային և սառուցային կոյաերի թափիլին է մեծ արարատեան սառուցանեղից. նրանց ուղեկցում են սարսափելի աղմուկ և սպիտակ փոչչի ամբողջ ամպեր. Ասպիրարարը ցած թափիող ձիւնի մասաները փոշի են գառնում: Դեռ դրանից առաջ, գտնվելով Արալիի ից Ակուսի տանտղ Ճանապարհում, սառուցանեղից 20 վերսա հեռու, ևս աղշեցայ Ակուսիի կիրծի գլխին մի ամբողջ ամպի յանկարծ երեալովը: Նրա երեալը ինձ համար նրանով էր աւելի զարմանալի, որ Արարատի ամբողջ մարմինը զծագը վում էր կատարեալ պարզ կերպով բուլորվին անամազ երկնային կապուտակութեան մէջ: Ամպը յանկարծ երեալով բարձրութիւնների վրա, արագութեամբ քաշացաւ ներքեւ, ուր և նոյնպէս արագ կերպով ցրվեցաւ»:

Մեր աշքերի առջե էլ կատարվում էին այդ ահուելի երեսյթները: Ահա թէ ինչն էր վրդովմունքի պէս մտել իմ հոգու մէջ: — «Ի՞նչպէս կլինի ընկնելը այդ կոյաերի տակ» . . .

Բայց ես այս չէի ասում պ. Կոկչակին:

Ահա մենք անցնում ենք և էջմիածնի վանքի մօտով, որ նշանաւոր սրբութիւնն է Հայուսանի, և Տայրագոյն պատրիարքի, ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ա՞յ ի բնակութեան տեղն է:

դաս մի ամբողջ քաղաք է, հայկական հոգեոր ակադեմիայով, գաւ առական իշխանութիւնների ամբողջ ինստիտուտով (հաշտարար դատարան և այլն) և առանձին վանքերի մի ամբողջ գաղթականութիւնով, որոնք ունին ամրոցների ձեւ, բարձր կաւելչեն պարապաններով և հին աշտարակներով:

Ցեսոյ գալիս են կրկին զիւղերը: Գոքա խրձիթների և կուփից շինած պատերի շարքեր ու խմբեր են, աւերակների նման մի բան, որ ոչինչ ընդհանրութիւն չունի մարդկային այն բնակարանի հետ, որի տեսքին սովորել է եւրոպացու աչքը, մինչեւ անգամ ուռւսի աչքը: Եւ այս ամենը լրացնելու համար, խրձիթների պատերի վրան պապջում է աղբից շինած քմապաշտ յախճապալի: Դա աթարներն են, պանդոկային ահազին կոտեաների նման, կողյրած պատերին չորացնելու համար: Դա աթար չորացնելու մի զարմանալի առանձնատեսակ կերպ է:

Գիւղից գիւղ գնալով, զուք աեսնում էք, ինչպէս է բըսնում բամբակի ծաւը, որ շատ հարաւային բոյս է և քունձութ, որով ցանած են ամբողջ արտեր:

Այրվելով սարսափելի տաքութիւնից, մենք անցել էինք 60 վերստաչափ, չը փոխելով ձիաները և յագեցնելով ծարաւներս պատուական «խալի» հիւթալի ողկոյզներով: Մեզ ուղեկցում էր նոյն ասիական հանդիսաւորութիւնը: Մի քանի արխերով մենք անցնում էինք գետանցքերով, որով հետև փոքրիկ կամուրջները խանձարուած էին և այսուղ ես աեսնում էի, ինչ ջանքով ասիացիք, որոնցից ունանք բոլորովին մերկ էին, քաշքշվում էին արխերի ցխի մէջ ինքնուս շինողների և ինժեներների նման:

Վերջապէս մենք նգիրումն ենք, ուր արդէն, կարելի էր ասել աշխարհի վերջն է, գոնէ քաղաքակրթութեան նշանների վերջը: Մինչև Երեան, ճանապարհի աջ կամ ձախ կողմերին ցցված էին հեռագրական սիւները երկու կամ երեք թելերի հետ, իսկ Երեանից մինչև նգիրը ձգված էր միայն մի թել, որը նգիրում կարվում էր. այլ ես նրա համար զնալու տեղ չկայ. առջեւում կանգնած է Արարատը քրտերի քոչատեղերի

հետ և Պարից ու Թիւրքաց սահմանները կօզակների սահմանական պաստերով:

Իգղիրի գրսի կողմը նկարել կարող է միայն նկարչի վրձինը, իսկ գրիչը կարողութիւն չունի յայտնել նրա այն ամբողջ վայրենի առանձնայատկութիւնը, որ աւելի ապշեցնում է աչքը այն պատճառով, որ այս բոլոր առանձնատեսակ վայրենութիւնը գրված է մի գեղեցիկ շըջանակի մէջ՝ շինած վեթիարի բրգաձեւ կազամախնիներից և ուրիշ փարթամ կանաչկոսից:

Խակոյն մեր նգիրը գալուց յետոյ, պ. Կոկչաեվի, ինչպէս երկրի գլխաւորի մօտ եկին տեղական ասիացի տանուակերերը:

Նրանցից առաջինը, տեռքով շատ յարգելի մի մարդ, խորին կերպով խախտել էր իմ մէջ հաւատը Արարատը բարձրանալու կարելի լինելու մասին: Իմանալով իմ զնալու նպատակը և այն մասին, թէ նահանգապետի թոյլտութեամբ նոյն ինքն տեղական գլխաւորը ուզում է ուղեկցել ինձ իմ յանդու գն փորձի մէջ, նա արեելեան ձեռվ, յարգանքով բայց խորին սկեպտիքական կերպով վերաբերվեցաւ դէպի մեր խելացնոր խաղը: Նո նայում էր սրոն, ինչպէս մարդու մի անիսելքութեան, մի քմահաճութեան վրա, մարդու, որ Ասոուած գիսէ թէ որտեղից է եկել որ հասնէ նրան, ինչ անհասանելի է և իրանց համար, որոնք ահա քանի գարերի ընթացքում ծնվում են և մեռնում այն սրբութեան ոտերի մօտ, որ մատչելի է միայն Ալահին:

—Ախր բարձրացել են այնանեղ ուրիշները —ասում էի ես:

Նա միայն գլուխը շարժեց:

—Միթէ՞ դուք չը գիտէք, որ յիսուններորդ թւականում բարձրացել է Խոդզկո:

—Գիտեմ. . . Բարձրացել է, բայց գագաթին չի հասել:

—Ի՞նչպէս չի հասել: Ախր Սիմօնին, որ նրա առաջնորդողն է եղել, այդ մասին պարզեած է մեղալ:

—Այս, մեղալ տված է, բայց նրանք ելի շեն հասել:

—Ինչպէս, գա չէ կարող լինել: Ես հարցընել եմ նոյն իսկ Սիմօնից. նա ասում է —չը հասանք

գոգաթին:

- Խոկ նա գեռ կենդանի՞՞ է:
- Կենդանի է. լինում է Ալբ-Կողիլում:

Բայց էլե յամառ ասիսցին ասում էր, թէ ահա յիսուն տարի է ինքը միշտ նայում է Արարատին, տեսնում է նրան ամեն օր, և որքան կարող անում է նրա յիշալութիւնը մտաբերել, երբէք Մասիսի գլխին այնքան քիչ ձիւն չի եղել, ինչպէս այժմեան ամառը. թէ եթէ միայն կարելի լինի մարդուն բարձրանալ այնտեղ, դա հենց հիմքի է կարելի, այս ձիւնի սակաւութեան ժամանակ մի այսպիսի աջող եղանակով:

—Ես հենց միտք էի անում, շարունակեց նա, թէ ինչու հիմա ոչ ոք չի գալիս, որ փորձէ բարձրանալ. և ահա գուք եկիք:

Միւս տանուտէրը, ամենասիրելի «միրաբ» *) Խալֆա-Կուլը բէկ օղլի, ընդհակառակն ինձ բոլորին հանգստացրեց: Նա մինչեւ անգամ ցանկացաւ գնալ մեզ հետ և Ալլահի ձեռով կուսարդված սարբ բարձրանալու անկարելի լինելու մտախն խօսում էր ծաղրական կերպով: Հոգեպէս նա ինքն ի հարկէ համոզուած էր այդ բարձրանալու անկարելիութեան մասին, բայց հեղնօրէն խօսում էր այն մոքով, թէ «եթէ իշխանութիւնը հրամայէ, ինչպէս կարելի է չը բարձրանալ»:

— Ինքը մեր զիլսաւորն էլ կը բարձրանայ, ես ինչու չէ:

—Եւ կը հասնե՞նք գոգաթին, հարցնում էր պ. Զելինսկի, որ իրիկնապահին նոյնպէս Խոգիրումն էր:

—Կը հասնենք. գոգաթիցն էլ խօ բարձր չենք գնայ. խոկ գոգաթը — այ հրէն:

—Մենք նստած էինք պ. Կոկչանի առանձնասենեակում: Արարատը պատուհանի միջով նայում էր նրան: Այդ պատճառով էլ ուրախ Խալֆա-Կուլի-բէկ Գոլուխան-բէկ օղլին ցոյց էր տալիս սարի մօտիկ գոգաթը. «այ հրէն»:

Պ. Կոկչանի և պ. Զելինսկու հետ նա խօսում էր թուր-

քերէն և միշտ հանաքներ էր անում, խոկ նրանք թարգմանում էին ինձ նրա սրախօսութիւնները: Ինձ հետ նա խօսում էր ուսերէն, բայց այնպիսի լիզուով, որ նրա գեղեցկութիւնը կատարելապէս անըմբունելի էր: Նա հանաքներ էր անում և այն մասին, թէ Արարատի վրա քիչ ձիւն կայ:

—Մինչեւ գաղաթին հասնելը նա էլ կը հալլի:

— Խոկ քանի՞օ օր, ձեր կարծիքով, մենք կը բարձրանանք:

— Քիչ:

— Քանի՞օ:

— Մենք բամբակիերը հաւոքած կլինենք մինչեւ ձեր վերադառնալը:

— Խօսելով տանուտէրերի հետ, մենք իմացանք նրանցից, որ Թիւրքիայի, Բայազէտի կողմից ամենից լաւ կլիներ սկսել սարը բարձրանալ: Դա կարծեմ նոյն տեղն է, որտեղից 1845 թւականին բարձրացել է Արքայութիւնը: Բայց սրա համար մեր առջևում կար մի շատ երկար լեռնային ճանապարհ: Խոկ Երևանի կամ Խողիրի կողմից բարձրանալը բոլորովին անկարելի է, որովհետեւ այդ կողմից Ալմարատի վերևէ մասը բոլորովին ուղաձիգ է երեւում: Այն ժամանակ վճռեցինք սկսել բարձրանալը Ալի-Ակիդիլ զիւղի կողմից, ուր ապրում էր աւագ ուղեցոյց Սիմօնը, խոկ յետոյ շարունակել բարձրանալը Մեծ Արարատի Փոքր Արարատի հետ խառնված տեղից:

Որովհետեւ այդ օրը, Օդոստոսի 7-ին, ուշ էր Խոգիրից Ալի-Ակիդիլ գնալու համար, մինչեւ ուր հաշվում է 60 վերստից ոչ պակաս և այն էլ համարեա անանցնելի ճանապարհով, այդ կացարելով կացարելու մեջ գոյաց կացրինք այդ գիշերը Խոգիրումն է Տանտէրը հիւրասիրեց մեզ գեղեցիկ ընթրիքով — շատ առանձնատեսակ կերակուրներով, որոնք յիշեցնում էին ինձ, թէ ես գտնվում եմ կիւրոսի և կամբիւսի երթեմնեան թագաւորութեան սահմաններում:

Օդոստոսի 8-ի առաւօտը հիանալի լաւ էր: Ես վերկացայ ժամի 4-ին, եղբ գեռ նոր էր լուսանում: Ես գուլա գնացի խա-

*) Միրաբ հշ. Ըլերի հաստատրէն, Զուր բաժանուց:

զողի այգին, որ դժոխում է այն տան մօտ, ուր բնակվում է պահապես: Խաղողի որթերի մէջ կախված էին արդէն հասած ողկոցները:

Քանի որ պատրաստում էին մեզ համար ֆուրդօն (նրա պատմական ձևի մասին ես առաջ եմ խօսել), մենք դալերէի մէջ թէյ էինք խմում և ուտում էինք հենց այնտեղի որթերից կարած խաղողը:

Արեգակը ծագելուն պէս մենք դուրս եկանք նգորից:

Մենք այժմ էլ գնում էինք արելելեան շքեղութեամբ: Մեր առաջին ձիարշաւում է տեղական պետը ճանապարհը զընելու համար, որ մի քանի տեղերում, քանդված լինելով՝ մեծ գժուարութիւններ էր ներկայացնում ծանրաշարժ ֆուրդօնը անցնելու համար: Դեռ երեկ երեկոյեան ուղարկված էին Ալեկիով երկու կօղակներ պ. Կոկչանի հեծնելու ձիու հետ, որի վրա նա պէտք է կատարէր սարի վրա բարձրանալը մինչև այն սահմանը, որ մատչելի է ձիու ոյժին, և այս իսկ կօղակները աղմուկ բարձրացրին ամբողջ ճանապարհին՝ պատմելով նրա մասին, թէ գալիս է ինքը երկրի գլխաւորը և նրա հետ երկու մարդիկ—մէկը ծերունի՝ սպիտակ երկայն միրուքով, որ եկել է շատ հեռու տեղեց, այն տեղից, ուր բնակվում է նոյն ինքը ոռուաց շահը, իսկ միւսը սև է, հայի նման: Հասկանալի է, որ բնակչութիւնը դուրս էր թափվում, որ ուղղացնէ ճանապարհը երկրի գըլիսաւորի անցնելու համար: Ինչպէս և առաջ, մեզ ուղեկցում էին զինուորված Ռինալդին—Ռինալդինիներ:

Մեր ճանապարհն ընկած էր Արարատի ստորոտովը, մինչեւ այն քարեայ սարաւանդը, որի վրա տեղաւորված է Տաշ-Բուրուրուն կամ Դաշ-Բուրուն գիւղը, որ նշանակում է քարեայ քիթ, մի անուն, որ տուած է այդ գիւղին այն պատճառով, որ նա ընկած է այն սև սարաւանդի ծայրի վրան, որ ահագին սրածայր լեռնային ձիւղի պէս գալիս է Արարատից և խրվում է Արաքսի հովտի մէջ:

Մեր ֆուրդօնի անիւնները թխկթխկում էին Արարատի հիմքը կազմող սե, այրվածի պէս քարեայ դաշտով:

Տաշ-Բուրունում ամբողջ գիւղը դուրս է սողում քարեայ և կաւեղին խրձիթներից, չը տեսնված հիւրերին թամաշա անելու համար: Հենց այնտեղ էլ մի անցք էր պատահել որին պիտի քնններ պ. Կոկչանի գիւղերը մէկի վրա էին յարձակուել պարսկական քուրդերը, մէկին մորթել էին և սահմանից անց էին կացրել անտառները: Որովհետև մենք վճռել էինք այստեղ մի քիչ հանգստանալ, այդ պատճառով ամենից հարուստ տաշ-բուրունցին սիրալիր կերպով հրաւիրեց մեզ իրա տունը, որպէս զի արելելեան սովորութեան պէս մեզ համար գառներ մորթէ, հիւրասիրէ մեզ խորովածով և ամեն տեսակ արելելեան քաղցրեղիններով: Այդ տունը մտնելու համար — հենց կարծես հրգեհի ժամանակ լինի — մենք բարձրանում ենք կտուրը պատին գէմ տուած սոնդուիքով և քարեայ պատշգամբով մանում ենք սենեակը: Այստեղ չը նայած սարքերի կատարեալ սահմանութեան, ևս նկատեցի սեղանի վրա շատ հայերէն դըքեր, իսկ պատերի վրա «Անա» և «Գազետա Ա. Գալցյա» շաբաթաթերթերի պատկերներ և հենց այդ տեղից էլ կտուծ այս կենդանագրերը, անխուսափելի բիսմարկը, Պարսից շահը, Կոմակորիս-Մելեքովը և այլն: Այնտեղ էլ շղթայից կապած շուռ է գալիս գեղեցիկ սեւչեայ կզնաքիսը, որ բռնված է Արարատի ժայռերից մէկի վրան:

Հազեւ էինք կարողացել չորս կողմերին լաւ մարկ տալ, երբ գոների մէջ յայտնվում է մեզ ուղեկցով թուրք գեղեցկատես ձիւրուր և զեկուցանում է, թէ մեզ ուզում է տեսնել Տաշ-Բուրունի սահմանագլխի մի վիճակի գլխաւորը: Նրան ինը բրում են շնորհ բերել և սենեակն է մանում կուրանեան զօրքի կօղակների մի օֆիցեր՝ Գեղդիկի առաջին առքիմանի ոսէէ շտանշտան լայն կրծքի վրա: «Ե՞՞հ, մտածում եմ ես, -- այդ հակայական կուրծքը քիչ բան չի տեսել, որ ստացել է այնպիսի շքանշան, որ տասը մահ արժէ»: Եւ ես ակամայ նայում եմ այդ անձի վրա,

Հիմնալով, թէ նա կը թողէ խորին հետք իմ կեանքի մէջ. ես չէի իմանում, թէ նրան պարտական կլինեմ նրանով, որ այժմ էլ ապրում եմ, որ կարող եմ գրել այս յիշողութիւնները իմ գեղեցիկ անցեալի մասին: Ես չէի իմանում թէ այդ սենեակը մասն ինձ անծանօթ մարդը, որ ունէր կրծքի վրա Գէորգիի առաջին աստիճանը, հէնց այսօր կազատէ ինձ ուզիդ մահից՝ ամենասարսափելի հանգամնեքների մէջ:

Նա իրան տնուանեց Սիվոլօբօվ:

Սիվոլօբօվ—իստակ ոռուատկան, ինձ ծանօթ տոհմանուն է: Միուս եմ բերում վերջն ոռուաթիւրական պատերազմը, Փոքր Աօրոյի մէջ եղած երեւելի գժուար գործքերը, Բայազէտի պաշտելը, մի ծայրահեղքաջ տղամարդ, որ թիւրքերի գնատէների կարկան տակով դիշերը Բայազէտից գնում է Տէր-Ղուկասովի զօրաբաժինը, տանելով իր հետ սարսափելի համբաւ:

Այս, յիշում եմ այդ կատաղի գլուխն եղել է կօղակ Սիվոլօբօվը:

—Դո՞ւք չէք այն Սիվոլօբօվը, որ Բայազէտից . . .

Ես չը վերջացրի. Ես տեսոյ, թէ ինչպէս մի խորին զգացմունքի կամ թանկագին (կարելի է ծանր) յիշողութեան բոց այրվեցաւ և հանգաւ այդ մարդու աչքերում և ամբողջ երեսը լուսաւորվեցաւ այդ զգացմունքով:

—Այս, ես այն Սիվոլօբօվն եմ:

—Եւ այդ շքանշանը այն քաջադրութեան համար է:

—Այս, այն ամենի համար է, որ ես արել եմ:

—Եքանշանը մեծ է, բայց դա ել քիչ է այն բանի համար, որ ձեզ վրա տասը կեանքից ել աւել է նստել:

—Ես չեմ գանգատվում . . . ինձ օֆիցիւր են շինել, ես ուրիշների նման չեմ:

—Եւ հէնց ձեր արածը ուրիշ բանը չէր:

Դա նոյն Սիվոլօբօվն էր, որի անունը 1877 թւականին մի քանի օր չէր իջնում ոռուաց լրագիրների և ջերից: Նրա անունն է իվան Ֆեդօրօվիչ:

Պ. Սիվոլօբօվ այնքան սիրելի էր, որ մինչեւ մեզ համար գառը պատրաստելը, հրաւիրեց մեզ իրա մօտ թէյի այն վրանը, որ գրված էր Տաշ-Բուրունի մուտքում ծառերի շուաքների տակ: Մինք սիրով օգուտ քաղեցինք պ. Սիվոլօբօվի հիւրասիրութիւնից և մի քանի բողէից յետոյ արտէն նստած էինք ծառերի տակ, խոսերի վրա փառած գորգի վրան, ծաղկով ով ինչպէս կարող էր, ոսները արեւելեան ձեռվ, իսկ երիտասարդ սահմանապահ կօղակը, իր զլիսաւորի՝ ամենասիրելի խվան Ֆեդօրօվիչի հրամանով բաժանում էր մեզ բոժակ բաժա կի ետևից, չքնաղ չինական խմիչքը: Օրը անսովոր տաք էր, և մենք սիրով զմայլվում էինք թէյով, ակամայ նայելով Աստուածաշնչի սարին, որ փայլում էր մեր առջեւ իր յաւիտենական ձիւներով, որտեսք այն աստիճան են յաւիտենական, որ այդ անսկիզբն ու անվերջանալի մշտնջենաւորութեամբ կարող են մըրցել նոյն իսկ երկրագնդի յաւիտենականութեան հետ, որովհետեւ նրանք նոյնքան հին են, որքան և մեր մոլորակը, բայց աւելի կուսական են նրանից իրանց անմատչելի լինելովը:

Մի և նոյն ժամանակ պատուաւոր տաշ-բուրունցիք բերին և սիրալիր հիւրասիրութեան նշաններով գրին մեր առաջին խորոված գառը, մի ահազին ձմերուկ, որ մեծութեամբ համարեա Փոքր Ալրարատի չափ էր, մի նոյն տեսակ սեխ և զինի: Գառը գրած էր մի մեծ բողորսկ մետաղեայ մատուցարանի վրա, որի տրամադիծը, երեխ, մի արշենից աւել կլինէր, և որի վրա փորագրած էին զանազան զարդեր: Այսպիսի մատուցարաններ ես յետոյ տեսայ և թափառական քուրերի վրաններում: Այդ անօթը կազմում է նրանց ընտանեկան հարատութիւնը և մի ցեղեցից անցնում է միւսին, նրա վրա քուրդը հիւրասիրում է իր մօտ եկած օտարականին կամ իր եղբայր քուրդին, թէպէտ և սա լինէր նրա արիւնաբու թշնամին: Մատուցարանի վրա գառան հետ ընկած էր ծալած անձեռոցիկների (սալֆետկա) պէս մի բան: Բայց թող չը կարծէ ընթերցողը, թէ զրանք իսկապէս անձեռոցիկներ էին—այդ աւելորդութիւնը Արեւելքում

շկայ. ոչ անձեռոցիկներ, ոչ դանակներ, ոչ պատառաքաղներ այս-
տեղ չկան, որովհետեւ պատառաքաղի փոխարէն Ասուուած տուել
է մեզ մասներ, դանակն էլ կախած է ամեն մի կարգաւոր տ-
րեւան մարդու գօտիից, իսկ անձեռոցիկների տեղ ծառայում
են «լաւաշները»: «Լաւաշ»—դա համ անձեռոցիկ է, համ էլ
հաց: Խօսքերով գժուար է հասկացնել թէ ինչ է լաւաշը:
Դա կոպիտ տեղաշորի կամ աղլուխի պէս մի բան է, շնուծ
խմորից և այնպէս բարակ է և շատ ժամանակ ահագին չափս
ունի, որ աղլուխի կամ անձեռոցիկի պէս ծալվում է. նրան
ուտում են հացի փոխարէն և նրանով էլ անձեռոցիկի տեղ
մաքրում են շրթունքներն ու ձեռքերը:

Եղին ժամանակ, երբ մենք ճաշում էինք, երեւում է հեր-
թապահ կօզակը և յայտնում է իր գլխաւորին, պ. Սիվոլորօվին,
թէ եկել է պոլկօվնիկ Առաքելովը: Պոլկօվնիկ Նեվէրօվսկու տեղ,
նրա բացակայութեան պատճառով՝ կառավարելով Ռւմաննեան զօ-
րագունդը, պ. Առաքելովը քննում էր իրան յանձնած սահմա-
նակից պօստերը, որոնցից մէկն էլ դտնվում էր Տաշբուլունի
մէջ և որի գլխաւորն էր, ինչպէս ես արդէն ասացի, խօրունժիյ*)
Սիվոլորօվը: Այս վերջինս իսկոյն գնաց յարգելի պոլկօվնիկ
առաջը, որ յայտնէ նրան իր պօստի դրութեան մասին և հրա-
ւիրէ նրան մեզ մօտ ճաշելու: Շուտով եկաւ և պ. Առաքելովը:
Նա համարեա մի հարիւր տարեկան ծերունի էր, բայց մինչև այժմ
ամենաեռանդուն կերպով կատարում էր ծառայութեան պար-
տականութիւնները: Նա մի վերին աստիճանի բարի, համակ-
րելի մարդ էր: Ես առաջ իմանում էի, որ բոլորը նրան այս-
տեղ սիրում են և յարգում են. երբ ինքս ծանօթացայ նրա հետ,
այն ժամանակ տեսայ, որ այդ յարգելի ծերունին ճշմարիտ որ ար-
ժանի է ամեն տեսակ յարգանքի: Զը յուսալով երես առ երես
տեսնվիլ պ. Նեվէրօվսկու հետ, ես ինդրեցի պ. Առաքելովին
տալ նրան այն նամակը, որ բերել էի ինձ հետ Պետերբուրգից:

*) Առաջին սժիշտական տապիճան իջղուների մէջ: Մ. Թ.

Ն. Դ. Նօվիցկուց և իր կարգադրութիւններովը օգնել ինձ իմ
դիտաւորութիւնը կատարելու համար: Պ. Առաքելովն այնքան
պարտաւորացնող էր, որ տռաջարկեց ինձ այն ամենը, ինչ որ կար
նրա կարգագրութեան տակ, վեր առնել պօստից որքան ինձ
հարկաւոր է կօզակներ և այն:

Երբ խօսակցութիւններ էին լինում սարը բարձրանալու
մասին, ես նկատեցի, որ Սիվոլորօվի զգայաւն երեսով անցաւ մի
անհանգստացնող միտք. երեկի նրան մի բան շփոթեցնում էր,
խօսունում էր նրա բնական քաջարտութիւնն ու ժրութիւնը:
Վերջապէս նա չը համբերեց:

— Ի՞նչ կլինէր, եթէ ես խնդրէի ձեղ հետ միասին Արարատ
գնալ. վեր կառնէք ձեղ հետ, — գարձաւ նա դէպի ինձ անվը Ճ-
ռական կերպով:

— Ինչպէս չէ, ձեղ պէս յուսալի մարդուն ամենքն էլ վեր
կտոնեն, ձեռքերով ոտքերով:

— Հա . . . ուրեմն կարելի՞ է:

— Իհարկէ: Ձեղ հետ ես ոչինչից չեմ վախենայ:

— Շնորհակալ եմ ձեղանից, սրտանց շնորհակալ եմ: իսկ ինչ
կասէ պ. պոլկօվնիկը: Արդեօք բաց կը թողնէ՞ ինձ իմ պօստից:
Ես յայտնեցի պոլկօվնիկն Սիվոլորօվի ցանկութիւնը: Բարի
ծերունին մինչև անգամ ուրախացաւ այդ գէպքով, որ հէնց
մի ախորժելի բան անէ ինձ համար:

— Ես ոչ միայն թոյլ եմ տալիս—ես խնդրում եմ պարոն Սի-
վոլորօվին ուղեկցել ձեղ. ես ինքս այս մասին նրանից շնորհա-
կալ կլինեմ:

Բայց պատի հերոսը փայլեց ուրախութիւնից:

— Գիտէ՞ք, ինչու համար եմ ես ուղում գնալ ձեղ հետ, հարց-
րեց նա ինձանից:

— Պատճառն որ ձեր մէջ խօսում է ձեղ ներշնչած քաջարու-
թիւնը:

— Ոչ գա չէ:

— Ուրեմն նրա համար, ինչու ես եմ գնում եք իիստ

զգացմունքներ զգալ:

—Այ՛ս, զրեթէ այդպէս . . . Ամենքն ասում են, թէ Արարատը բարձրանալ չէ կարելի, թէ այդ ձիւնապատ գագաթի վրա դեռ մի մարդ էլ չէ եղել . . . Կետնքի մէջ ես շտահ բաներ եմ փորձել: Ես յիշում եմ, թէ ինչ եմ ես կրել երբ գուրս էլ դալիս Բայազէտից: Ասում են դա անկարելի է, բոլորովին անկարելի . . . Բայց ահա ես ցանկանում եմ անել նոյն խոկ այն, ինչ որ անկարելի է: Ես ցանկանում եմ ցոյց տալ բոլորին, որ ամեն ինչը կարել է . . .

—Այ՛ս, դա ձեզ յարմար է:

—Ուրեմն ձեզ հետ:

—Մեզ հետ, մեզ հետ:


—Ենորհակալ եմ . . . Ինչ որ պատահի ինձ, ես գուրս կը դամ այ անտեղ:

Եւ նա խոյն, հրամայելով մի կօզակի անմիջապէս պատրսստվել նրա հետ ճանապարհի համար մի քանի օրուայ ժամանակով, իր պատահի մէջ հարկաւոր կարգադրութիւններ արեց և հագաւ իր ճանապարհի համազգեստը:

Արեգակը մայր մտնելու վրա մենք արդէն Ալի-Նիզելումն էինք, որտեղից և պէտք է սկսէր մեր թշուառ բարձրանալ ու դէպի սարը:

XI.

ՍՈՍԿԱԼԻ ԳԻԾԵՐ:



«Nunc veteres, o regina. jubes renovare dolorem!» *)
կարող եմ ես բացականչել այժմ ինեւի նման, որ պատրաստվում էր պատմել Դիտօնային իր արկածների մասին—Տրօեայի աւերման և անյայտու ալեկոծեալ ծովերի վրայովի իր թափառմունք»

*) Այժմ, ով Ատքուհի, ուստի այսուհետ են նորոգել Վեշպան!»:

ների մասին:

«Կավեազ» լրագրի մէջ նկարագրելով մեր արկածները՝ ող. Կոկչանեվ տառւմ է. «Ալի-Կիզիլում մենք իջանք այնտեղի բնակիչն մի Մարգարի տանը: Իմանալով Արարատը բարձրանալու մտադրութեան մասին՝ մեր շուրջը հաւաքվել էին պատուաւոր գիւղացիք և զարմացքով հարց ու փորձ էին անում իմ ընկերներից իրանց այդպիսի աստուածընդդէմ մտքի մասին: Այդ ժամանակ իմ հրատ իրելուն պէս երեաց և ծերունի Սիմօնը, ող. Խօգզկօի նշանաւոր առաջնորդը: Խնչպէս նա պատմեց, նրանց ճանապարհորդութիւնը կապված էր ահազին արգելանքների և գժուարութիւնների հետ, որոնցից յետոյ նրանց հազիւ յաջողվեցաւ համել սարի բարձրութեան՝ զանազան գործիքների միջոցով — «Ե այնու ամենայնիւ, ասում էր նա, Տէր Աստուծուն հաճոյ չեղաւ թոյլ տալ մեզ համել մինչեւ գագաթի կատարը, որ մահկանացուների համար անմատչելի է»: Տեսքով Սիմօնը շատ ծեր է: Իր խօսքերով, նա 100 տարեկան է առանց 6-ի, այսինքն 94 տարեկան: Իր պատմութիւնների մէջ շատ յաճախ խառնվում էր և հակածառում էր իրան, երբեմն ցոյց էր տալիս մանկական ցանկութիւն մեզ հետ այժմն էլ սարը բարձրանալու համար, բայց հետո նոյն բողէին նրա թուլութիւնն ու ուժաթափութիւնը իրանց յայտնում էին: Երեխ դեռ երկար մենք հարկադրված էր լինէնք լսել նրա պատմութիւնները Արարատ բարձրանալու, սարի հրաբուխի, Ակուռիի կործանման մասին» և այլն:

Այդ Սիմօնը, Սարգիսով տոհմանունով, իսկապէս ներկայացնում է խորին հնութեան մի վշրանք: Նա ծնվել է 1788 թւականին. 1840 թւի սարսափելի երկրաշարժութեան ժամանակ, երբ Արարատի հիւսիսային մասը խորտակվեցաւ և ծածկեց ս. Յակոբի վանքը և Ակուռի ծաղկած գիւղը, Սիմօն Սարգիսով արդէն 52 տարեկան էր: 1845 թւականին նա առաջնորդել է ակագեմիկ Արիելին, որ այն ժամանակ կատարում էր Արարատը բարձրանալը: 1850 թւին նա ուղեկցում էր դէպի

գագաթը պ. Խօդզկօինն նրա խմբի հետ:

Ամենից շատ պահպանվել է նրա զառամետ յիշողութեան մէջ երկրաշարժութեան սոսկալի տարին, որին նա «Ճրհեղեղ» է անուանում: Այդ աղետալի անցքը իսկապէս սոսկալի է եղել: Արաքսի ծաղկափթիթ հովիտի մի մասը՝ նա գարձրել էր, ինչ պէս տառմ է պ. Պոլեակօվ, «մի դաժան և քարքարոս տեղեւ, թափառականների բնակութեան վայրեր», որովհեաւ ամեն ինը թաղել էր այն ժայռերի և քարերի տակ, որոնք գլորվում էին Արարատի բարձրութիւններից: Ակուռիի բողոք բնակիչներից, որոնք 1000 մարդ էին հաշվում, նա կենդանի թողեց միայն 112 մարդ, և դա էլ այն պատճառով, որ նրանք առաջուց էին հեռացել իրանց դիւղեց: Աղատվածների թւում էր և Սիմօն Սարգիսօվը:

Սիմօնի պատմութեան նայած, որ զրել է պ. Պոլեակօվ, երկրաշարժութեան պատկերը սոսկալի էր: Սարի գագաթից տրկվում էին սառուցի մեծ կտորներ, ահազին քարերը գլորվում էին բարձրից սոսկալի արագութեամբ. օդի մէջ կանգնած էր ծծմբային խեղդիչ հոտ: Դպրզիւնը, որ ուղեկցում էր երկրաշարժութեան, այնքան սաստիկ է եղել, որ լովելիս է եղել մինչեւ անդամ նոգիրում: Ոչի մէջ եղած սարսափելի փոշինց գիշերային խաւարը վրա էր հասել երբ արեգակը կմնանած էր գեռ հորիզոնի վրա: Սիմօնը, որ այդ ժամանակը գանվում էր իր գիշեղից հեռու, խոտ հնձելու տեղը, տեսնելով փոշին և լուելով սարի վրա անսովոր աղմուկ, վաղել է դէպի այնուղ բայց նրան ճանապարհին պատահած երկու ակուռեցիք, որոնք սարից փախչելիս են եղել, ահով պատմել են նրան, թէ նրանց գիւղը այլ ևս գոյութիւն չունի, թէ նա ոչնչացրած է «Ճրհեղեղով», թաղուած է զետնի տակ բնակիչների հետ: Սարսափից և ստրերկրեայ գարեւերից Սիմօնը վայր է ընկել և երկար մնացել է առանց շարժողութեան: Երկրաշարժը վերջանալուց յետոյ՝ փորելով իրանց աները սառուցների և քարերի տակից, աղատված պէտուցիք գտել են միայն զիակներ, որոնք գեռ չէին փառել:

Սարի ստորանից սառուցի կտորները ընկել են հեռու, Արաքսի հովիտը, Սիմօնի ասելով «քամու արագութեամբ»: Սառուցի բեկորները հասնում էին մի քանի սամէն լայնութեան և միշտ այնպիսի քարերի հետ էին, որոնց շրջապատը հասնում էր 60 քայլի: Գիւղի կործանումն, «Ճրհեղեղ» աղատված մի ուրիշ ականատեսի ասելով այնքան շուտափոյթ է անցել որ կարծես ամպրոպի մի հարուած է եղել կամ կայծակի փայլումն:

— Հէնց ասես մի վայրկենաշափ ես աչքս գոցեցի, բայց երբ բացի, գիւղ էլ չկար:

Դէպի այդ խոկ վլուած, քարերի տակ թաղված գիւղը պիտի սկսէինք մեր բարձրանալը: Այդ միջոցին արեգակը արգէն մայր մատու. մինչև որ մեզ համար ձիաներ էին թամբում, իսկ մի մների վրա բեռնում էին մեր ծանրոցքը—ճանապարհի ռատելեղնները և դիշերելու համար վըանները—սկսել էր արգէն բոլորովին մթնել:

Մենք գուրս եկանք ամբողջ կարաւանով—մենք ամենքս տասն ու մի ձիաւոր էինք, չը հաշվելով առաջնորդը: Ճանապարհին ընկած էր դէպի սարը, աւելի և աւելի բարձրանում էր: Վիսալումնի եղջեւը, որ իջնաւմ էր դէպի Արարատի արեւմտեան կողքը, վերջնականապէս ծածկվեցաւ հորիզոնի ետեւում և մեր գիշերային ճանապարհորդութիւնը լուսաւորելու: Համար մնացին միայն թոյլ կերպով պապղող աստղերը: Գիշերուայ խաւարը աւելի անթափանցելի էր դառնում:

Արաքսի գեղեցիկ հովիտը, Արագածի և նրա հարեւանների սրածայր գագաթիթները, Երևանը իր կանանցով և քարեայ բարձրութիւններով, ինքն Արարատը—ամեն ինչը ծածկվեցաւ խաւարի մէջ: Մենք գնում էինք մի մի, միմեանց ետեւից: Ես հետեւում էի ուղիղ Միվոլոբօվի ետեւից, որպէս թէ նախազգալով, որ ինձ շուտառվ հարկաւոր կլինի նրա մեծահողի օգնութիւնը: Եւ չէր կարելի, որ այդ օգնութիւնը հարկաւոր ըլլինէր: Մեր ամբողջ խումբը բաղկացած էր շատ լաւ վարժուած ծիա-

ւորներից, որոնք մանկութիւնից սովորած են վտանգաւոր էկրու կուրսիաներ անել սարերի և ժայռերի վրայով.—միայն ես էի վատ ձիւաւոր: Ասրերով ճանապարհորդութեան, նա էլ զիշերւայ խաւարի մէջ միւս բոլոր անյամարութիւնները լրացնելու համար—ես ոչինչ չէի տեսնում ոչ ոսմերիս տակ, ոչ տռաջիս, և ոչ էլ չղուս կողմում: Դրան իհարկէ օդնում էր և իմ անբախտ կարծառեաւութիւնը և բացի դրանից, ինձ վրա կոյին մթին ակնոցներ, որոնց ինձ խորհուրդ էին տուել դնել Արարատ բարձրանալու ժամանակ, որ աչքերս պահպանեմ արեգակի պայծառ ճառագայթներից (իհարկէ ցերեկով) և մանաւանդ նրանց ձիւնի վրա ցոլացումից: Այդ նախազգուշութիւնը առաջասրակ անհրաժեշտեն համարում, իսկ մի քանիմները խորհուրդ են տալիս աչքերի տակի և զլիի կաշին թխացնել: Որքան ինձ յայտնի է, բերենոը և Սպասակի—Ավտօնօմովը քիչ է մնացել որ աչքեց զրկին Արարատի վրա:

Մի խօսքով—ես ոչինչ չէի տեսնում իմ չորս կողմում: Իմ առջեռում անորոշ գծագրութիւնների մէջ երեռում էր միայն ձիւ գլուխը: Եւ այսպիսի խաւարի մէջ ես պիտի բարձրանայի ձիով սարը: Դա մի և նոյն է, թէ զիշերը ձիով վեր ելնել խաւակի եկեղեցւոյ գլուխը:

Ո՞վ էր մեզ հարկադրում սիսել սար բարձրանալը զիշերով: Ո՞չ ոք, միայն մեր անխելքութիւնը—ցանկութիւնը շուտով հանել նրան, ինչ ամենքը անհասանելի են համարում: Կարծես մենք չէինք կարող սպասել այդ զիշերը սարի ստորափ մօտ, Ալի-կիզելում:

Ինչ և իցէ, մենք գնում էինք մի ինքնիշխան խաւարի միջով, առանց որ և է շաւեղի նշանի, որ հէնց դննէ շինած լինէին քարերի միջով լեռնային այծերը: Միայն առաջնորդն էր իմանում, թէ ուր է նա մեզ տանում, և նա էլ շատ անդամ կորցնում էր սովորական շատ իղը և մենք հարկադրուած էինք միմեանց ձայն տալ խաւարի մէջ, որ միմեանց չի կորցնենք և չընկնենք անդունդների մէջ:

Ահա այդ իսկ գժուար ժամելում էլ յայտնվեցաւ իմ քառ

ջասիրտ, աներկիս զ բարեկամի մեծահողի հոգատարութիւնը իմ մասին: Սիվոլորօվը մի քայլ ինձանից չէր հեռանում: Նա միշտ ձայն էր տալիս ինձ մթութեան մէջ, որ առնենէ գնում և մ ևս իրա ետեից: Նա ինձ չէր հրամայել մինչեւ անդամ շարժել ձիւն երասանակով, որ չը սխալեցնեմ նրան ճանապարհից, չը հարկադրեմ նրան անել մի անարձակ, կարելի է վտանգաւոր քայլ: Նա խորհուրդ էր տալիս միայն վասահանալ ձիու խելքի, կամ բնազգումի և նրա սովորական զգուշութեան վրա:

— Իմ ետեից, իմ ետեից—գէպի այս կողմը, — միշտ լավում էր խաւարի մէջ նրա ձայնը:

— Ես այսպեղ եմ—ձեր ետեին:

— Զգուշութիւն, այդտեղ մեր առաջին ձոր կայ:

Բողոքալին ոչինչ չը տեսնելով և ակամայ ջանք անելով նկատել խաւարի մէջ մի բան, ես զրանով միայն յոգնեցնում էի ինձ: Փորձեցէք զնալ խաւարի մէջ հէնց գննէ մի հաւասար տեղով, երկիւղ կրելով մի բանի դիպչել կամ մի բանով ընկնել և գործ շուտով, մի քանի բոպէում, կը զգաք յոգնածաւթիւն: Բայց մենք գնում էինք ձիով խաւարի մէջ արդէն երեք-չորս ժամ: Ի՞նչպէս էլնք գնում—ձիշու մազլցում էինք այծերի պէս:

— Աջի ասպանդակը սեղմեցէք—պահպանեցէք ոտք, այդ տեղ բարձր քարեր կան, լսկում էր իմ մեծահողի բարեկամի ձայնը:

Բայց ասպանդակը էլի քավում է քարերին և ցաւեցնելու շափ ձնշում է իմ ոտք:

— Զախի ասպանդակը սեղմեցէք—ձախ կողմին քարեր կան:

Իմ բերանը շորանում է: Շունչ քաշելը գժուարանում է:

— Իջէք ձիուց, քաշեցէք նրան զգուշութեամբ սանձից բանած, այնտեղ գէպի ձորը գառիվայր կայ:

Բայց ես ինչպէս քաշեմ ձին գէպի ձորը, երբ ես ոչինչ չեմ տեսնում: — չեմ տեսնում ոչ միայն ձորը, այլ և ձին: Բայց ես հնազանդվում եմ: Կա իջնում եմ ձիուց և քաշում եմնեան, ոչ, ոչ թէ քաշում եմ, այլ վայր եմ ընկնում—գեռ լաւ է որ ձորը չեմ ընկնում: Քարերը, որոնց միջով ցերեկը, արեգակի լոյս

սով ես կարող էի արձակ գնալ և քաշել ետեւից ձիռւն, միշտ
հարկադրում են ինձ սայթաքլել և վայր ընկնել: Ես չեմ իմա-
նում, թէ ինչից կոչեմ, որովհետեւ ոշինչ չեմ աենում:

—Դէպի այդակղ ո՛չ, դէպի ձախ—քարափից վայր կընկնեք,
լսում է վրկարար ձայնը:

Եւ ես մաղլցում եմ դէպի ձախ, իսկ ինձ վրա է դալիս
ձին և կարող է ինձ մի կողմը գցել: Առ կլներ, եթէ ես կա-
րողանայի առաջ իմ ձին կօզակին, որ նա տանէ իրանի հետ, ես
էլ մի կերպ կանցնեի ձորով. բայց դա էլ չի կարելի—երկու ձի
մի շարքում չեն կարող գնալ նեղ շատիզով քարերի միջով. և ես
ինքս քաշում եմ նրան իմ ետեւից, քաշում եմ և վայր ընկնում,
արինաթաթախ անելով ձեռքերս, ծնկներս:

Եւ այդ տեսակ ձորեր մի քանիսը կան:

—Ի՞նչ էք կանգնել: Ի՞նչ կայ, լսում են առջեւից ձայներ:

—Ասիր առաջնորդներն էլ կանգնած են:

—Է՛յ, ով կայ այդակղ: Ի՞նչու էք կանգնել:

—Առաջնորդը ճանապարհը կորցրել է:

—Ա՛յ քեղ բան:

—Դէպի ձախ, դէպի ձախ, շատիզը ձախ կողմին է:

Փչեց լեռնային ցուրտ քամին: Շնչառութիւնն աւելի հեշ-
տանում է. եթէ դա չլիներ էլ շունչ քաշել չէր կարելի:

Էլի մի ձոր կայ . . . Եւ գրանց վերջ էլ չի լինելու: Կըր-
կին իջեր ձիուց, կրկին զարնվեր քարերին. մի ասանջնոնք է, մի
անխելքութիւն է զիշերով Արարատ բարձրանալը: Ինձ արդէն
սկսել են երագել խորիսրասներ և ժայռեր—երեակայութիւնս
հիւանդու կերպով էր զործում: Հէնց Ակուսին լինի՝ շուտ տես-
նէինք: Այնակեղ կը զիշերինք կը հանդատանանք. իսկ արեգակի
երեալուն պէս կը չքանան այս ուրուականները. արեգակի տակ
այս խորիսրասն էլ սարսափելի չէ:

Հեռուից լսում է շան հաշոց: Ի՞նչ բախս է, դա կոմ-

կենդանի Ակուսին է կամ քրդերի չափները—քոչատեղին է:

—Ակուսին մօախ է, պարոններ, քաջասիրտ եղիք:

Շնահաշոցը կատաղի է: Հեռուից լսվում են ձայներ, բայց
խօսքեր գեռ չի կարելի որոշել:

—Դրանք ի՞նչ ձայներ են:

—Դա մեր ուղեցոյն է մէկի հետ խօսում:

—Իմ ետեւից, իմ ետեւից եկէք, էլ հեռու չինք:

Մի զառիվեր էլ կայ: Ամենքը կանգնում են:

—Մի՞թէ մենք Ակուսիում ենք:

—Այս, հասել ենք:

—Բայց ո՞ւր են բնակարանները: Ես ոչինչ չեմ տեսնում:

—Եւ չեք էլ տեսնի—միայն քարեր են:

Վերջապէս առաջնորդիս, խաւարի մէջ, շը նայելով հաջո-
ցին, ձայները աւելի որոշ են դառնում: Ես լսում եմ, որ մէկը
ոռւսերէն ձայն է տալիս.

—Ո՞վ կայ այդակղ:

—Դրանք հայեր են, գնում են ուխտ, պատասխանում է վե-
րկեց մի ուրիշ ձայն:

Դա կօզակների պօստ էր: Մթութեան մէջ պօստի մարդիկ
առաջ կարծել են թէ մենք աւաղակ քրդեր ենք, իսկ յետոյ
լսելով իմ ուղեկիցների հայերէն և ոռւսերէն խօսակցութիւն-
ները, կարծել են, թէ հայեր են գնում Ս. Յակոբի վանքի ա-
ւերակները ուխտի:

Լսելով պօստի կօզակների ձայները, պ. Ախվօլօքով, ինչպէս
այդակղի սահմանապահ զօրքի վճառկի զլիսաւորը, գուցց. «պօս-
տի զլիսաւոր»—պահանջելով իր մօտ պօստի զլիսաւորին:

Կօզակները ճանաչեցին Ախվօլօքովի ձայնը: Մէկը վերևից
կանչեց. «այստեղ է, ձերդ աղնուութիւն» —և սկսվեցան հարց
ու պատասխաններ, որոնք մեզ կատարելապէս յուսահատացրին: Յայտնից
որ այստեղ մենք չենք կարող զիշերել որովհետեւ
քրդերը այստեղից քոշել են դէպի բարձր, թեալու-Ավագն քոչա-
տեղին, որ նշանակում է որովայթ սիլող: Եւ Ճշմարիտ—դա մի սոս-
կալի որովայթ էր:

Մենք չենք կարող այստեղ մնալ այն պատճառով, որ այդ

աեղ անկարելի էր գտնել մեր ձիանց համար ճարտակ, իսկ առանց դրան խեղձ անասունները ոյժ չէին ունենայ տանել մեզ բարձր։ Դրութիւնը սոսկալի էր։ Պէտք էր մի կերպ վճռել։

Յանելարծ խաւարի մէջ ես լսում եմ ձիաների թրմփիթրմփոց, ձիւն և ոլ. Զելինսկու հիւանդոտ ձայնը։

— 0' ։ ։ ։ Ձին սպանեց։

Իմ սիրաը տրորիցաւ։ Լսում եմ խեղձ Ստեփան Պավլովիւ չի հեծեծանքը, բայց չեմ տեսնում, թէ ինչ կայ այնաեղ, ուր է նա։

«Գէ՞ սկսմեց», տիսրութեամբ մտածեցի ես. առաջին անբախութիւնը սկսմեց ։ ։ ։ Ի՞նչպէս կլնի երկրորդը։

Ձիանքը կռվել էին, և նրանցից մէկը յետի սոքով խիել էր ոլ. Զելինսկուն։

— Հը, ի՞նչ է, չի սպանել։

— 0' ։ ։ ։ Սոխու է խփել անիծեալը։

— Զի՞ կոտրել։

— Կարծեմ ոչ։ 0' ։ ձեռքով շոշափում եմ, կարծեմ ամբողջ է մնացել։

Բայց պէտք էր վճռել—գնալ քոչառելին, որոնել քրդերին։

— Ձիու վրա կարող էք պահել ձեզ, հարցնում են վերաւորվածից։

— Կը փորձեմ։ Պէտք է գնալ—այսուել խօ չեմ սատկելու։

Պօստից վեր առինք երկու ուղեցոյց ես—մի թուրք և մի կօղակ, և ճանապարհ ընկանք, բարձրանալով աւելի և աւելի դէպի վր։

Բայց ի՞նչ սոսկալի ճանապարհ էր. դա: Կը մեռնեմ—չեմ մոռանայ այդ սարսափելի զիշերը։ Դրանից յետոյ Ռոստովում երբ ես ձգվում էի հիւանդոտ զառանցութեան մէջ, բորբոքման (Յօսպալե) մէջ (ահա ինչի էր հասցրել ինձ Արարատը) և յետոյ Պետերբուրգում տենդային ջերմութեան մէջ ես միայն մի անգամ չեմ անց կացրել այդ սոսկալի զիշերը։ Ես ընկնում էի խորխորատը ։ ։ ։ Ինձ տանում էր անդունդի մէջ լեռնային

պետակը . ։ ։ Ես մեռնում էի ինձ Ճ'նշոլ սառացների տակ կամ քրդերի սև չաղրներում. քրդերը պատում էին ինձ, չէին զարձուցանում ինձանից իրանց սև, հրաշէկ աչքերը և նախատական ձեռվ շարժում էին իրանց գլուխները. «Եարալեան *), եարալեան. ինչո՞ւ ես եկել դու այսաեղ»։

«Քավազ»—ի 226 № ում պ. Կօկշաեվ ահա ինչ է ասում մեր ոյդ անբախտ գնացքի մասին, երկրաշարժից կործանված Ակոռնից մինչեւ Թեալա-Սեվօն քոչառեղին. զը նայելով յոդնածութեան, այսուեղ (Ակոռնիում) յարմար բնակատեղի չը լինելու պատճառով, մենք վճռեցինք շարունակել մեր ճանապարհը մինչեւ քոչառեղիքը, որի պատճառով, վեր առնելով այսուեղից երկու առաջնորդ ես, մի թուրք և մի կօղակ, այսակ գտնվող սահմանապահ պօստից, շարունակեցինք մեր ճանապարհը առաջնորդների հետքերով, բաց թողնելով մեր ձիաների սանձերը, որովհետեւ կառավարել նրանց զիշերուայ խաւարի մէջ բոլորովին անկարելի էր։ Այդ ճանապարհը երկաց մեզ անվերջ և սոսկալի։ Ժայռերը, փոսերը և խոր ձորերը պատահում էին մեզ ամեն մի քայլում։ Ես սոբոլջ ժամանակ գնում էի ամենքի առաջին, օգուտ քաղելով մի կողմից իմ ձիու համարձակութիւնից, իսկ միւս կողմից՝ սովորութիւնից, որովհետեւ ինձ միայն մի անգամ չէ պատահել մանգաղ զիշերուայ ժամանակ լեռնային շաւիդների զառիվայրերով։ Իմ ուղեկից Գանիէ Լուկիչի (ինձ, անբախտին) համար ամենամեծ դժուարութիւնով, մենք վերջապէս հասանք Թեալա-Սեվօն քոչառեղին։ Դեռ ես չէի կարողացել մոնել վրանը, երբ իմ ետեկից մտաւ այդտեղ իմ բարի ուղեկից Դանիէլ Լուկիչը, գառնալով գէպի ինձ հետեւալ խօսքերով. «Նիկօլայ Պետրովիչ, ես իմ հրաշալե ազատութեամբս պարտական եմ պ. Սիվոլօրօվին»։ Յայտնիցաւ, որ մի ձորով անցնելիս ժամանակ նրա գլուխը շուռ էր առել և նա կորցնելով իր իմացականութիւնը, անզգայաբար վայր էր

*) Եարալեան—ազատաշան ված գէներալ բառ։

Ընկել անդունդի այն ծայրի վրան, որտեղից մի ամենասփռրիկ շարժուածք կարող էր զցել նրան լեռնային վտակների խորթը»։ Այս, գժբախտաբար դա այդպէս էր եղել։ Ուժաթափ լինելով յոգնածութիւնից, փշոված և բարոյապէս շփոքված լինելով պ. ջելինսկու հետ պատահած գժբախտ անցքով, ես զօրով էի պահում ինձ ձիու վրան, երբ Ակուռից մենք ընկանք իսկապէս սոսկալի ճանապարհը։ Մինչև անդամ եմ աներկիւղ փրկիչը և ձիով գնալու մէջ այնքան վարժված ձիաւորը, ինչպէս էր պ. Կոկչանվ—մինչև անդամներ էլեւետոյ ինձ տառմ էին, թէ նրանք ակամայ փակում էին իրանց աչքերը, երբ նրանց ձիաւների սրբակները սոհնում էին սոսկալի անդունդների այսպէս տառած կարնիզներով։ Ես թէպէտ չէի տեսնում, բայց իմ ձիու զգոյշ և ծանր քայլուածքով զգում էի, որ ես հէնց կախ ընկած եմ անդունդի վրայից, որտեղից խուլ կերպով լսվում էր միայն լեռնային վտակների ազմուկը։ Բայց ես զգում էի և իմ փրկչի մօտակայութիւնն ու ինամատարութիւնը իմ մասին։ Իմ ձին իսկապէս զնում էր իր գլուխը նրա ձիու քամակին։ «Ի սէր Աստուծոյ, զգոյշ եղեք, այսաեղ վտանգաւոր է . . . Թամբի վրա պինդ կացէք . . . Այդտեղ զառիվոյր է։ Այնտեղ քարեր կան . . . Զգեցէք սանձը . . . սանձը մի շարժէք. . .»

Մի ուղղաձիգ զառիվերում, խորխորատի ծայրին, հազիւ էր կարողացել պ. Սիվոլորօվի ձին առաջի ոսներով քարը վեր ելնել, իմս, չը տեսնելով, երեխ, իր առջեւը կոխելու տեղ, մի անաջող շարժուածք գործեց գէպի խորխորատի կողմը և թափեց նրա մէջ մի քանի քարեր։ Մի վայրկեան էլ—և մենք կը թռչէինք անդունդի մէջ։ Բայց Սիվոլորօվ չը կորցրեց իրան։

—Բարձրացրէք ձեր ձիուն ետքի ոսների վրան, գէպի ձախ։

Ես բարձրացրի։ Սիվոլորօվի ձին յաղթեց արգելքին—իմ էլ նրա ետելից։

—Ու՞՞Փ, վառք Աստուծոյ, ապատված ենք . . . Եթէ ձեր ձին քիչ ունենար—գուք կորած կլինէիք։

Իմ մարմնովս անցնում է յրտութիւն, թէպէտ և ես տաքութիւնից և յոգնածութիւնից չէմ կարողանում շունչ քաշել։

Օդը քիչ է։ Լիդուս այնպէս շորացել է, այնպէս փոյտացել է, որ ես հաղիւ եմ՝ կարողանում մի խօսք տաել—ձայնս կորցնում եմ։

—Ցած իջէք ձիուց, այդտանզ աւելի վատ է—գնացէք շօշափելով։

Ես իջնում եմ թամբից և ընկնում եմ քարերի վրան։ Կանգնում եմ, ուղում եմ մի նեցուկ գտնել—ձեռքս ձգում եմ դէպի ոջ։

—Դէպի ձախ, այնտեղ խորխորատ կայ, կանգնեցէք։

Ես ձեռքից բաց եմ թողնում սանձը։ Սիվոլորօվը թողնում է իր ձին և շաապում է ինձ մօտ։

—Գրկեցէք ինձ—պինդ բանեցէք ինձանից, ասում է նա, և ես լսում եմ, որ նրա ձայնն էլ գողում է, կառը կտոր է լինում իհարկէ իմ պատճառով, տեսնում է, որ մարդ է փշանում։

Ես գրկում եմ նրան և նա բանելով ինձ տառմ է ինչպէս մի երեխայի։ Խակ այդ անիծեալ քարերը! Հէնց գոնէ ես տեսնէի նրանց—բայց չեմ տեսնում և ընկնում եմ նրանց վրան։

Գերջին ոյժերս վերջապէս թողնում են ինձ։ Ես կորցնում եմ զգայութիւնս։ Ասում են, թէ ես վայր ընկոյ անզգայ, թէ ինձ հետ ուշաթափութիւն է պատահել և ամենաբարի Սիվոլորօվը թափել է իմ գլխին լեռնային վաակի ջուրը, որ այնտեղ էր ճշում, ուր ես վայր էի ընկել։ Գրան ես ինքս չեմ յիշում։ Միայն միտս է գալս զետակի ազմուկը։ Զերմութիւնը ինձ կիզում էր։ «Հէնց գոնէ, մի կլասում ջուր տուէք» . . . Նոյն մեծահոգի Սիվոլորօվի օդնութեամբ ես սողացի գետակի մաս և մի բուռը ջուր վեր առի։ Ի՞նչ բախտաւորութիւն է. Ջուրը սառուցի պէտ ցուրտ է։ Այդ ջրի մէջ արգամած լեռնային աւագ գետակն այնքան սրնթաց էր, որ աւագ էր շինում այն քարերը, որոնց վեցով նա վազում էր։

Բախտաւորապէս քոչառեղին հնուռ չէր։ Յենլով Սիվոլորօվի և կօգակի վրա ես կրկին նատեցի ձիու վրա, որ այլ ևս չիջնեմ նրանից մինչեւ նոյն խակ թեալա-Սիվոնը։

Գիշերուայ ժամի մէկի կէսին մենք լսեցինք շների հաջոց։
Դրանք քրդերի պահապան շներն էին, որոնք այնքան չար են,
որ եթէ քրդերը օգնութեան չի հասնէին, նրանք մեզ ձիանե-
րից ցած կը քարշէին։

Եփոթվելով հիւրերի անակնկալ գալուստով, որոնց մէջ էր
նոյն իսկ «նաշանիկը», թափառականները տուին մեզ մի լու-
վան, և մենք աեղաւորվեցինք նրա մէջ գիշերելու համար։

Լեռնային ցուրալ թափանցում էր մինչեւ ոսկորները, յայտ-
նելով դրանով, թէ մենք գտնվում ենք արդէն բաւական մեծ
բարձրութեան վրա։ Շուտափոյթ կերպով պատրաստված թէյը
թէպէտ և տաքացրուց մեզ և պնտացրեց մեր ուժերը, այնու-
ամենայնիւ իմ քունս, այդ սոսկալի գիշերուայ խորին յուզմունք-
ների պատճառով, ոչ թէ քուն էր, այլ մի տենդային զառան-
ցումն. ինձ երեսում էին խորխորաաները և իմ ականջներում
չէր լուսմ լեռնային վասակների աղմուկը. երեսում էր, որ ես այլ-
ևս չեմ կարող ցած իջնել այդ սարսափելի սարից։

XII

ՍԱՐԻ ՎՐԱ ԲԱՐՁՐԱՆԱԼՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ։

Որքան էլ խորտակված էին իմ ոյժերը սոսկալի գիշերի
պատահմունքներով, այնուամենայնիւ 0դոստոսի 9-ի առաւօտը
ես զուարթագին էի և միամիտ։ Արեգակի լոյսով, որքան ահարկու
էր սարսափելի սալի տեսքը, որքան սարսափելի էին նրա խոր-
խորաաները և ժայռերը ձիւնային պատաններով, որոնք փայ-
լում էին ահագին ագամանդի պէս, որքան անհասանելի կեր-
պով կախուած էր աչքերի առջեւ հսկայի սառուցապատ գագա-
թը—այնուամենայնիւ ես զգում էի, որ կարող կլինեմ մրցել ար-
դելանքների հետ, որքան էլ նրանք հզօր և սարսափելի լինէին, եթէ
միայն նրանց տեսնեմ ցերեկուայ լոյսով։ Դա զիշերուայ պէս չէր։

Պատկերը, որ ներկայացաւ իմ աչքերիս, երբ առաւօտը
ես գուրս ելայ վրանից, ապշեցնող վսեմ էր։ Հենց միայն նրա
խաթեր կարելի էր հաշտվիլ սոսկալի գիշերի ամեն արհաւիրք-
ների հետ։

Յատերին զարմացնում էր իմ վճռականութիւնը—Արարատ
բարձրանալը։ Մի քանիները չէին կարողանում հասկանալ այն
հրապուրանքը, որ հարկադրում էր ինձ վստահանալ այդ վտան-
գաւոր փորձի մասին։ Ի՞նչ ցանկութիւն է—ասում են—մադրւ-
ցել այն բարձրութիւնը, որի վրա կարելի էր կոսրել շլիքը։
Այս, դա մի անհասկանալի ցանկութիւն է։

Բայց ով որ եղել է բարձր սարերի վրա, ով բարձրացել
է հենց գոնէ Զագիրդաղի, Բէշտառի, Մաշուկի կամ Մծնրլանի
գլուխը—նա կը հասկանայ ինձ։ Զգալ ամեն մի նոր ջանքի ժա-
մանակ, որ դու բարձրանում ես աւելի և աւելի վերեւ, յաղթել
այն արգելանքներին և վտանգներին, որոնց աեմնելով երբեմն
շունչը կորվում է, յետնայել յետոյ անց կացած տարածութեան
վրա, աեսնել թէ ինչպէտ հեռու լայնանում է հորիզոնը և հո-
գով տիրապետել այն ամենի վրան, ինչ խոր և հեռու ընկած
է քո տուաջիկ, —քո մարդկային հոգու ամենամեծ, հզօր զմայլ-
մունքներից մէկն է։ Այդ իսկ հզօր և մաքուր զմայլմունքն
էի ես որոնում, ենթարկելով իւր կեանքը վտանգի։ Այս
մեծ զգացմունքների համար ես գնացի եղիպատա, գէպի բուր-
գերը, երտսաղէմ, գէպի Մեռեալ ծովը։ Այդ հզօր զգացմունք-
ներն էի ես որոնում և Արարատի վրա, ինչպէս մի քանինե-
րը որոնում են նրանց Մծնուեկազուում, առւելուկա խողի մէջ,
և քիչ չեն վշանում, ինչպէս հաղիւ ըլ վշացի ես։

Թիֆլիսում եղած ժամանակ ես այցելութեան գնացի, ինչ-
պէս կարծեմ յիշել եմ առաջ, կովկասեան երկրի յայտնի գի-
տուն և անխոնջ գործիչ ի. ի. Ստեբնիցկու մօտ, որ իմ ճա-
նապարհորդութեան մասին տուած շատ օգտակար խորհուրդ-
ների հետ, տուել էր ինձ Արարատը բարձրանալիս ժամանակ
առաջնորդելու համար այդ սարի գեղեցիկ տեղագրական քար-

տէղը (մի թթաշափում մի վերսա) և մի ուրիշը փոքրադիր (թթաշափում 5 վերսա - Երևանեան նահանգի, Թիւրքիայի և Պարսկաստանի Մակուայ խանութեան մասերը, Արարատի հետ), նոյնպէս և Մեծ Սրարատի վլմագրած տեսքը, որ գծել էր 1850 թւականին Բայկօվ նկարիչը և որի վրա ցոյց էր տուած ալ. Խոլդկօվ նոյն թւի յուլիսի 31-ի և օգոստոսի 1-12 դրած օդերեոյթական բանակի տեղերը:

Օգոստոսի 9-ի առաւատեան, նատած Թաղա-Սեվօն քոչառեղ ոյ առաջին՝ աշազին սև քարերի վըա, մենք զբազվեցանք այս քարտէզները լաւ գննելով, որպէս զի լաւ յայտնենք սարի այն անդը, որին մենք հասել էինք սոսկալի դիշերը և այն ապագայ ճանապարհը, որով մենք պիտի վներե բարձրանայինք: Առաւատը գեղեցիկ էր: Արարատի տեսքը, որ համարեա ուղաձիք կերպով բարձրանում էր գէտի երկնք ուղիղ մեր աչքերի առաջին, ներկայացնում էր մի առելի վեհմ և աւելի ահարկու պատկեր, քան որքան ես կարող էի սպասել. այն, ինչ որ ես սեսիր, չէր գծագրվում մինչև անգամ իմ երևակայութեան մէջ:

Նոյն վայրկենում, երբ մենք դիտում էինք քարտէզներն ու սարը և Աստուածանցի հսկոյի ստորոտից ցած ամրող տեսանելի և աշքին հաղիւ մատչելի տարտութիւնը, յանկարծ մի անսովոր բան տեղի ունեցաւ սարի բարձրութեան վըա. Համարեա նրա գագաթից մօտ, լսվեցաւ մի սարսափելի թնդիւն և մենք տեսանք, ինչպէս մի սպիտակ բանի - իհարկէ ձիմի, սասուցի և ժայռերի բեկորների մասսան սրնթաց կերպով ցած թափեցաւ բարձրութիւնից և նոյն վայրկենում այդ՝ սարից պոկված մասսայից ջոկվեցաւ մի սպիտակ սպատիկ ամպ, որ և յայ ցրվեցաւ երկնային կապուտակութեան մէջ: Դա ձիւնակոյտի թափվելն էր, իսկ սպիտակ թուղարքը ոյց մէկն էր, որոնց մենք տեսել էինք սարի դլինին դրանից առաջ, իգդիրից Ալի-կիլիլ գնալիս ժամանակ:

Ի՞նչ կլնի, եթէ մենք էլ ընկնենք այդ կոյտի տակ, ակամայ մասածում էի ես: Եւ հէնց մենակ ես չէի մտածում այդ:

«Ո.յի՛ պատկերի զննումն - ասում է ալ. Կոկչակի իր յօդուածի մէջ, չէր կարող չը գրգուել մեր մէջ մի տեսակ սարսափ»: Զննելով յետոյ զիտակով սարի այդ տեղը, ուսկից պոկվել էին սառուցների և քարերի մասսաները, մենք չը կարողացինք չը նկատել որ կոյտը ահազին էր: Եթէ մենք վերևում դադնչենք, քոչառեղով աջ կողմին, նա կարող էր հասնել մինչև մեղ մօտ և թաղել մեղ ոյնտեղ քարտէզների և զիտակի հետ, ինչպէս մի ժամանակ թաղվել էին Ակուախն և նրա բնակիչները: «Չը զիսէ մահկանացուն, թէ որ աել է նրա գերեզմանը»...

Թեալա-Սեվօնից դուրս գնալով, մենք ուղեցինք մեր ճանապարհը քիչ դէպի ձախ, Արարատի խորխորաներով քանդակած և սե ժայռերով ցաննոծ հիւսիս-արևելքան կողքով, այն մոքով, որ անցնելով նրա անմատչելի զառի կայլերի մօտից՝ հասնենք պարսկական սահմանին, մինչև Մեծ Արարատի Փաքրին հետ խառնված տեղը, ուր ճանապարհը աւելի հարթաձև է, իսկ ուստաց կողմից վերե բարձրանալը բոլորովին անկարելի էր. գամի և նոյնը կլինէր, ինչպէս Ուարօպավունան բերդի տուր ծայրը բարձրանալը: Գնալով այդ ճանապարհով, մենք պարտաւոր էինք անցնալ մեզնից ձախ կողմում ընկած ս. Յակոբի վանքի երկրաշարժութեան ժամանակ քարերի տակ թաղուած աւերակների և նոյն անոնով ազգիւրի մօտից: Մենք վճռեցինք բարձրանալ մինչև այդ տեղը:

Ա. Յակոբ, Նիլիկիվայի եպիսկոպոս և հայկական գրող - Գրիգոր Լուսաւորչի բարեկամ - հին աւանդութեան խօսքերով, բարձրացել է Արարատը՝ նոյի տապանի մնացորդները տեսնելու համար: Իսկ վանքը, Մուրավիելի ասելուն նայած հիմնել է ՎԱ դարում Անաստաս կաթողիկոսը:

«Ա. Յակոբի վանքը - ասում է ալ. Պոլեակով իր «Օրագրի» մէջ, — զա մի սահման է, որի ետևում բարձրութեան վրա ընկած է այն երեսոյթների մասսայի գուշակութիւնը, որոնք կատարվել են մի ժամանակ և այժմ կատարվում են ներքեում: Արաքսի հովիտի մօտ: Արալինից գէպի բարձր տանող Ճանա-

պարհը, կարելի է, ճշմարիա գժուար է, բայց միայն այն պատճառով, որ հարկաւոր է բարձրանալ այնպիսի բարձրութիւնների վրա, որոնք շատ ուղղաձիր կերպով են դէպի ցած գնում: Բայց և այնպէս ամեն մի դէպի առաջ գործած շարժողութեան հետ, ամեն մի առաջ առնող քայլի գժուարութեան հետ, աչքի համար բացվում է աւելի և աւելի լայն պօնօրամա, զննողութեան համար երեան են գալիս մէկը միւսից հետաքրքիր փաստեր: Վերջապէս այսուղ գործը վերաբերվում է Արարատին, որ հեռուից թւում է այնքան անհասանելի, անմատչելի զննողութեան համար և երեակայութիւնը Ճնշող հըսկայի պէս: Բայց նրա բարձրութիւնների վրա արած ամեն մի քայլը բաց է անում մի ամբողջ շարք էլ աւելի շատ ուղղութեան հետեւոյթների, որոնք անկիրթ մարդու մէջ նախապաշարված երկիւղ են յարուցանում և որոնք աւելի բարձր են առնում զննողին:

Ես նոյնն էի զգում, երբ իմ խելօք ձիու ամեն մի քայլի հետ աւելի և աւելի վերև էի բարձրանում: Թւում էր, թէ այդ խորխորաանների և ժայռերի ու բաշերի և սուր ծայրերի վրան բուրում էր մի գաղտնի, ոչ երկրային բան: Ես գնում էի ուրախ, զուարթ կերպով, մի քայլ չը հեռանալով Արվօլորօվից: Այժմ այլ ևս մուսյլ զիշեր չէր իր աներեւոյթ արհաւերքներով, այլ հրաշալի հարաւային ցերեկ էր, որի ջերմութիւնը մեզմայնում էր այն բարձրութիւնը, որին մենք հասել էինք և որն անդօր է շնում արևին յախենական ձիւները հայեցնելու: Բայց յաւ իտենական ձիւնը դեռ բաւական հեռի էր: Այստեղ գեռ պատահում էր էիստեմ էին խոտեր և մացառներ. մի քարտափի վրա ես պոկեցի մի սփառնած, հիւանդոտի պէս դաշտային սիսեռի ծաղիկը. կարծես նա զգում էր, որ շատ բարձր է գնացել, շատ է հեռացել իր մայրենի դաշտերից, ինչպէս այդ զգում էի և ես, երբ ինձ վրա տիրում էր մտածողութիւնը հեռու հիւսիսի և նրա հարթ դաշտերի մասին:

Ժամի 1-ին մենք ս. Յակոբի աղքիւրի մօտն էինք: Դա մի ողորմելի աղքիւր է, որ ապացուցանում է, թէ ձիւնապատ Արա-

պյլ երկայնածե են, դէպի մի կողմը զատիվայր, իսկ երկու կից կողմերում ունեն բոլորակ ձեւ. չորրորդ կողմը բաց է: Վասնի ներսի կողմը բաժանված է երեք և մինչեւ անգամ չորս մասերի: Այդ մասերը միմեանցից բաժանող անկիւնի տեղ ծառայում են ոչ բարձր՝ գործած շիրմաներ, որոնց տեղ երբեմն պատահում են քրդական գորգեր, որոնք այնպէս են յարմարեցրած, որ նրանց կարմը է մի տեղից միւս տեղ քարշել: Գըլխաւոր նեցու կը, որ պահում է վրանի բրթեայ կտուրը և նրա կապոցները, է մի փայտեայ սիւն, որի վրա կախ է տուած քրդերի ամբողջ զէնքերը—Նրանց ընտանեկան թանկազին բաները: Յետին կամ ներքին բաժինը նշանակվում է կանանց և երեխանների համար, նոյնպէս և տնային մանր զարդերի համար: Առաջին բաժինը բոլորովին բաց է, և նրա մէջ քուրդը ընդունում և հիւրասիրաւմ է իր հարեան թափառականներին և իրա մօտ եկած հիւրին: Օջախը ծխրտում է ձախ կողմի բաց բաժնում, որ տանում է դէպի կանանց բաժինը, որտեղից նայում են մեղ վրա վայրենուհիներն ու վայրենիները իրանց զարմացած և զարմանալի գեղեցիկ աչքերով: Այսպիսի գեղեցիկ կանանց ես, կարծեմ, ոչ մի տեղ չեմ տեսել: Բոլորովին անհասկանալի է բնութեան այն գալանի ոյժը, որ արտադրում է այս տեսակ կախարդիչ գեղեցկութիւն այս տեսակ շըջանում: Կարելի է բնութեան այդ ստեղծագործութեան գալանիկը ծածկված է այդ պարզ, մաքուր լինային օղի մէջ, երկնգի կապուտակութեան մէջ, այդ յաւ իտենական ձիւների մէջ, որոնք մինչեւ անգամ հովհտների սպանիչ ծերմութեան ժամանակ թարմացնում են և մաքրում են այն մթնոլորդը, որի մէջ ստեղծվում է և հասունանում է այդ գեղեցկութիւնը:

Իմ երեակայած՝ Փամի հիւրասէր սերունդները տարին մեզ իրանց վրանների լաւերից մէկը, առաջին շատ լայնարձակ բաժինը: Գեսնի վրա փռած էր գորդ, իսկ գորդի վրա դրած էին չորս երկարաձեւ բարձեր, ամեն մէկին մի մի բարձ, որոնց վրա մէնք նստեցինք, քաղաքավարութեամբ հանելով մեր կո-

շեկները և ծալելով սանելներս տակելինիս:

Նոյն ժամին մեր վրանի մօտ եկան քոչառեղոյ բոլոր ներկայացուցիչները, և պ. պ. Կոկչանին ու Զելինսկու և եկածների մէջ ծաղեց տաք խօսակցութիւն մեր ճանապարհորդութեան նպատակի մասին, սահմանի միւս կողմից պարսկական քբդերի յարձակման մասին, որոնց հետ մեր հիւրառէր տանտերերը իհարկէ զազանի կերպով կարծեօք գտնվում էին մեծ բարեկամուկան յարաբերութիւնների մէջ: Բոյց շերմաների եակում միայն մի դոյգ աչքերը չեն այրվում: — զա գեղեցիկ սեռն էր հետաքրքրվումնոր եկորներով. փոքրիկ, սիրունառես վայրենիները իրանց մայրելից, հօրաքրոջներից, տատերից և հասկաւոր քրոջներից աւելի համարձակ էին և մօտենում էին մեզ բաւական մօտիկ, բոյց ամեն անգամ մեծ մարդիլը դուրս էին անում նրանց շան լակունների պէս: Մի որ և է տառը կոսէկանոցի փոյլով հրապուրվելով, փոքրիկ վայրենիները բոլորովին մօտիկ էին զայիս, և ստանալով դրամը, արտգութեամբ վազում էին զէսի իրանց մայրերը. իսկ այս վերջնեները պատում էին մեզ իրանց չքնազ աչքերի աւելի քաղցրը կայծակով: Ահազին մետաղական ափսէն խորոված ունարի մօի և հացի անձեռոցիների հետ երեան էր գայիս, գետի վրան էր դրվում մի տեսակ լսոնզա և մենք ճաշում էինք, խմելով ոչխարի մօի վրա սառը «այլան» կամ «ալիման», որ ոշխալի մածուն է, ջրով շաղախած:

Այսուղ առաջարկեցին մեզ իրանց ծառայութիւնները երկու առաջնորդներ ես. քրգեր Ամահմուդ Ամօ օղլի և Բարտ Ահմէդ օղլի, որոնք ցանկացան մեզ հետ սարը ենել, և նրանցից տառջնորդ հաղորդեց մեզ, որ նա վաղ ժամանակներում առաջնորդել է զէտի զագաթը մի «ինզիլիք»:

Մեր կոպակները սարքեցին մեր զիշերելու համար մի առանձին վրան, որ բերել էին Խզդիրից և մենք երեքեանս—

Կոկչանի, Զելինսկի և ես՝ կաթաթվելով վերաբեռների և վերմակների մէջ, շատ լաւ անց կացրիք նրա մէջ զիշերը, թէպէտ և սուր քամին խմացնել էր տալիս որ մենք գտնվում ենք արդէն ճանապարհին զէտի յահանական ձիւների զէծը:

Պ. Սիլորօվ ցանկացաւ մնալ զիշերը քրդական վրանում:

XIII

ԵՐՐՈՐԴ ՕՐԸ: ՔՐԴԵՐԻ ՎՐԱՆՈՒՄ:



Հետեւեալ, ինձ համար սարսափելի օրուայ առաւօտը նոյնպէս գեղեցիկ էր, ինչպէս և նախնթացը:

Դա օրուառու 10-ն էր, մեր թշուառ բարձրանալու երրորդ օրը:

Որովհեամե այդտեղից յետոյ վերջանում էր բուօտկանութեան զիծը, իսկ բարձրանալ մեզ հարկաւոր էր ձիաների վրա, ոյդ մասին նրանց կերակրելու համար քբդերը աւելացրին մեր ձիաւոր խումբը երկու լեռնային եղներով ես, որոնք բեռնաւորված էին չոր խոսում:

Հազիւ էր արեգակը մի քիչ առաքացրել առաւօտեան ցուրտ օդը, երբ մենք նորից ճանապարհ ընկանք: Այդ ճանապարհը շարունակում էր պտոյտ գալ Արարատի արեւելիան և հարաւարելեան կողքերով դէտի Արարատ-Բուլազը և Փոքր Արարատը. իսկ այդտեղից, պարսկական կողմից, և պէտք էր սկսվէր վերջնական բարձրանալը դէտի կախարդուած սարի զըլուխը:

Այդ գնացքն էլ այն դժբախտութիւնների սկիզբն էր, որոնք ինձ քիչ էր մնացել գերեզման տանէին:

Առաւօտեանից ես արդէն զգում էի, որ ոյժերս թողնում

ին ինձ: Մասամբ դա այն փորձանքների հետևանքն էր, որոնք պառահեցին ինձ հետ այն ստակալի գիշերը, երբ ես քիչ էր մնացել փշանայի խորխորատի մէջ. այդ գիշերը խորտակել էր իմ ոյժերը, որոնք արդէն մի քիչ կորուսված էին Պետերբուրգից մինչև Թիֆլիս երկար և յօգնեցուցիչ ճանապարհորդութեան ժամանակ և մանաւանդ այդ տեղից մինչև Երևան՝ հոգեսպան փոստային սայլակի մէջ և Կարսեազի անապատի ու Արտքսի հովիտի սպանիչ արեկի տակ գնալիս ժամանակ: Իսկ գլխաւորապէս դա նրանից էր, որ ես արդէն կրում էի իմ կրծքի մէջ այն վտանգաւոր հիւանդութեան սկիզբը, որ այն պիսի հեշտութեամբ պարզեւում է արեկլը ամեն մի թարմ մարդուն. ես արդէն զգում էի նշանները կովկասեան կամ ասիական ջերմուտենդի, որ ամենասատիկներից և ամենալատագուրներից մէկն է. սա փոխվում է յետոյ ուրիշ հիւանդութեան, որ աւելի սուր և տանջող է լինում, որ և քիչ էր մնացել ինձ գերեզման տանէր և որի շնորհիւ ես այժմս հարկադրված եմ տիրել օտար երկնքի տակ, հեռու Ռուսաստանից:

Մինչև Սարդար-Բուլաղ գնալը ես արդէն հիւանդ էի, զօրով նստելով թամբի վրա: Ինձ լափում էր ներքին կրակը: Զը նայելով այն բարձրութեան, որին մենք հասել էինք և ուր արեկի ջերմութիւնը, ողի բաւական նօսը լինելու պատճառով չէր կարող զգալի լինել, ես կրում էի այդ ջերմութիւնը իմ մէջ. Տարաւն ինձ այրում էր. ինձ այնպէս թւում, թէ իմ մէջ, արիւնի փոխարէն, եփվում է տաք սնդիկ (ՐԵՒՏԵ), թէ իմ հրաշեկ ձեռքերից այրվում է իմ ձիու բաշը, որից ես երեմն բըռնում էի, որպէս զե պահեմ ինձ թամբի վրան, ուղղաձիգ վտանգուր զարիվայրելով բարձրանալիս ժամանակը: Մի ժամանակ ես լսել էի, որ զինտորները զօրքերի ուղեգնացութեան ժամանակ, երբ նրանց տանջում է անոաննելի ծարաւը, ջուր չեղած տեղերում, դնում են բերաններում հրացանի գնտակ և դրանով հարզելում,

րասուր, որ կարող էր իր ահազին սառուցներից դուրս թողել ամբողջ գետեր, շատ ժատ է այդ աեղում, և առհասարակ ամեն կողմերում: Չը ամբողջ մասսան, որ գոյանում է ձիւնային գծի վրա մշտապէս հալվող տառուցներից, կանում է ինքն Արարատը: Մինչեւ անգամ այն արագսավզ գետակները, որոնց աղմուկը վախեցնում էր մեր երեւակայութիւնը գիշերային ճանապարհորդութեան ժամանակ, մինչեւ անգամ այն ամբողջ գետերը, որոնք վայր էին թափված ժայռերից և գոռում էին խոր ձորերում—այս ամենը անհետանում է լեռնային ելեւջներում և անդունիներում, չը հասնելով հակայի ստորոտին: Հաղեւ չէ գա աշխարհի մէջ միակ սարը, որ ինքն է կանում ջրի այն բոլոր քանակութիւնը, որ դուրս են բերում նրա ամբողջ ձիւնային մասի սառուցները: Հենց դրանից է այդքան ողղումնի և այն աղքատիկ աղքերը, որ անուանվում է ս. Յակոբի աղքեր: Դա երկու փոքրիկ, քարերի մէջ փորսծ ջրաւազան է, մեծութեամբ մի քառակուսի արշինից քիչ, որոնց մէջ կաթ կաթ ծորում է ժայռից պարզ, ցուրտ ջուրը, որ ունի բարեխառնութիւն Ռէօմիւրի 5°-ից մօտ: Դէպի այդ ջրաւազանները տանում է մի քառակուսի, քարաշեն պատնէշ, որի մէջ թափված են զանազան գունավորութեան կտորներ, պստիկ մոմեղէն ձրագների կիսեր, կոպիտ փայտեայ խաղալու տիկիններ և փոքրիկ ձողեր, մի արշին մեծութեամբ, փաթաթված փալաններով՝ չալմայի նման, այլ և ամենափոքրիկ, նոյնպէս կոպիտ կերպով տաշած մանկական օրոլոցներ, որոնց վրա ընկած են նոյն տեսակ ամենափոքրիկ երեխայական տիկինների: Փրդուհիների և հայուհիների այդ մասպաշտ նուերների նշաններից ամենաշատը երեւում է մի քիչ բարձր, ուր գտնվում է, ինչպէս ենթագրում են, մարգարէի (ս. Յակոբի) գերեզմանը. միանգամից կարելի է կարծել, թէ դրանք անպէտք վալաներ և մանկական կոպիտ խաղալիքներ են: Բայց ընդհակառակն. «ամեն մի վալաս—ասում է ապ. Պոլակով, ծառայում է ինչպէս հանգանակ (ԸՆՄԲՈԼԻ) այն ցանկութիւնների, որոնց կատարելով քրիստոհին կամ հայուհին սպա-

սում էր մարդարէից»։ Երեխանների ձեւերը այն ամռւլ վայրենի կանանց ջերմեռանգ նուերն է, որոնք խնդրում էին մարդարէի միջնորդութիւնը Ալլահի առաջ նրանց խսկական որդիներ պարգևելու համար տիկինների փոխարէն։ Իսկ քրդերն ու թուրքերը շնուրմ են այստեղ երեխայական խաղալիքներ՝ բակեր ոչխարների, անտառների և ուղտերի համար— ում ինչ հարկաւոր է։ այսպիսի խաղալիքների փոխարէն մարդարէն պիտի ինսդրէ Ալլահից ոչխարների, այծերի և ուղտերի ամբողջ հօտեր։

Այդ աղքարի ջուրը, որից մի ժամանակ խմել է ո. Յակոբ, սուրբ, հրաշագործ է համարվում և ոչ միայն քրդերն ու թուրքերն են հաւատում նրա հրաշագործ զօրութեանը, բայց և հայերը, և սրանք կարելի է քրդերից էլ շատ լինեն հաւատալիս։ Այս ջրի համար գալիս են հեռուց ուխտաւորներ, ինչպէս գնում են Յորդանանի ջրի համար։ Իսկ երբ գաշտերում երեւում է մորեխ, այն ժամանակ այդ ջուրը վրկում է և մորեխից, բաւական է միայն բերել այդ սրբութեան մի քանի կաթիլները այն արտերը, որոնց լափում է թռուող թշնամին և ահա յայտնի չէ որտեղից թռոչում զալիս են սարեակների անհամար երամներ և իրանց կողմից լափում են մորեխը։ Այդ սարեակներին, որոնք գալիս են որպէս թէ հրաշագործ ջրի զօրութեամբ Արարատից, ինչպէս ես ինքս համոզվեցայ, հաւատում են ոչ միայն քրդերն ու հայերը, այլ մինչև անգամ հայերելի վարչական անձնիք։

Այդ ջրից հարկաւոր եղաւ խմել և ինձ, բայց միայն նա չաղատեց ինձ ամենից, ինչ սպասում էր առջեւում։

Ա. Յակոբ աղքարից մենք շարունակեցինք անցնել Արարատի հիւսիւարեմուան կողքերով գէպի Փոքր Արարատը։ Ժամը հինգին, կէսօրից յետոյ, մենք կանգնեցինք հանդստանալու համար այն իսկ տեղում, որ միաւորվում են Արարատի վրա երեք սահմաններ, ուստական, պարսկական և թիւրքական։ Դա քըրզգտկան քոչատեղի Գիւմիկն է։ Նա բաղկացած է քուրդ ջալալինցիների տասը «ծխից» կամ «չաղլներից»։ Քրդերը հետեւում են սուննու աղանդին։ այդ գիւղը ծառայում է ինչպէս մի

պատսնագարան պարսկական աւագուկ քրդերի լուրերի մեր կողմն անցնելու դէմ։

Մեր յանկարծակի երեալը ջալալինցիների մէջ սարսափելի խառնակութիւն գցեց։ Հեռուից լավում էին վայրենի և կարծես սպառնացող ձայններ։ Քրդերն ու քրդուհիները գուրս էին վազում վրաններից և յուստատութեամբ շարժով իրանց ձեռքերը, անհասկանալի բաներ էին աղաղակում։ Նանց ետեից չները վեր կացրին սարսափելի ոռնոց։ Սպասելով մինչև մեր առաջնորդները կը խօսեն վայրենիների հետ, մենք պարտաւոր էինք կանգնել։ Այսուղ ամեն ինչը լայցնում էր ինձ խորին զարմացքով։ Ինչպէս էին կարողանում մարդկի ապլելայսպիսի առանձնութեան մէջ, ամբողջ աշխարհից գուրս, այն՝ արիւնը սառցող բարձրութեան վրա, այնպիսի անբարեհած պայմանների մէջ։

Վերջապէս խօսակցութիւնները վերջացան և մենք հանդիսով մտանիք քոչատեղոյ մէջ տեղը կատաղի շնահաջոցի մէջ։ Մեզ շրջապատած վայրենիները տկամայ հիացնում էին ամեն մէկին իրանց պատերազմուկան տեսքով և մի և նոյն ժամանակ իրանց մի տեսակ մանկական անկեղծութեամբ։

—Ա. սրանց հետ հանաք անել չի կարելի, բացարեց ինձ Արվորութիւնը, ցոյց առաջ վայրենիների վրա։

—Ի՞նչո՞ւ։

—Քաջ, կտապի ժողովուրդ է։ Մեզ միայն մի անդամ չի հարկաւորվել պատահել նրանց հետ։ ոչ մի ժամանակ չին շարժվում։

—Որտեղ էք դուք պատահել նրանց հետ։

—Վերջին պատերազմի ժամանակ։ Վինում էր այնպիսի գէպք, երբ հէնց որ մենք երեւում էինք բաց տեղում, թիւրքերը իսկոյն ցրվում էին։ Իսկ այս գեերը, լինում էր ժամանակ, չէին թոյլ տալիս խելքներս մի տեղ հաւաքենք։ մերոնք սրանց առաջնեն չեն զիմանում։

Աւելի մեծ պարմացքով ես շուտած էի, տեսնելով ոյն

ամենը, ինչ կար իմ առաջիս, երբ ես մօտիկուց նայում էի այդ վայրենիների կեանքի պարագաների վրա. ինձ թւում էր, թէ ես տեսնում եմ իմ առաջիս երկրագնոտի ցջրհեղեղեան բնակիչներին, հարազատ սերունդներին այն համարեա առասպելական մարդկանց, որոնք ազատվել են տապանում համաշխարհական ջրհեղեղից: Համարեա նոյն տապանորութիւնն են գործել նրանք 1835 թւին և ինձանից առաջ Արարատը բարձրացած Սպասակի—Ավտօնօմօվի վրա: Տեսնելով նրանց վրանները, որոնք կատարեալ սե էին, գործած սե բրթից բարակ սպիտակ զօրիերով և որոնք ձեռվ բոլորովին նման չէին միւս թափառականների վրաններին, — Սպասակի Ավտօնօմօվ իսկոյն մոտաբերել է նոյն տեսակ սե վրաններ, որոնց մասին յիշում է Սոլոմոնը «Երգոց Երգի» մէջ: Այդտեղ նրա սիրուհին խօսելով իր հարաւոյին, պալեստինական գեղեցկութեան մասին, ասում է այսպէս. «Ես սե եմ, ինչպէս Կեթարի վրանները»: Ինձ այնպէս էր թւում, թէ այդպէս է ասում և քրուհին. «Ես սե եմ, ինչպէս Գիւմիկի վրանները»—այսինքն նոյն իւկ այն քոչատեղոյ վրանները, որոնց մէջ մենք այժմ իջել էինք հանգըստանալու համար: Պարզ է, որ այդ վրանները, գոնէ նրանց գոյնը, հաղարաւոր տարիներ են անցկացրել: Այդպիսի վրանում էր ապրում Սոլոմոնի սիրուհին, երբ իր ծնողի և հօտերի հետ գտնվում էր իր քոչատեղում՝ լոյնոնեան սարի տակ կամ Յորդանանի հովիտում: Այդպիսի վրաններում, ի հարկէ, ապրում էր ինքն նախահայր Նոյը, իսկ յետոյ և նրա որդիիքը, յարգող Յարէթը և նիշիկատ Քամը: Եւ ինչն էր արգելում Քամին շինել իր վրանները Արարատի կողքերի մէկի վրա, հէնց գոնէ Գիւմիկում կամ Թեալա-Աւոնում և լինել նախահայր այս իւկ սերտակ քամացիներին, որոնք այժմ գայլի կորիւնների պէս նայում էին մեր աչքերին, պսպղելով իրանց սպիտակ, Արարատի սառւցների նման ատամներով և կախարդիչ սերտակ աչքերով: Դա մի կատարեալ ցջրհեղեղեան ցեղ է: Քրոգական վրաններն ունին ոչ կոլոր և ոչ ձուի նման ձև,

կադրում են դուրս գալ թուքը, որ և թրջում է նրանց չորացած կոկորդը: Ես փորձեցի բերանում դնել ժամացոյցս, բայց նա ինձ տաքացած երեաց և իմ լեզուն առաջուայ նման մնաց չորացած, ինչպէս զամշա *): Արարատի յաւիտենական ձիւները, որոնք կծագում էին իրանց կուսական սպիտակութեամբ և որոնք կարող էին հագեցնել իմ ծարաւը, հանգցնել իմ ներքին կրակը, բայց որոնք դեռ ինձ համար անհամանելի էին—ինձ բոլորովին կատաղեցնում էին: Կարծում էի, թէ այն պատճառավ եմ ևս եկել մի քանի հազար վերատ, այն պատճառավ եմ ևս բարձրանում այս անիծեալ սարի վրան, որ միայն հագեցնեմ իմ ծարաւը յաւիտենական ձիւնով: Խելագարի նման ես կը սկսէի լսակել նրան: Անիծեալ սառուցներ: Ինչո՞ւ չեն նրանք հալվում: Ինչո՞ւ չեն նրանց տակից թափվում լեռնային վտակներ, որ ինձ ջուր խացնեն: Ամբողջ կուրծքով ես ներս եմ հաւաքում օդը, բայց էլի շնչառութեան համար մի բան պակաս է. օդն աւելի չորացնում է իմ կոկորդը, ներսը, ուղեղը...

Բայց ահա մօտ է Սարգար-Բուլաղը—այնտեղ հրաշալի ջրի մի աղբիւր կայ: Ես տեսնում եմ, ինչպէս ուղեցոյց քուրդը արդէն կուրծքով ընկել է քարերի վրա և ագահութեամբ խմում է փրկարար աղբիւրից: Ես ասպանդակում եմ ձիուս և վագում եմ նոյն տեղը, ուր քուրդը ջուր է խմում:

Ահա ես էլ լնկայ սառը աղբիւր վրա չորացած բերանով, մի որ և է կենդանու նման: Ի՞նչ երջանկութիւն է խմելը: Եւ ես խմում եմ, խմում առանց վերջացնելու, մոռանալով ամեն մի զգուշութիւն, մոռանալով ինքս ինձ:

Բայց դրանով էլ չկարողացի դադարեցնել ծարաւը: Ես միայն այն ժամանակ ուշքի եկայ, երբ զօրով բերանս հեռացրի ջրից. ես հասկացայ, որ դրանով վչացնում եմ ինձ...

Բայց արդէն ուշ էր. ես ոչ թէ ջուր էի կուլ տալիս, այլ մահարեր հիւանդութիւն:

Սարգար-Բուլաղ նշանակում է սարգարի կամ փոխար-

*.) Այծեալ պարզապահ չոր իտշի: Ծ. թ.

քայի աղբիւր: Երբ Երևանեան նահանգը դանվում էր պարսիկ-ների իշխանութեան տակ, այն ժամանակ նրան կառավարում էին փոխարքուներ, շահեր կամ սարգարներ: Սարգար-Բուլաղը, որ գանվում է մի այնպիսի բաւականաչափ բարձրութեան վրա, որ մեղմացնում է արեի կիզող ճառագայթների գործողութիւնը, բաղկացնում էր շահի տեղակաների ամսուուայ քուտեղին: Եւ այժմեան ժամանակն էլ փոխարքայի աղբիւրը գրաւում է դէպի իրան թափառական քրդերին, որոնք ամսուր գցում են նրա մօտ իրանց շաղիները, քանի որ նրանց հօտերը կերակուր են գանում «բուլաղի» մօտերքում: Վերջացնելով այսուղի կերակուրը, քրդերը անցնում են ուրիշ տեղեր, մինչ որ ձմեռային ձիւներն ու բուքերը շեն վռնաւում նրանց վերջնականապէս Արարատից ներքե:

Երբ մենք Սարգար—բուլաղումն էինք, քրդեր այնտեղ չը կային, միայն տեսանք նրանց շարժական բնակարանների հետքերը. քարեայ պարխապներ, որոնք նշանակում էին այն տեղերը, ուր կանգնած են եղել նրանց սե վրանները, օջախների հետքերը, ուկորներ, որնրանք և նրանց շները մաքրել և կըրծել էին, հաղուստի անպէտք ցնցոտիներ և ամեն տեսակ մանր կտորներ:

Սարգար-Բուլաղից բարձրանալու տեղը շատ զատիվեր է և սա վերջնականապէս խորդակեց իմ ոյժերը: Մի քարից միւսը մազլցելով, այն տեղերում, ուր ձիաների վրա բարձրանալը անկարել էր, և յենլով պ. Յօն-Կօշկուլի ցուսդի վրան, ես ըզգում էի, որ ոտներս ուրանում են ինձ, իսկ կրծքիս մէջ նշառ ուութիւնն աւելի և աւելի կարձանում է: Դժոխային ծարսուր շարունակում էր կիզել իմ ներսս, կարծես փոխարքայի աղբրից ես բոլորովին չէի խմել:

Վերջապէս մենք հասանք բարձրութեան այն գագաթնաւետին, ուր կարող էր ապրել մարդք: Դա պարսկական քրդերի «զզլըաշ—ուշաղի» ցեղի քուտեղին էր, որ շնած էր ահազին ժայռերի տակ, ծովի մակերեւուցիւր 10,000 տասնաչափ:

բարձրութեան վրա:

Ես այլ ևս չէի կարողանում մնալ ոսների վրա, երբ ներս էի մանում քրդերի մեզ յատկացրած վրանը, և խկապէս վայր ընկայ գորդի վրա, որտեղ արգէն հանգստանում էին իմ ընկերները:

— Մեղ համար պատրաստում են մի հրաշալի գառն իր ամեն համեմութիւններով, սիրու էր գնում ինձ ամենաբարի Խվան Ֆեդորովիչը:

— Այ տեսնում էք—մորթել են և ոտքից կախ են արել հանաք էին անում կօկչաել և ջելնակի:

— Ինքներս գառը կուտենք և ծերունի Արարատի համար էլ խորոված կը առնենք, սրամառութեամբ խօսում էր միրար Խալ-Փա—Կուլիէկը:

— Եւ մի շիշ կախեթի գինի:

Բայց ես չէի բաժանում նրանց հանաքները: Ես հէսց միայն ասում էի, «ես ուզում եմ միայն խմել և խմել անմիջ—ես խեղիվում եմ ծարաւից, ես չեմ կարող վերեւ բարձրանալ»:

— Կը հանգստանաք և կը կազդուրուիք, այն ժամանակ ոչինչ չի լինի:

— Ոչ, ես բոլորովին հիւանդ եմ, ես ուշա կորցնում եմ... ես կը պարկիմ... .

— Մենք ձեզ ձեռքերի վրա կը տանենք:

— Խոկ եթէ մեռած մարմինս տանէք:

Անիծեալ ջերմուտենդ: Եթէ նա չլինէր, ես, կարելի է, ոյժ կունենայի հանել գագաթին:

— Ինչ անենք ուրիմին:

— Զը զիսեմ... Ես տեղիցն վեր կենալ անգամ չեմ կարուցանում—տեսնում էք:

— Այս, դուք շատ փոխվել էք—դուք սաստիկ տաքութիւն ունիք:

— Ինչ եցից, բայց ոյսօր ես մտածել էլ չեմ կարող բար-

ձրանալու մասին . . . Փորձեցէք ինքներդ մենակ գնալ. . .
— Ի՞նչպէս ձեզ այստեղ մենակ թողենք . . .
— Ինչ անենք: Ես այստեղ վրանում կը մնամ մինչև ձեր յետ
դառնալը:
— Դա ինչպէս կլինի: Իսկ եթէ ձեզ հետ մի բան պատահի:
— Այն ժամանակ գուք էլ չէք օգնի. . . Թողեցէք ինձ
մօտ մի կամ երկու առասերէն խմացող կօղակ, իսկ ինքներդ
փորձեցէք ձեր ոյժերը. եթէ գուք կը համնէք գագաթին,
կարելի է ես էլ կը հանեմ, երբ քիչ կը լաւանամ:

Այսպէս էլ վճռեցինք — թողնել ինձ քրդերի մօտ, իսկ
իրանց նոյն օրը շարունակել բարձրանալ մինչև մի կարելի ե-
ղած սահման, ուր զիշերելով, 11-ին փորձել կանգնել հսկոյի
կասարի վրա:

Դրան ու ծանր էր այս ինձ համար նշանաւոր օրում իմ
բարի ընկերներից հրաժարվելը: Երբէք ես չեմ մոռանայ
նրան:

Ես պարկած էի երեսս գետի վոքր Արարատը: Արեգակի
ծուռ ձառագայթերը լրտաւորելով սե հսկայտկան մեծութեան
անդեղիա (մի առասկ լեռնային քար) մասսաները, որոնք ցած
են թափվել նրա հրաբուխային ժամանակամիջոցում, ոսկիաց-
նում են քրդերի գունաւոր ցնցոտիները և բաշերը թաճքած
ձիաների, որոնք այս ժամին կը տանեն իմ ընկերներին:

Իսկ կը տեսնեմ ես նրանց կրկնն: Իմ աչքիս է ընկնում
կամ կապոյտ, պարզ երկնքի մի կաորը Փոքր Արարատի գա-
գաթի հետ, կամ որ և է զթասիրով քրդուհի, որ զարմանում
է, թէ ինչու են նկանց մօտ վեր գցում այդ ծերունի մար-
դուն:

— Մնացէք բարով, Դանիել Առակիչ: Շուտով առողջացէք,
կարծես երազի մէջ են լսվում իմ ընկերների ձայները:

Եւ նրանք ծածկվում են, ողիղ շուռ գալով գետի սարը,
անդեղիա սե բեկորների միջով:
«Թողուած!» . . . իմ խելլիս մէջ երեսում է այն սրտա-

կոսոր անող պատկերը, որի վրա հանձարեղ վ. վ. Վերեշա-
զին նկարագրել է մի ամայի անապատում իր ընկերներից թո-
ղուած մի զինուորու: Նա մենակ ընկած է, իսկ ագուաները ար-
դէն մօտենում են նրա աչքերին: «Այդ թողուածը ես եմ, իսկ
ագուաները ահա նրանք են, որոնք նայում են իմ աչքերի
մէջին: »Գրանք քրդերն են, որոնք հաւաքվել են ամբողջ քոչա-
տեղեց իմ վրանի մօտ. Տալապատիկ նատած կիսաշրջան կազ-
մելակ, նրանք չեն անցուցանում ինձանից իրանց գիշատիչ հա-
յացքները: Իսկ եմ ընկած եմ սարսափելի տաքութեան մէջ, եր-
բեմն բաց եմ անում աչքերս, երբեմն ծածկում: Իմ յիշողու-
թիւնը, կարծեմ, պղտորպում է: Ես չեմ քնում, բայց երազներ
ակենում եմ, մի տեսակ օտարութիւն երազներ հեռու, հեռու-
անցեալից: Բաց եմ անում աչքերս, իր առջեւում է Փոքր Ա-
րարատի նոյն մերկ գագաթը, նոյն քրդերը, որոնք լսութեամբ
նայում են ինձ, ինչպէս մի մեռնողի վրա: Ինձ համար ծանր
է, ես կրկնի փակում եմ աչքերս և կրկնի օտարութիւնորքները
ծակուում են իմ ուղեղը, ես ընկած եմ Յորդանանի հովիառում,
երեսս գետի Մեռեալ ծովը և Մովաբացւոց սարերի մասյլ կող-
մերը, իսկ Պալեստինոյի արեգակը անզթաբար այրում է ինձ.
Երկնքի վրա մի սմայիկ էլ չկայ . . . Օ՛հ, միթէ ես ըստ պիտի
վերադառնամ իմ քաղցրիկ հայրենիքը . . .

— Եարալեան! . . . Այ եարալեան!:

Ես բաց եմ անում աչքերս . . . Ինձ վրա խոնարհվել է
այն քուրդը, որի վրանում ես ընկած եմ, և լնամքով նայելով
ինձ վրա քաղցրատես աչքերով, ծածկում է ինձ վերաբկուով:
Միւս բոլոր գայրենիները նատած են նոյն լսութեան մէջ և
նայում են ինձ վրա:

— Եարալեան, այ եարալեան:

— Հը — ինչ է:

Քուրդը յարգանքով գնում է ձեռքը օրախին ու զլեխին:

— Եարալեան, իմ սորայըս — քո սարսոյըդ:

Դա նշանակում է. իմ տունս քո տունդ է — մի ասիական

Հաճոյականութիւն է:

— Ենորհակալ եմ: — Ես էլ դնում եմ ձեռքս սրտիս և զլւիս:

Բայց իմ աչքերը կրկին ակամայ փակվում են. — Ես չեմ ուզում, չեմ կարող տեսնել այդ անիծեալ Արարատը:

Եւ կրկին տանջող ցնորդներ, կրկին զառանցութիւններ: Տէր Աստուած! միթէ պէտք է, որ ես այստեղ մեռնեմ քրդերի մօտ, վրանի մէջ:

— Եարալեան, այ եարալեան — կրկին լովում է նոյն մեղմ ձայնը:

Դա նոյն քուրդն է, որ իմ գլխի տակ բարձը ուզզացնում է:

— Եարալեան, իմ սարայըս քո ախոռատունն է:

Դա էլ մեծ հաճոյականութիւն է կատարեալ ասիական ճաշակով. նա արդէն իր հիւրընկալ վրանը հաւասարեցնում է իմ ախոռատուն:

Տեսնում եմ — այն շիւսուած շիրմաների միջով, որոնցով իմ կենալու մասը բաժանուած է կանանց մասից, ինձ վրա հետաքրքրութեամբ և կարեկցութեամբ ուզզված են քրուցիների գեղեցիկ աչքերը: Ես ահսնում եմ — նրանք ինձ ափսոսում են. ախր նա էլ ունի — հէնց կասես այսպէս են ասում՝ այդ գեղեցիկ վայրենի աչքերը — կին և երիխուրը մի հեռու տեղ, իսկ ինքն, այ այդտեղ է ընկած, մենակ — ծանր է նրա համար:

Այս, ծանր է, բարի, գեղեցիկ վայրենուհիներ:

Բայց ահա և արեգակը թափնվեցաւ Արարատի եռքում: Հակոյի շուաքը աւելի և աւելի վեր է բարձրանում Փոքր Աւրարատով և վերջապէս ծածկեց նրան բոլորովին: Լավում է շների հաջոց, ոչխարների մայումն. դա քրդերի հօաերն են գաշտից յիտ գառնում, — բայց ինչ գաշտ, անդեղիսի մերկ քարերից և սեւ ժայռերից են գառնում, որոնց մէջ տեղտեղ գեռ մնացել է աղքատ խոտ: Աւելի համարձակ ոչխարները մտնում են վրանի կողքով և հոտուառ են իմ գլուխը, շնչում

են իմ երեսիս: Քրդերը նրանց հեռու են քշում և էլի նայում են ինձ վրա:

Վրա է համում գիշերը: Իմ տաքութիւնը ցրտութեան է փոխվում: Հոգացող տանտէրը ծածկում է ինչ մի քանի վերմակներով, որտեղ բերում են իրանց բաժնից գթասիրտ քըրդուհիները:

— Իմ աղջիկն է, զա էլ իմ աղջիկը քեզ եարալեան, բացատրում է նա, հասկացնելով թէ նրա սիրունատես, խոշոր աչքերով աղջիկներն են տալիս ինձ իրանց վերմակները:

Ես շնորհակալութիւն եմ յայտնում սիրուն գեղեցկուհիներին ձեռքս սրտիս զնելով, իսկ նրանք ցոյց են տալիս ինձ իրանց մարգարտեայ ատամները:

Իինինի ընդունելը, որ ես միշտ ինձ հետ ունեի, կարծեալ իլացնում է ինձ և ես ննջում եմ իսկական քնով, թէպէտ և նոյն տանջող ցնորդներով. . . Ահա ինչ տեղ եմ ես անց կացրել 1882 թւի 0դոստոսի 11-ի գիշերը: Չեմ մոռանայ ես այս գիշերը:

Ես շուտ շուտ դարձնում էի կամ շնահաջոցից, կամ գայլերի ոռնալուց: Երբեմն գիշերային լսութեան մէջ լսվում էր հրացանի արձակելը, սոսկալի հաշոցով մթութեան մէջ այսուղ այնտեղ էին ընկնում շները, իհարկէ հալածելով չորքոտանի գիշատիչներ: Էլունի ամեն ինչը ընկղմվում էր քնի մէջ:

Իսկ ո՞րտեղ են այժմն քնած իմ ընկերները: Արդեօք յաւիտենական ձիւնի գծից դէ՞նն են: Որքան նրանց համար ցուրտ կլինի:

Երբեմն ես լսում էի, որ մէկն ինձ շօշափում էր գիշերը: Դա տանտէրն էր ինամքով ուզզացնում ինձ վրա դցած վերմակները:

Եւ այդ անում էր մի վայրենի, մի աւազակ, մի կատաղի գլուխ կտրող:

Համում է 0դոստոսի 11-ի տուաւօտը, որ նոյնպէս պարզ, անամակ է, ինչպէս և միւս նախնթաց օրերում: Անչ պատեհ

ժամանակ է Արարատավը բարձրանալու համար: Ի՞նչպէս բախ-
տաւոր պիտի լինին իմ ընկերները: Գագաթի վրա նրանց չեն
պատահի ոչ մրրիկներ, ոչ փոթորիկներ և ոչ ամպրոպներ:
Այսքան բախտաւոր կերպով դեռ մէկը չե բարձրացիլ Աստուա-
ծաշնչի սարը:

Ես արեգակը ծագելոց շատ վաղ եմ զարթնում: Փոքր
Արարատի ձախ կողքերի ետքից նոր է սկսում վարդագոյն
դառնալ հորիղնի արևելեան ծայրը: Գուշտեղին զարթնում է:
Տղամարդիկ դեռ քննած են, բայց քուրդ կանայքը գլխների
վրայով թռկեր գցելով, որոնցից կապած են ահազին ջրի կժեր,
գնում են զէպի մի տեղ ջրի:

Մի՞թէ գնում են Սարդար - Բուլազի մօտ: Եգիպտոսում և
Պալեստինայում կանայքը կրում են իրանց խեցեղէն կժերը գլխը-
ների վրա, իսկ այսուղ քրոգուհիները - մէջքերի վրա: Հասկա-
նալի է, որ այսուղ, Արարատի վրա, անկարելի է ման գալ
ժայռերի վրայով և ձորերի միջով գլխի վրա կուժ բռնած:

Ես լսում եմ մի ինչ բանի մեջմ օրօրեն ու ճռճոցը:
Երեկի դա քրոգուհիներն են օրօրում իրանց երեխաներին օրօ-
րոցներում:

Մօտենում է իմ օթեակին քուրդ տանտէրը և ողջունում
է ինձ:

— Եարակեանը լաւ է քնել:

— Այո՛, շնորհակալ եմ, այժմս լսու եմ: Իսկ ու՞ր են մե-
րոնքը. «Նաշալնիկը» ու կօղակները:

— Ու՞հի, վերե են գնացել, չեն երեւում:

Տանտէրի և ինձ մօտ թողած կօղակներից մէկի օգնու-
թեամբ ես ոյժ եմ փորձում կանգնել ոտների վրա, գուրս գալ
վրանից. բայց հէնց այդ տեղ վայր եմ ընկնում: Ուր են կո-
րել իմ ոյժերը:

Տեսնում եմ այժմ, թէ ինչ էր նշանակում այն մեզ,
միաձեւ օրօրանքը: Դա քրոգուհիներն են օրօրում թռկերից կախ
տուած մի ահազին կաւեցէն աման, որ ձեռով նման է ահազին՝

մէջը ուսած սիգարին՝ արշին ու կէս երկայնութեամբ: Նրանք
իւղ են հարում ոչխարի կաթնից: Նրանց մօտ շարժվում են
կիսամերկ երեխաները: Նրանց մարմինը տե է ինչպէս շագա-
նակի կեղեւ: Աղջկեները տղաներից լաւ են ծածկված զանազան
գունաւոր փալաններով: Նրանց խաղերն էլ եւրոպացւոց երե-
խաների խաղերի նման չեն, այս խաղերի մէջ էլ մի աեսակ
վայրենութիւն կայ:

Ես ընդունում եմ խինինայի վերջին փոշիները և գեղա-
տան գարդակ շիշը վրանից գուրս եմ շպատում: Պէտք էր տես-
նել թէ ինչ տպաւորութիւն գործեց այդ գարդակ շիշը փոք-
րիկ վայրենիների վրա: Նրանք բարակների արագութեամբ
լնկնում են որսի ետեւից և նրանց մէջ սկսվում է կոխւ: Վեր-
ջապէս բախտաւորներից մէկին աջողվում է խել շիշը և նա
հանդիսաւոր կերպով վագում է գէպի վրանը, որ իր գիւտով
պարծենայ: Նախանձից այրիվում են նրա ընկերների և ընկե-
րուհիների աշքերը և նրանք սկսում են սրտառուչ կերպով
մորիկ տալ ինձ: Բայց ինձ մօտ այլ ևս չկան գարդակ շիշը և
ես ցոյց եմ տալիս նրանց ամեն մէկին մի մի արծաթեայ դրամ:
Վայրենի կերպով վայլում են այդ աշքերը: Փոքրիկ վայրենի-
ները անվճարաբար մօտենում են ինձ և խելով դրամը, արտգու-
թեամբ յետ են վախչում:

— Դա իմ աղաս է, քաղաքավարի կերպով բացատրում է ինձ
տանտէրը:

— Ինչ սիրունատես են: Աղջկերքն էլ քո՞նն են:

— Իսկ են . . . իսկ եարակեանն էլ տղայ ունի՞:

— Ու — միայն մի աղջիկ ունեմ:

— Այսայ, աղջիկը լսու չէ:

Ինձ առաջարկում են խորոված պատրաստել, բայց ես
բացատրում եմ այդ, ես բոլորովին չեմ կարողանում ուտել: Մի-
այն կէսօրին ես զօրով կարողացի կուլ տալ մի քանի գդալ ե-
փած բրինձ: Իսկ միան ինձ համար անախորժ էր գարձել:

Կէսօրից յետոյ ես ձիտորների օգնութեամբ դուրս եմ

գալիս վըսնից, որ նայեմ սարի գլխին—արդեօք այնտեղ չե՞՞ն
երեռմ սև շարժուն կէտեր: Բայց բացի սև և մոխրագոյն ժայ-
ռերից և անխօս ձիւներից ոչինչ չեմ տեսնում: Ունեղ են այ-
ժըրմ մերոնք: Արդեօք կենդանի՞ն:

Քուրդ հովիւներն ասում էին, որ տեսել են սև փոքրիկ
կէտեր շատ բարձր, նոյն խակ ձիւների մօտ . . . Դա նրանք,
բախտաւորներն են:

Զգվում է անվերջանոլի օրը: Փոքր Արարատի շուաքը, որ
ընկած էր գէպի արեմուտքը, քիչ քիչ տեղափոխվում է գէպի
Մեծ Արարատը, շրջան դործելով գէպի արեելը: Խոկ ես պար-
կած եմ, չը փերջնելով աչքերս կապոյտ երկնքից և Մեծ Արա-
րատից: Ինչպէս է նա տանջում ինձ իր տեսքով! . . .

Խոկ քրդերը—կամ մէկը, կամ միւսը—մօտենում են իմ
վըսնին, ձեռքով ողջոյն են տալիս, նստում են գետնի վրա,
ըստթեամբ մտիկ են տալիս ինձ և յետոյ կրկնն զնում են դէ-
պի միւս վըսնները:

—Եսրալեան, աշխատում է զըտղեցնել ինձ խօսկցութեամբ
սիրելի տանտէրը.—գու էլ սարայ ունե՞ս:

—Ունեմ, պատասխանում եմ ես:

Թէպէտ և ես սարայ (տուն) չունեմ, բայց չեմ կարող տ-
սել, թէ ես կենում եմ ուրիշի տան մէջ, Ցեզար Ալբերտովիլիք
կալոսի մօտ, Սովոլեարնի փողոցում. վայրենին այդ չի հասկա-
նայ—ինչպէս կարելի է ուրիշի սարսյում ապրել:

—Խոկ քո սարսյըդ հեռո՞ւ է:

—Շատ հեռու է:

—Երեանից էլ հեռու է:

—Երեանից հեռու է:

—Թիֆլիսից էլ հեռու է:

—Թիֆլիսից էլ է հեռու:

Հէնց այդ տեղ, Թիֆլիսի ետքում, վայրենու համար աշ-
խարհն էլ վերջանում է: Էլ որոնեղ եմ ես ապրում:

—Եսրալեանը կին էլ ունի՞:

—Կին էլ ունեմ:

Խօսակցութեան բոլոր նիւթերը վերջացել են և վայրենին
ըստում է: Ես տողիս եմ նրան պապիրօս, նա շնորհակալութիւն
է յայնում, զնում է գէպի օջախը ծխելու համար և մի քար
է շպոտում շանը վրա: Վպցնելով պապիրօսը, նա այնպէս էլ
բերում է ինձ մօտ: Ես մերժում եմ ընկունել: Նա շնորհակա-
լութիւն է անում և ծխում է նրան ինքը:

Խոկ տաժմանական օրին վերջ կարծեմ էլ չի լինելու: Աշ-
խատակէր քրչուհիները ամբողջ օրը զբաղուած են. կամ ոչ-
խարի ազբն են հաւաքում, կամ օջախը վառում են և նրա վրա
լաւաշներ են թիսում, կամ պատրաստում են կերակուր, կամ
կարում են քսակների նման մի բան շափալանց գեր ոչխարինի
գմաները պահելու համար, կապում են մի քանիսների ոսները,
որնէք կոստիլ են Արարատի ժայռերի մէջ: Մի տեղ երեսում
է գայլը, և հրացանի ձայները աղմկում են սարը::

Սրանեղութիւնը սպանող է! . . . Նրա համար ես քաշ-
քաշվեցոյ մի քանի հազար վերսա, որ պարկեմ վայրենիների
մօտ, վըսնում: Գառն, վերաւորացնող անաջողութեան իմացա-
կանութիւն էր դա:

Արդէն Մեծ Արարատի շուաքը ընկնում է գէպի Սարքար-
քուլաղի կողմը: Ի՞նչ հսկայական շուաք է: Ամբողջ քոչատեղին
էլ շուաքում մն է:

Երկրի վրա իջնում է գիշերային խաւարը. վառուած օջա-
խը աղօտ կերպով լուսաւորում է վրանի ներու և պայծառ
գոյներով խաղում է կրակի մօտ պարապէած քրիուհիների սեռ-
բակ երեսների և գոյն զգոյն շորերի վրա—խոկ իմ ընկերները
զեռ չկամ: Ի՞նչ է պատահել նրանց հետ, ու՞ի են նրանք, չի
պատահել արդեօք մի որ և է անբախտութիւն:

Գիշերային խաւարն արգէն համարեա բոլոր ովին ծածկում է
Փոքր Արարատը: Ասաղերն աւելի և աւելի պարզ կերպով զուր-
են զալս երկնքի մթին կազուակութեան մէջ: Եւ երկրորդ

գիշերն էլ ես պիտի անցուցանեմք քրդական վաճառում. —Այսպատճի վըս անց կացրած չորրորդ դիշերն էր դա:

Լսվում է կատաղի շնահաջոց, քրդերը վագում են տեսնել
ինչ կայ այնտեղ։ Լսվում է խօսակցութիւն—ինձ ծանօթ ձայ-
ներ . . .

Նրանք են—եկին: Իմ սիրար կարծես վայր է՝ ընկնում:

Խարոյկի բոցը լուսաւորում է կօկշաեվի և ջեղինտկու սը-
փառնած, յոզնած, մեռածի նման երեսները: Խսկ ուղի է Սիլո-
լոբօվը: Նա, երեխ, դեռ այնտեղ է առաջնորդների չեա:

Կոկչանի և Զելյնակի վրանն են մանում. Նրանք տատանվում են, չագիւ են կարողանում գայ:

- Հը, ի՞նչ է, պարսներ, վախցած բացականչում եմ ես.
Ինչ է եկեղ ձեզ:

— Փաստք Աստուծոյ գերա կինդանի ենք, բայց քիչ էր մնացել մեռնեինք:

— խսկ բարձրացի՞ք:

—Ու՞ր բարձրանալ: Միայն մեր հերոսը — իվան ֆեդորօվի ընհասաւ բոլորովին գագաթին, իսկ առեւէք, թէ նա ինչ է դառել:

Եւ նրանք երկուսն էլ խակապես վայր ընկան վրանի գորգի վրա: Ու՞՞ է կորմել Կոկչաեցի զեղեցկութիւնը:

— Ենորհակալ եղիք Աստուածանից, Գանիիէլ Լուկիչ, որ դուք
հիւանդացիք, եթէ ոչ ես ձեր կեանքի մասին երաշխառոր չեի
լինիլ . . . Այստեղ արհաւիրքներով լեբն է . . .

Եւ Ճշմարիտ նրանց գէմքելը ցոյց էին տալիս, որ այն-
աեղ մի սարսափելի բան է եղել:

Սի օրուայ մէջ նրանք ծերացել էին: Նրեաները թառա-
մել էին: Աչքերի տակ կային սև փոսեր: Նրանք երկուսն էլ
սև ացել էին, ունեն կապտած շրթունքներ, կարծես մեռած
մարդկի էին: Թշերը նիհարացել էին, կարծես երկար հիւան-
դութիւնից յետոյ են երեացել այստեղ:

— Օ՞ւս, ոսերս, ոստերս, հեծեծում էր լսեղձ՝ Սուրբան Պավ-

—Եւ իմ ոսկերն էլ . . . զա մի սոսկալի փորձ էր . . . դեռ ինչպէս մենք վերադարձանք, —դժուարութեամբ ասում էր Կոկչաեփը:

Կողակները գժուարութեամբ հանեցին նրանց կօշեկները, որովհետեւ նրանց ոտերը ուռել էին, ջլերը փքփել էին ձլգատումից:

Վայնը մտաւ վերջապէս և իմ ազտուիչը — Արքօքով:

— Եվսն ֆերովովիւ! Այդ գուշը էք, ակտմայ գուրս պլծաւ
իմ բերանից:

Եւ իրաւ, դա առաջոււայ Սիվօլօբօվը չեր, որ ունէր աշ-
խոյժ հայացք, արագ շարժվածք, ամբողջապէս եռանդ էր. դա
այժմ մի հիւանդ, փշրված մարդ էր, ծերացած, թռոռմած,
աչքերի տակը կապտած, մոխրագոյն երևոսկ, գունաթափ՝
կապտած շբթուներոսկ, թռոյ ձայնավ:

— Ենորհաւորում եմ ձեզ, թողէք ինձ համբուրել ձեզ, խեղճ
բարեկամ . . . Ասացէք, ինչ է եղել ձեզ, — վրդովվում էի ես,
գրկելով նրան:

— Թոյլ առեւէք հանգստանով — ես չեմ կարողանում խօսել —
ձայնս կորցրել եմ:

Կրզակը հանեց նրա «իշխաններն» էլ (փափուկ կօշեկների մի տեսակն է), որոնցով նա բարձրացել էր սոսկալի սորի վրա:

—ԱՇա ձեր գուլպասնըը — շարդ յակով և առաջ ու օւ ու ոչ գուք, գոնէ ձեր գուլպաները Արարատի վրա եղել են, — թոյ ժպիտով տայով ինձ զոլպաները, տառմ էր նա:

Մի դառն, կծու հեղնութիւն էր զա: Իմ գուլպաներն եղել են Արարատի վրա, խակ ես - չեմ եղել:

Երեկ, պատրաստվելով վերջին անգամ բարձրանալու, պ. Արվոլօքով խնդրեց ինձ տալ իրան գուշաներ, որով հետեւ շտապով զուրս գալով մեզ հետ իր պօստից, նա մռացել էր վերցնել իրա համար մի կամ երկու ջուխտ գուշաներ, որով հետեւ

ամսուր նա ման էր գալիս վախուկ «իշխներով» հազած մերկ տաների վրա, իսկ բորբկ ոտով զբօնուլ յա խենական ձիւնի վրայով ձեռնառու չէր և Բայազէտի հերոսին:

— Իսկ ահա ձեզ և հող Արարատի զլիից, այնաեղ կայ մի փոքրիկ ճեղք առանց ձիւնի. այնտեղից վեր առի ես այդ հողը. և այս բիւրեղն էլ այնտեղից է:

Եւ նա առեց ինձ մի թաշկինակ, որի մէջ վախաթաթած էր սպիտակ, վարդագոյն կրախառն հող և նրա մէջ մի երկար կտոր լեռնային բիւրեղը նախն: Այս թափանցիկ կտորն ես վերջերում պարգևեցի պ. Ֆօն-Կոշկուլին, որ մի հասկացող երկրաբան է:

— Ումի՞ հետ գուք բարձրացիք գագաթի վրա, իմ ամենասիրելի բարեկամ—վելովված հարցում էի ես. — մենա՞կ:

— Ո՛չ—Բարսյի և Մահմադի հետ . . . գագաթի վրա նրանք ծնկաշող ազօթում էին իրանց Աստուծուն. — Ալլահին... իսկ ինձ աղաշում էին առաջ չգնալ:

— Ու՞ր են այդ քաջերը:

Պ. Կոկչանի կանչելուն պէս քրդերի խմբից, որոնք հաւաքվել էին վրանի տուաջ, խոնարհութեալը գուրս եկին Բարս Ահմեդ-Օղլի և Մահմուդ Ամո-Օղլի: Նրանք, երեւում էր, սոյնպէս առնջվել էին: Ես առի իւր ոքանչեւրին հինգ հինգ րուրի: Նրանք ընկան իմ առները համբուրելու. խեղճ վայրենիներ:

— Իսկ ու՞ր է միրաբը, հարցրեց Ախոյօթօվը:

Առաջ գուրս եկաւ պախօս միրաբ Խալիֆա-Կուլի բէկ Գօլուման բէկ օղլին, բանած ունելով իր ձեռքերում իմ դիտակը:

— Ա՛ռ, աղայ, քո աչքդ ։ ։ ։ Ա՛հ, լաւ է քո աչքդ ։ ։

— Ի՞նչ է, լաւ է երեւում:

— Լաւ, ուհի որքան լաւ: Այ եթէ մի այդպիսի աչք էլլենէր իսկը մատակի համար—կոյրն էլ կը տեսնէր:

— Իսկ տեսար ինձ գագաթի վրա, միրաբ, կրկին հարցրեց Ախոյօթօվէ:

— Տեսայ, աղայ, քո կարմիր արխալուզի տեսայ և երկու քրդերին էլ տեսայ, և երբ գու այնտեղ հրացան արձակեցիր— ծովն էլ տեսայ:

— Ուրեմն այժմ հաւատում ես, որ կարելի է Արարատը բարձրանալ:

— Այժմ հաւատում եմ:

— Իսկ առաջ չէ՞ իր հաւատում:

— Առաջ չէ հաւատում:

Երբ Կոկչանի, Սիվոլօթօվ և Զելինսկի յաւիտենական ձիւնի գծի մօտ զիշերեղուց յետոյ սկսել են բարձրանալ վերև, այն ժամանակ թաղել են այգանեղ միրարին՝ կոդակ Լավրենտիյ Կուլբիկօվի և երկու թուրք ձիաւորների հետ, իսկ իրանց հետ վեր են առել Բաբին, Մահմուդին և կօզակ Պետր Բուրլակօվին. բացի զրանից, նրանք թողել են միրարի մօտ իմ դիտակը, որպէս զի նա, ոնչաւատ Թօմասը, կարողանար ինքն դիտակի օգնութեամբ հաւատարիանալ—կը հասնե՞ն արդեօք աներկիւդ մարդիկը գագաթին թէ ոչ:

— Ավասս, Խան Ֆեոդորիչ, որ գուք չէք վերցրել ձեզ հետ մի զրօշակ կամ խաչ, որ անկէիք այնտեղ, ինչպէս յիշաւակ ձեր քաջագործութեան. դա պատմական քաջագործութիւն է:

— Այո՛, ես ինքս էլ ափսոսում էի:

— Իսկ Կախեթի զինով լիքը շիշը—ժպտում է Զելինսկի, շիշը ուռած ոսերը:

— Ճշմարիտ է . . . Այնտեղ ինձ մօտ բացի գաւազանից և մի շիշը ուրիշ բան չկար, և ես խլեցի այդ շիշը ձիւնի մէջ նոյն կակ գագաթնակէտի վրա: Կարելի է, մէկը մեղանից յետոյ կը գտնէ, եթէ հասնէ այն տեղին: Բայց հաղիւ թէ . . .

Դա չկարողացաւ շարունակել, նրան արգելեց արիւնը, որ առուի պէս թափվեց քթիցը:

Դա մի վտանգաւոր նշան էր. սարի գագաթի վըս արիւնը

անդագար թափվելիս է եղել նրանից, և նա կանգնեցրել է նրան միայն ձիւնով . . . Բայց աներկիւղ մարդը չէր իմանում, որ մի քանի օրից յետոյ արիւնը կը թափախ նրա կոկորդով:

Այսուղ, Մենածնայում ծանր հիւանդութիւնից յետոյ, որ ինձ պահում էր մահուան և կեանքի մէջ տեղը, ևս ստացի Երեանից և Խդդիրից նամակներ, Արարատի վրա գժբազդ բարձրանալու ընկերներիցս. Զելինսկուց և Կոկչաեվից: Նրանցից առաջինն ի միջի այլոց գրում էր մեր խեղճ հերոսի մասին այս. «14 օրից յետոյ (բարձրանալուց) եկաւ ինձ մօտ մեր յարդոյապատիւ ուղեկից Սիվոլօրօվ ձեր կենդանադիր պատկերը ստանալու համար: Նա հաղիւ էր կարողանում պատշգամբը բարձրանալ (դա Արարատից յետոյ էր!), որովհետեւ խիստ տկար է: Նրա կուրծքից և բերանից այն ժամանակից սկսած արիւն է հոսում՝ անբախտը երեկի բարակացաւ (Պահօթքա) կը ըստանայ:

Իսկ պ. Կոկչաեվ գրում է ինձ նոյնպէս նրա մասին. «Մեր բարձրանալու ժամանակից սկսած մեր հերոսի մէկը — Սիվոլօրօվը — թառամել է. նա հիւանդ է ծանր կոկորդային արիւնահոսութեամբ»:

Այսպէս են մեր անխելք ձեռնարկութեան հետևանքները: Բայց ինչո՞ւ առաջ վագել:

XIV

ԱՐԱՐԱՏԻ ԳԼԽԻՆ — ՄԻԱՅՆ ՈՉ ԹԵ ԵՍ:



Որպէս զի ընթերցողն ունենայ հէնց գոնէ մի թոյլ հասկացողութիւն այն մասին, թէ ինչի են ենթարկվել իմ համարձակ ընկերները սարը բարձրանալիս՝ նրանից յետոյ, երբ թո-

ղել են ինձ հի անդ զզլբաշուշաղների վրանում, ես թոյլ եմ տալիս ինձ առաջ բերել „Բավրազ” լրագրից պ. Կոկչաեվի խոսքերը.

«Թողնելով այստեղ դանիել լուկիչին մի կօղակի, երկու ձիաւորների և ծառաների հետ, մենք առաջ գնացինք հարաւից գէպի հիւսիս, աստիճանաբար բարձրանալով սարի վրա, և հասնելով վերջին կէտին, որտեղից անկարելի էր ձիով շարունակել գնալը, կանգնեցինք և վճռեցինք գնալ հետիւնն: Մենք բոլոր 10 մարդ էինք: Նրանցից չորսին թողնելով այլտեղ, միւնքները, այսինքն Սիվոլօրօվը, Զելինսկին, կօղակը երկու քըրդերը և ես առաջ գնացինք, աստիճանաբար անցնելով ահազին ձորելի զառիվայրերով, անհամար քանակութեամբ քայլերի կոյտերով: Անց կենալով երկու երեք այդպիսի ձորերից և մի քանի ժիւապատ զառիվայրերից, մենք վերջապէս դուրս եկինք մի փոքրիկ հրապարակ, շրջապատուած ձիւնապատ հողակոյտով, որի վրա, երեկոյեան կիսամթութեան վրահասնելու պատճառով մենք վայր իջանք: Մեր ետևեց գալիս էին երկու պարսկական քրիեր, որոնք բերում էին գիշերելու համար մի քանի հարկաւոր պարագայք: Նրանց տեղ համնելուն պէս անմիջապէս օջախ վառվեցաւ և թէյ պատրաստվեցաւ: Մեզ հետ մի փոքրիկ կաթսա կար, որ պարունակում էր իր մէջ միայն երկու կամ երեք բաժակ ջուր, և այս պատճառով մեր թէյախմութիւնը շարունակվեցաւ շատ երկար. պէտք էր ամեն րուսէ լընել կաթսան ջրով: Եղանակը ցրանում էր: Ուկօմիւրի ջերմացափը ցոյց էր տալիս $8\frac{3}{4}^{\circ}$: Հարկաւոր էր նախազդուշութեան միջոցներ ընդունել ցրտի գէմ: Կօղակը մեզ համար անկողիններ շնիեց. իմ այս անգամ բաղկացած էր մի ներքնակից, որ փռած էր մերկ գետնի վրա և մի տաք վերմակից. իսկ իմ ընկերներն այդ էլ չունէին. սակայն օդի բարեխառնութիւնը աւելի ցածրանում էր: Փաթաթվելով տաք վերարկուի մէջ և ծածկվելով վերմակներով, մենք բոլոր, դողալով, սպասում էինք թէյին, բայց քանահած կաթսան, չը նայած թունդ սյրվող

կրտելին, ամեն մի ջուր լցնելիս, գեռ երկար փողձում էր Աբ
համբերութիւնը: Վերջապէս թէյը հերթով խմվեցաւ մինչեւ
բաժակի վերջին կտթիլը, ասում եմ—հերթով, որով հետեւ մեզ
չի ետ անյայտ պատճառով կային միայն երկու բաժակներ: 0 լի
մէջ այդ ժամանակ տիրում էր հանդարտութիւն և երկինքն
ոյնքան պարզ և թափանչիլ էր, որ կարծես ամբողջ ասա-
զային աշխարհը ցոլում էր բոցերով: Երբեմն ես քնով էի անց-
նում, բայց սարսափելի յնորալից երազները զարթեցնում էին
ինձ: Ես վեր էի կենում անկողնից, կիսով չափ բարձրանում էի
և ականջ գնելով ինձ անյայտ կեանքի զիշերոյն հնչիւններին,
երբեմն ոստնում էի բարձրութիւններից պոկվող քարերի սար-
սափելի թնդիւնից: Դժուար է պատմել իմ անց կացրած գի-
շելի տպաւորութիւնները: Մի միտք այն մասին, որ ես ընկած
եմ՝ Նոյի տառանի մօտ, ամեն մի բոսէ փոխադրում էր ինձ
այն հրաշոլի աւանդութիւնների վիճակը, որոնցով այնքան հա-
ռուստ է մեր հին կեանքը:

«Հաղիւ էր լցուը բացվել երբ մենք ամենքս արդէն վեր
կացած էինք և հետեւում էինք հորիշնի վրա բացված արշա-
րութիւնի փայլուն ճառագայթների ետեից: Ձերմասափը պյտ ժա-
մանակ ցոյց էր տալիս 4⁰ առքութիւնն: Մենք արդէն զէպի
տուաջնն բարձրութիւնը տանող ճանապարհի վրա էինք, երբ
ծագող արեգակի առաջին ճառագայթները լուսաւորեցին սարի
հարաւարեկելիան մակերևոյթը: Այսաեղեց երեւում էր, թէ
ի՞նչ հսկայական ճանապարհ կար մեր առջեւում: Ուրանն աւել
ինք մենք առաջ բարձրանուում, այնքան ոիս էինք մօտենում
նորատակին, որովհետեւ վերեւ տանող ճանապարհը աւելի և
աւելի զարիիլիր էր գտննուում, իսկ գագաթը ծածկվում էր երկ-
ուցին բարձրութեան մէջ: Մենք մաղլցում էինք ամենատեսակ
դասիլ յսերով և լեռնային տափառանաւոր տափարակներով և
ըստ յանձնուանդուն ջանքելին, ամեն մի բագէ յոդնածութիւ-
նից և շնորդելութիւնից թափիլում էինք քարերի վրա և հան-
գուանում էինք, հազիւ կարողանալով շունչ քաշել: Մենք գը-

նում էինք մի ձանապարհով, որ ձիւնից մելքացած էր, չսփազանց դժուար, տեղ տեղ բոլորովին ուղղաձիգ էր և տեղ տեղ ընկած էր Ճեղքուածների և թափված քարերի կոյտերի միջով։ Մեզանից արեելեան կողմում փռուած էր մի զասիլյոր տափարակի վրա սառուցացին կեղեի մի ահազին մակերեսոյթ, որի վրայով ձիւների հաւելոց ընկնում էին գագաթից կայծակի արագութեամբ ցրված քարերի կոյտերը։

«Այդ տափարակ տեղը աջ կողքով յենում էր կոնուսանման սարաւանդի վրա, որ անուռանվում է դուժիկ-դաղ, որ ծառայում է ինչպէս արևելիան առաջնակարգ սարի շղթայի շարունակութիւն։ Ժամը 10.ին մօտ մենք կանգնած էինք մի տեղ, որ բաւական գերազանցում էր Գոքը Արարատի բարձրութիւնից։ Այստեղց ամբողջ հովտը մեր աչքերի առջեւ երևում էր կարծես մի անդունդի մէջ։ Մեղ շրջապատողը, կարծես, ընկը մված էր աշխարհների անշափելի տարածութեան մէջ և հովտակ ամենու մակերեսոյթը ծածկված էր մառախուղով։ Նկատելի էր, թէ ինչպէս գագաթը սկսեց հետպատճեակ ծածկվել սպիտակ պատահով և կողմանկի ծակերը սկսեցին դուրս թափել գոլորշիների մոխազոյն ամպեր։ Այստեղ մենք զգացինք և առաջն ցուրտ քամին, որի պատճառով ևս պարկեցի քարերի ճեղքում և արեն ընկած կողմին տաքացնում էի ի՞մ քրտինքի շղթայումից սառած մէջքը։ Ասկայն ևս զգում էի, որ հետպատճեակ տիրում է թուլութիւնը, աչքերիս ամեն ինչը ազօտ էր երեւում, արիւնս թափվում էր զլուկս, զբութիւնը ծանր էր զառնում։ բայց և այնպէս ուրիշ մի բան չէր մնում անել, եթէ ոչ միայն շարունակել կրկին ծանապարհը, որովհետեւ յետ դառնալ այստեղց, այսպիսի բարձրութիւնից և այսքան ծանր աշխատանքներից յետոյ, որ գործ էի զրել բարձրանալու համար, ամօթալ էր ընկերների առաջ և լսու չէր ինձ համար։ Ես անհաւատալի գժուարութեամբ շարունակում էի ճանապարհը։ Սարսափելի ջանքերից յետոյ ևս յանկարծ ընկայ մի միշտակալնի մօտ, որի վրա աշխատում էր պ. Զելինսկի, փո-

րելով իր անուան տառերը: Դա մի խաչ էր առանց ընդմիջող ձողակի, որ գրած էին անկասկած մեր նախորդները: Ես ձողակի վրա քանդեցի նոյնպէս իմ անուան տառերը և պնոտացրի խաչը: Միջով գցած ձողակը անկասկած ենթարկվել է աշարկուծերունու տարերքների ներգործութեան և պոկ գալով շըջանակից, երեքի հանգստանսում է մի տեղ քարերի կոյտերի մէջ: Մի քիչ հանգստանալով այստեղ, մենք քարշ ընկանք դէպի առաջ. ասում եմ—քարշ ընկանք, որովհետեւ ես արդէն չէի գընում, այլ մի քալից միւսն էի ընկնում և մի փիհից միւսն էի ձգում: Մեզանից հարիւր քայլ հետառութեան վրա նստած էր մեր երրորդ ընկերը, Սիվոլօբավը, բռնելով ձեռքերում միւս յիշատակարանի մնացորդը, որ բաւականին մեծ էր առաջինից և նոյնպէս միջով գցած ձողակ չունէր, որ երեքի ենթարկվել է առաջինի հետ մի վիճակի: Բարձրանալով այս կամ ուրիշ կերպով, ես զգացի, որ իմ ոյժերն ինձ թողում են. անելով մի քանի քայլ ես, չը նայած իմ ծայրայնեղ ջանքերին, ես կանգնեցի և փովեցայ քարի վրա, բոլորովին կորցնելով եռանգու: Դրութիւնը կրիտիկական էր դառնում և հենց այստեղ խոհեմութիւնը յաղթեց. ես վերջնականապէս կանգնեցի, որ դրանով վերջացնեմ իմ բարձրանալը: Իմ ոյժերը բոլորովին կորել էին. շնչառութիւնս յաճախացել էր, կործքս փակում էր ուրի նօսրութիւնից: Մինչև գագաթը քիչ էր մնացել—միայն մի վերջին լեռնային տատիճան և ընդ ամենը երեխ 900 ոտնաչափից ոչ աւելի, բայց այդ 900 ոտնաչափն ինձ համար անհասանելի էր. քաջագործութիւնն իմ ոյժովս չէր:

«Խոնարհ ողջոյն տալով ընկերներիս և գցելով վերջին հրաժարական բարեւ Մասիսի կարծես ինձ վրա ծիծաղող գագաթին, ես շուռ եկայ և դէպի յետ քայլեցի: Այդտեղ ես նստեցի մի քիչ հանգստանալու և անակնկալ կերպով խորասուզվեցայ ծանր մոսածողութիւնների մէջ այն մասին, թէ ինչպէս է այստեղ մարդկային ազգը առաջին անգամ հիմնել իր օրօրոցը և որքան սրբազնութիւն կայ կապված այս սարի մասին ունեցած

մաքի հետ: Մի քիչ ուշքի գալով, ես վերջապէս մեր կացայ և վերջին անդամ գոչեցի իմ ընկերներին. «ցտեսութիւն, պարոններ»:

«Ցած իջնելով երկրորդ լեռնային բարձրութիւնից, ես յանկարծ տեսայ իմ ետեկից 200 քոյլ հեռու եկող պ. Զելինսկուն: Կանգնելով և սպասելով նրա մօտենալուն, ես իմացի, որ նա նոյնապէս յետ է գարձել իմ հետքերով, չը կարողանալով շարունակել առաջ գնալ սաստիկ գլխի պտտելու և սիրաը խառնելու պատճառով:

«Փառորդ ժամ անցած երկու անգամ հրացանի արձակելը մեզ յայտնեց, որ Սիվոլօբօմն ու քրդերը գագաթի վրա են: Տեսնելում էր, ինչպէս սև կէտեր շարժվում էին ձիւնի գագաթի վրա: Դրանիք մեր ընկերներն էին»:

Պ. Զելինսկու պատմութիւնը նրա մասին, թէ ինչ յուսահատ գրութեան մէջ է ընկել նա, երբ Արարատի ձիւնային համարկի համարեա մօտին նա աչքից կորցրել է պ. Սիվոլօբօվին և քրդերին և մոլորվել է միւս ընկերներից, գործեց ինձ վին և աւելի խորին տպաւորութիւն: Սեպացած ժայռերի վրա վրա էլ աւելի խորին տպաւորութիւն: Սեպացած օդն ու բարձրանալը այնքան է նրան յոգնեցրել, իսկ նօսրացած օդն ու մթնոլորդը, լցուած խեղպով ծամբային գոլորշիներով, այն տարին նեղել է նրա թոքերը, որ նա չի կարողացել ընչել և համարեա ուշաթափ է եղել: Գրա հետ միասին նա զգացել է համարեա ուշաթափ է մի գուցէ արիւնախառն փսխում և փսխում և վախեցել է մի գուցէ արիւնախառն փսխում պատահէ: Նա կարծել է, թէ այլ ես յետ չի դառնայ, որովհետական մոլորվելով ժայռերի և խորիսրատների մէջ, նա դադարել է անգամ մտարերել թէ ինչ կողմով է նրա յետ դառնարել է մասապարհը: Նա միայն զգացել է, որ կորցնում է շարժու կարողութիւնը: Նրան ցանկալի է եղել վայր ընկնել և վելու կարողութիւնը: Նրան վախեցրել է այն, քնել հենց մինչեւ հետեւեալ օրը, բայց նրան վախեցրել է այն, որ ամեն տեղ պատահէլ է արջերի մօտագայաթեան նշանները—մէկը միասից լաւ չի եղել: Ինչպէս վերջապէս նրան աջողվել է մէկը միասից լաւ չի եղել: Վայր առաջ սոսկալի բարձրութիւններից, դա միայն Աստյած իչնել այդ սոսկալի բարձրութիւններից, դա միայն

ծաւն է յայտնի: «Ես արդէն կարծում էի, թէ հարկաւոր է միաս բարեաւ առևէ կեանքին, բայց ոչ, միայն ամբողջ կուրքը էր փշրփել, կարծես մաւրծով ինձ ծեծել էին, և իմ խեղճ ոռերը ուռել էին. . . ինչպէ՞ս պիտի էկուց հաղնեմ կօշեներս».

Բայց ինչ է աարել այն, որ եղել է այդ սոսկալի բարձրաւնալու խսկական հերոս! Ես յիշում եմ նրա պատմութիւնը, որ լիքն է խորին դրամատիկմով: Ավտոս, ես չեմ կարողանում զրել նրան բառացի կերպով: Ես միայն կարող եմ առաջ բերել այստեղ նրա Հոգտիմբեր 29-ից ինձ վրա զրած նամակի միջից մի կառը, որի մէջ նա նկարագրում է 1882 թ. 0դոստոփ 11-ի մեզ համար նշանաւոր օրուայ տպաւորութիւնները: Ես զնում եմ այստեղ նրա պատմութիւնը նոյն ձեռվ, ինչպէս նրան զրել է ինքը հեղինակը զիսլոմատիքական ճշտութեամբ: Ամբողջ նամակի լեզուն շնչում է խորին ճշմարտութեամբ և անկեղծութեամբ, որ գոյացնում է նրա աւելի թանկացին լինելը, որովհետեւ այդտեղ չկայ ոչ մի շինծու, առաւելացրած, ոչինչ ներկած բան, ոչ հոետորութիւն և ոչ իր հերոսութեամբ պարձանք:

«Կակսեմ նրանից — զրում է պ. Սիվոլոբով՝ երբ մենք թողեցինք ձեզ քրդական վըանում, իսկ ինքներս ու երեկոյեան հասինք սարի կօնուսի տակ, այսինքն ձիւնոյին գծին և այնտեղ անց կացրինք վերջին գիշերը: Այդ գիշերը քարեր թափակուց մեզ սոսկաի երեաց, թնդինը, արձագանքը մէկը միւսի եանից յաճախ կրկնվում էին և մեզ գարձրել էին ամենաշատարեալ հիացման, մանաւանդ իմ ուղեկիցներին, պ. պ. Կօկչանելին և Զելինակուն: Միւս օրը, 0դոստոփ 11-ին, վաղ առաւօտեան, ես զարթեցը իմ ընկերներին. թէ յ խմեցինք, նախաճաշիկ արինք. այդ ժամանակ խօսակցում էինք — ամեն մէկը աշխատում էր շուտով աղատել զիշերուանից վախեցած միտքը: Բայց և այսպէս, մեր զարմացքն ու հրձուանիքը շարունակում էին մեծանալ հետաքաշե, կանոնաւոր կերպով: Վերջացրինք զրոյցը և նշանակուած ճանապարհն ընկինք: Վեր-

առինք կօղակ Բուրլակօվն և երկու քրդերին, Յարին և Մահմադին, բարձրանալով ժայռու սարերի մասսայի վրա, որոնց անվերջանալի պատկերը հեռաւում վերջանում էր մի կիրախանն քարով: Բայցի այդ պատկերները, երեսում էին յաճախ պոկ եկող ահազին քարերը: Իմ ընկերները նրանց ամեն մի թնդիւնի ժամանակ ինձանից հեռու յետ էին մնում: Նրանց եանից դալիս էին կօղակն ու քրդերը և բերում էին ուտելեղին և մի շիշ կախեթի գինի: Մի քանի բողէից յետոյ ևս նրանց տեսքից ծածկիցայ և նստելով քարի տակ, սպասում էի ընկերներիս: Մեծ գժուարութեամբ հասին նրանք իմ հանգստութեան տեղին և նստեցին հաց ուտելու: Նրանց ոտքերու մ ու ձեռքերաւմ սաստիկ գողոց կար, իսկ երեսները գունաթափ էին, ինչպէս սպիտակ կտաւ, բայց նրանք ամեն կերպ աշխատում էին ծածկել իբանց վախը, ցոյց տալով, թէ գեռ չեն կորցրել յոյսները ճանապարհը գէպի առաջ շարունակելու համար: Ապացուցնելու համար կարելի է առաջ բերել պ. Զելինակու խօսքերը. նա այնտեղ երգվում էր — ասում էր. «Եթէ ես չը բարձրանամ, թող Ճաքի իմ որովայնը» . . . Հաց կերանք. նրանք մի մի բաժակ զինի խմեցին, վեր կացին և նոյն կարգով զէպի վեր սոլացին: Պարզ արեգակն իր ջերմ ճառագոյթներով առատութեամբ մեզ տաքացնում էր, բայց արեմանեան ցուրտ քամին արագութեամբ մեզ սառցնում էր:

«Ճանազան տեսակի քարե, անվերջանալի ճրված լեռնային շարքերը աւելի շատ երկիւղ և վհասութիւն էին պատճառում իմ ընկերներին: Շուտով ես թողեցի նրանց, ծածկիցայ նրանց տեսքից և հոտի զառիվեր, անյաղմելի մի ժայռի և այնտեղ նստելով կախ ընկած քարերի տակ, երկար սպասում էի իմ խօսակիցներին և երկար զուարձանում էի բնութեան ախորժելի տեսքով: Յողնած և տանջված, նրանք թողնելով ճանապարհին բոլոր մթերքները, վերեի հագուստը, բոլորովին առանց շնչառութեան, սոլալով հասան ինձ մօտ, երկար նստեցին և զիտում էին ինչպէս մեղ շրջապատող բնութիւնը, նոյնպէս և մի

քանի կեչի ծառից շինած յիշտոտակարաններ, որոնց դրել էր
մէկը այդ ուղղաձիգ ժայռի վրա 70 ոսնաշափ բարձր ներքինից;
«Այստեղ ես մնաք բարեւաւ ասացի իմ ուղեկիցներին: Ես,
Զելինսկին, կօդակը և քրդերը վեր ելանք այդ ժայռի գլուխը,
իսկ պ. Կոկտել գեռ մնում էր նոյն տեղը, երկար նայում էր
մեզ վրա: Իս և քրդերը արդէն վերև էինք բարձրացել իսկ
Զելինսկի և կօդակ Բուրլակով խաչերի մօտ էին: Մենք ամեն-
քըս կախ ընկնելով քարերից, նայում էինք ուղեղ դէպի ցած
պ. Կոկտելի վրա: Նո զլսից վերցրուց գլխարկը, գլուխ տու-
եց, օրհնեց մեղ, իսկ ինքը յետ դառաւ: Մի քիչ հանգտանա-
լով, ես ուղեցի մի բան հարցնել պ. Զելինսկուց, բայց նա կա-
րողութիւն չուներ խօսել և ձեռքով նշան արաւ, որ ես այլ ևս
չը հարցնեմ: Անցաւ մի քանի րոպէ, ես և քրդերը սկսեցինք
ձանապարհ ընկնել — այն ժամանակ պ. Զելինսկի ոյժը հաւա-
քեց և թոյլ ձայնով արտասանեց իմ անունը. Ժիվան Ֆեդօրօ-
վիչ! մի քիչ էլ հանգտանանք — ես բոլորովին յոգնել եմ: Ես
կրկին մի ուրիշ քարից կպի և մի քիչ սպասեցի, բայց տեսնե-
լով, որ Զելինսկի սեւացել է ինչպէս մեռած մարդ, ես այլ ևս
չի սպասեցի, թողեցի նրա մօտ կօդակին, իսկ ինքս կրկին դէ-
պի վերև սողացի: Քրդերն ուղեկցում էին ինձ: Զելինսկի մի
կամ երկու քայլ էլ բարձրացաւ, նայեց մեզ վրա և կախ ըն-
կած քարերի վրա — երկիւղն աւելի շըջապատեց նրան և նա
յետ դարձաւ:

«Այդտեղ ես մենակ մնացի, չը հաշվելով թարան և Մահ-
մուղը։ Նրանցից վերջինը հրացանով էր, իսկ թարան բերում
էր մի շեշ զինի։ Երբ յաղթեցինք այդ դժուար արգելանքին,
բարձրացինք կրախառն հողի ծայրը՝ կանգնեցրած խաչերից $1\frac{1}{2}$
վերստ բարձր, և այնտեղ գտանք ածուխի հետքեր և հաւի փը-
տած ոսկորներ։ Այս կետից ձանապարհը մեր անց կացածից
քիչ էր զառիվեր, բայց օդը աւելի ծանր էր, և որքան վերև
էինք բարձրանում, այնքան օդը աւելի արգելում էր շնչառու-
թեանը։ Այդ կրախառն զառիվերը երկարութեամբ ճգփած է $1\frac{1}{2}$

վերսատ տարածութեան վրա և վերջանում է վերեկի ծայրում կարսիլ քարի կարնիդի տակ, 100 ոսնաչափից ոչ աւելի բարձր, որ կարում է այլ կիրախառն շերտը մէջ տեղով —մի ծայրով մօտենում է այդ զառիվերի ամբողջ տարածութեան վրա ձրգված ժայռի հարաւային կողմին, իսկ միւս ծայրով հասնում է նոյն զառիվերի աջ կողմով յաւիտենական ձիւնին, որ ձգվոծ է մեր զիշերած տեղից և ծածկում է ամբողջ հիւսիսային կողմը մինչև Արարատի գագաթները։ Ինքը կրային զառիվերը ունի լիննային գոտիի տեսք — ձախ կողմով անվերջանալի՝ դէպի արեմուաք տարածված մի ուղղաձիգ ժայռ է, իսկ արևմտեան կողմում վերջանում է այդ իսկ ժայռի կողքին, որ իր ուսով զիաշում է նոյն հիւսիսային ձիւնին։ Կիրը այնքան փափուկ է և ծածկված է համարեա միախառն հրաբուսային ծակերով, որ անկարելի է նրանով գնալ։ Ամեն մի այսպիսի ծակի մօտ թափուած է շատ բիւրեղ որից մենք բերենք ձեզ ցոյց տալու։

«Հասանք այդ զառիվերի կէսին և այնքան մեզ յոգնած և շնչառապառ էինք զգում, որ մեծ դժուարութեամբ էինք կարող անսում երկու կամ երեք քայլ տնել առանց հանդստանալու, և ամեն անգամ հանդստանալիս մեզանից ամեն մէկը շփում էր կուրծքն ու գլուխը ձիւնով, որից ուստում էինք և դնում էինք փափախների մէջ, բայց սրտի զարկերը տյնքան տանջում էին, որ մեզանից իւրաքանչիւրը ուշաթափ էր լինում այն աստիճան, որ մի քանի ժամանակի միջոցում անկարող էր ոչ միայն մի բան ասել, ոյլ և ըստնէր ոյժ վերցնել ձիւնը և շփել նրանով պլուխն ու կուրծքը:

«Ուրբան էլ ես և ինձ անծանօթ բարան ու Մահմուղը յոդ-նած էինք, բայց ձիւնի և նրա հալվելուց գոյացած թափող ջրի օգնութեամբ, քայլ քայլ առաջ էինք շարժվում և այսպիսի կերպով հասանք վերին տափարակ տեղին, այսինքն կարմիր քարին, ուր երկու անգամ չըրացան արձակեցինք: Խակ այդ քարից մինչեւ երեացող բարձր կէտը գնացինք 5 աստիճան ունեցող մի զառիվեր տեղով, որ ծածկված էր յաւիտենական ձիւ-

նով և որի սարածութիւնն էր $\frac{1}{2}$ վերստ, դէպի ուր իմ ընկերներն անյայտ պատճառով չուզեցին գնալ, մինչև անդամ խնդրեցին ինձ վերջացնել մեր ճանապարհն այսաեղ: Բայց չը հանելով իմ նպատակին, ես չը կարողացայ կանգնել այդաեղ: Օգնութեան կանչելով Աստուծուն՝ առաջ գնացի: Քրդերը շուտով հասան իմ եաւից և ինձ հետ միասին գնում էին, մինչև ծնկի կէսը և էլ աւել լնկլմելով ձիւնի մէջ, շուտ շուտ նայում էին դէպի մեզ մօտեցող կէտը: Երբ բարձրացինք նրա զլուխը, այն ժամանակ աւսանք մեր առջեւում դէպի արևմոտեան կողմը $\frac{1}{4}$ վերստ ունեցող մի գնաաձեւ բարձր կէտ ես, մինչև ուր բարձրալու տեղը բոլորովին աննշան էր: Զիւնը ինչպէս քարի մօտ, նոյնպէս և մինչև բարձր կէտը չի փոխվում—դադաթների հիւսային կողմին բոլորովին փափուկ է, իսկ հարաւային՝ արեգակի տակ գտնվող կողմին մինչև ծնկի կէսը կանդնած են սրածայր ծածկված ասեղներ, իսկ նրանց տակին սառուցով ծածկված ձիւնը, որ իր մակերեսոյթի վրա պահում է ջրի ամենափոքրիկ կաթիլներ: Այդ վերին կէտի հետ հորիզոնական դրութեամբ 200 քայլի վրա դէպի արևմուտք գտնվում է միւս այս տեսակ գագաթ և այս երկուսը միմեանց հետ խառնվում են ձիւնապատ սարատափով. ձիւնն ունի անյայտ խորութիւն և երեք քառորդ լայնութիւն: Ընկնելով նրա ծայրի վրա, դաճ գըցելով նրա մէջ գաւաղանը, խփելով սառուցի ծայրերին, լովում է բոլորովին թոյլ թողիւն, որ և շուտ անցնում է:

«Դադաթի վրա արևմոտեան քամու և նօսրացած օդի պատճառով երկար մնալ չը կարողացինք: Ամբողջ սարածութեան վրա, որ տեսնվում էր հասարակ աչքով, հորիզոնի վրայով ձրգված էին ալիքանման սարեր և հոլիսներ, որոնց վրա փայլում էին շատ պայտ տւող, հասարակ աչքով հազիւ տեսանելի գետակներ—և զուարձանալ նրանցով շատ ախորժելի էր: Բայց ծովեր, ինչպէս կասպիականը, նոյնպէս և Սել, ամառնային տաք օրերի պատճառով ծածկված լինելով մառախուղով, բոլորովին աննկատելի էին:

«Թողնելով Արարատի դագաթը, ճնկաչոգ ճնորհակալութեան աղօթք մատուցրի Աստուծուն: Թողեցինք դագաթի վրա մի շիշ կախիթի դինի և դէպի ցած գնացինք: Որքան ցած էինք իջնում, ոյնքան օգն ախորժելի էր և այնքան աւելի վերագառնում էին մեր ոյժերը. իսկ երբ եկինք վրանները—այս վերջինը ձեզ յայտնի է:

«Հրաժարվելով ձեզանից Արալիխում, ես շատ տանջվեցայ քթիցս թափվող արիւնով, իսկ 10 օրից յետոյ քթից արիւն հոսելը գալարեց և սկսեց գալ կրկորդովս և այնքան սաստիկ էր թափվում, որ մի անդամում լցնում էր մի ամբողջ լագան և գաշարունակվում էր մինչև սեպտեմբերի 5-ը, բայց այս հոսումն ամեն օր չէր երևում, այլ երեք օրից յետոյ. այժմ Աստուծոյ ողորմութեամբ, այդ հոսումը դադարել է և ինքս, սկսում եմ առողջանալ»:

Պ. Սիվոլօբօվի զրութեան մասին ես զրանից յետոյ տեղեկութիւն չունեմ: Բայց շատ տիրալի կլինի, եթէ այդպիսի մարդը փչանայ: Թէ առողջութեան խանգարման հետնրա մէջ մինչև այժմ չի սպանվել եռանդը, գա կարելի է տեսնել այդ իսկ առաջ բերած նամակից, ուր նա դառնում է դէպի նրանց, որոնք կասկած կունենան նրա խօսքերի ճշմարտութեան մասին: «Եթէ—ասում է նա—մէկն ուզում է համազուել այն ամենի ճշմարտութեան մասին, ինչ ես գրել եմ ձեզ, ինպրում եմ նըրան գալիս ամառը շնորհ բերել և ինձ հետ միասին երկրորդ անդամ գնանք Մեծ Արարատի գլուխը»:

Գժուար է նկարագրել այն տպաւորութիւնների ամբողջ խորութիւնը, որոնց զգում է մարդը տյնակիսի միջոցներում, որ նման են Արարատ բարձրանալուն: Ապասկի-Ավտօնօմօվ, օրինակ, ասում է, որ նա զգացել է ոչ թէ ուրախութիւն, այլ մի տեսակ վհասանութիւն և Ճնշումն, երբ նրա տակ հորիզոնը աւելի և աւելի լայն էր բայց որքան նա բարձրանում էր վերև գէպի սարը: «Աստուծ իմ, մատծում էի ես (զրում է նա), նայելով նոր պատկերին, ինչպիսի հոյակապ կերպով փայլում

ին այդ երկու սառած բլուրները, ինչպէս շքեղ է ամբողջ հովիտը, որ ողղուած է արեգակի Շառագայթներով, այրիւամ է անթիւ այնաստների պէս, որ ես երկիւղածութեամբ զմայլվիմ այդ աեսարանով. բայց իմ հովին սառած է, վհասաված է, իմ ամբողջ ոյժերը ճնշված են բնութեան վսեմութեան տակ!»։ Իսկ երբ մօտացել է գագաթին, նա ակամայ բացականչել է. «Տէր Աստուած իմ! մի՞թէ ճշմարիս ես կը հասնեմ այն գագաթին, որին, ինչպէս ասում է գեղեցկախոս և գիտնական Տուրնիֆօր, Նոյից յետոյ ոչ մէկի գարշապարները չեն կոխել»։ Բայց ահա նա բոլորովին գագաթի վըա է։ Կա ասում է համարեա մի և նոյնը, ինչպրում է և պ. Սիվոլօբօվ. «Գալով այն ձորագաշտի մօտ, որ բաժանում է երկու գագաթները, ես տեսոյ կախ ընկած սառած ձիւնի մի կոյտ, որ հարաւային կողմում ցածրանում էր և բոլորովին սարսափելի չէր. բայց ես չէի հաւատում և իմ սեփական աչքերին և մատածում էի. «Հլու՞թէ դա մի անյաղթելի արտելք է։ Զկան այբուրդ սոսկալի վիհներ», իսկ ինքս քայլում էի փափուկ ձիւնի վրայով և ոչինչ մի թշնամական բանի առջելում չէի պատահում։ Այն կոյտը, ուր ես կանգնած էի, բոլորովին ունիչ էր. ամբողջ մարմնով գողազով վախից և ուրախութիւնից, վճռեցի անցնել ուղիղ կոյտի վրայով։ Պնացնելով ոտս կոյտի ներքեւ մասում, ես յենով նիղակի վըա ընկայ կոյտի վրա—դա վերջին աստիճանն էր, որ տանում էր գէպի Արարատի հիւսիս-արեւելեան տափարակ գագաթը։ Ուրախութիւնից ես չնշասպառ էի գառել. . . Շունչս քաշելով, աեղիցս վեր ցատկեցի և համարեա վաղէվաղ գնացի տափարակ կողքով գէպի իսկական գագաթը—ահա և նա . . . Ես ուրախացած կանգնած էի սրածայր գագաթի վրան, բարձրացնելով իմ ձեռքերն ու գրօշակը. և ակամայ այդ վայրկենում ես մի խաչ գասայ բնութեան հպարտ վիթիսարիի արծաթեայ թաղի վրան»։

Սպասսկի-Ավտօնօմօվի Արարատ բարձրանալը ամենաբախտաւորներից մէկն է եղել։ Կարտալով նրա նկարագրութիւնը,

ես մինչեւ անգամ առաջ երկմիտ էի այդ ճանապարհորդութեան ճշմարտութեան մասին. ինձ անկարելի էր երեւում Արարատ բարձրանալու համար միայն երկու օր գործ ածել։ Բայց բանը նրանում է, որ Սպասսկի-Ավտօնօմօվ բարձրացել է այդ սարը դեռ 1835 թւին, որին յառաջ քան 1840 թւի երկրաշրժութիւնը և բարձրացել է ուղիղ Ակուսիից. այժմ այսուղեց բարձրանալն անխելքութիւնից աւելի մի բան կը լիներ. այժմ Արարատաց սոս կողմից կատարեալ մի ուղղաձիգ պատ է։ Երկրաշրժութիւնը, ուրին, փոխել է սարի այդ կողմի ձեւը, շնուրով նրան անմատչելի մի ուղղահայեց հարթութիւն, որից այժմ անդադար թափվում են սառուցի կտորներ և փխրուն ժայռեր։ Յաջողակ եղանակն էլ շատ նպաստել է Սպասսկուն նրա քաջագործութեան ժամանակ։

Բայց ահա ինչ են տարել Խոդղիկ և նրա ուղեկիցները, Խանիկօվ, Ալէքսանդրօվ, Մորից, Ուսլար, Շարօնան և գօրաբաժնի 60 մարդիկ Արարատի վրա բարձրանալիս ժամանակ, արդէն երկրաշրժութիւնից յետոյ և ուրին միւս կողմով և անյաջող եղանակով։ «Երկինքը—ասում է իր գրուածքի մէջ պ. Խանիկօվ—որ առաւօտեան բաւական պարզ էր, սկսեց ամպերով ծածկել և ժամի 12-ի մօտ վշեց սաստիկ արեւմնեան քամին, որ բարձրացողների վրա էր թափում սառած ձիւնը, որ աւելի զգալի էր գարձնում ողին ցած բարեխաւնութիւնը, որ տիրում էր անհիւնկալ բարձրութեան վրա»։ Բարձրացողները սպասում էին, թէ փոթորիկը շուտով կը հանդարտանայ. «Բայց մեր յոյսերը—ասում է Խանիկօվ—իդուր էին. ժամը 2½-ի մօտ տեսնելով, որ քամին աւելի և աւելի սաստկանում է և որ թանձը, մօխրագոյն մշուշը աւելի և աւելի խասնում է գագաթի մօտ, վճռեցինք առաջ գնալ, որ գոնէ ժայռերի մէջ պատապարան գտնենք փոթորիկից»։ Բայց առաջ գնալու համար նրանք ոյժ չեն ունեցել. մրբիկը նրանց վայր էր գյում, ձիւնը զար նում էր երեսներին։ Հարկադրված էին կանգնել և զինուորներին մի քիչ ցած բարձրակել, որովհետեւ ժայռերի տակ ամենքին

տեղաւորվել անկարելի է եղել: Պէտք էր մտածել դիշերելու մասին: «Զօրաբաժնի օֆիցերները երկու կօղակների հետ մնացին մի փոքրիկ հրապարակի վրա, երեք քայլ երկայնութեամբ և $1\frac{1}{2}$ լոյնութեամբ, որի վըա վեց մարդիկ սիրտի տեղաւորվեին քնելու համար, միրիկի գոռոցների և նրանց վրա թափվող ձիւնի տակ. թէպէտ և մարդկանց թիւը մեծ չէր, բայց տեղն էլ լայնարձակ չէր, մի կերպով մի տեղ կծկվելով, մենք ծածկվեցանք մի պատիկ գորգով և մորթով: Սակայն քամին առ ելի սաստկանում էր, և մերթ մերթ պատառելով թանձր ամսերը, որոնք պաշարել էին մեզ ամեն կողմից, լուսնի թոյլ լոյսով ցոյց էր տալիս մեզ կամ Արաքսի հովիսի մի կառը, կամ Փոքր Արարար, կամ Խորխորաստները, սրոնք սեացած էին մեր ոտների տակ և սահմանափակում էին երեք կողմից մեր խղճալի ննջարանը, որ Մօն-Բլանից բարձր տեղ էր գտնվում»: Բայց դա էլ քիչ էր: Ակավում է շանթալից փոթորիկը, որ այնքան սոսկալի է այսպիսի բարձրութիւնների վրա. — անբախտները իսկապէս գտնվում էին շանթալից ամսի մէջ: Օդը լուսաւորվում էր ոչ թէ կոյժակի սովորական խաղացկուն գծերով, այլ լայն բոցեղէն շերտերով, որոնք շրջապատող առարկաները լուսաւորում էին կուրացնող պայծառութեամբ. ուրախալի գրութիւն. այս ամենը լուցնելու համար նրանց, ինչպէս և Ակվոլորօվին ու Զելինսկուն, ինչդում էր անտանելի ծծմբային հոտը:

Ինքը Խօգկօն ահա ինչ է գրել այդ ահարկու դիշերուայ մասին, որ նա անցրել է Արարատի գագաթի մօտ. «Օդոստոսի Յ.ի գիշերը երեք ժամի միջոցում մենք գտնվում էինք մի շանթալից ամսի մէջ, որ ներկայացնում էր մի երեքտրական մարտկոց (բատարեա) ահռելի չափսերով. մեր պահապաններն էին ժայռերի սուր բեկորները, որոնց վրա էր ընդրված մեր դիշերելու տեղը: Կայժակը պտոյտներով, որոնք ըստ երեսյթին մի սաժէնից ոչ պակաս լայնութիւն ունեին (ինչպիսի փոքրիկ կայժակի), որոսոցի ամենասուժդին հարուածների հետ, անդադար անցնում էր մեր ոչ շատ յարմար պատապարանի փոքրիկ հրա-

պարակի մօտով: Ճամբը 11-ին որոսոցի վերջին հարուածը փըլեց ժայռի բեկորների գագաթներից մէկը. փոթորիկը մի քիչ հանգարանիցաւ, բայց միրիկը չէր զադարում, փչում էր սաստիկի քամի»:

Տեղնէ ասել, որ Ակվոլորօվ հասել է Արարատի գլխին օգոստոսի 11-ին ուղիղ առաւոտեան ժամը 11-ին: Այդ իսկ օրը, այսինքն օգոստոսի 11-ին, Ակվոլորօվից 32 առի առաջ, նոյն գագաթի վըա գանվում էր և Խօգկօն:


Օդոստոսի 11-ի երեկոյի մնացածը, պարկած վրաններում մենք անցկացրինք միմեանց փոխադարձ հաղորդելով այն տաղաւորութիւնները, որոնց մենք զգացել և տարել էինք վերջին շորս օրերում, երբ մենք գտնվում էինք, կարելի է ասել, այս աշխարհից գուրս: Յիշեցինք և Նոյի ասապանի մասին և նրա այն կտորի մասին, որ մինչեւ այժմ, ասում են, պահվում է կծմիածնի վանքի միւս սրբութիւնների թւում: Նա վանքի սեփականութիւն է գարձել որպէս թէ հետեւալ կերպով: Ա. Յակոբ, որի մասին խօսած ենք վերեւում, այրվում էր որպէս թէ Արարատ բարձրանալու ցանկութեամբ, որ տեսնէ Աստուածաշնչի սրբութիւնը — մեր նախահայր Նոյի ասապանը, որ աւանդութեան համաձայն, մնացել է որպէս թէ սարի վըան առանց փակելու: Բայց ամեն անգամ, երբ գէսի սարի գլուխը տանող ձանապարհին Յակոբը կանգնել է հանգստանալու կամ գիշերեւլու համար և քնով է անցել, այն ժամանակ հրեշտակը տաշը է քնած ալքեպիսկոպոսին յետ իր վանքը, իր խուցը: Մի քանի անգամ այս կերպով փորձել է Յակոբը սարը բարձրանալ և ամեն անդամ զարթնել է իր խուցի մէջ: Վերջապէս Աստուած գլժացել է ալքեպիսկոպոսի վրա և հրամայել է հրեշտակին վեր առնել տապանի տախտակի մի կտոր և յանձնել նրան Յակոբին: Այդ իսկ կտորն էլ ժառանգաբար հասել է էջմիածնի վանքին:

Ապասկի-Ավտօնօմօվ լլջօրին ասում է. «տապանը չկայ Արարատի գլխին, իսկ ո՞ւր է նա — կոտրատել են նրան մարդիկ

և բաժանել միմեանց մէջ, թէ աղիսութիւնն է յրվել նրան զահնաղան կենսական պիտոյքների համար, կամ թէ ամրող են նրա գոնէ մի քանի մասերը, բայց թաղած են խոր ձիւնի տակ: Գրան վճռել և սառւդել անհնարին է. . . Ո՞ւր է Ահարօնի ծաղկած գաւագանը: Ո՞ւր է տապահակը: Ո՞ւր է Սողոմոնի տաճարը . . . »

ХV

ԴԵՊԻ ՑՈՒՆ ԹԵՏԱԴՐՉԸ:



Օդուասոսի 12: ին վաղ առաւօտեան մենք սկսեցինք սարից իջնել: Օրն այնպէս շքեղ էր, չքնաղ էր, ինչպէս և բոլոր նախընթաց օրերը: Ամբողջ քոչառեղոյ քրդերը, կանգնելով անգեղիոտի սև բեկորների վա, երկար ուղեորում էին իրանց աշքերով մեր փափրիկ խումբը, խակ իմ հնուրասէր տանակէրը, որին եօ գնալիս տուել էի տասը բուրլի, ձեռքը եռանդաղին զնում էր սրտին, մինչեւ որ իմ ձին չի ծածկվեց վերջնականապէս սև ժայռերի քամակին:

Դիու հիւանդ լինելով, ես գժուարութեամբ էի պահպում ձիու վա, բայց իմ հայացքը անդադար զառնում էր գէպի ետ — անհնուրասէր, մռայլ սարը, և սիրս սեղմվում էր այն իմացանկանութիւնից, որ այն, որին զիմում էր իմ միտքը, ինձ համար անհասանելի յայտնվեցաւ . . . «Խակ բախտն այնքան մօտ էր»:

Այսո, մօտ էր, և մի և նոյն ժամանակ այնքան սարսափելի կերպով հեռու: Եւ հենց միայն բախտը չէր մօտիկ — մահը աւելի մօտիկ էր . . .

Սարիցը մենք իջնում էինք ուրիշ ձննապարհով, արևել եան կողքերով գէպի Արարակի կողմը, ուր աեղաւորված է Աւմանեան գորագնդի շաբարը: Ինձ սարսափելի կերպով տանջում

էր այն միտքը, թէ ես կարողութիւն չեմ ունենայ համբերել վերջն վորձանքին, մինչեւ որ իմ ոտերը չեն կանգնի Արաքսի հովիափ հողի վրա:

Նոյի առասպելական «խաղողենիքը» մենք թողեցինք ձախ ձեռքի կողմին, այլ ևս շգնալով այն տեղ: «Նցի խաղողենիքը» — Ակուռին է, որ քանդված է երկրաշարժութիւնից: Ակուռի նըշանակում է «Հաղող տնկել» (Արկ ուռի): Ասում են, որպէս թէ Նոյը, իջնելով Արարատից, ինչպէս ջրհեղեղից ազատվելու համար չնորհակալութիւն, շինեց այսաել զոհագործութեան տեղ և տնկեց խաղողի որթ: Այդ որթն էլ որպէս թէ եղել է Արաքսի հովիափ և Երևանի բոլոր խաղողենիների նախամայրը:

Որքան աւելի և աւելի ցած էինք իջնում, այնքան էլ աւելի գիրք կատարած էնութիւն, որոնք կորցնում էին իրանց ոյժը բարձրութիւնների վըա, կրկին սկսում էին անտանելի կերպով այրել այնպէս որ երբ մենք ստորոտի մօտն էինք, տաքը խատակ աՓրիկական էր:

Դժուարութեամբ վերջապէս մենք քարշ ընկանք մինչեւ Ակուռի: Ես այնպիսի ուժաթափութիւն էի զգում, որ չէի կարողանում խօսել, աւելի նրանից, որ ծարաւից իմ հողին, կարելի է ասել չորացել էր:

Պ. Կոկչանել, միրաբ Խոլֆա-Կուլի բէկ և մի քանի ձիաւորաներ բաժանելոցան մեղանից չը հասնելով Ակուռին: Ես սրտանց շնորհակալութիւն արի ամենաբարի Նիկոլայ Պետրովիչին այն ամենի համար, ինչ նա տարել էր իմ խամթեր. բայց իմ հրաժարական «ցտեսութիւն»-ի մէջ նա չէր կարող ըստ լսել որ կրկին տեսնվելու նրա հետ ես այլ ևս յոյս չունեի:

Արալիսում, տեղական գուքանում, որին մենք մօտացինք որ մեզ լափող ծարաւը գաղարեցնենք, մենք ընկինք ումանեան զօրագնդի օֆիցերների հասարակութեան մէջ: Իմանալով որ մենք ուղիղ Արարատիցն ենք գալիս, պ. պ. օֆիցերները ոչ մի կերպ չէին հաւատում, որ մի քանի ժամ գրանից առաջ կերպ չէին հաւատում, որ մի քանի ժամ գրանից առաջ կերպ, ի. Ֆ. Ակվոլօբօվս այնպիսի մի քաջագործութիւն է աւնկերը, ի. Ֆ. Ակվոլօբօվս այնպիսի մի քաջագործութիւն է աւ-

րել որին չի կարելի պատմական ըստել որովհետեւ մի քանի սակաւաթիւ այն բախտաւորների անունները, որոնք իրանց ոռներով կոլ են տուել Աստուածաշնչի հսկոյի սպիտակ ձիւնապատ դլխարկը, գրված են պատմութեան մէջ և յայտնի են տաէ բողջ լուսաւորեալ աշխարհին: Այստեղ այցելեց մեզ և այդ երկրի յարգելի վետերանը, պօլկօվնիկ Առաքելովս: Ափսոս, որ ես բոլորովին փշրկած և հիւանդ լնիլով, չը կարողացի ընդունել ձաշկերոյթը, որ սրտի մոռք առաջարկել էր ինձ պ. Առաքելովը իր գնդի օֆիցերների հասարակութեան մէջ:

Գրկվելով Սիվոլօբովի հետ, մէնք երկուսս էլ լայեցինք: Հրաժարվելս կարծես մենք երկուքս էլ նախազգում էինք, որ այս անց կացրածից յետոյ մեզ սպասում են աւելի ծանր փորձանքներ: Մէնք մինչև անդամ չը համարձակվեցանք մէկը միւսին «ցտեսութիւն» ասել:

Օգոստոսի 13-ի գիշերը մէնք Ա. Պ. Զելինսկու հետ արդէն Երևանումն էինք: Անկարելի է նկարագրել այն գորովալից զգացմունքը, որով ես, ներս մտնելով Երևան, լսեցի մուղիկայի ծանօթ եղանակները, որոնք յիշեցնում էին ինձ հեռու Պետերբուրգը, Պավլովսկը իրանց մուգիկայի հետ և բոլոր այն հայրենի և սիրելի բաները, որոնք տւելի թանդաղին են գառնում երկար բացակայութիւնից յետոյ: Թէպէտ և իմ օտարների մէջ մնալը կարճ է տեել, բայց նա ինձ համար մի պատճառով թըռում էր ինչպէս յաւիտենականութիւն:

Օգոստոսի 13-ին ես գեռ Երևանումն էի: Ես զգում էի, որ աւելի և աւելի հիւանդանում եմ: Ամեն ինը երեսում էր ինձ մի մառախուզի մէջ, ես կարծես թափառում էի երազի մէջ: Յիշում եմ, որ ես ճաշ կերպ պ. Զելինսկու մօտ, բայց դա էլ երազի նման է երեսում: Հիւանդ դրութեան մէջ Երևանից էլ դուրս եկի: Ես միայն մի անդամ չեմ նայել իմ ետեսումն բարձրացած Արարատին և ակամայ իմ հոգու մէջ շարժվում էին անիծեալ, անիծեալ բառեր:

Ասեմանսիլ Արագածը, Գոկչան իր ծովային կապուտակու-

թեան և աշնանային ցրափ հետ, Գելջանի շքեղ կիրճը, մահարեր կարաեազի անապատը — այս ամենը տեսնելն արդէն անտանելի ցաւ էր պատճառում, այս ամենը ինձ թշնամական, անտախորժ էր երեսում:

Հիւանդ էլ թիֆլիս հասայ: Յիշում եմ պ. Ֆօն-Կոշկուլի սիրալիր ընդունելութիւնը, հիւրասէր ի. ի. Սուբբնիցկու մօտ երեկոյթը՝ բայց այս ամենը յիշում եմ շատ մոայլ, խառն կերպով:

Յեաոյ կոմիտասեան լեռնային շարքով՝ Գուդարով, Կազբէկով, Գարեալով և կատաղի Տերենկով անցնելը . . . Եւ ինչպէս եմ ես ոյժ ունեցել անցնելու: Հենց այսուեղ, Կոմիտի բարձրութիւնների վրա, որ մի ժամանակ արծիւր պատառում էր Պրոմեթէոսի սիրան ու հոգին, ես էլ զգում էի նրա տանջանքները: Մի աներեւոյթ արծիւր պատառում էր իմ հոգին: Պատրզ ասած՝ թողերի և թաղանթի բորբոքումն էր: Դելիժանսի ամեն մի շարժման ժամանակ, մի ամենափոքրիկ յոդւոց հանդիս, ձեռքս շարժելիս, ես կարծում էի թէ մէկը ունելիքներով ծուռում է իմ թողերը:

Ուստովում ես անզգայ ընկած էի: Ինչպէս եմ յեաոյ Պետերբուրգ գնացել՝ ինքս էլ չեմ իմանում:

Այժմն ես այստեղ, Մենտոնայում եմ, կապոյտ ծովի ափին: Ինձ բերել են այստեղ այն ամենը յետ գարձնելու համար, որ ինձնից լալել է Արարատը: Բայց իմ ոյժերը կատարելանչ որ ինձնից լալել հապել լինի: Ա՛ն, հենց շուտ տուն գնայի:

Այսպէս է Արարատի վրա բարձրանալու փորձիս դառն պատճութիւնը:

Գ. ՄՕՐԴՈՎՅԵՎ.

Մենտոնա, 24 Դեկտեմբեր 1882
5 Յունի 1883

ԳՐՔԻՍ ՅԱՐԳԵԼԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ:

ԱԽԱՐԱՐԻՑ:

Պառլ Արէլեանց	1.
Կերուէս Տէր-Յովհաննիսեանց Բաղլուջեցի	"
Արի Մովսէսեանց Շուշեցի	"
Մկրտիչ Ս. Գանումեանց Մաղրասեցի	"
Մատթէոս Գաբրիելանց Մաղրասեցի (Նուիրում է Մադրասի գրադարանին)	"
Յակոբ Գանումեանց Մաղրասեցի (Նուիրում է Մադրասայ Եփրեմ Գանումեանցին)	"
Լևոն Յարութիւնեան Եղիազարեանց Քետրքանջեցի	"
Եղէքսանդր Յարութիւնեան Ոտւշանեանց	"
Մինաս Խասյիչ Սահակջանեանց Աստրախանցի	"
Յովսկիմ Տէր-Սահակէսանց Շամախանցի	"
Միլայէլ Տէր-Խոջաստուրեանց Շուշեցի	"
Միլայէլ Օսկիեանց Շամախանցի	"
Յովհաննէս Ղազարբէկեանց Թաղլարեցի	"
Եղէքսանդր Շւագեանց Շուշեցի	"
Մովսէս Բաղդասարեանց Ջեահլուիցի	"
Պողոս Աօլօմնեան Բագալեանց (Թիվլիսեցի)	"
Միքայէլ Պօղոսեանց Շուշեցի	"
Կոյնը (Նուիրում է Ա. Բարախաննեանցին)	"
Համբարձում Հայրապետեանց Շուշեցի	"
Անդրէսս Բալայեանց Շուշեցի	"
Բաֆայէլ Կաչկաչեանց	"
Մագրասեցի Բաֆայէլ Դօնշարեանց	"
Աստուածատուր Բագրամեանց Շուշեցի	"
Յարութիւն Զախմախսակեանց Շուշեցի	"

Ա. Բարախաննեանց:

ՎԵՐԱՅԻ պարտականութիւն եմ համարում հրապարական խորին շնորհակալութիւնս յայտնել Հետեալ մեծ. պարաներին, որոնք նեղութիւն կրեցին մեզ համար բաժանորդներ հաւաքել և գրանով նիւթականապէս նպաստեցին այս գրքի ապագրելուն.

Առաքարադ—պ. Պառլ Արէլեանցին. Շուշի—պ. պ. Աւագ Մահատսիր-Յակոբեանցին, եղբ. Խանլարեանցներին, Զարմայր Տէր-Գաւթեանցին, Գրիգոր Եազութեանցին. Աստրախան—պ. պ. Կարտապետ Գառութեանցին և Ասլան Միւլքիեանցին. Հաղորութ—պ. պ. Ալէքսանդր-բէկ Բաղիշտեանցին և Գրիգոր Ասլանեանցին. Զաբրայիլ—պ. Գաւիթ-բէկ Մէլք-Շահնազարեանցին. Բագու—արժ. Հայր Խորէն քահ. Միւլզամ և պ. Միքայէլ Սարումեանցին. Թիվը բէկեանցին և պ. Անդրէսս Յովհաննիսեանցին. Հին-Նախիշեան—պ. Աւետիս Աղատեանցին:

Թմաւան	Մասացականեանց	Շուշեցի	1.
Աղէքսանդր	Սազաթելեանց	Գալալ-Օղեցի	"
Յարութիւն	Ալիսանեանց	Աղնախեցի	"
Դափիթ	Մէլիք-Մկրաչեանց	Մեղեցի (նուիրում է Տիգրան Մէլիք-Մկրաչեանցին)	"
Մարգա	Սարուխանեանց	Շուշեցի	"
Անհատանատին	Յարութիւնեանց	Աղնախեցի	"
Մարտին	Փիլեանց	Շամախեցի	2.
Երտեմ	Ե. Խախուտեանց	Յափիխեցի (նուիրում է Բագու պ. Ե. Երէնեանցի որդեգրուհոյն՝ Ենթառամին)	1.
Եղա	Մերօր Ա. Քարամեանց	Շամախեցի	"
Մարգիս	Գ. Գասպարեանց	Շուշեցի	"
Միրզա	Յովհաննիսեանց	...	"
Մարգիս	Բարխուդարեանց	Շուշեցի	"
Յովհաննէս	Տէր-Յարութիւնեանց	Առէնձորեցի	"
Մեդրակ	Գրիգորեանց	Վարինեցի	"
Եւագ	Գրիգորեանց	Խառասեանց	"
Յակոբ	Տարիկուրեանց	...	"
Յակոբ	Մակուրեանց	...	"
Յովհաննէս	Տէր-Յարութիւնեանց	Առէնձորեցի	"
Եւագ	Գրիգորեանց	Վարինեցի	"
Եւագ	Գրիգորեանց	Խառասեանց	"
Յակոբ	Տարիկուրեանց	...	"
Յակոբ	Մէլիք-Փարսպանեանց	...	"

ՑՈՒՑՈՒՑ:

Եւագ	Մահտեսի-Յովհորեանց	տպարանատէր	5.
Յովհաննէս	Տէր-Գրիգորեանց	...	3.
Եստուածատուր	Մալխսանեանց	...	1.
Յովհակիմ	Ելշարեանց	...	"
Վարսակետքէկ	Մէլիք-Փարսպանեանց	...	"
Միքոյէլ	Գ. Խանջարեանց	...	"
Միսակ	Շամախեանց	...	"
Կիկողյոս	Գ. Եղամախեանց	...	"
Գերասիմ	Մալխսանց	...	"
Մարկոս	Տէր-Ասծատուրօվ	...	"
Լազը	Մալինցով	...	"
Եւետիս	Փարսպանեանց	...	"
Փարնիսեսէչ	Մասումեանց	...	"

Խաշատուր	Արարեէկեանց	...	1.
Յովհէփ	Վարդ	Փինաշեանց	"
Երսէն	Արասինիկեանց	...	"
Զարմայր	Դովլաթեանց	...	"
Կիկոլայ	Բահաթրեանց	...	"
Զարմայր	Տէր-Դաւթեանց (օձնեցի)	...	"
Ամբատ	Հովուեանց	գերասան	"
Սերգէյ	Ըսանեանց	...	"
Կիկոլայ	Զուրաբեանց	...	"
Կոնստանդին	Խուրլարեանց	...	"
Եղան	Եւագեանց	Էդիեցի	"
Եփրեմ	Տէր-Սրապիօնեանց	...	"
Վարապետ	Գրիգորեանց	...	"
Ակմէօն	Հայումեանց	...	"
Կիկողյոս	Տէր-Եւեսիքեանց	...	"
Գաբրիէլ	Ղուլիքոխեանց	...	"
Գրիգոր	Տէր-Միքայէլեանց	...	"
Կերսէս	Մէլիք-Փաշանեանց	...	"
Գրիգոր	Թառումեանց	...	"
Յովհանն	Դաւթեանց	...	"
Տիգրան	Խանդամիրեանց	...	"
Օրիորդ	Եղամեանց	...	"
Օրիորդ	Ուկեհատ	Թաւրիղեանց	"
Տիկին	Անիչկա	Բարախսանեանց	"
Տիկին	Մնան	Հովուեանց	"
Եւետիս	Փանսեանց	...	"
Զաքարյա	Մէլիք-Շահնազարեանց	...	"
Լազն	Եսիեանց	...	"
Յ. Կամարական	"
Երշակ	Ղազարեանց	...	"
Յովհաննէս	Միքարեէկեանց	...	"
Գրիգոր	Գէռուրեանց	քարոզիչ	"
Յովհէփ-բէկ	Մէլիք-Յովհէփեանց	...	"
Մինաս	Խուռնեանց	...	"

Արմենիան Խոսնեանց	4.
Գարասիմ Բարխուգարեանց	"
Ըբրահամ Տէր Գասպարեանց	"
Ըղէքսանդր Միւլքիեանց	"
Մովսէս Բարոյեանց	"
Լեռն Մինսսեանց	"
Խուշատուր Փանեանց	"
Յարութիւն Յարութիւնեանց	"
Յովհաննէս Եդամեանց	"
Ենովք Գէօնջեանց	"
Պօղոս Տէր-Պօղոսեանց	"
Սարդիս Խանդամիրեանց	"
Մարգարէ Մէլք-Ղարակեօղեանց	"
Դրիգոր Եազուրեանց	"
Գարասիմ (Օհանեանց	"
Յակոբ Տէր. Յովհաննիսեանց	"
Օհաքարայ Եւետիսեանց	"
Ռուտամ-ծեռ Խազալանսկին	"

ԱՍՑՐԱԽԱՆԻՑ:

Կարապետ Դաւթեանց...	2.
Կոստանդ Պարոնեանց Ըուշեցի	1.
Աերսէս (Օհանեանց Ըուշեցի	"
Օվակիմ Աիրկիզօվ	"
Դանիէլ Գրանկուլեանց...	"
Եւետիս Թումայեանց	"
Յովհաննէս Ա. Գասպարեանց	"
Իվան Դ. Եժաքովսայեանց	"
Յովակիմ Տէր. Յակովըեանց	"
Դաղար Դ. Յովսէփեանց	"
Իվան Գ. Դաւթեանց	"
Ելքահամ Մ. Ելքահամեանց	"

Հստուածատուր Եղամեանց	1.
Ուաճայէլ Միքայէլեանց	"
Մանասէ Գաւագեանց	"
Յարութիւն Յարութիւնեանց	"
Շամիր Գուրջեանց	"
Մարգիսջան Մէլք-Շահնազարեանց	"
Մարգար Ա. Արզարբեկեանց	"
Յովակիմ Դաւթեան Խզեանց	"
Յովհաննէս Սարգսեան Եւագեանց	"
Դասիթ Քահանայ Դադաշեանց	"
Ըստաքել Խիազեանց	"
Մարգիրոս Մալքեանց	"
Թագէտ Կորժեանց Կորժեանց	"
Գէորգ Գարբիկանտեանց	"
Ենդրէսս Թամարգեանց	"
Գասպար Առաքասեան Արասիլիկեանց	"
Յարութիւն Տէր Գետրոսեանց	"

ՀԱԴՐՈՒՅԹ:

Աղլէժմակի Աեկուտար Մէքսանդր Ծաղիչտեանց	1.
Գրիգոր Սոլանեանց	"
Եղապարոն Յակոբեանց	"
Գետրոս Տէր Դաւթեանց	"
Մէքսանդր Շահնազարեանց	"
Յակոբ Մէլքումեանց	"
Մայօր Կարապետ Բէկ Դանիէլեանց	"
Յովակիմ Եւագեանց	"
Նիկոլայ Գափիեանց	"
Յարութիւնբէկ Տէր Գրիգորեանց	"
Մէքսան Երդարեանց	"
Եւագ Դանջումեանց	"
Եւագ Խսախանեանց	"

Մէքոյէլ Բախտամեսնց 1.
Եթու Սորիհանց "

ԶԱՐՄԱՑԻՒՑ:

Դաւիթ. Մէկիք Շահնազարեանց 1.
Գրիգոր. Մէկիք Շահնազարեանց ",
Սեղբակ. Տէր-Գաղարեանց ",
Եւելոսնդր. Գաղարբէկեանց ",
Խոստուր. Քամալեանց ",
Մարգիս. Խաչիեանց ",
Եթանէս. Շահկարպեանց ",
Գրիգոր. Շահնազարեանց ",
Ը. Տէր. Երրահամեանց ",
Երտեմ. Մամիկոննանց ",
Կոստանդ. Շագունցօվ ",

ԲԱԳՈՒՑ:

Թագէռ աւագ քահանայ Շուգաղեանց. 1.
Խորէն քահ. Միլոզարեկեանց ",
Գրիգոր քահ. Գրիգորեանց ",
Յովսէփ քահ. Եշղեանց ",
Երրահամ քահ. Երրահամեանց ",
Բարա Գ. Բարախանեանց 3.
Համբարձում Պարագեգեանց 1.
Յարութիւն. Խամհակեան Պազարեանց ",
Եւելոսնդր. Խաջարեանց ",
"Եղինը (Խուիրումէ Շամախու մատենագարանին):
Յովհաննէս. Քաղանթարեանց ",
Մարգիս. Շիրազեանց 2.
Մէքոյէլ Յովհաննիսեան Յովակիմեանց 1.
Յալութիւն. Մահուչարօվ ",

Մէքոյէլ Յովակիմեան Պարակեօղեանց 1.
Մէքոյէլ Սարումեանց ",
Սննիբաղ Նաջարեանց ",
Եղարէկ Դանիէլեանց ",
Ռօղան Շխիեանց ",
Ելիքսանդր Գասպարեան Պասարեանց ",
Գրիգոր Տէր-Գաղարիէլեանց ",
Երրահամ Սարումեանց ",

ԹԻՖԼԻՍԻՑ:

Ենդրէսա Յովհաննիսեանց (¹) 1.
Վասիլի Միլոզոեանց ",
Խշան Նիկոլայ Խոզորեան Երզութինսկի Պոլգորուկօվ ",
Ելիքսանդր Մէկիք-Հախնազարեանց ", ✓
Երտեմ Մէքոյէլեան Գաբարեանց ",
Մէկիք-Փաշաեանց ",
Յակոբ Տէր Յովհաննիսեանց ",
Խշի. Գէորգի Զիկոսնի ",

ՔԻՆ ՆԱԽԻՁԵՒԱՆԻՑ:

Ստեփաննոս Մանուկեանց 1.
Եւելիս Յ. Եղագեանց ",
Տ. կիս Եղիսաբէթ Խասխանեանց ",
Կարապետ Օհանեանց ",
Եւելոսն Եսոյեան Խազուլեանց Շուշեցի. ",
Փանևոս Տէր-Երրահամեանց ",
Գրիգոր Տէր-Դանիէլեանց ",

(¹) Նուիրում է լարգիմուկը

卷之三

(1) ըմբռնիման Հովհաննես պատճենը՝
ըմբռը Ս Աման Ա
Յանձնական Տ անդրշեց պարզի մասէն
պատճենահանութիւն գիշեց Ս պատճենը՝
ըմբռնիման մանդալաց Ս Կունչ Ա
Ա Մանուկյան Ա պատճենահանութիւն ուժ դրանը
Ս ԵՎԱՆԻԿՅԱՆ Ա պատճենահանութիւն ուժ դրանը

• ସେବାମନ୍ଦିରମାର୍ଗ ପାତ୍ର

7756

0003798

2013



